



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԻԲԵՎՅԱՆԻ ԽՈՎՅԱՆ ԳՐԱԿԱՂՈԹՅԱՆ ԲՈՈՏԵՏՈՒՄ



# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՐԻՑՅԱՆ




ԵՐԿԵՐԻ ԼԻԱԿԱՏԱՐ  
ԺՈՂՈՎԱԾՈՒ



ՏԱՄ ՀԱՏՈՒՎ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՐԻՑՅԱՆ



ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ԲԱՆԱՏԵՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տպագրվում է ՀՍԾՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Եղ. Մ. Զբաղջան (գլուխոր խմբագիր), Խ. Մ. Գյուլնազարյան,  
Ք. Հ. Թումանյան, Լ. Մ. Կարապետյան, Լ. Հ. Հախվերդյան,  
Պ. Հ. Հակոբյան, Հ. Ի. Հովհաննիսյան, Ս. Ն. Արդինյան

Բնագրերը պատրաստեցին և ծանոթագրեցին  
Խ. Մ. Գյուլնազարյանը և Մ. Մ. Մելիքյանը

Հատորի խմբագիր՝ Եղ. Մ. Զբաղջան

ОВАНЕС ТУМАНЯН  
ПОЛНОЕ СОБРАНИЕ СОЧИНЕНИЙ  
в десяти томах  
Том первый  
Стихотворения  
(на армянском языке)  
Издательство АН Армянской ССР  
Ереван, 1988

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1988  
Ծանոթագրությունների համար

## ԽՄԱԿՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգությունը բացադրիկ կարևոր տեղ է գրակում հայ բազմադարյան գրականության և ողջ հոգևոր մշակույթի պատմության մեջ: Ինչպես իր գեղարվեստական երկերով, այնպես էլ գրական-քննադարական և հրապարակախոսական գործունեությամբ Թումանյանը XIX դարի վերջի և XX դարի սուածին տասնամյակների հայ գրականության և ամրող հասարակական կյանքի խոշորագույն, կենտրոնաձիգ դեմքերից մեկն է, որի շուրջն էին համախմբվում հայրենի մշակույթի բոլոր առողջ և առաջանեմ ուժերը:

Թումանյանի նշանակությունը վաղուց դուռ է եկել իր ապրած և ստեղծագործած սկանանակի սահմաններից, ալև չի կարող պարփակվել մեկ առանձին շրջափոյի մեջ: Իր երկերի համազգային և համամարդկային բովանդակությամբ, գեղարվեստական վիթխարի ընդհանուրություններով Թումանյան ավելի, քան մեկ ուրիշը, նվաճել է հայ ժողովրդի ազգային մեծ գրող, «ամենայն հայոց բանաստեղծ» կոչվելու իրավունքը: Նրա ստեղծագործությունը դարձավ հայրենիքի անցյալի և ներկայի, նրա հոգևոր ուժերի և գեղարվեստական ավանդությունների լավագույն, ամենախոր մարմնավորումը: Այդ իրողությունը գիտակցվել է դեռևս Թումանյանի կենդանության ժամանակ: 1914 թ. Վահան Տերյանը նրան բնութագրել է իրեն «մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու հմաստուն ու վսեմ թարգման», իսկ Վալերի Բրյուսովը երկու տարի անց գրել է: «Ամբողջությամբ վերցրած՝ Թումանյանի պոեզիան ինքը Հայաստանն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և դրոշմրգած բանաստեղծական տողերում մեծ վարպետի ձեռքով»:

Անցած տասնամյակներին հասարակական և գրականագիտական միտքը, չնայած առանձին շեղումներին, ընթացել է Թումանյանի ժառանգության համաժողովրդական նշանակությունը և գեղարվեստական անմրցելի մեծությունը

ավելի ու ավելի խոր, բազմակողմանիորնն ընթռնելու և խմատափրելու ճանապարհով: Դրա ամենից ցայտուն արտահայտությունը պետք է համարվեն մեր մեծ բանաստեղծութիւնի պատկերավոր բնորթագրումները: Թումանյանի մահվան թարմ տպավորության տակ գրած հոդվածում (1923) Ագ. Խահիակյանը նրա պրեմիերն ու լեգենդները համարեց «մեր գրի անմահ փառքն ու գոհարակերտ բարձուերը, որից այն կողմ չի անցել մեր թոփշը»: Դրանից ճիշտ մեկ տասնամյակ անց ե. Չարենցն այդ նոյն միտքն ամփոփեց թերվավոր բանաստեղծական բանաձևի մեջ. «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:

Հովհ. Թումանյանի ստեղծագործության համազգային հշանակությունը, նրա անփոխարիմելի դերը հայ գրականության մեջ ունիզմի և ժողովրդակնության սկզբունքների գարգացման գործում, ինչպես նաև նրա առնչությունները ՍՍՀՄ ժողովրդների գրականության, նոր ժամանակների համաշխարհային գրական պրոցեսի և գեղարվեստական որոնումների հետ բացահայտվել և մեկնարանվել են գիտական բազմաթիվ ուսումնասիրությունների մեջ: Այդ հարցերը լայնորեն լուսաբանվեցին հատկապես մեծ բանաստեղծ ծննդյան 100-ամյակի համաժողովրդական տոնակատարության ժամանակ, որը մեծ շուրջով ու հանդիսավորությամբ անցկացվեց 1969 թվականին: Թումանյանի անունը լինկատար իրավունքով մտել է նոր ժամանակների համաշխարհային խոշորագոյն բանաստեղծների՝ Գյորեի և Բայրոնի, Պուչկինի և Լեռնոնտովի, Միջկիշի և Շնչենկոյի, Նեկրասովի և Լոնգֆելլոյի անունների շարքը, որոնց ժառանգությունը պատկանում է ամբողջ մարդկությանը:

Ավելորդ է ապացուցել, թե ինչքան կարևոր է ինչպես Թումանյանի երկերի մասսայական հրատարակությունների ու թարգմանությունների, այնպես էլ, մանավանդ, նրա գրական ժառանգությունը բնագրագիտության նորագույն սկզբունքներով տպագրության պատրաստելու գործը: Դա հայ գրականգիտության առաջնահերթ խնդիրներից է և ունի ոչ միայն գրական, այլև հասարակական և ընդհանուր մշա-

կութային մեծ արժեք ու հշանակություն: Ներկա հրատարակությունը կոչված է լինելու կարևորագույն քայլ այդ խնդրի հրականացման ճանապարհին:

Թումանյանի երկերի գիտական հրատարակության համար սկզբնաղբյուրի արժեք ունեն, ամենից առաջ, նրա կենացանության ժամանակ լուս տեսած ժողովածուները, ինչպես նաև չափածու և արձակ բազմաթիվ գործերի տրամադրությունը առանձին գրքովկններով: Ակաած 1890 թվականից մինչև 1922 թ., ավելի քան երեսուն տարվա ընթացքում Թումանյանը հրատարակել է հինգ համեմատարար ծավալուն ժողովածու (1890, 1892, 1903, 1908, 1922), բոլորն էլ «Բանաստեղծություններ» ընդհանուր վերտառությամբ: Այդ ժողովածուներն ամփոփում են քնարական բանաստեղծություններ, պոեմներ և բալլադներ, ինչպես նաև քարգմանություններ: Մի քանի անգամ էլ Թումանյանը լուս է ընծայել չափածու երկերի ժողովածուներ՝ կազմված ժամանակին կամ թեմատիկ սկզբունքով՝ «Դաշնակներ» (1893, 1896), «Լեգենդներ» (1904), «Հայրենիքին հետ» (1916), «Քայուակներ» (1920):

Հովհ. Թումանյանի անդրանիկ ժողովածուն («Բանաստեղծություններ», առաջին հատոր, Մուկվա, 1890) իր պարունակած քնարական գործերով և պոեմներով («Լոռեցի Սարոն», «Մերիի», «Ալեք») հեղինակի անունը դասեց արեւկելահայ առաջատար բանաստեղծների շարքը: Երկու տարի անց (1892) տպագրվեց «Բանաստեղծությունների» երկրորդ հատորը, որը, ի թիվս այլ երկերի, տեղ գտան ևս երեք պոեմ («Անուշ», «Մերժած օրենք», «Մարոն»): Այս երկու հատորները, չնայած ուսումնառության և որոնումների շըրջանում գտնվող նեղինակի նկատելի թուլություններին (որոնք հետագայում մենքշին նրան՝ եւկան վերամշակման և ներարկելու հիշալ երկերից մի քանիսը), կարևորագույն հշանակություն ունեն Թումանյանի ստեղծագործական ուղղութանական գործությունները և այդ համար մեծ անհանդաց առաջարկության և խորության նոր,

շատ ավելի բարձր աստիճանի: Այդ ժամանակ էլ ծագեց նրա չափածո ստեղծագործության լավագույն մասը մեկ ստվար հատորով հրատարակելու միտքը, որի հրականացումը եղավ 1903 թ. Թիֆլիսում տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուն: Այդ գրքով առաջին անգամ հասարակությանը ներկայացավ «նոր Թումանյանը՝ նախորդ տարիների գեղարվեստական թերություններից իսպան ազատագրված և ունախտական պոեզիայի բարձութեական հասած բանաստեղծը: Կարելի է ասել, որ հենց այդ գրքով էր, որ Թումանյանը դարձավ արևելահայ բանաստեղծության խոշորագույն, առաջատար դեմքը: Նրա դասական շատ երկերի, մասնավանդ հանրահայտ պոեմների ու բալլադների հիմնույթին վերամշակված, բարձրագույն գեղարվեստական մակարդակի հասցված բնագրերը առաջին անգամ երևան եկան 1903 թ. ժողովածուի մեջ: Այդ գրքի նշանակությունը մեծանում է հատկապես նրանով, որ դա Թումանյանի ժողովածուներից միակն է, որի տպագրության ընթացքին նա հնարավորություն է ունեցել սկզբից մինչև վերջ հետևելու անձամբ և ամենայն ուշադրությամբ («Բանաստեղծություններ» վերտառությամբ մյուս չորս գրքերը տպագրվել են Մոսկվում, Բաքվում, Կ. Պոլսում, և Թումանյանը դրանց հրատարակությանը անձամբ և անմիջականորեն հետևելու կամ վերահսկելու հնարավորություն չի ունեցել):

Հինգ տարի անց՝ 1908 թ. Բաքվում հրատարակվեց Թումանյանի «Բանաստեղծություններ» նոր ժողովածուն, որն իր կազմով և բնագրով զգալիորեն տարբերվում էր հայուրդից. բնագրերի մեջ մտցվել են բազմաթիվ փոփոխություններ և լրացումներ, հանվել են մի շարք երկեր և ավելացվել նորերը (օրինակ՝ «Թմւկաբերդի առումը»): Սակայն այն համգամանքը, որ այս ժողովածուն տպագրվեց առանց հեղինակի անմիջական վերահսկողության, պատճառ է դարձել մի շարք վրիհակների և աղճատումների (դրանց մի մասը Թումանյանը նշել է գրքի հեղինակային օրինակների վրա):

Նույնը գգայի չափով վերաբերում է նաև Թումանյանի կազմած վերջին ժողովածուին («Բանաստեղծություններ»

Կ. Պոլիս. անվանաթերթի վրա նշված է 1922, իսկ շապիկի վրա՝ 1923, քանի որ գիրքը լուս է տեսել 1923 թ. սկզբին): Այս հատորն ամենից ծավալուն ու բազմազան է Թումանյանի կենդանության ժամանակ հրատարակված ժողովածուներից և շատ կողմերով արտահայտում է հեղինակի վերջին կամքը: Գրքի վերջում գետեղված՝ հրատարակչի (Կ. Քեշիշյան որդի) փոքրիկ ծանոթագրության մեջ նշվում է. «Ներկա հավաքածուն պատրաստած է այ. Հովհաննես Թումանյան, 1921-ին» (պետք է ենթադրել, որ գիրքը կազմվել է նախքան 1921 թ. հոկտեմբերին Կ. Պոլիս մեկնելը և անձամբ հանձնվել հրատարակչին): Նոյն ծանոթագրությունից իմանում ենք նաև, որ հեղինակն «այս հատորն է նախապես հրատարակված իր բանաստեղծություններն ունաքը, իր իսկ բառերով իբր իբր հոգիին անհարազատ արտահայտություններ, և մյուսներուն վրա կատարած է սրբագրություններ, կրասումներ և փոփոխություններ»: Այս առումով Կ. Պոլիսի ժողովածուն, անշուշտ, շատ կարևոր աղբյուր է Թումանյանի չափած երկերի (մասնավանդ պոեմների և բալլադների) վերջնական բնագրերը որոշելու համար: Սակայն այդ գրքի տպագրությունը նոյնական արականացվեց առանց հեղինակի անմիջական մասնակցության (1922 թ. և 1923 թ. սկզբին Թումանյանը հիվանդ վիճակում գտնվում էր Թիֆլիսում և ապա՝ Մոսկվայում, որ և վախճանվեց): Այդ պայմաններում գրքի մեջ տեղ են գտել բազմաթիվ վրիհակներ, բառերի սխալ գրություններ (դրանց մի մասը հետևանք էր արևմտահայ գրական լեզվի ձևերի և ողդագրության ազդեցության): Ժամանակակիցների և հարազատների վկայությամբ՝ Թումանյանը հիվանդ վիճակում նկատել է այդ սխալների մի մասը, օտարիսկների վրա նշել և ուղարկել է Կ. Պոլիս, բայց, ըստ երեւույթին, դրանք ժամանակին տեղ չեն հասել և տպագրությունից առաջ չեն ուղարկվել (միայն գրքի որոշ օրինակների վրա կան տպագրությունից հետո արված մի շարք ուղղումներ, որոնք պետք է ենթադրել, մտցվել են Թումանյանի նշումների հիման վրա):

20—30-ական թվականներին ետմահու լույս տեսան Թումանյանի երկերի մի քանի ժողովածուներ (օրինակ՝ «Երկերի ժողովածու»։ Ժողովրդական հրատարակություն), Երևան, 1926, «Երկեր. մի հատորյակ», կազմեց Ն. Թումանյան, Երևան, 1938, և այլն), եղան առանձին երկերի բազմաթիվ հրատարակություններ։ Սակայն իրենց բովանդակությամբ և գրական-հասարակական նշանակությամբ հիշատակության են արժանի հատկապես հետևյալ երկու գրքերը։

1934 թ. լույս տեսավ Հովհ. Թումանյանի «Գեղարվեստական երկեր» մեծադիր ժողովածուն Եղիշե Զարենցի խրմագրությամբ և Ակարիչ Տաճառ Խաչվանքյանի շրեն ձեւվագրությամբ։ Դա մեկ հատորի մեջ Թումանյանի գրեթե ամբողջ գեղարվեստական ստեղծագործությունը ի մի հավաքելու փորձ էր։ Այդ հրատարակությանը, բացի խմբագրից, գործուն մասնակցություն է բերել նաև բանաստեղծ դուստր Նվարդ Թումանյանը։ Ինչպես նշված է խմբագրի առաջարկում, այդ հատորը ծննդել է Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի նախապատրաստման ընթացքում, մի հրատարակություն, որը պետք է կազմված լիներ երեք մեծադիր հատորից (I—ավարտուն գեղարվեստական երկեր, II—վաղ շրջանի երկեր, սևագիր և անավարտ գործեր, տարրերակներ, III—հոդվածներ և նամակներ), ունենար համապատասխան գիտական ապարատ։ Այդ ծրագիրը հետագայում փոխարինվեց լայն ընթերցող շրջաններին հասցեագրված մեկ հատորյակով, որը ներկայացնում է Թումանյանի գրական ժառանգությունը՝ ըստ հիմնական ժանրերի (պոեմներ, լեգենդներ և բալլադներ, երգեր, քայլակներ, պատմվածքներ, հեքիաթներ, թարգմանություններ և փոխադրություններ)։ Բացի ավարտուն երկերից, այս գրքում առաջին անգամ հրապարակվեցին նաև մի քանի տասնյակ անտիպ բանաստեղծություններ, սևագիր հատվածներ «Հառաջան», «Անուշ», «Սասունցի Դավիթը», «Հազարան թլբով» պոեմներից։ «Գեղարվեստական երկեր» գիրքը իր հարուստ բովանդակության և գեղեցիկ ձևավորման շնորհիվ լայն տարածում գտավ, նվաճեց բազմահազար ընթերցողների

սերը։ Զարենցն իր խմբագրած ժողովածուն համարում էր «որոշ անխուսափելի էտապ մեր մեծագույն բանաստեղծի երկերի իդեալական, այսինքն ակադեմիական հրատարակության ճանապարհին,—մի հպատակ, որ, ինչպես փորձը ցուց է տալիս, կարող է մարմնավորվել միմիայն մեր բոլոր լավագույն գրական-գիտական ուժերի կողեկտիվի, մաերակըրկիտ, համառ և բազմամյա աշխատանքով»։

1939 թ. հրատարակվեց Նվարդ Թումանյանի կազմած «Թումանյանը քննադատ» ժողովածուն։ Այստեղ առաջին անգամ ի մի հալվաքվեցին մամուլի էջերում ցրված թումանյանական հոդվածների ու ելույթների մի զգալի մասը, հատվածներ նրա անտիպ նամակներից։ Նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով՝ ամեն մի տարեթվի տակ առանձնացնելով հոդվածներն ու նամակները։ Ժողովածուն, որն առ այսօր իր տեսակի մեջ մնում է միակը, մեծ դեր խաղաց Թումանյանի գեղագիտական և քննադատական ըմբռնումներն ընթերցող լայն շրջանների սեփականությունը դարձնելու գործում։

1930-ական թթ. կեսերին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) գրականության և լեզվի ինստիտուտում սկսվեցին Հովհ. Թումանյանի առաջին գիտական հրատարակության աշխատանքները, որոնք 1943 թ. հետո շարունակվեցին և ավարտվեցին ՀՍՍՀ ԳԱ Մ. Արենյանի անվան գրականության ինստիտուտում։ Երկերի ժողովածուի վեց հատորները (սկզբնապես նախատեսված հիմնգի փոխարեն) լույս տեսան հետևյալ ժամանակագրական հաջորդականությամբ և կազմով։ 1940 թ. —հ. II (պոեմներ), 1947 թ.—հ. V (նամակներ), 1949 թ.—հ. III (պատմվածքներ և հեքիաթներ), 1950 թ.—հ. I (բանաստեղծություններ), 1951 թ.—հ. IV (քննադատություն և հրապարակախոսություն), 1959 թ.—հ. VI (լուցուցիչ՝ գեղարվեստական երկեր, հոդվածներ և ուսումնասիրություններ, նամակներ)։ Հատորների բնագրերը տպագրության պատրաստելու և ծանոթագրելու բարդ և դժվարին աշխատանքը իրագործվել է մի խումբ գրականագետների, բայց

ամենից ավելի՝ Նվարդ Թումանյանի և Արամ Ինձիկյանի շամբերով: Նրանք, Միմակ Սահակյանի (պատասխանատու խմբագիր) և Ստեփան Չորյանի հետ միասին, եղել են նաև Խմբագրական կողեգիայի անդամներ:

Հովհ. Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակությունը նշանակալի երևոյթ էր ոչ միայն թումանյանագիտության, այլև ընդհանրապես սովորակայ բնագրագիտության պատմության մեջ: Ծիշու է, 1920—30-ական թթ. եղել էին առանձին հայ դասականների երկերի ժողովածուներ, որոնք իրենց բնույթով մոտենում էին գիտական հրատարակության սկզբունքներին ու պահանջներին, ինչպես Վահան Տերյանի երկերի քառահատորյակը Պ. Մակինցյանի խմբագրությամբ (1923—25), Միասք Մեծարենցի Երկերի լիակատար ժողովածուն մեկ հատորով, Վ. Ալավանի և Վ. Նորենից խմբագրությամբ (1934), Հակոբ Պարոնյանի Երկերի լիակատար ժողովածուն 11 հատորով, որի հրատարակությունն սկսվեց 1931 թվականից: Թումանյանի երկերի հրատարակության հետ գրեթե միաժամանակ սկսվեց նաև Միքայել Նալբանդյանի Երկերի լիակատար ժողովածուի տպագրությունը չորս հատորով (1940—1949): Սակայն, առանց չափազանցնելու, կարելի է ասել, որ Հովհ. Թումանյանի երկերի առաջին գիտական հրատարակությունը հնատկապես բարդ և դժվարին գործ էր: Առաջին անգամ էր հայ նոր գրականության բնագրագիտությունը գործ ունենում բանակով այդքան շատ ու բազմազան տպագիր ու ձեռագիր (այն էլ՝ մեծ մասամբ սևագիր) նյութերի հետ, որոնց հավաքումը, վերծանումն ու համակարգումը կապված են հըսկայական դժվարությունների հետ: Թումանյանի երկերի բնագրերը հրատարակության են պատրաստվել ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների ստուգման և համեմատության հիման վրա: Բացի հիմնական (կանոնիկ) բնագրերից հրապարակվել են նաև նրանց նախնական տարբերակները, զանազան հրատարակությունների ու ձեռագրերի մեջ եղած տարբերությունները: Այս ճանապարհով վեցհատորյակի մեջ առաջին անգամ հավաքվեցին ու հրատարակվեցին բազ-

մաթիվ ավարտված երգեր ու հատվածներ, ձեռագրային այլ ընթերցումներ (հատկապես առաջին և երկրորդ հատորներում): Ծանոթագրությունների մեջ տրված են տեղեկություններ երկերի ստեղծագործական պատմության, հիմնական հրատարակությունների և պահպանված ձեռագրերի մասին:

Այսպիսով, վեցհատորյակն ստացին անգամ ներկայացրեց հայ ազգային մեծ բանատեղի գրական ժառանգությունը իր բոլոր կողմերով, նրա գրեթե ամբողջական ստեղծագործական դիմապատկերը: 40-ական թվականներից ի վեր այդ հրատարակությունը դարձավ Թումանյանի ստեղծագրության ուսումնասիրության հիմքը:

Սակայն, իր գրական և գիտական խոշոր արժանիքներով հանդերձ, Թումանյանի երկերի այդ առաջին ակադեմիական հրատարակությունն ուներ մի շարք բացթղումներ և թերություններ: Ամենից առաջ, այն ըստ ամենալի լիակատար չէ: Օբյեկտիվ և սորբեկտիվ կարգի տարբեր պատճառներով՝ հրանից դուրս են մնացել չափած և արձակ ոչ քիչ թվով ավարտուն և անավարտ երկեր, բազմաթիվ հոդվածներ: Կազմողները միշտ չէ, որ հնարավորություն են ունեցել հաշվի առնելու բանատեղի բոլոր ձեռագրերը, որի հետևանքով հրատարակության մեջ տեղ չեն գտել որոշ երկերի (մասնավոր՝ պուեմների) սևագիր տարբերակների մի զգալի մասը, հետևաբար և ըստ ամենայնի չի ներկայացվել հեղինակի կատարած ստեղծագործական աշխատանքի լրիվ պատկերը: Մի շարք հոդվածներ, ելույթներ, նամակներ, նոյնիսկ բանատեղություններ, տպագրվել են կրնատումներով: Թեև 1959 թ. տպագրված լրացուցիչ VI հատորն զգալի չափով հարստացրեց հրատարակության կազմը, սակայն չեր կարող լիովին վերացնել նշված բացերը: Պետք է ավելացնել, որ վեցհատորյակի ծանոթագրությունները ևս, ընդհանուր առնամբ, խիստ կարճառոտ են, իսկ երբեմն (մասնավոր՝ IV հատորում) չեն պարունակում նոյնիսկ ամենանհրաժեշտ տվյալները:

Հետագայում հրատարակված՝ Թումանյանի երկերի մի

քանի ժողովածուներ (օրինակ՝ «Հնաիր երկեր», 1953, «Երկեր: Երկու հատորով», 1958 և այլն) բնագրային առումով հենվում էին վեցհատորյակի վրա և որևէ նորություն չէին պարունակում: Նույնը վերաբերում է նաև բանաստեղծի երկերի բազմաթիվ առանձին հրատարակություններին:

1969 թ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ տպագրվեց նրա երկերի ժողովածուն չորս հատորով (Խըմբագրությամբ Ա. Ինձիկյանի և Էդ. Զքբաշյանի), հետևյալ բովանդակությամբ. հ. 1—պոեմներ և բալլադներ, հ. 2—բանաստեղծություններ, հ. 3—պատմվածքներ և հեքիափներ, հ. 4—նոդվածներ և նամակներ: Այս հրատարակության մեջ փորձ արվեց վերսուոգելու Թումանյանի երկերի բնագրերի հետ կապված մի շարք հարցեր, սկզբնաղբյուրների հիման վրա բնագրերի և ծանոթագրությունների մեջ մտցվեցին բազմաթիվ ճշտումներ և լրացումներ: Սակայն բառահատորյակի մասայական բնույթը, բնականարար, հնարավորություն չէր տալիս լուծելու այն բոլոր հարցերը, որոնք պետք է տեղ գտնեն գրողի ժառանգության գիտական հրատարակության մեջ (այսպէս, հատորներում չկան տարբերակների և բնագրային տարբերությունների բաժիններ, խիստ սեղմ են ծանոթագրությունները և այլն):

Հետագայում հրատարակեցին Թումանյանի երկերի ժողովածուներ մեկ (1978), երկու հատորներով (1985), որոնց կազմող Լ. Հախվերդյանը հենվել է 1969 թ. բառահատորյակի բնագրերի վրա:

Դեռևս 60-ական թթ. Ակգրին, երբ հանրագումարի էին բերվում Թումանյանի երկերի առաջին գիտական հրատառակության արդյունքները, պարզ դարձավ, որ այն շատ կողմերով թերի է, և մոտ ապագայում պետք է դրվի բանաստեղծի գրական ժառանգության նոր, իսկապես լիակատար և ակադեմիական հրատարակության խնդիրը: Բայց դրա իրագործմանը կարելի էր ձեռնարկել միայն երկարան ու բազմակողմանի նախապատրաստական աշխատանքից հետո: 1962 թվականից սկսեցին պարբերաբար գումարվող թումանյանական ընթերցումները, որոնք կազմակերպում են

ՀԱՅ ԳԱ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը և Հովի. Թումանյանի թանգարանը: Այդ ընթերցումների հիման վրա 1964 թ. լույս տեսավ «Թումանյան: Ուսումնասիրություններ և հրապարակումներ» մատենաշարի առաջին գիրքը, որին (ճիշտ է, երբեմն մեծ ընդմիջումներով) հաջորդեցին երկրորդ (1969), երրորդ (1983) և չորրորդ (1985) հատորները: Այդ գրքերում, բացի Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարբեր կողմերի լուսաբանականը նվիրված հոդվածներից, հրապարակվում են նաև գրողի ժառանգության բազմաթիվ անձանոթ էջեր, ինչպես նաև ժամանակին մամուլում տպագրված, բայց հեղինակի կազմած ժողովածուներում տեղ չգտած մի շարք նյութեր: Գիտական և գրական շրջանների սեփականությունը դարձան «Հառաշանք», «Դեպի Անհունը» պոեմների սևագիր հատվածներ, «Հազարան բլրովի» հետ կապված բազմաթիվ նյութեր, «Դեպի հայրենիք» անավարտ վիպակի ծավալուն ակիզըքը, ավարտուն և անմշակ շատ ուրիշ երկեր, տարբերակներ, սևագրություններ և հատվածներ, ստեղծագործական և ինքնակենագրական գրառումներ, նամակներ, Թումանյանի հասարակական գործունեության հետ կապված փաստաթղթեր: Այդ հրապարակումները, առանց որոնց չի կարելի պատկերացնել թումանյանգիտության հետագա զարգացումը, զգալի շափով կմտնեն նաև գրողի երկերի ակադեմիական նոր հրատարակության մեջ:

Նախորդ տասնամյակներում Թումանյանի ստեղծագործության գիտական հրատարակության ուղղությամբ կատարված աշխատանքները, ինչպես նաև թումանյանգիտության ականոն նվաճումները, Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտին հնարավորություն տվեցին ձեռնամուխ լինելու մեջ բանաստեղծի գրական ժառանգության այս նոր ժողովածուի հրատարակությանը, որը պետք է, շատ ամենայնի, հնարավատախանի ժամանակակից բնագրագիտության շափանիշներին ու պահանջներին: Թումանյանի երկերի լիակատար ժողովածուն ծրագրված է հրատարակել տաս հատորով և հետևյալ բովանդակությամբ.

- 1 — Բանաստեղծություններ,
- 2 — Քառյակներ, բալլադներ, թարգմանություններ,
- 3 — Պոեմներ,
- 4 — Պոեմներ (այդ թվում՝ թարգմանական),
- 5 — Գեղարվեստական արձակ,
- 6 — Գրական-հրապարակախոսական հոդվածներ (1887—1912),
- 7 — Գրական-հրապարակախոսական հոդվածներ (1913—1921),
- 8 — Ուսումնասիրություններ, զանազան հատվածներ և գրառումներ (այս հաստորում կտրվի նաև Թումանյանի բոլոր երկերի այբբենական ցանկը),
- 9 — Նամակներ և գրություններ (1885—1904).
- 10 — Նամակներ և գրություններ (1905—1922):

Հատորներում նշութերը դասավորվում են ժամանակագրական կարգով, իսկ տվյալ ժանրի ներսում բաժանվում են երկու մասի՝ 1) ավարտված երկեր, 2) սկագրություններ և հատվածներ: Եթե որևէ երկի ստեղծման ճիշտ տարեթիվը հայտնի չէ, հիմք է ընդունվում առաջին տպագրության թվականը: Հեղինակի կենդանության ժամանակ չտպագրված այն երկերը, որոնց գրության ճիշտ տարեթիվը հնարավոր չէ պարզել, գետեղվում են մոտավոր թվագրությամբ (1890-ական թթ., 1900-ական թթ. և այլն):

Սույն հրատարակության հատորները կունենան նաև տարրերակների բաժին: Այստեղ տրվում են երկի ստեղծման տարրեր փուլերում գրված և վերջնական խմբագրությանը նախորդած ամբողջական կամ հատվածային այն տարրերակները, որնք գեղարվեստական հատկանիշներով և լեզվանական մշակման առումով տարրերվում են իրարից և ունեն որոշակի ինքնուրույն արժեք: Եթե տողի մեջ փոխվել է նույնիսկ մեկ բառ, ապա բերվում է ոչ թե միայն փոխված բառը, այլ ամբողջ տողը՝ ընթերցողին հնարավորություն տալով ընկալելու տողի նախնական ձևն իր ամբողջության մեջ (փոփոխված բառը կամ արտահայտությունը տրվում է ոչ թե շղագիր, այլ սովորական տառերով):

Ելեկով ստեղծագործության մշակման ուղղությամբ կատարված աշխատանքի բնույթից հրատարակության մեջ կիրառվել են բնագրային տարրերությունների մատուցման տարրեր եղանակներ: Փոքրածավալ չափածո երկերի (բանաստեղծություններ, քայլակներ) ձեռագրերի և հրատարակությունների մեջ եղած տարրերությունները ցույց են տրվում ըստ առանձին տողերի: Իսկ մեծ ծավալի երկերի (պոեմներ, բալլադներ) մեջ կատարված փոփոխությունները բերվում են համեմատաբար ամբողջական հատվածներով և ըստ աշխատանքի փուլերի՝ առանձին-առանձին ներկայացնելով ձեռագրերի և տպագրությունների պատկերը, նրանց տարրերությունները հիմնական բնագրից: Այն դեպքում, եթե տվյալ ձեռագրում այս կամ այն տողն ունեցել է մշակման մի քանի աստիճան, դրանք նույնական դասավորվում են ըստ ստեղծագործական աշխատանքի փուլերի և, զանազանվելու համար, համարակալվում հայկական այբուբենի տառերով՝ ա, բ, գ, և այլն: Եթե սկագրության մեջ հեղինակը որևէ բառի կամ արտահայտության համար գրել է երկու կամ ավելի տարրերակ, նրանց միջև վերջնական ընտրություն չկատարելով, ապա այդ գուգահետ ձևերից առաջինը բերվում է հիմնական բնագրում, իսկ մյուսները տարվում են տողատակ:

Հեղինակի տվյալ բացատրություններն ու ծանոթագրությունները, ելեկով նրանց բնույթից ու բովանդակությունից տեղադրվում են կամ հիմնական տեքստի հետ, կամ է տարրերակների և ծանոթագրությունների բաժիններում: Իսկ բնագիրը պատրաստողների կազմած ծանոթագրությունները գետեղված են հասորի վերջում: Հոդվածների, ուսումնասիրությունների, գրառումների և նամակների համար կազմված ծանոթագրությունների տեղը բնագրում նշվում է արաբական թվերով: Բացատրվող բառը կամ արտահայտությունը, անհրաժեշտության դեպքում, բերվում է նաև տվյալ ծանոթագրության սկզբում: Գեղարվեստական երկերի բացատրություն պահանջող տեղերը ծանոթագրությունների մեջ մատնանշվում են տողերի համարակալման թվերով:

Յուրաքանչյուր ժամրի ծանոթագրություններից առաջ տրվում է ընդհանրացնող հոդված տվյալ բնագավառում Թումանյանի ստեղծագործական լաւատակի հիմնական գծերի, հայրենի գրականության պատմության մեջ նրա գրաված տեղի և յուրահատկության մասին։ Ծանոթագրությունները, բացի ձեռագրերին և տպագրություններին վերաբերող փաստերից, պարունակում են նաև տեղեկություններ երկի մշակման հիմնական փուլերի, կենսական և գրական ազդակների մասին։

Հոլմ. Թումանյանի ձեռագրերը, ճնշող մեծամասնությամբ, հավաքված են ՀԱԽ Կոլտուրայի մինիստրության Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում (ԳԱՄԹ), իսկ նրանց լուսապատճենները՝ Թումանյանի թանգարանում։ Բնագիր պատրաստղները օգտվել են նաև որիշ արխիվներում, Թումանյանի ընտանիքի կամ մասնավոր անձանց մոտ գտնվող հյուրերից։

Թումանյանի լեզվական անդադրում որոնումները և վայր արտահայտված յուրահատկությունը, գրական և բարբառային տարրերը զուգակցելու մշտական ձգտումը արտահայտվել են նաև այն բանում, որ ոչ միայն ստեղծագործական զարգացման տարրեր փուլերում կամ տվյալ երկի մշակման տարրեր աստիճաններում, այլև երբեմն միաժամանակ (նոյնիսկ միննոյն ձեռագրի մեջ կողք-կողքի) բանաստեղծն օգտագործել է զուգահեռ ձևեր, ինչպես, օրինակ. այս-էս, այն-էն, ձայն-ձեն, մայր-մեր, հայր-հեր, վերա-վրա, նորա-նրա, դժվար-դժար, կանաչ-կանանչ, ջահել-ջահիլ, տալիս-տալի, լալիս-լալի և այլն։ Ինչքան էլ սա լեզվական որոշ անհետողականության տպավորություն ստեղծի, ներկա հրատարակության մեջ նույնությամբ պահպանվել են բանաստեղծի օգտագործած այդ կրկնակի ձևերը, որպես Թումանյանի լեզվական որոնումների ուղղակի վկայություն։ Պահպանվել են նաև միևնույն բառի գրության տարրեր ձևերը, եթե դրանք պայմանավորված են ընտրված հյութով կամ արտահայտված տրամադրությամբ։ Օրինակ, Թումանյանի երկերի տարրեր տպագիր և ձեռագիր աղբյուրներում

լարելի է հանդիպել ոչ միայն աշխարհի, այլև աշխարհիք, աշխարք, աշխար գրությունների, որոնցից ամեն մեկն արդարանում է տվյալ կոնկրետ բովանդակությամբ կամ հանգարանական նկատառումներով։ Գրության այդ տարրերը ձևերը մնացել են անփոփոխ։ Այլ դեպքերում, եթե միննոյն բառի գրության անմիջօրինակությունը գեղագիտական կամ կառուցվածքային որևէ դեր չի խաղում, այլ բխում է անցյալուն որոշ ուղղագրական նորմերի չկարգավորված լինելոց (օրինակ՝ ճամբա-ճամփա-ճանապա, բաղր-բախտ, թագունթաքուն, աղջի-ախչի, բղիել-բիել և այլն) ընտրվել են ներկայումս ընդունված գրության ձևերը։

Զափածութեան, գաղտնավանկերի մեջ ամենուրեք պահպանված 1. Թումանյանի որած և ձայնավորի գրությունը, որը կարևոր նշանակություն ունի ուսանավորի ոիթմը ճիշտ ընկալելու համար։ Ըստ հնարավորին՝ հրազատորեն պահպանված են նաև Թումանյանի երկերի կետադրական առանձնահատկությունները (բացի այն դեպքերից, եթե տըսպագրվածի մեջ ապրդել են կետադրական ակնհայտ սխալներ, և կամ սևագրության մեջ բանաստեղծն ինչ-որ պատճուղ չի դրել անհրաժեշտ կետադրական այս կամ այն նշանը)։

Ներկա հրատարակության տարրերակների և ծանոթագրությունների մեջ ընդունված է պայմանական նշանների և հապավումների այն համակարգը, որը կիրառվել է նաև Թումանյանի երկերի վեցհատորյակում։

Ներկնակի փակագծերը պահպանվում են նոյնությամբ՝ կլոր ( )։

Զեռուգրում շնչված բառերը վերականգնելիս դրված են ուղղանկյուն [ ] փակագծերի մեջ։

Խմբագրության կողմից ավելացված կամ ենթադրաբար վերծանված բառերը դրված են սուր < > փակագծերի մեջ։ Հեղինակի կողմից բաց թողնկած և չգրված բառերն արտահայտվում են սուր փակագծերի մեջ առնված բազմակետարով < . . . . . >, իսկ անընթեռնելի և չկերծանված բառերը՝ նոյնպիսի փակագծերում, նշելով դրանց բանակը <1 անընթ.>, <2 անընթ.> և այլն։

Զափածո երկերն ընդգրկող հատորներում հիմնական քնագրի և տարբերակների տողերը համարակալվում են (բանաստեղծությունները և բալլադները 5, 10, 15, 20, իսկ պոեմները՝ 10, 20, 30 սկզբունքով), որի հիման վրա և հշլում են բնագրային տարբերությունները:

Յուրաքանչյուր հատորի ծանոթագրությունների սկզբում կտրվի այդ հատորի մեջ օգտագործված աղբյուրների և նրանց հապալումների ցանկը:

Թեև ներկա հրատարակությունը կոչվում է Երկերի լիակատար ժողովածու, բայց այն, բնականաբար, չի կարող ամփոփել բանաստեղծի գրչի տակից դրուս եկած անխտիր բոլոր տեքստերն ու հյութերը: Բազմաթիվ օրագրային և այլ բնույթի գրառումներ, հոդվածների պատառիկներ, նշումներ և ցանկեր, ինչպես նաև Թումանյանի առորագրած պաշտոնական գրություններ, դրուս կմնան այս հրատարակությունից, քանի որ դրանք ունեն սույն մասնագիտական արժեք և ընթերցող լայն շրջաններին հասցեագրվել չեն կարող: Այդ բոլոր հյութերը հաջորդաբար կգետեղվեն «Թումանյան Ուսումնասիրություններ» և հրապարակումներ» մատենաշարի հերթական հատորների մեջ, որոնց տպագրությունը զուգահեռաբար կիրականացնի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը: Այսպիսով, հիշյալ մատենաշարի ինչպես նախորդ, այնպես էլ նոր հատորները շատ կողմերով կլրացնեն ներկա տասնատորյակը, կամբողջացնեն Թումանյանի գրական ամբողջ ժառանգության հավաքման և տպագրության, այն գիտական շրջանառության մեջ մտցնելու խնդիրը:

Հովհաննես Թումանյանի Երկերի լիակատար ժողովածուն կոչված է ամփոփելու թումանյանագիտության շուրջ հարցուրամյա ճանապարհի ձեռքբերումները, դառնալու կայուն հիմք՝ հայ ազգային մեծ բանաստեղծի երկերի նոր մասսայական հրատարակությունների և թարգմանությունների, նրա կյանքի և ստեղծագործության գիտական ուսումնասիրության կարևորագույն խնդիրների լուծման համար:



## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորագույն առաջնահատ աշխատանքները:



ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հեռնե՞ր, ներշընչված դարձյալ ձեզանով,  
թընդում է հոգիս աշխուժով լըցված,  
Ու չերմ ըղձերըս, բախտից հալածված,  
Զեզ մոտ ևն թըռչում հախուռն երամով:

- 5 Զե՞զ, ձեզ, վերըստին, ամպամած լեռներ,  
Կյանքի տըխրության ամպերի տակից  
Ես ձայն եմ տալիս ու ծանրաթախիծ  
Հոգուս ձայները ձեզ բերում նըվեր:  
Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՞ն տրտմություն,  
10 Վեհափառ դալակ մանուկ օրերիս,  
Այնժամ էլ շէիր ինձ հանգիստ տալիս՝  
Սըրտիս ականջին խոսելով թաքուն...  
Ո՞վ, որ կանչում ես գիշեր ու ցերեկ  
Հազար ցավերով, հաղար ձեերով,—  
15 Ոգեսորության հըզոր թեերով  
Քեզ մոտ եմ գալիս, հայրենի՞ք իմ հեզ:  
Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով  
Քո ծաղիկներին ծաղիկ ավելցնեմ,  
Այլ դառն հեծության հառաշանքներով  
20 Էղ անդընդախոր ձորերըդ լըցնեմ:  
Զորե՞ր, ա՞յ ձորեր, սև, լայնաբերան,  
Սըրտիս էս խորոնկ վերքերի նըման.  
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,  
Զեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել  
25 Դուք էլ խոսեցե՞ք, դուք էլ պատմեցե՞ք,  
Զեր անդունդներով եկեք շափվեցե՞ք,  
Դուք է՞լ եք, տեսնեմ, էնքան մեծ ու խոր,  
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

\* \* \*

### ԱՐԱԹՔ

Հոգուս հատոր  
 Սըրտիս կըտոր,  
 Դասիս համար  
 Դու մի՛ հոգար,  
 5 Թե կան դասեր  
 Կա նաև սեր,  
 Եվ ի՞նչ զարմանք,  
 Իմ աղավնյակ,  
 Որ կենդանի  
 10 Մի պատանի  
 Սերը սըրտում  
 Դաս է սերտում,

Սողոմոնի պես, տեր,  
 Ես խելք լեմ ուզում,  
 Ինձ երկար օրեր  
 Եվ փող տուր բազում:  
 5 Մի ձեռք էլ շոր,  
 Միայն մոդնի, տեր,  
 Մին էլ մի հաստ փոր,  
 Տըստ, ակնոցներ:  
 10 Եվ բավական է,  
 Դու վերեն դիտե,  
 Թե ինչեր կանե,  
 Այդ ծառադ գիտե:

## ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի՛, գութան, վարի՛, գութան,  
Օրն եկել է, ճաշ դառել,  
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
Օրհնյալ է աստված, հորովե՛լ:

5 Քաշի՛, եզը, ուսիդ մատաղ,  
Քաշի՛, քաշենք, վար անենք.  
Հիպտի՛ն արա, քըշի՛, հոտաղ,  
Մեր սև օրին ճար անենք:

Պարտքատերը գանգատ գնաց,  
10 Քյոխվեն կըգա, կըծեծի,  
Տերտերն օրհնեց, անվարձ մնաց,  
Կըբարկանա, կանիծի:

Էն օրն եկան թովշի արին,  
Հարկ են ուզում տերության.  
15 Ի՞նչ տամ կոռին ու բեգյառին...  
Վարի՛, վարի՛, իմ գութան:

Զեռս պակաս, ուժը հատած,  
Հազար ու մի ցավի տեր,  
Ինձ են նայում մերկ ու սոված  
20 Մի տուն լիքը մանուկներ,

Արի՛, գութան, վարի՛, գութան,  
Օրն եկել է, ճաշ դառել,  
Առը շուռ տուր, խոփիդ դուրբան,  
Օրհնյալ է աստված, հորովե՛լ:

## ԱՄԱԽՎԱ ԳԻԾԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Լուսընկա գիշեր,  
Երկինքը պայծառ,  
Անհամար աստղեր  
Ցոլցլում են վառ:

5 Քընած է արգեն  
Հովտի մեջ գյուղը,  
Մըթնած ու լուս է  
Գյուղացու հյուղը:

Հոգնած գյուղական  
10 Ընտանիքն ահա  
Սրահում, կալում.  
Կամ կըտրի վրա:

Երկընքի դիմաց  
Գրկված են քընած,  
15 Վերևիցն, ասես,  
Ժըպտում է աստված:

ԱՐԵՎԱՆԻ ԹԱՐԱՎԱՐԱ

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մ Պ Ա Կ Ո Ւ Ա  
ՏՊԱՐԱՆ Մ. ԹԱՐԽՈՒԴԻՆԻԱՆԻ

1890

(7)

Հ. Հովհաննեսի առաջին ժողովածուի շապիկը

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ,  
իրենց հասակի կարգով, ծալպատակ,  
Միասին բազմած,  
Մի շըրջան կազմած,  
5 Քեզ էին անում  
եվ ուրախանում  
Միր ճըսկա պապերն ու մեր հայրերը՝  
Գյուղի տերերը:

Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ,  
10 Երեք դասընկեր,  
Նըրանց առաջին գըլխարաց կանգնած,  
Զերքներըս խոնարհ սըրտներիս դըրած,  
Զիւ, ուժեղ ձայնով նըրանց ըսպասում—  
Տաղ էինք ասում:

15 Երբ զըլվարթածայն մեր երգը լըռեց,  
Մըռայլ թամադեն բեխերն ոլորեց,  
Նըրա հետ վերցրին լիք բաժակները  
Բոլոր մեծերը  
Ու մեզ օրհնեցին.—«Ապրե՛ք, երեխե՛ք,  
20 Բայց մեզ պես չապրեք...»

Ժամանակ անցավ, նրանք էլ անցան,  
Զըլվարթ երգերըս վըշտալի դարձան.  
Ու ես հիշեցի մեր օրը լալիս,  
Թե մեզ օրհնելիս  
25 Ինչու ասացին.—«Ապրե՛ք, երեխե՛ք,  
Բայց մեզ պես չապրեք...»

Խաղաղությո՞ւն ձեզ, մեր անբա՛խտ պապեր,  
Ձեզ տանջող ցավը մե՛զ էլ է պատել:  
Այժըմ, տրխորության թե քեֆի ժամին,  
30 Մենք էլ՝ օրհնելիս մեր զավակներին՝  
Ձեր խոսքն ենք ասում.—«Ապրե՛ք, երեխե՛ք,  
Բայց մեզ պես շապրե՛ք...»

Օգոստի 10-ի առաջին օրը  
Երևան ենց շաբաթ  
Տեսական առաջին օրը  
Օգոստի 11-ի առաջին օրը  
Գոյաց առաջին օրը  
Օգոստի 12-ի առաջին օրը  
Օգոստի 13-ի առաջին օրը  
Օգոստի 14-ի առաջին օրը  
Օգոստի 15-ի առաջին օրը  
Օգոստի 16-ի առաջին օրը  
Օգոստի 17-ի առաջին օրը  
Օգոստի 18-ի առաջին օրը  
Օգոստի 19-ի առաջին օրը  
Օգոստի 20-ի առաջին օրը  
Օգոստի 21-ի առաջին օրը  
Օգոստի 22-ի առաջին օրը  
Օգոստի 23-ի առաջին օրը  
Օգոստի 24-ի առաջին օրը  
Օգոստի 25-ի առաջին օրը  
Օգոստի 26-ի առաջին օրը  
Օգոստի 27-ի առաջին օրը  
Օգոստի 28-ի առաջին օրը  
Օգոստի 29-ի առաջին օրը  
Օգոստի 30-ի առաջին օրը  
Օգոստի 31-ի առաջին օրը

Է. Գութանի երգը՝ բահաստեղծության նախնական տարբերակը

## ՆԱՀԱՏԱԿ

## I

- Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,  
Երկնաբերձ լեռան գառիվայր կրծքին,  
Հանգում է վաղուց մի սուրբ նահատակ,  
Կուսական և թափ ծմակի միջին:
- 5 Քանդված է մատուն, քարերը ցրված,  
Եվ ավերակի վերա սպառած,  
Կանաչ բաղեղով խստապինդ գրկված  
Նիրհում էր ուսին ճյուղերը փուած:
- 10 Խոնարհված էր խաչն յուր պատվանդանից  
Եվ ընկած հեռու սուրբ ավերակից,  
Իսկ գերեզմանը մեծ նահատակի  
Մասուտ նայում էր խաշամի տակից:
- 15 Գիշերներն այնտեղ կանթեղ չէր վառվում,  
Այցելում էին նրան երեները,  
Եվ միշտ հանգստյան երգ էր հորինում  
Քամին, շարժելով լայն տերևները:

## II

- Այդ լուս ու խաղաղ վայրում մենացած,  
Երկար ժամանակ աստուծո մարդու  
Անշուք շիրիմը մարդկանցից մնաց  
20 Անհայտ և անզարդ, առանց այցելու

Մինչեւ որ մի օր աստուծո հրամանով,  
Երազ եկավ մի արդար մարդու մոտ,—  
Թէ այս ինչ տեղը թաղված է մի սուրբ,  
Յավերով լիքը երկրին անծանոթ:

- 25 Այսպիսի հրաշքով նա հայտնվեցավ  
Մարդկային ազգի փրկության համար,  
Եվ հոչակավոր ուխտատեղ դարձավ,  
Բարձրացավ խորան գեղեցկակամար:

## III

- Նա անտրտունց, ասում է հին բանը,  
30 Ինչպես քրիստոնյա բարեպաշտ և քաշ,  
Պահելով Տիրոջ սուրբ պատվիրանը,  
Գլուխը թեքեց թշնամու առաջ:

- Եվ արդար մարդիկ տեսել են աշքով,  
Ասում է նույնակա ավանդությունը,  
35 Որ լույս է իջել երկնային հրաշքով  
Եվ բժշկում է հիվանդությունը:

- Հաճախ բերանովն արժանավորի  
Հայտնել է երկրին աստղծո կամքը,  
Եվ ժողովուրդը գլխովին տեղի  
40 Զոնում է նրան իրան հարգանքը:

- Բայց և շատ անգամ յուր գորությունը  
Նա ցույց է տվել մի պատժով արդար,  
Քանդելով մեկի ողջ տեղ ու տունը,  
Մարդկանցն անհայտ մեղքերի համար:

- 45 Նա է մեղավորին տալիս պատիժը,  
Որժանավորին ուզած բարիքը.  
Նա է սահմանում, գործին համեմատ,  
Մահկանացոի գիսի գալիքը:

Ահա թե ինչու հայ ժողովուրդը,  
 50 իաշ կամ նահատակ անունը տալով,  
     զուր է համարում մարդկային ջանքը,—  
     նրա մեծ զորքի վերա հուսալով:  
     Կամ երբ որ տերտերն յուր տուփը ձեռքին  
     Հայտնվում է նրան կրկին և կրկին,  
 55 Առատ շահելով, հանուն սուրբ խաչին,  
     նա հավատում է թե՝ փրկեց հոգին:

IV

Անցնում է անցվոր այն մատրան մոտից  
 Երկյուղածությամբ և խաչակնքում,  
 Զարատանց օրով դառնացած սրտից  
 60 Այսպես լիսափրտ աղոթում մտքում.—  
 «Ո՞վ սուրբ նահատակ, գլխովդ պտույտ գամ,  
 «Դուն հասցնես ինձ ապրուստ օրական,  
 «Քո մեծ զորքովդ, անգութ, անզգամ  
 «Թշնամուս ջնջես և առնես կոխան»:

\* \* \*

65 Հայոց ժողովուրդն ահա խռնված  
     Հետևում է յուր ծերուկ տերտերին՝  
     Խաչից խնդրելու, որ բռնված  
     Երկինքը խնայե իրան արտերին:  
     Թե մի վարակից ցավ է տարածված,  
 70 Մարախն ուտում է գյուղացու ցանը,  
     Այս «Երկնառաք պատուհասի» դեմ  
     «Օրհնած հողն» է միակ դարմանը:

\* \* \*

Արև կրակ է թափում վերից.

Հայուհին ընկած խաչի առաջին,  
 75 Արյուն արցունք է շափում աշերից,  
     Օգնություն հայցում,—հիվանդ է որդին:  
     Եվ զարդարում է զերմեռանդ սրտով  
     Սառի ճյուղերը յուր կտրած մազով.  
     Ուխտում է երկար պաս ու ծոմ պահել,  
 80 Ինչպես ազգել է խաշը երազով:

\* \* \*

Ահա մի ծեր կին մաղախն ուսին,  
 Որդի լի ծնում մանկատի հարսին,  
 Պիտի յոթն գյուղ «խաչի սեր» ման գա,—  
 Ամով արգանդին խաշը պտուղ տա:  
 85 Տատի ետկից քողը երեսին,  
     Ոտքերը բոբիկ, կուշ ու հուզ գալով  
     Գնում է հարսը գրավը ձեռքին,  
     Իրավ շրջործած մեղքերը լալով:

\* \* \*

Ահա ուխտավորն ահով ու դողով  
 90 Խմբված լսում է պատգամավորին\*,  
     Որը պատմում է, իրան ծեծելով,  
     Ինչ է կամեցել երկինքը որին:  
     Մրան մուրազը, նրան աշխարանք,  
     Կամ պահանջում է զոհեր ծանրագին.  
 95 Մյուսին ցեղեցեղ նզովք, բանադրանք,  
     Որ հայհոյել է յուր ընկնավորին:

\* Պատգամավոր կամ ընկնավոր, շատ տեղ «նղավող» են ասում, որովհետև գեռ Դելֆի պատգամախոսի նման ուշաբարձվում է, ապա Փրփերած, իրան ծեծելով հայտնում «աղայի»—խաչի կամքը: (Այս ծանրթագործյան մի մասը պահպանվել է նաև ինքնագրում—խմբ.):

## V

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,  
Ուր չոր քարն էլ է ծլում, կանաչում,  
Տեղացու սիրտը միաժամանակ  
100 Մի գաղտնի երկյուղ հալում է, մաշում:

Նա իրան ուժին դեռ չէ հավատում,  
Նա դեռ իրանից դուրս է որոնում  
Բարօրությունըն յուր շարքաշ կյանքի  
Եվ գոհացումն հասած զրկանքի:

Երանություն էր խոստացել հույսս ինձ,  
Բայց ես շըտա նրան կյանքի մեջ,  
Եվ քաշալերված պատիր խոստմունքից,  
Կյանքի դեմ իզուր վարեցի ես վեճ:

- 5 Կարծում էի, թէ մարդիկ անհամբեր  
Ուրախությամբ ինձ սպասում էին,  
Եվ ամեն քայլում խղճմտանք ու սեր  
Մարդոց սրտերը միշտ հուզում էին:  
Կարճատե՛ցնորք, որ անցար արագ,  
10 Ինչպես մի քամի, առավել շընչին,  
Եվ ահա ընկած իբրև մի նավակ,  
Որ կամեր լողալ ավագի միշին:  
Դուն անցար, այո՛, դարձյալ աշխարհը  
Կառավարվում է յուր օրենքներով,  
15 Եվ դիմակ առած մեծ բարերարը  
Մարդիկ է սպանում գաղտնի զենքերով:  
Մահացու ախտով վարակվածն ահա  
Անարատության հազած վերարկու,  
Եվ խավարասեր ամբոխը նրա  
20 Զագիր գործերին կանգնած ինկարկու  
Եվ հազարավոր անմեղ հոգիներ  
Հալածված են շար կրքերից անսանձ,

- Եվ, ի նախատինս բանականության,  
Արդար է միայն զորեղը մարդկանց:
- 25 Ահա գետնաքարշ և շարախնդում  
Խումբերըն անսիրտ մարդ-հրեշների  
Վիտում են անվախ՝ հրապարակներում,  
Իբրև առաջնորդ մարդոց մտքերի:
- Ահա, խնդության ձայներ են թնդում,  
30 Իբրև արձագանք չարության խոսքի,  
Ի՞նչ են կամենում, էլ ի՞նչ են խնդրում  
Պատուհասները մարդկային ազգի:
- Ի՞նչ եք կամենում դուք, մարդիկ ստոր,  
Մա՞հը, կործանումն արժանավորի.
- 35 Եվ այդ բոլորը միայն մի կտոր  
Հացի համար. սակայն, ո՞վ փիտի,  
Գուցե խավարը ձեզ տվեց պաշտոն  
Բանականության բոնավորների,
- 40 Եվ դուք, անմիտներ, ամբողջ մարդկություն,  
Զեզ հավիտենական կարծում եք գերի:
- Խղճե՞ր, նայեցե՞ք, ահա ձեր դիմաց,  
Առանց նայելու ձեր կտոր հացին,  
Բանականության զավակը կանգնած,  
Սպասում է նա մոտ լուսաբացին:
- 45 Երանություն էր խոստացել հույսս ինձ,  
Սակայն լրգտա նրան կյանքի մեջ.  
Բայց չեմ վհատել. անսպառ մեկ իղձ  
Դեռ ինձ մղում է դեպ հառաջ անվերջ:
- Հառաջ զ, կովելով, և կըգա մի օր,  
Որ կընկնի ներկան վատշվեր, դաժան,  
50 Նրա ավերի վերա փառավոր  
Ապագան լուսո կըկանգնի նշան:

## ՎԵՐՁԻՆ ԽՈՍՔ

- Հեռո՛ւ, ո՞վ սուրբ խաղաղություն,  
Մենք քեզ համար շունենք անկյուն  
Մեր հալածված հայրենիքում  
Եվ մեր ցաված սրտի խորքում:
- 5 Գնա դեպի այն լեռները,  
Ուր որ հովիվն ու գառները  
Ապահով են պատառողից,  
Մենք ազատ չենք ահ ու դողից:
- Գնա՛, հանգիր այն դաշտերում,  
10 Ուր որ իրար էլ չեն տիրում  
Եղբայր-մարդիկ, և հերկելով  
Քեզ օրհնում են սուրբ երգերով:
- Գնա դեպի երանավետ  
Այն վայրերը, ուր կյանքի հետ  
15 Կաղ չեն անում զվարճության  
Կամ հեշտության համար միայն:  
Իսկ մենք ցավով լեցուն սրտով  
Անկարող ենք միշտ անվրդով  
Ե՛վ քուրդերի լուծը տանել,  
20 Ե՛վ քեզ օրհնել, փառարանել:
- Հեռո՛ւ, ո՞վ սուրբ խաղաղություն,  
Մենք քեզ, իբրև մի լոկ անուն,  
Երանությամբ միշտ հիշելով  
Պիտի կովենք մեռցնող սրով:

\*  
\* \*

Ես նայում եմ. իմ առջև  
Ահա աիրոջ աշխարրը·  
Բերրի դաշտերը մինչեւ  
Հեռու լերանց այն շարքը:

\* \* \*

Ի՞նչ ես կատաղել անմեղ արարքից,  
Միամիտ ամբոխ, ես ի՞նչ արեցի.  
Ուզում ես անհետ քշել աշխարհից,  
Որ ես իմ պարտքը միայն կատարեցի:

5 Արժանավորի առաջ խոնարհած  
Ես պատարագ եմ մատուցանում,  
Եվ շար նախանձից ահա կուրացած  
Դուն ինձ քարկոծել ես ցանկանում:

10 Հապա քո աստվածը որտեղ է բնակվում,  
Այնտեղ արդյոք, ուր դուն էլ շրջիտես,  
Նա՞ է որ միայն սարսափ է զարկում,  
Այդպիսի աստված ո՞վ քարոզեց քեզ:

15 Միամիտ ամբոխ, մոլորված ես դուն,  
Ես անգիտությամբ կուռք լըպաշտեցի.  
Ես այն մարդու մեջ տեսա աստըծուն,  
Ահա թե ինչու երկրպագեցի:

5 Հայնարձակ, դալարագեղ  
Տարածվում են և կորչում  
Մշուշի մեջ, իսկ այնտեղ  
Ճոխ անտառն է կանաչում:

10 Ուր որ ազատ շրջելով  
Ապրում են երե, զազան,  
Եվ թոշունքը ճախրելով  
Երգ են ասում գության:

15 Ահա, շքեղ դաշտի միջով  
Գալարվում է և անցնում  
15 Հանդարտ գետը մրմունջով  
Հեռու, հեռու է գնում:

Նրա դալար ափերում  
Մինը հազար է բերում.  
Սակայն ահա, մյուս կողմում  
20 Կապույտ ծովն է մեղմ ծփում:  
Ինչքան ճոխ է, հրաշալի,  
Այս աշխարհը լայն, արձակ,  
Ամեն մի շունչ աշքը լի  
Կապրի այստեղ համարձակ:

25 Ես նայում եմ, և մի միտք  
Հղանում է ինձանում.  
Ինչու համար են մարդիկ  
Իրար զրկում, սպանում:

## ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս  
Մոլեգնած կյանքի պատկերը ցավոտ,  
Հաճախ, մանկություն, խռոված հոգուս  
Ներկայանում ես ինչպես առավոտ:

5 Եվ մանկան նման արտասվում եմ ես,  
Երբ այս օրերում, շարությամբ լցված,  
Քեզ, սուրբ մանկություն, հիշում եմ ինչպես  
Երազի տեսիլք անհետ շրբացած:

Ինչպես արևի ճաճանչը վերջին

10 Թոշում է հանկարծ, տիրում է խավար,  
Այնպես շողացիր և անցար կրկին,  
Մնացի անզոր, ցոփ կյանքին ավար:  
Թե հնար լիներ մի անգամ դարձյալ

Դառնալ քո գիրկը... ա'խ, ի՞նչ եմ ասում,

15 Այդ անհնար է. արդեն հանդերձյալ  
Կյանքի ճամփան է իմ առջև բացվում:  
Բայց մինչև այնտեղ, սոսկալի՛ ուզի,

Ահա բռնություն, պատիվ անարգած,

Ահա հառաշանք, արտասուք աղի,

20 Ահա սկ նախանձ և սեր սակարկած...

Կըմեռնեմ և ես այս ցավերի տակ  
Ինձ հետ տանելով շատ իղձ ու փափագ,  
Իսկ այս աշխարհից և ոչ մի պսակ—  
Միայն քո անմեղ, քո սուրբ հիշատակ:

25 Մի տիրատեսիլ գուցե գերեզման  
Անցվորականից խնդրե մի բերան  
Ողորմի ասել... ո՞վ գիտե, և այն  
Կըմինի՛ արդյոք, եղնայե՞ն նորան...

Ների՛ր, ո՞վ կույս, որ հոգեցի  
Խաղաղ կուրծքդ կուսական,  
Մեղսոտ սրտով ես շուզեցի  
Կործանիլ քո ապագան:

5 Այն մի անմեղ խաղ էր, հոգի՛ս,  
Պատանեկան հասակի,  
Որ անցնելով պատճառ դարձակ  
Քո աշքերիդ արցունքի:

10 Ես գուշակել շըկարացի  
Կյանքի վճիռն անարդար,  
Անգիտությամբ ես հարուցի  
Այդ փոթորիկն անդադար:

Ների՛ր, ո՞վ կույս, բուռն եռմունքին  
Պատանեկան կրքերի,  
15 Ների՛ր, հոգիս, որ մատնեցին  
Քնքուշ սիրտդ վշտերի:

ԿԱԼԻ ԵՐԳ  
(Լոռեցոնց)

Կալ արա, գնանք,  
Ա՛ ևզը ջան.  
Հորովել,  
Հո՞ բո՞ վելա:

5 Արի՛, ման արա,  
Այ քեզ մեռնեմ,  
Դարման արա,  
Ղաղեղ առնեմ:

10 Ոտիդ արա,  
Ոտիդ դուրբան,  
Ուսիդ արա,  
Այ ախպեր ջան:

15 Էլել ա, էլել,  
Կալն էլել ա,  
Հարել ես, հալել,  
Հորովելա:

\* \* \*

Երբ ես տիտը, հուսահատ,  
Ինձ կորած եմ համարում,  
Շուրջս մեռած, անապատ,  
Սրտիս երկյուղ է տիրում:

5 Մահու ձայնը դառնալուր  
Հասանում է ականջիս,  
Մարդիկ մնում անհամբույր  
Եվ խլանում են կանչիս:

10 Մի գորություն հզորեղ  
Ինձ հուսադրում է հանկարծ.  
Եվ զգում եմ, ամեն տեղ  
Դուն ինձ հետ ես, աստված:

\* \* \*

Ախ, երանի թե լիներ մի հնար—  
Այդ ժպիտը միշտ քո դեմքին մնար.  
Ես վախենում եմ մի ժամից հետո  
Անցնի խնջուքը, և կյանքից դժգոհ  
5 Մտածմոնքներով դարձյալ դու տիրես...  
Ախ, երանի թե մնայիր այդպես...

\* \* \*

Այդ ի՞նչ սրտամաշ տիրություն է քեզ  
Պատել, հայրենի գեղեցիկ աշխարհ.  
Մինչև ե՞րբ պիտի շարշարվես այդպես  
Տառապանքներով, առանց միիթար...

- 5 Իմ հայրենիքս տիսուր է, տիսուր...  
Ուր աշք եմ դարձնում՝ տիսուր ավերակ,  
Ամեն տեղ միայն, միայն ցավալուր  
Հեծության ձայներ, երկշոտ աղաղակ:
- 10 Թե երկրագործն է հորովել կանչում,  
10 Թե մայրը որդուն օրորք է ասում,  
Թե հովիվն իրան սրինգը հնչում,  
Մի հուսակտուր հառաշք եմ լսում:
- 15 Աշխարհից, մարդուց հույսերը կտրած  
Գանգատվում է նա, և ցավից տնքում,  
15 Կյանքիցը զգված, սակայն դեռ շապրած,  
Հանգիստ է խնդրում հեռո՛ւ, երկնքում...
- 20 Մի՞թե տրտմության թախիծըն այդպես  
Խեղեց նրա մեջ ապրելու հույսը.  
Մի՞թե այլևս նա չէ երգելու  
20 Իրան պապերի երգած խրախուսը:
- 25 Մինչև ե՞րբ պիտի մարդիկ կատաղի  
Արցոնքովն հայի կերածը թրչեն,

Եվ երկար պիտի մեռելաթաղի  
Տաղերով ազահ ցերբերներ շրջեն...

- 25 Մի՞թե գեռես անսիրտ հագարը  
Այն ավերակաց վերա պիտ իշխե,  
Անարգե, պղծե մեր սուրբ տաճարը,  
Անարժաններին շնորհներ բաշխե...

- Եվ շարագուշակ մտքերով հուզված  
30 Քաշվում, մտնում եմ մի խաղաղ անկյուն.  
Եվ երկար անշարժ ու խորասուզված  
Հածում եմ նրա ցավերում անհուն:

- Ավելի խորը, ավելի հեռու  
Միտքս ինձ առնում, թոցնում, տանում է.  
35 Թուշում է հանկարծ մի ծանր հառաշանք  
Եվ սիրտս կարծես հանգստանում է:

\* \* \*

Եթե իմ վերջին հայացքը մնա  
Քո դեմքիդ վերա տխուր, վշտահար,  
Տևսնեմ արտասուրդ ու սիրտս իմանա,  
Որ սրտանց ես դու կոծում ինձ համար,

- 5 Եթե գիտենամ, իրավ պիտի դու  
Ինձանից հետո ցավես իմ մահով,—  
Երդվում եմ սիրով, առանց ցավներ  
Կըմեռնեմ ես այդ հուսով ապահով:

- Եվ երբ կըլսեմ իմ գերեզմանից  
10 Ու կըճանաշեմ քո հեկեկանքը,  
Կըմիսիթարվիմ, որ սիրում ես ինձ,  
Որ քաղթը էր քեզ համար իմ կյանքը:

\* \* \*

Պանդուխտն երգեց օտար երկրում  
Եվ սրտաբեկ հոգոց քաշեց,  
Երբ որ տիսուր յուր երգերում  
Անցած ուրախ օրերն հիշեց:

- 5 Մարմնով տկար, հոգով տիսուր  
Շուրջը նայեց մեկը շրկար,  
Որ տար գեթ մի բաժակ ցուրտ չուրտ,—  
Ողբաց պանդուխտն անմիխթար:
- 10 Եվ նա խնդրեց անժամանակ  
Հանգստության լուս գերեզման,  
Անշույս երգեց վերջին նվագ—  
«Երի՛, շարքաշ կյանքիս վախճան.
- 15 Էլ ույժ շրկա, բարյավ մնաք,  
Դուր սև օրեր պանդխտության,  
Դուն, հայրական հեռու տնակ,  
Եվ երազներ պատանեկան:
- 20 Իսկ դուն արի՛, քաղցր հիշատակ,  
Կորցրած սիրո, վայելլության,  
Արի ի՞նչ հետ իբրև սփոփանը  
Գերեզմանիս լուս տիսրության»:
- Մեռալ պանդուխտն, բարյավ մնաք...  
Գիտեր, որքան ձեզնից թաքուն  
Խեղձը հեծեց, ողբաց մենակ...  
Գեթ ողորմի տվեք հոգուն:

\* \* \*

Մի՛ որոնիր մի ժամանակ  
Արհամարհածդ՝ այս կըրծքի տակ,  
Հառաշանքով դուրս թռավ նա,  
Ու դատարկ է տեղը հիմա...

- 5 Էլ մի՛ կանչիր, մի՛ լար իզուր.  
Քո արցունքից միայն տըխուր  
Հին-հին հուշեր պիտի զարթեն,  
Եվ ի՞նչ օգուտ... ո՞ւշ է արդեն...

ԽՈՐՀՈՒԱԾՈՒԹՅՈՒՆ

- \* \* \*
- Շատերի նման նա էլ խեղդվեցավ.  
Փոքրոգությունն եք պարսավում նրա:  
Լոեցե՛ք, եղբարք, ի՞նչ գիտեք, ի՞նչ ցավ  
Առաջնորդեց այն մարդուն դեպի մահ:
- 5 Տեսե՛ք, այս խեղճը տիսուր, գլխակոր,  
Մոլոր շրջում է սգվորի նման.  
Բայց նրա մասին մի՛ դատեք, երբ որ  
Չգիտեք ինչն է կորացրել նրան:
- Ահա, վարում են մյուսին պատժարան.
- 10 Օ՛, մի՛ անվանեք նրան շարագործ:  
Ի՞նչ գիտեք, գուցե մի միտք երկնարժան  
Այս օրին մատնեց այդ մարդուն անփորձ:
- Եվ դուք ի՞նչ գիտեք, թե երգիշն ուրախ,  
Որ ձեզ համար միշտ երգեր է երգում,
- 15 Քարասիրտ մարդկանց ծաղրանքից ծածկած  
Ի՞նչ ցավեր ունի յուր սրտի խորքում:

- Ո՞րն է դրախտը,—վայրն երանավետ,  
Ուր պիտի ապրեմ գերեզմանից ետ.  
Մի՞թե մարդկային տառապած կյանքը  
Զըստուղծեց այն սուտ մխիթարանքը.  
5 Եվ մի՞թե նորա մահից սարսափած  
Ագա՛ությունը շէ իրան խաբած...  
Սակայն բարի է.—մի տանջված արդար,  
Կամ իրան արդար համարող մի շար  
Երկրային կյանքի վերջին վայրկյանին  
10 Հանգիստ ու խաղաղ կավանդե հոգին,  
Համաձայն իրան ճաշակի, կամքի,  
Վայելքն հիշելով խուտացյալ կյանքի.  
Եվ ահա միակ, բայց մեծ օգուտը,  
Որ մարդկությանը տվեց այս սուտը:  
15 Ա՞յս է մեր կյանքը.—լոկ խաբեռություն.  
Ոչ, մի՞թե և ես, ինչպես մի հնչյուն,  
Այս իմ հույսերիս, ձգտումներիս հետ  
Պիտի մեռանիմ, չքանամ անհետ...  
Չէ՛, սիրելի է խոստումն երկնքի—  
20 Հույսն հավերժական, անվախճան կյանքի.  
Հեռո՛ւ ինձանից հոգեմաշ կասկած,  
Ողջույն քեզ, ողջո՞ւյն, ո՞վ կյանքի աստված.  
Արի՛, հայտնվի՛ր, նշկահիր մահու  
Տարակուսանաց տագնապն ահարկու  
25 Եվ կույր հավատով գորացրու հոգիս—  
Անմահություն տուր լքացած կյանքիս...  
Բայց ի՞նչպես պիտի կյանք առնեմ կրկին,

- Արդյոք լուսակազմ, աննյութ, անմարմին**  
**Պիտի սավառնեմ անծայր եթերքում,**  
**Թե՞ իբրև մի հունչ շրջեմ աշխարքում,**  
**Թե՞ անփոյթ, անգործ թափառեմ պիտի**  
**Մարդոց աշքերին անտեսանելի,**  
**Թե՞ ամպերի մեջ պիտի ես հանգչեմ**  
**Եվ ոտքիս տակից կայծակներ իշնեն...**
- 30 Օ՛, ներիր, աստված՝ ծածկագետ, անհուն,**  
**Ներիր մեծամիտ, գոռող պատանուն.**  
**Աննշան ճճիս շարաշար մեղա, —**  
**Հանդուգն խորհրդով խորամուխ եղա,**  
**Զգոտեցի պարզել քո աստվածային**
- 40 Անհասանելի, անմեկին գաղտնին:**

## ՄԱՐԳԱՐԵ

- Երբ որ վեհության կնիքը ճակատին**  
**Եվ ճշմարտության սուրբ պատգամներով**  
**Նա հայտնվեցավ մոլար աշխարքին**  
**Եվ դարձ քարոզեց հրաթափ լեզվով,**
- 5 Նրա աստվածային ծայնից սարսափած**  
**Գիշերատեսիլ մարդիկ հուզվեցին,**  
**Իրանց սեղանից վեր կացան հարբած,**  
**Մոլեգնության մեջ աղաղակեցին.**
- Ո՞վ ես դուն, արի՛, այս մեր հանցավոր**  
**10 Ուրախությանը մասնակից եղիր,**  
**Կամ թո՛ղ վայելենք մեր կյանքն անցավոր,**  
**Թե չէ՝ խիստ պատժի քարերից փախիր:**
- Սակայն անվհատ նա հառաջ գնաց**  
**Անուշադիր յուր անձի վնասին,**  
**15 Մոլորությունը ներելով մարդկանց՝**  
**Հոգ տարավ նրանց փրկության մասին:**
- Եվ երբ որ լուսո նա շահը ձեռքին**  
**Մոտեցավ կորստյան փոսի եղերքին,**  
**Ապերախտ ձեռքով ամբոխը խավար**
- 20 Զարկեց, խորտակեց շահը փրկարար:**

**Ժամանակ անցավ. թշվառ ամբոխին**  
**Արդեն փորձանքը վրա էր հասած,**  
**Երբ ուշքի եկավ, վայ տվեց գլխին. —**  
**«Նա մարդարե էր, նա իրավ ասաց»:**

ԿԵՆԴԱՆԻ ԵՐԳՈՎ ՊԱՐԹԵԳՐՈՒ, ՉԱՐԺԻՐ  
ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ ՆՐԱ ՎՀԱՏԱՃ.

11 Բարկության հրով շնչիր շարի դեմ,  
Որ թույնով, փողով գա՞ է բարձրացել,  
Եվ լուսավորիր, ցույց տուր ամբոխին,  
Թև ինչ ընթացքով շարիք է գործել:

12 Թող որ ճանաչե և պատուհասե  
Նրա շարությունն ամենակատար,  
Եվ այնուհետև կուրորեն շասե,  
Մեծ կամ մարդասեր, ազգի բարերար.

13 Եվ պատվանդանը հիմքից խորտակիր  
Ուկի հորթերի, ինքնամոլության,  
Մարդոց սրտերում դարձլալ հաստատիր  
Լրբությամբ մերժած գահն աստվածության.

14 ՄԱՆՔ այն ժամանակ և կըգանք քեզ հետ  
Եվ քեզ կըսիրենք, կըփառավորենք,  
Սրտի հրճվանքով կանվանենք «պոետ»,  
Ամեն մի խոսքդ կընդունենք օրենք:

Թաքցրու, պոետ, վշտերդ ամբարված  
Մեծ գաղտնարանում ալետանջ հոգուդ,  
Ամբոխի առաջ մի երգիր նրանց,  
Եվ ինչո՞ւ համար ողբալ անօգուտ.

5 Եվ դուն շես կոչված, որ փոքրոգության  
Արտասուրներով քո վշտերն երգես,  
Դուն պիտի ճնշված մարդկության առաջ  
Մեծ ճակատագրի գոյությունն հերքես:

10 Թեկուզ կեղծ լինի ժպիտը դեմքիդ,  
Թես դժվար է քեզ համար կեղծել,  
Պետք է մոլորված, անկիրթ ու նեղսիրտ  
Ամբոխի համար հավատ ստեղծել.

15 Գուրգուրիր նրան ինչպես շար մանկան,  
Պատժի ժամանակ անողորմ եղիր,  
Զեռքումդ ունեցիր փայլուն խարազան,  
Հարվածիր նրան և հառաջ մղիր.

20 Հառաջ տար նրան և ձեռքդ մեկնիր,  
Ցույց տուր փրկության արյունոտ ուղին,  
Կովից փախչողին ծաղրանքով հեգնիր,  
Փառագոշ երգով գովիր կովողին.

Սիրտ տուր ընկածին, գևտնից վեր քաշիր.  
Մի՛ թողնիր երբեք, որ մնա նա ցած.

## ՉԱՐԱՍԻՏԵՐԻՆ

### ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂԻ ԴԻՄԱՑ

Արեք թռավ. երկինք ու երկիր

Առավ խավարը գիրկն համատարած.

Դուն, փայլուն աստղիկ, դարձյալ շողացիր,

Արդյոք այս գիշեր ի՞նչ բերիր մարդկանց:

5 Դուն ավետեցիր ժամը տեսության

Այն սիրատենչիկ սիրահարներին.

Որ սրտատրոփ անհամբերությամբ

Սպասում էին խաղաղ գիշերին:

Դուն երևացիր խավար երկնքից...

10 Օ՛, նա սպասում էր քո երևալուն.

Ահա հուսահատ, զզված յուր կյանքից,

Խեղդվելու գնաց մարդկանցից թաքուն:

Դուն երևացիր և բազկատարած

Պատրաստվում է մեկն աղոթք անելու,

15 Այնինչ, մի ուրիշն յուր զենքերն առած

Դնում է անմեղ մարդ սպանելու:

Իսկ մեծատունը, խնջույքից հոգնած,

Հանգստանում է. ա՛խ, թե նա հիշեր,

Որ յուր պալատի պատի տակ կանգնած

20 Թշվառն օթևան շունի այս գիշեր...

Դուն, փայլուն աստղիկ, որ շողշողում ես,

Խնշան սիրուհու թրթուն տենչանք,

Ամեն գիշեր ինձ համար բերում ես

Կրքերի հուզմունք և հոգու տանջանք:

Դո՛ւք, մեծ հայրերի ընկած զավակներ,

Դո՛ւք, ո՞վ ստրուկներ մոլի կրքերի,

Դո՛ւք, ո՞վ զեխության խղճալի հյուգեր,

Որ շվայտ կյանքին դարձել եք գերի.

5 Դո՛ւք, որ ընկնում եք ո՞չ պատերազմում

Թշնամու սրով և ո՞չ ձեր մահով,

Որ եղբայրաղավ ժողով եք կազմում

Եվ տեսնող աշքից կարծում ապահով:

Դո՛ւք, որ պատրաստ եք անմեղին կապած

10 Սեղանավորի ոտքի տակ զոհել,

Որ ավազակի առաջ սարսափած,

Ճշմարտությունն եք ուրանում խոսել.

Դո՛ւք, որ ուզում եք աշխարքին խարել.

Եվ դատաստանի առաջ դողալով

15 Գիտեք կեղծավոր արտասուր թափել

Զարությամբ լեցուն, հանցավոր սրտով.

Դո՛ւք, որ մարդկանց աշքերն եք կապում,

Ո՞վ սպասավորներ բանտի, խավարի,

Որ հարազատի արյունն եք թափում

20 Եվ ձեր եղբոր գույքն առնում ավարի.

Դո՛ւք, որ այրիի դառն արտասուրով

Շաղախեցիք ձեր սեղանի հացը,

Որ հպարտացած անօրեն գործքով

Հարցանում եք թե՝ ո՞ւր է աստվածը.—

25 Կըհասնի նա ձեզ, բարկությամբ արդար

Արժանի մահով պատուհասելու,

Եվ ո՞վ պիտի ձեզ ցույց տա ճանապարհ

Նորա բարկության պատժից փախչելու:

## ԴԱՐՁՅԱԼ ՆՐԱՆՑ

Հայտնի եզվիտներ, ի՞նչ եք աղմկում.  
Այո՛, սաստիկ է ձեր աշքը ծակում  
Հայ ժողովրդի կյանքի նորավառ  
Պարզ արշալույսի ճաճանչը պայծառ.

5 Բայց ի՞նչ եք գոռում. ինչո՞ւ եք փրփրել  
Իզո՞ւր, դժվար է այլևս խարել  
Սուտ երդումներով հավատարմության,  
Կեղծ գովեստներով պաշտելի անվան:

Մինչդեռ անամոթ կանգնած եք ոտքի  
10 Ընդդեմ լուսավոր մարդկային մտքի  
Եվ աշխատում եք մեզ համար կրկին  
Հոգատար բերել հոշակված լորին.

Դուք գիշերվան մեջ աստղեր եք տեսնու՞  
Եվ ուրանում եք արևն երկնքում,  
15 Ճգնում եք բռնել ընթացքն աշխարհի,  
Ուզում եք հերոսն օրրանում նիրհի.

Եվ պարծենում եք այդքան մոլորված՝  
Վեհ անուններով մեծագործ մարդկանց,  
Դո՞ւք ապօրինի նրանց ժառանգներ,  
20 Դո՞ւք փարիսեցիք և կեղծավորներ:

## ՄԻԱՄԻՏՆԵՐԻՆ

Երանի է ձեզ, որ չեք հասկանում,  
Թե մարդիկ ինչու ինչեր են անում,  
Երանի ձեզ, որ մարդու չեք զրկում  
Եվ ոչ ձեզ հասած հարվածն եք զգում.  
Երանի ձեզ, որ ոչինչ չըգիտեք:  
Որ չոգով անդորր, սրտով հանգիստ եք:

\* \* \*

### ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

- Ո՞հ, խնայեցեք, մի՛ հիշեցնեք ինձ,  
թե ինչպես էր նա արտասուր թափում,  
երբ, արդեն խարված նենգավոր խոսքից,  
Անձնուրաց սիրույս էլ չէր հավատում:
- 5 Ոհ, մի՛ հեշտացնեք՝ այդ խոսքեր են լոկ  
նվ շեն դարձնելու կորուսոս անգին,  
Անտարբեր եք դուք, դեռ ձեզ անողոք  
Բախտը լի մատնել սիրո վտանգին:
- 10 Մի՛ հիշեցնեք, մի՛, թե ինչպես դաժան  
Մարդիկ մեզ այսպես ջոկեցին հավետ,  
թե ոնց եմ ապրում նըրանից բաժան,  
իմ նոր սիրուհու—իմ լուռ վշտի հետ:

Այս կրծքի տակ ապականված,  
Հեռու կյանքի ժըխորից,  
Դեռ մի հնչյուն կա պահպանված  
իմ մանկության օրերից:

5 Եվ երբեմն պատահում է,  
Որ հնչում է նա հստակ,  
Կյանքի ձայնը նշկահում է—  
Ես շնչում եմ համարձակ:

Պայծառ շողերն հիշողության  
10 Մտնում են ծոցն անցյալի,  
Լուսավորում իմ մանկության  
Անհոգ պատկերն անձկալի:  
Ահա երկինքն իմ հայրենի—  
Հայի սրտի նման պարզ,  
15 Ահա երկիրն իմ հայրենի—  
Կանաչագարդ հանապազ:

Ողջուն ձեզ, ո՞վ ուրախ, ազատ,  
Անցած օրեր իմ մանկության...  
Ա՛խ, ձեզանից ինձ մի բացառ  
20 Անշատել է հավիտյան:

Ահա փոքրիկ իմ քույրերը  
Խաղ են անում միասին,  
Օ՛հ, անհանգիստ, շար եղբայրը  
Նրանց ծեծում է կրկին...

- 25 Մորս ձայնը մեղեղիական  
Ահա հնչում է քնքույշ,  
Նրա հայացքը մայրական  
Ինձ հևտեռում է զգույշ:
- Ահա կանգնած է իմ առաջ  
30 Մեր բազմահոգ զյուղացին,  
Մեծամարմին և քաջալանջ,  
Ծիծաղ ըրկա երեսին:
- Ո՞հ, լսում եմ նրա երգը  
Միանման ու տխուր.
- 35 Հայնաբերան նրա վերքը  
Մեծանում է օր-ավուր...
- Ահա թշվառ հայ գեղշկուհին,  
Դեմքը վշտոտ ու նիշառ.  
Պատառոտած մի շոր հագին,
- 40 Զարշարվում է անդադար:
- Ահա ծերուկը, շարժելով  
Ալիքները, առաջվան  
Կյանքն է հիշում հառաշելով  
Եվ մտնում է գերեզման...
- 45 Եվ պարզ աշքով ես տեսնում եմ  
Հայրենիքս ծաղկավետ,  
Այն ճոխ երկրից ես լսում եմ  
Անհոգ ծիծաղ լացի հետ...
- Դալարագեղ նրա հովտում  
50 Ի՞նչ աղմուկ է վայրենի,—  
Գևտի զոռոց և որոտում  
Հազարավոր ձայների:
- Ահա նրա լուս, ահավոր  
Խաղաղ գիշերն աստղաշատ,

- 55 Ահա նրա հանդիսավոր  
Առավոտը ցողապատ.
- Նրա ձորերն ամեղնութեան  
Եվ բարձրաբերձ բարձիր,  
Նրա սարերն ու հորդահամ
- 60 Սովորական տարսուիը.
- Երբ որ կայծակը շեշտակի  
Ահեղորոտ իշնում է,  
Անտառապատ և վիթխարի  
Լերանց կրծքին հանգչում է:
- 65 Ի՞նչ սիրուն է և հոյակապ  
Հայրենիքս վշտակիր,  
Եվ դու, մերժած սեր իմ հրատապ,  
Այն լեռների մեջ հանգիր:

Արգելեցին լիաբերան  
Երգել զեղմունքն իմ սրտի.

25 Ես լոեցի. Կատաղությամբ  
Սիրոս ուժգին տրոփեց,  
Ոգեռված և համարձակ  
Մտա կովի ասպարեզ.

30 Բայց իմ խնդրած այն սրբազան  
Կոհվը չէր բորբոքված,  
Ուր կովում են ազատության,  
Պատվի համար անարգված.

35 Անհավասար և վաղաժամ  
Կովում ուժերս վատնեցի.  
Հափշտակված, հոծարակամ  
Ինձ գերության մատնեցի.

40 Ո՛չ, չես կարող մխիթարել,  
Հոգիս անշափ է տրտում,  
Աշքս դեռ նոր եմ բաց արել  
Գերեզմանս եմ նկատում:

Ո՛չ, մեղմացնել չես կարող դուն  
Սաստկությունը տանջանքիս,  
Եվ հաշված են թույնով լեցուն  
Սակավ ժամերը կյանքիս.

5 Բայց տեսնում ես, ես հանգիստ եմ,  
Մի՛ լար և դուն, իմ անգին,—  
Քո արտասուրն ես կարող չեմ  
Փոխարինել այս կյանքին.

10 Օ՛, գերությունն ես ատում եմ,  
Եվ ցոփ կյանքը հեշտասեր,  
Այժմ, ահա, թոթափում եմ  
Նրանց լուծը մահաբեր.

15 Սակայն գիտե՞ս, թե այսքան  
Ինչն է տանջում ինձ այսպես—  
Արտասուրի և տրտմության  
Համար չէի ծնված ես.

— Ես ուզեցի աղատ երգել  
Ե՛վ օրհնություն, և անեծ,  
Սիրով սրտերը բորբոքել,  
Որ նախանձը բաժանեց.—

Կյանքի աղմուկն և գոյության  
Պատերազմը տմարդի

\* \* \*

- Դեռ անհիշելի վաղ մանկությունից  
Անհայտ ըղձերով թոշում էի վեր,  
Միաժամանակ քարշում էին ինձ  
Դեպի ստորև ախտավոր կրքեր:
- 5 Հնազանդվեցի մոլություններիս,  
Ոչ ոք էլ նրանց մասին շըխորհեց,  
Իսկ կյանքը գրկեց և, փաղաքշելով,  
Հեշտասիրությամբ սիրաս տոգորեց:
- Սակայն ի՞նչ է նա, ինձ ոչ ոք շասաց,  
10 Մեզ ի՞նչ է տալիս կամ ո՞ւր է տանում,  
Որ, մեկը միամիտ, իսկ մյուսն ստիպված,  
Անվերջ սիրելով կյանք են անվանում:
- Եվ ես, անգիտակ նրա խորհրդին,  
Անձնատուր եղա բոլոր ուժերով,  
15 Մինչև որ հասա ինձ խարող կետին,  
Մինչև որ տեսա հոգնած աշքերով.—  
Վարդերով ծածկած կորստյան անդունդ,  
Քաղցրավենիքով պատած մահաղեղ.  
Մարդիկ հառաջ են վազում սրտաթունդ,  
20 Եվ օրապակաս ընկղմում այնտեղ.  
Մեռելի վրա բարձրածայն սգում,  
Վաղաժամ մահ են ողբում անդադար,  
Տեսնում, շոշափում, բայց դեռ չեն զգում,  
Եվ դարձյալ շուտով մեռնելու համար...
- 25 Ա՛խ, ո՞րքան շատ են ճանապարհները, .  
Որ մեզ տանում են դեպի գերեզման,  
Եվ ինչպէս մոլի մեր թարմ ուժերը  
Մւնք սպառում ենք ձեռքով սեփական...

## ՆՐԱՆ

- Ես ուզում եմ, որ ինձ նման  
էլ ըսմիրեր մեկը քեզ,  
Բայց ասեին միաբերան,  
Թե դու, իրավ, հրեշտակ ես:
- 5 Ես ուզում եմ, որ քո անմեղ  
Սիրտը թնդար ինձ համար,  
Եվ հավիտյան վառվեր այնտեղ  
Միայն իմ սերը բոցավառ:
- Ես ուզում եմ, որ օրն ի բուն  
10 Ապշած նայեմ աշքերիդ,  
Ինձ մոռացած, կորչեմ անհուն  
Խորության մեջ հայացքիդ:
- Իսկ եթե մահն այն ժամի մեջ  
Ինձ մոտենար, օ՝, սեր իմ,  
15 Ես կուզեի քո սիրատենչ  
Կուրծքդ լիներ ինձ շիրիմ:

## ԱԶԴ

Հեռացրեք նրան աստծո սեղանից,  
Որ շապականե մեր սրբությունը,  
Ազատ պահեցեք անսուրբ բերանից  
Վարդանի պաշտած աստծո անունը:

- 5 Ավարարությամբ զորացած բազկով  
Թո՛ղ նա լըկրե մականը Մեծի,  
Եվ շահախնդիր, կաշառված խոսքով  
Կանգնի քարոզիչ փրկության գործի:
- 10 Թո՛ղ լըկատարեն հաշտ ու պատարագ  
Սեղանակապուտ, անարժան ձեռքեր,  
Ոչ նվիրական կամարների տակ  
Անդգա սրտից վերանան երգեր:
- 15 Եվ թող քարկոծվի, ով որ անգիտակ  
Մարդկային կյանքի վսեմ խորհրդին,  
Կըհամարձակվի Հայոց հարկի տակ  
Քարոզել—հովվել այս ժողովրդին:

## «ՈՉ ՅՕՐԻՆԱԿ ԱՅԼՈՅ»

Ազատ, համարձակ բարձրացի՛ր, արատ,  
Քո պատվանդանի վերա ոսկեղեն,  
Բարձրացի՛ր, իշխի՛ր... թող մարդիկ անպարտ  
Հորդ արտասուրով ոտքդ ողողեն:

- 5 Դո՛ւրս արի, հանցա՞նք, մեծատան շեմքից.  
Խեղդի՛ր, խորտակի՛ր անմեղ տըկարին,  
Մի քաշվիր տիրոջ փառավոր միրքից—  
Նա ընկեր է քո առած ավարին:
- 10 Եվ քաջալերված լրբենի բազուկ,  
Ճեղքիր ճակատը ճշմարտախոսի,  
Արդեն արծաթով վաճառվեց ծածուկ  
Եվ ճշմարտության խոսքը Հիսուսի:
- 15 Դու, սեղանավոր, ձեռքդ տարածիր  
Դևի սեղանը մարդոց սրբության...  
Մի՛ վախիր,—ամեն բողոք ու խնդիր  
Պիտի սին օդում անկատար մնան:

## ԵՐԳՉԻՆ

### ՀԱՄԵՐԳ

Վըտակը ժայռից ներքև է թըռչում,  
Թափ առած ընկնում քարերի գըլսին,  
Զարկում ավազին, շաշում է, ճըշում,  
Ճըշում անհանգիստ, փըրփուրը բերնին:

- 5 Ինչպես ծերունին, ձենով պառաված,  
‘Զայնակցում է միր թոռնիկի երգին,  
Այնպես է ծերուկ անտառը կամաց  
Արձագանք տալի շըրի աղմուկին:

- 10 Այնինչ բընության զըվարթ համերգի  
Ունկընդիրն անխոս ու հավերժական,  
Ժայռը մտախոհ՝ իր մըռայլ մըտքի  
Ետկից ընկած լըսում է նըրան:

Ապա այն երգն ասա՛, երգիշ,  
Որ հեծեծանք է միալար,  
Այն սրտատանջ և մորմոքիշ  
Երգը երգիր ինձ համար:

- 5 Սիրտս լիքն է լուռ վշտերով,  
Շո՛ւտ, այն տիսուր երգն հնչիր,  
Եվ քո երգի նուրբ ձայներով  
Արցունքներըս դուրս կանչիր:

- 7 Շատ թաքցրի սրտիս միշին  
10 Զգայազուրկ մարդկանցից,  
Այժմ ուզում եմ քո առաջին  
Ողջ դատարկել իմ սրտից:

- 15 Դե շո՛ւտ արա, որ ինչպես թույն  
ինձ շըտանջեն հավիտյան,  
Երգի՛ր, երգիշ, և նրանք իսկույն  
իմ աշքերում կերևան:

ՏԱՐՈՒՆԻ ԳԱՐՈՒՆԱԾ  
(Հատված պոեմայից)

ԻՍՐԱՅԵԼ

Պանդուխտ, հալածված, հոգնած, վշտաբեկ,  
Եվ ոչ մի երկրում հանգիստ շըգտա.  
Դարձյալ դեպի քեզ, հայրենիք իմ հեզ,  
Հարազատ որդիդ թոշում եմ ահա:

- 5 Բայց և քո գրկում, ավաղ, կորած է  
Տենչալի կյանքի հույսը հավիտյան,  
Քո գրկում նաև ինձ սպասում են  
Մտրեկի վիճակ, օրեր հեծության:
- 10 Քո իրավունքից զրկված Սիռոնի  
Մրբազան գավթում լումա են փոխում,  
Կորած է փառքը երուսաղեմի,  
Եվ լիրը ոսոխի սիրտը չէ դողում:  
Եվ գերի որդիդ, ո՞վ գերված աշխարհ,  
Ազատ քայլերով, և ո՞չ մի անգամ,  
15 Այն սուրբ վայրերում, ուր որ մեծացա,  
Եվ այսուհետև շպիտի ման գամ:  
Անիրավ տիրող թշնամու ձեռքը  
Ինձ կը հալածի քո երկնքի տակ,  
Եվ թաքուն կերգեմ ես իմ ողբերգը՝  
20 Քո սար ու ձորում հեծելով մենակ...
- Այս, մենք պատրաստ չենք միասին կռվի,  
Եվ մեզ թշնամին խնդրում է ջոկ-ջոկ,  
Մենք հալածված ենք առանց մեղքերի  
Եվ չի պաշտպանում մեր դատը ոչ ոք:

Գարունն եկավ և թևերը  
Հովիտներում տարածեց,  
Հայաստանի խիստ ձմեռը  
Լերանց ծայրերն հալածեց:

- 5 Ժպտաց երկնից Արեգն աշեղ,  
Եվ ձյուները հալվեցան,  
Հով սարերի վերա տեղ-տեղ  
Վրանները շարվեցան:

- 10 Դարձյալ իջավ յուր ուրթում,  
Նրա մարդիկն առած զիգեն՝  
Մարդագոհ են պտըրտում:

- 15 Հանկարծ տիրեց ահ ու սարսափ  
Խաղաղանիստ վայրերին,  
Միմիայն երեն մնաց ազատ  
Բարձըր լերանց ծայրերին:

- 20 Հարյավ կյանքով գարնանաբեր  
Եվ հրճվում է ողջ Տարոն,  
Բայց չէ լսվում աշխատասեր  
Հայ գյուղացու հորոլոն:

Գարունն եկավ, սարերն ելավ  
Ազատ քյուրդը հաղթական,  
Գարունն եկավ, յուր ցուպն առավ  
Հայ գյուղացին գաղթական:

«Ո՞վ զորավոր սուրբ Կարապետ,  
Ո՞վ ավագանդ հայության...»

ՏԱՐՈՆԻ ԱՌԱՎՈՏԸ  
(Հատված պոեմայից)

Կարմիր արևն առավոտյան  
Պայծառ ցոլաց դեպի Մուշ,  
Մավալվեցավ ծովի նման  
Մշու դաշտը քաղցրահուզ:

5 Նրա շուրջը խոշոր դեմքով  
Կանգնած, լեռներն ահագին,  
Քնաթաթախ, լուս աղոթքով,  
Նայում են վեր—երկնքին:

Արածանին օձապտույտ  
10 Մաղկադալար ափերում,  
Մշուշի մեջ, ազատ, անփույթ  
Խաղ է անում, փրփրում:

Բայց հարսներ չեն հավերժական  
Խայտաճամուկ շորերով,  
15 Եվ չեն եկել, որ լողանան  
Արածանու ջըրերով:

Որ սիզավետ տափաստանում  
Վազվազելով մանրաքայլ,  
Երդ ասելով քաղ են անում  
20 Մարգերի մեջ ցողափայլ:

Արեգակի շողերի հետ  
Ահա շողաց և մի բան,—

25 Հանգիստ կացի՛ր, բարեպաշտ մարդ,  
Այն խաշը չէ քո պաշտելի  
Սուրբ Կարապետ շքեղազարդ  
Հայոց վանքի գմբեթի:

30 Սայրն է քրդի սուր նիզակի,  
Որ ճոճում է մշուշում.  
Ահա և ձին ավագակի,—  
Ի՞նչ արագ է նա քըշում:

35 Տեսավ հեռվից քաջ աշիրը  
Զվարթ խումբը քաղվորի,  
Եվ ցոլացին սուր աշքերը  
Ցանկությունից վայրենի.

40 Եվ սլացավ ինչպէս բազեն  
Խոյանում է ամպերից,  
Ահ, խեղճ կանայք, էլ ո՞ւր վազեն,  
Ի՞նչ է գալիս ձեռքներից...

Հասավ, ճանկեց... բռնեց թարքին  
Օրիորդին ուշաբարձ,  
Ասպանդակեց, տաքացավ ձին,  
Եվ հեռացավ սրչնթաց:

## ԳԻԾԵՐ

- Եկավ զիշերն՝ սփոփանքը  
Անմխիթար սըրտերի,  
Եվ սարերի կերպարանքը  
Փոխվեց անեզր ստվերի:
- 5 Հաղթահարված խորին քնից՝  
Պապանձվեցին ամեն տեղ,  
Մութն ու խավար հորիզոնից  
Ծագեց լուսին փառահեղ:
- 10 Եվ երկնքում բարձր կախված  
Սիփան սարի կատարին,  
Մունջ նայում էր նա դեպի ցած՝  
Տխուր նիրհող աշխարհին:
- 15 Նըրա փափուկ, արծաթահեր  
Հով շողերը իրանց հետ  
15 Թափում էին հանգստաբեր  
Նիհր ու թմբիր քաղցրավետ:
- Սակայն զիշերն այն հետ երկրում  
Հանգստության փոխանակ  
Ահ ու սարսափ է միշտ բերում,  
20 Գաղտնի հարված ու տանջանք:
- Գիշերային լոռության մեջ  
Մանըր տնքոց է լսվում,  
Եվ աղաշանք, և լաց անվերջ,  
Եվ... ողջ լեզվով չի ասվում:
- 25 Էն ճամփորդն է, ճամփի տակին  
Չարշարվում է՝ կիսամահ,  
Էն ծնողն է իր զավակին  
Ողբում, կանշում... և շըկա...
- Կույս աղջիկն է լըլկանքի մեջ,  
30 Ալեսորը խոր բանտում...  
Էն կտրիճն է հայրենատենչ  
Խիզախ հոգին ավանդում...
- Եվ կանքն այնտեղ ծանր ու խավար  
Մի զիշեր է ահավոր...  
35 Եվ ո՞վ զիտե, որի՞ համար  
Կլուսանա բարի օր:

\* \* \*

**Կուրծքս երբեմն եռ է գալիս և հուզվում։**  
 Ես մնում եմ անշարժ, ինչպես լուս արձան,  
 Միտքս թռչում դեպի երկինք և սուզվում  
 Տիեզերքի խորության մեջ անսահման...

5 Ամփոփում է հանկարծ երկիր բովանդակ,  
 Սիրատարփիկ կուսի կուրծքին է փարում,  
 Խոնարհվելով իջնում մինչև ոտնատակ—  
 Արհամարհված սրբությունը համբուրում...

6 Ետ է թռչում և մոլորված դեգերում  
 10 Քաղցրահուշիկ խոր անցյալի լուս ծոցում,  
 Եվ թրթռում արդեն լուած երգերում,  
 Սառն ու տիսուր շիրիմները շոշափում...

15 Հետաքրքիր ցանկությունով թևառած  
 Ակագայի մթության մեջ խարխափում,  
 Եվ մի սաստիկ տենչով լիցուն, սավառնած՝  
 Երջանկության սահմանները թևածում...

Թռչում է միտքս,  
 Կորչում է միտքս,  
 Եվ շեմ հասկանում,  
 Ինչ ևմ ցանկանում։

20

## ՆԿԱՐԻՉ Գ. ԲԱՇԻՆԶԱՂՅԱՆԻ «ԶՈՐԱԳԵՏԸ ԳԻԹԵՐՈՎ» ՆԿԱՐԻ ԱՌՁԵՎ

Արտի՛ստ, քաջերի այս ձորն ահարկու  
 Ցուր բնավայրից փոխադրել ես դու.  
 Մե՛ծ է արդարեւ, մեծ է քո հոգին,  
 Որ ընդգրկել է ժայռերն ահագին

5 Իրենց սեփական խոր մտածմունքով,  
 Փրփրուն գետը փայլուն ծփանքով,  
 Լուսին-աստղերով կամարը երկնի  
 Եվ համատարած խավարն ահոելի...  
 Լո՛ւ հանգստություն—գիշեր է մթին.

10 Հանգստանում է նաև իմ հոգին։

Բայց ահա, այնտեղ, ձորի խորքերում  
 Մի մենակ վառվող լույս է երևում.  
 Այո՛, մի խուզ կա այն ձորի միջին,  
 Դու ճանաշո՞ւմ ես նորա բնակչին...

15 Օ՛հ, շես ճանաշում—անծանոթ ես դու,  
 Բայց թե գիշերը և նրա հոգու  
 Կարողանայիր տեսնել և զգալ—  
 Հանգստություն շէիր նայողին դու տալ։

ՏԱՊԱՆԱԳԻՐ

\* \* \*

Քրիստոս հարյավ հըրաշափառ,  
Հարյավ աշխարքն էլ նորից,  
Դու էլ սեր իմ, հարություն առ  
Մոռացության խավարից:

5 Դու, որ ազատ միտքս ու հոգիս  
Կախարդեցիր այնպես վաղ,  
Հայտնվեցար խոստումներով  
Եվ հեռացար անհապաղ:

Արի՝ դարձյալ, որ առանց քեզ  
10 Կյանքը դառն է և անձուկ,  
Քեզ կանչում եմ, որ նորոգես  
Մեր վայելքը վաղանցուկ:

Հիշի՛ր, որ քեզ դեռ սիրում եմ,  
Եվ այժմ, ընկած պատրանքից,  
15 Զեռքս, ահա, տարածում եմ—  
Ինձ ազատիր այս կյանքից:

¶

Կյանքի տղմի մեջ գլխովին թաղված  
Եվ փոքրիկ հոգին կասկածներով լի,  
Մտքերն ամեն օր արնով շաղախված  
Անցկացրեց նա կյանքն յուր ողորմելի.

5 Զորեղի առաջ ծունը խոնարհեց,  
Իշխանավորի ոտքերը լիզեց,  
Ուրացավ պատիվն և արհամարհեց,  
Յուր անձը վատնեց և ոսկի դիզեց:

Տկարից խլեց, խեղճից գողացավ,  
10 Արդարին խաբեց, անմեղին ծեծեց,  
Հարուստի առաջ ծառա ձեացավ,  
Կողոպտեց մարդոց և ոսկի դիզեց.

Կեղծավոր դեմքով, շողոքորթ խոսքով  
Հողակեց իրան մարդոց սրտացավ,  
15 Միամիտներին շլացրեց ոսկով,  
Ավազակների հետ ընկերացավ.

Կուրացած մարդիկ առաջ վազեցին,  
Բարձրացրին նրան աթոռն աշխարքի,  
Իսկ երբ որ մեռավ՝ դառն արտասվեցին,  
20 Կանգնեցին արձան անվախճան փառքի:

- Խղճալի՝ մարդ. տոգորված  
իրան անհայտ և կորած  
Օր ու կյանքի տենչանքով,  
Հազար ու մի տանջանքով,  
5 Հույսերով միշտ անկատար,  
Շտապում է անդադար...  
Յուր գոյության ընթացքում  
Դիակներով է ծածկում  
Ասպարեզը յուր կոխած,  
10 Եվ, արյունով շաղախած,  
Պիղծ ձեռքերով ուզում է  
Երշանկություն ընդունե.  
Զի նկատում, որ իզուր  
Եղած կյանքն էլ բնատուր  
15 Առանց հաշվի վատնում է.  
Իսկ երբ ույժը հատնում է,  
Գերեզմանի եզերքին  
Կանգ է առնում տիրագին,  
Ափսոսանքով արտասվում,  
20 Ետ է նայում և տեսնում,  
Որ ողջ կորցրել է անդարձ,  
Ինքն էլ կորչում է հանկարծ,  
Ինչպես շունչը յուր վերջին,  
Ինչպես հյուկե մի շընչին:

Ա՛խ, ես երանի  
Կայծա՛կ լինէի,  
Որոտ-ճայթյունով  
Մըոայլ ամպերից  
5 Ժայթքեի ըմբոստ,  
Ջարկեի ուժգին,  
Պատոեի խավար  
Կամարը երկնի,  
Ցույց տայի մարդուն  
10 Գաղտնիքը վերին,  
Որ տեսներ՝ այնտեղ  
Ի՞նչ բան կա ահեղ,  
Կամ ո՞վ է նըստած,  
Եվ ո՞ւր է աստված...

## ԿԱՆՉ

### ԵՐԳՉԻ ՎՐԵԺԸ

Սանր հեծության ժամանակների  
Եվ ճընշումների անըզգա որդիք,  
Կամեցա սիրել, սակայն դուք բարի  
Սիրտըս ու հոգիս զայրութով լցրիք:

5 Բայց դրա համար ես այնպես կերգեմ,  
Որ այդ ձեր սիրտը ցավից պատառի,  
Տըխուր ձայներով կըթունավորեմ  
Հանգստությունը գալոց օրերի:

10 Հուսահատության թախծալի երգով  
Եղի կրդարձնեմ ձեր կյանքը բոլոր,  
Եվ դուք կարտասվեր լիացած աշքով,  
Խնջույքների մեջ նստած դըլիսակոր:

15 Եվ խիստ վրրեմբ զայրացած երգչի  
Զեղ կըհետեր մինչեւ գերեղման,  
20 Զեր սիրտը կայրի, հոգին կըտանջի...  
Եվ կրտառապեր այսպէս հավիտյան:

Եթե կաս, աստված,

Եվ չես ստեղծել

Արտասուք ու լաց,  
Հեծել, անիծել,

5 Թե շար նախանձի  
Թույնով մահացու  
Դու չես վարակել

Պարզությունն հոգու,

Թե դու չես ասել,

10 Որ կյանքը այսպես  
Կինի անսպառ  
Տանջանքի հանդես,—

Մեղմացրու մարդկանց  
Կիրքն ամբարտավան,

15 Եթե աստված ես  
Դու խաղաղության:

Տե՛ր արագահաս,

Աստված արդարի,

Ո՞ւր ես, եթե կաս.

20 Ես աղոթք արի,  
Բայց սրածության  
Ահարկու ձայնից  
Խլացավ անդորր  
Իմ աղոթքն անբիծ.

25 Եվ ես, վայրենի  
Կրքից կատաղած,  
Ամբարիշտների  
Քարերից փախած,

**Քո անվան հուսով**

30 Կռվեցի երկար,  
Թարծեցա քեղնով,  
Սակայն դու շեկար:  
Էլ ինչո՞ւ եմ ես  
Տառապում այսքան,  
35 Եթե աստված ես  
Դու անմեղության:

Ինչո՞ւ տակավին  
Զես պատժում շարին,  
40 Ո՞ւզդդ է պակասում,  
Թե՞ շենք աղերսում:  
Թե շարագործին  
Դո՞ւ շես տվել սուր,  
Որ խաղաղ հոգին  
45 Սարսափի իզուր.  
Թե՞ դու ըրգիտես,  
Որ այստեղ, երկրում  
Մարդը ժպտերես  
Մարդ է գիշատում.—  
50 Դե արի՛ ու տե՛ս.  
Զարկի՛ր ու շանթի՛ր,  
Եթե աստված ես  
Դու վըրեժխնդիր:

Սիրելի ընկեր, շատ ոգևորվել,  
Շատ ես հառաշել դու նրա մասին,  
Որ այսօր հոգուս թոփչք է տվել,  
Որ պիտի երգեմ ես քո առաջին.

5 Բայց ես չեմ կարող այնպես հառաշել  
Անգոր բառերով անվարժ տողերում.  
Եվ ահա, ինչ որ զրշով նկարել,  
Այն եմ սրտալի քեզ նվեր բերում.

10 Ընդունիր հոգիս. Նրա ձայները  
Գուցե ականցիդ հարազատ հնչեն,  
Հիշեցնեն անցած օրերի սերը  
Եվ քեզ քո սիրած տանջանքով տանջեն:

ՆՎԵՐ ԱՆ. ԱԲ.-ԻՆ

ՊԱՏՎԵՐ

Վանա բանտի խորքից ելած հառաշանք,  
ձիչ, աղաղակ բոնաբարված աղջկա,  
Թալանվածի լաց ու՝ աղերս, աղաշանք  
թե որ լսեք, ասացեք թե՝ բան շըկա:

5 Ամբողջ տարին արյուն-քրտինք աշխատող  
Հայ գյուղացին թե որ լինի սովամեռ,  
Կամ հուսահատ տանից կորչի հողից հող,  
Գրեցեք թե՝ սաստիկ ցուրտ էր այս ձմեռ:

10 Վայ կանչելով մարդիկ այրվեն կենդանի,  
Հավատացրեք—խաղաղություն է տիրում,  
Ժողովուրդը կյանքն օրհնում է սովթանի:

15 Բան է, թե որ (չի պատահիլ այդ իսկի)  
Նահատակված հային մի բան տանք, ասեն,  
Դուք հասկացրեք, իբրև ժանոթ այդ ազգի,  
Որ ժամը չէ, հայերը դեռ տըհաս են:

20 Հայոց լեզուն Մեսրոպն իրան հետ տարավ,  
Իսկ կրոնը մի աղանդ է զենդական...  
Սպասեցեք, մինչեւ որ մեր սրտացակ  
Խնամքի տակ լուսավորվեն, առաջ գան:

Նորեկ գարունը լեռնական հային  
Տեսավ առապար օտար աշխարքում,  
Տեսավ մոլորված մտքով տիրագին,  
Եվ այսպես խոսաց թախծալի սրտում.

5 «Հիշո՞ւմ ես, պանդուխտ, քո հայրենիքիդ  
Թանձր անտառը, ծառերը հսկա,  
Զքնաղ լեռները և ծաղկափթիթ  
Մարգագետինը, որ այստեղ շըկա.

10 Գոշող ջրվեժը, որ ողողելով  
Իջնում է գլխից մոայլ ժայռերի,  
Զվարթ հավքերը, որ ճովողելով,  
Մերթ խլացնում են աղմուկը ջրի.

15 Երկրի վայրենի գեղեցկությունը  
Եվ գեղածիծաղ երկինքը անհուն,  
Նորա փառահեղ, պերճ հորիզոնը  
Վաղ առավոտյան, իրիկվան պահուն...

20 Եվ այն բոլորը, որ թողել ես գու,  
Որ այնքան փարթամ, այնքան սիրուն են...  
Օ՛, մի՛ արտասվիր, խորտակված մարդու  
Արտասուքները այստեղ գին շունեն:

Նրանք այս օտար ու սառն աշխարքում  
Կըկորչեն, ինչպես կաթիւը ջրի,  
Եվ քո թախիծը, դարձյալ քո առառում,  
Մենակ քո անձը պիտի տոշորի»:

N. N.-ին

Կյանքի հոսանքն յուր ընթացքում  
Մեզ մոտեցրեց միմիշանց,  
Բայց զգացի ևս իմ հոգում  
Հենց նույն ժամին մի կասկած:

5 Նախազգացումն ինձ շըխաբեց.—  
Հայտնվեցար դու շուտով,  
Եվ մենք այժմ բաժանված ենք  
Առելության անդնդով:

Արդեն ծանրը ևս տուժեցի  
10 Քեզ կանչելով «բարեկամ»,  
Էլ մի՛ ջանար, փարիսեցի,  
Դրավել սերս մյուս անգամ:

Մի՛ բարձրացնիր կինաց բաժակ,  
Ինձ մի՛ օրհնիր ժպտերես,  
15 Էլ շի դարձնիլ ու մի մաղթանք  
Իմ հավատը դեպի քեզ:

Քո պատկերը իմ սրտի մեջ,  
Նզովելի՛ հիշատակ,  
Ամեն անգամ զարթեցնում է  
20 Բուռն ցասումն և տանջանք:

Գուցե տեսնես ինձ հալածված,  
Անցավակից և մենակ,  
Թափառելիս անտուն, անհաց...  
Սակայն, և այն ժամանակ,

25 Անհնագանդ արտասուրս  
Կամ հառաշանք մի թեթև  
Եթե հանկարծ հայտնեն վիշտու  
Ակամայից քո առջև,

30 Դու մի՛ կարծիր, թե քեզանից  
Կարեկցություն ևմ խնդրում,  
Այլև իզուր մի՛ հարցնիր ինձ,  
Թե ինչ ցավ կա իմ սրտում.—

35 Քո խոսքերն իմ տիրությանը  
Չւն լինելու մխիթար,  
Եվ իմ սրտի գաղտնարանը  
Միշտ փակված է քեզ համար:

Երկինք, գետինք թող միանան,  
Կանգնի վկա տիեզերք—  
Տվողը հոգուս կարողության,  
40 Էլ շեմ սիրիլ քեզ երբեք:

## ՍԱՐԵՐՈՒՄ

- Մութը իշավ,** գետինն առավ  
Քոշաքարա սարերում,  
Գագաթների տևսքը կորավ  
Ու խոր թաղվեց խավարում:
- 5 Երկինքն ամպած, տիսուր ու սև  
Լաց է լինում միալար,  
Հեռու, հեռու լերան ետև  
Խաղում փայլակն անդադար:
- Ահա փայլեց և մոտիկից,  
10 Լուսափայլեց սար ու ձոր.  
Ոլորվելով սարի տակից  
Գետը վազում է պըղտոր:
- Մենակ, անքուն հովիվն ահա  
Կանգնած իրեն արխաջում,  
15 Արթուն աշբով հըսկում է նա,  
Գողից երկյուղ է քաշում:  
Փայլակն ահա փայլեց կըրկին,  
Նըրա կարմիր լուսի տակ,  
Բինից հեռու երեացին  
20 Երկու մարդու կերպարանք...
- Ամպը գոռաց ու տըրաքեց,  
Եվ անձրել սաստկացավ,  
Հովիվն «հե՛յ հե՛յ...» աղաղակեց,  
Շունը թէից վեր կացավ...
- 25 Հրացանները որոտացին,  
Ոչխարն եղավ ցանուցիր,  
Հավարն ընկավ, ողջ զարթնեցին...  
Գիշերը մո՛ւթն, ակնակիր...

\* \* \*

- Երբ տեսնում եմ, մարդ տակավին  
Պահանջածը դեռ չի ստանում,  
Եվ հուսահատ գերեզմանին,  
Մոլուխանն է ապաստանում.
- 5 Երբ աշք եմ ածում շուրջս ու հեռու  
Եվ չեմ գտնում խաղաղ անկյուն,  
Ուր հառաշը տանջվող գերու  
Զտարածվեր տիսրահնչյուն.
- Այնինչ խոսքը մարդու որդու  
10 Արհամարհված ու մռացված,  
Եվ գլուխը ազատ մարդու  
Մինչև գետին խոնարհած,  
Բարկությունով լցված հոգով
- Ես ուղում եմ, որ հենց իսկույն,  
15 Տիրով կյանքը յուր վայելքով  
Դառնար ժանտախտ ու մահաթույն...
- Թող մեղավոր հարանց շիրմի  
Վերա որդիքն անապական  
Ապրեն հանգիստ, և թող լինի  
20 Նրանց օրենքն ավետարանն:

## ԿՈՐՈՒՍՏԻՑ ՀԵՏՈ

Խնդրի՛ր, սիրո իմ կարոտակեզ,  
Միրո իմ պանդուխտ, վշտաբեկ,  
Խնդրիր նրան, որ այլևս քեզ  
Սփոփելու չէ երբեք:

5 Կանչի՛ր, կանչի՛ր, գուցե կանչիս  
Հնչունները ըղձական,  
Ինչպես միտքս, ինչպես հոգիս,  
Թափանցեն այն գերեզման...

6 Յուր դրախտից գուցե լսե  
10 Հառաշանքս աղեկեզ,  
Մտաբերե և ափսոսե,  
Որ ես ապոռում եմ այսպես...

Հուսահատությունը տիրել է կյանքին.  
Մարդիկ տիսրությամբ տանջվում են ահա,  
Իսկ ոգևորողն այս ծանր ժամին  
Լոել է արդեն, և հիվանդ է նա:

- 5 Անզգա մարդիկ, ձեր կրծքից այդպես  
Ոգևորությունը շո՞ւտ է հեռանում.  
Ինչո՞ւ չեք հիշում այն մարդուն, որ ձեզ  
Չեր տղմոտ կյանքից երկինք էր տանում.  
Քարասիրտ մարդիկ, այսօրվան համար
- 10 էլ ձեր աշքերում արցունքներ շըկա՞ն,  
Մի՞թե բոլորը քամել են իսպառ  
«Անբախտ Համլետը», «Խելագար արքան»...  
Այն արտասո՞ւրը, սե՞րը, հրճվա՞նքը...  
Մի՞թե ձեր սրտում բոլորը մեռան,  
15 Մի՞թե չեք սիրում բեմի պարծանքը,  
Օ՛, նա հիվանդ է, հիշեցեք նրան:

## ՀՐԱԺԵՑ

Այստեղ աչա կըբաժանվենք

Մնաս բարյավ, սիրելի.

Այսպէս ևս շեմ ցավել երբեք

Դառնությունով սիրտս լի:

5 Այստեղ աչա քեզ թողնում եմ

Եվ շգիտեմ, ուր կերթաս.

Կասկածներից ևս դողում եմ...

Թող պահպանե քեզ աստված:

Ա՛խ, առանց քեզ տիխուր կյանքիս

10 Օրը տարի կդառնա,

Բայց, ուր լինիս, դարձյալ հոգիս

Ծուրցդ պիտի թրթուա:

Մնաս բարյավ, բայց միշտ հիշիր,

Որ քեզ շատ եմ կարոտել,

15 Եվ տեսության ժամի համար

Չըմոռանաս աղոթել:

## ԽԵՂԾ ԱՌԱՄՅԱՆ

### Էքսպրոմտ

Ճանաչում էի ևս նրան, ընկեր.—

Չափազանց ճարտար, հանճարեղ մարդ էր.

Այս շրթունքները պատմում էին ինձ

Էիր թագավորի, Համլետի սրտից,

5 Այս աչքերն ուժեղ հրով ցոլանում—  
Ծիծաղում էին, տիրում, բարկանում...

ԴԵՐԱՍԱՆ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՀՀ  
 «ՄԵՌԱՆԵԼ-ՔԱՆԵԼ»  
 Համետ

- Ոգևորողն ընկավ արդեն,  
 Եվ լոեցին նորա հետ  
 Միրո տանշանք, զայրույթ ու քեն—  
 Լիր, օթելո և Համետ:
- 5 Մեռավ—քնեց, հանգստացավ.  
 Որպես աղմուկ կենդանության,  
 Մեռելության միջից անցավ  
 Եվ չքացավ հավիտյան:
- 10 Էլ չի լսվիլ նորա ձայնը  
 Իմաստներով ոգեշոմնչ,  
 Հավերժացավ աստվածայինը,  
 Մնաց դիակն անմոռմչ:
- 15 Եվ կըհանգվի լուռ և անշարժ  
 Դերասանը քարի տակ,  
 Բայց կպատմի քարն ապառաժ  
 Մրրկալից հիշտակ:
- 20 Եվ այցելուն պիտի կանգնե  
 Շիրմի առջև փառագոշ,  
 Մրտի խորքից բացականչե  
 Զայնով հպարտ ու դողդոշ—  
 «Ոսկերացդ հանգիստ,  
 Աննման արտիստ»:

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

- Էլ աստղե՞ր, աստղե՞ր,  
 Երկնքի աշքեր,  
 Որ այդպես վառ-վառ  
 Ժըպտում եք պայծառ.  
 5 Ժըպտում էիք դուք,  
 Երբ ես դեռ մանուկ  
 Աշխույժ ու կայտառ,  
 Զեզ նման պայծառ  
 Թըովում էի  
 10 Ու ցավ շունեի...  
 Ժըպտում եք այսօր,  
 Երբ թույլ ու անզոր,  
 Կորած հույսերիս  
 Կըսկիծն հմ լալիս...  
 15 Կըժպտաք նաև  
 Շիրմիս վերև...

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Քո աշքերում, որ փայլում է,  
Հոգուս հուրն է մշտավառ,  
Իսկ ժպիտդ, որ բացվում է,—  
Սրտիս բերկրանքն անսպառ:

- \* \* \*
- Երբ խոսում էիր, պատմում էիր ինձ,  
Ես այն ժամանակ արբած քո շնչից  
Եվ հափշտակված քեզ էի նայում.  
Իմ հոգին մենակ այն էր գրավում,  
5 թե ինչպես էին շարժվում բորբոքված  
Մերթիկները քո վարդագույն շրթանց.  
Ինչպես աշքերը արտեանունքիդ  
Ստվերների մեջ, որպես ծով հանգիստ,  
Մերթ լցվում էին խաղաղ հրապույրով,  
10 Մերթ վառվում էին կենդանի հրով...  
Այնպես էր թվում՝ երազում էի,  
Եվ իբրև հեռվից ևս լըսում էի  
Մի նոր մեղեղի անուշ, անբարբառ...  
Ա՛հ, նորից խոսիր, բայց երկա՞ր, երկա՞ր...

- 5 Երբ որ հանգի հուրն աշքերիդ,  
Եվ շըրթունքըդ կարկամի,  
Կըմեռանի նաև գերիդ...  
Եվ մեզ մի մահ կըտանի:

ՈՒՐՈՒ

Դո՞ւ ես, իմ սիրո՛ւն,  
Այն շըքնաղ ուրուն,  
Որ զըրկում է ինձ  
Գիշերը քընից:

- 5 Դո՞ւ ես զըրկաբաց  
Հայտնըվում հանկարծ,  
Ուզում ես գըրկել,  
Ու հանկարծ, մեկ էլ  
Խավարի միջում  
10 Սահում ես, կորչում...

Դո՞ւ ես ծիծաղով  
Կամ ծանոթ ձայնով  
Մեր սիրած երգի՝  
Իմ լուս և ենյակի  
15 Սոտից հեռանում  
Գիշերվա մըթնում...

- Ասա՛, իմ սիրո՛ւն,  
Դո՞ւ ես այն ուրուն,  
Որ զըրկում է ինձ  
Գիշերը քընից...

Սիրելի՛ աշեր.  
Որպես մութ գիշեր  
Վառված աստղերով,  
Անմեկին ահով

- 5 Ցնցում եք հոգիս,  
Եվ, մերթ նայելիս,  
Անդիմադրելի  
Հրապուրանքով լի  
Սիրտս եք թափանցում,  
10 Բայց դուք չեք խոցում,  
Այլ մեղմ, անվրդով,  
Լուս այրվող խանդով  
Գրկում եք ամուր

Սիրտս անձնատուր  
15 Եվ ճմլում այնքան  
Քաղցը՝ դյուրեկան...

- 0՝, ոչ թե պաշել,  
Այլ ապշած պաշտել  
Չեզ միայն կուզեի,  
20 Սիրատեն; սրտի  
Ճերմ խոսակիցներ.—  
Սեորա՛կ աշեր:

- \* \* \*
- Թե հոգնել ես հաղթահարված  
Կյանքի անվերջ հոգսերով,  
Թե տանջվում ես արհամարհված  
Բոցավառվող քո սիրով.
- 5 Թե կյանքի մեջ մի շար դիպված,  
Մի ամոթ է քեզ ճնշում,  
Թե շարաշար հիասթափված  
Կյանքն ատում ես և գարշում,
- 10 Լավ իմացիր, ողջ անօգուտ  
Պիտի հուզեն միմիայն քեզ,  
Մի՛ սպառիր ուժը հոգուդ  
Մտածմոնքով կարճատես.
- 15 Հանգիստ եղիր, աղոթք արմ,  
Անհիշալար եղիր միշտ,  
Թող քո լացով չուրախանա  
Քո թշնամին ամբարիշտ:
- 20 Կյանքի ցավը, բախտի խաղը,  
Ատելությունն անմըտի,  
Հավատացի՛ր, երբեք շարժեն  
Վրդովմոնքին քո սրտի:
- Եվ այդ սիրտը քեզ չի տված  
Որ դու մաշես ամեն օր,  
Այնտեղ պիտի ապրի աստված,  
Ոչ թե ցավեր նորանոր:

- \* \* \*
- Երբ գիշերային  
Մութ հորիզոնից  
Արև կամ լուսին  
Երեսում են ինձ,  
5 Իմ տիսուր հոգում  
Մագում է ոսկի  
Ճաճանչը հուսոն  
Հարատեկ կյանքի,  
Եվ մտածում եմ.—  
10 Աշխարքը դեռ կա,  
Գեռ օր կըտեսնեմ...  
Եվ նշանն ահա:  
Հրճվում է հոգիս,  
Երգում եմ զվարթ,  
15 Եվ ժպտում են ինձ  
Թե՛ աստված, թե՛ մարդ:

- 
- Աստծո տաճարում  
Մոմը սեղանից  
Խնկաբույր ծխում,  
20 Վառվում է հանգիստ.  
Իմ մոայլ հոգում  
Առաքինության,  
Ճշմարիտ կյանքի  
Հավիտենական

25 Հույսը ցոլանում,  
Վառվում է նույնպես。  
Սրտով մեղմանում,  
Աղոթում եմ ևս:

- Կուսի աշքերին  
36 Նայում եմ ագահ.  
Թնդում է հոգիս,  
Դողում ակամա,  
Եվ կենդանության  
Ախտերը եռուն,  
35 Ախորժ այրվում են  
Իմ երակներում.  
Սիրտս անհանգիստ  
Պայթում է կարծես,  
Զգում եմ ցավ, վիշտ...  
40 Եվ տանջվում եմ ևս.  
Բայց այն տանջանքը  
Քաղցր է ինձ համար,  
Քան երկար կյանքը,  
Աղօթք փրկարար:

## ՌՈՒՄԱՆՍ

Երկու աշքով լալիս էր նա,  
Վճիտ կաթիլքն արտոսրի  
Թափվում էին կրծքի վերա  
Սկ աշքերից այն կուսի:

- 5 Նուրբ շրթունքը այրվում էին  
Մատաղ սրտի կրակից,  
Եվ համարձակ իմ առաջին  
Լալով պատմում էր նա ինձ:  
  
10 Ես ակնապիշ լսում էի  
Այն պատկերով հիացած,  
Եվ հիշում եմ միմիայն վերջի  
Նրա խոսքերն, որ ասաց՝  
  
«... Ա՞խ, չարտասվել ես չեմ կարող,  
Սանր է ապրել սիրազուրկ...»,  
15 Եվ բարձրածայն հեկեկալով  
Դարձյալ թափեց արտասուր:

## ՔՐԻՍՏՈՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

- Անապատի մեջ խավար ու տիսուր,  
Ցրված քարերից մի քարի վըրա,  
Գլխակոր նըստած, մտախոհ ու լուռ՝  
Աշխարհի մասին մըտածում էր նա:
- 5 Նրա ճակատը մութն էր ավելի,  
Քան անապատը գիշերվա մթնում,  
Մտածում էր նա՝ սեր-լույս ծավալի  
Մարդկային կյանքի մութն անապատում:
- 10 Աշքի առաջեւ անց էին կենում  
Սըրով, արյունով խուժադուժ ազգեր,  
Անձար ու տըկար լաց էին լինում \*  
Աղքատը, այրին ու որբը անտեր...
- Եվ անապատում մի քարի վըրա  
Միայնակ նըստած մըտածում էր նա...

## ԵՐԱԶ

- Գիշերն երազում հալածում էին.  
Փախչում էի շար թշնամիներից.  
Նրանք խառնածայն հետեւում էին...  
Դողում էին սիրտս ու ծնկներս աճից:
- 5 Իմ առջև տեսա ընդարձակ դղյակ  
Բարձրը պատերով փոքրիկ ծմակում.  
Ես այնտեղ մտա... անմարդ ու դատարկ  
Այն ավերակը ինձ հույս էր ազդում...
- 10 Զգույշ կուշ եկած, շունչս պահելով  
Ես դողում էի մահվան սարսափից,  
Եվ, զարհուրելի աղաղակներով,  
Զարագործները մոտիկ էին ինձ:
- 15 Հանկարծ դղյակի, իմ շուրջ տարածված,  
Գերեզմաններից ձայներ դուրս եկան,  
Եվ հոգուն ծանոթ ձայներ մոռացված...  
Եվ ես զորություն առա գերբնական:
- Անարգ թաքստից դուրս թռա իսկույն  
Որպես վրդոված վագրը դարանից,  
Եվ հարծակվեցի ընդդեմ թշնամուն,—  
20 Զւնքերի բախում... զարթեցա քնից:

Մութն էր երկինքը. ոչ ոք չըտեսավ  
Բնության գործը գիշերվա մթնում,  
Միայն առավոտ, երբ որ լուսացավ,  
Փայլում էր ցողը կանաչ դաշտերում:

- 5 Լուռ էր պոետը, թախիծը դեմքին,  
Խնձ էր մտածում՝ մարդիկ շիմացան.  
Սակայն տողերում, երբ որ կարդացին,  
Զգայուն սրտի արցունքը տեսան:

Բանաստեղծը ծերացել է.  
Թունդ մրրիկը, որ անցել է,  
Հետք է թողել լայն ճակատին,  
Եվ աշքերում աստվածային  
5 Կայծը դարձյալ ցոլանում է.  
Բայց նա, կարծես, սըլանում է  
Դեպի երկինք, կամքով որի  
Իշավ երկիր—ոգևորի:

## ԱՌԱՎՈՏ

Նվեր մեր նոր երիտասարդությանը

- Սրտամաշ տաղտուկ ծանրը գիշերի...  
 Ա՛ռելի սարսափ գիշատիշների...  
 Թառանշում էի և լալա՛առաշ  
 Միմիայն արեի լույս էի խնդրում,  
 5 Երբ որ շողացին մի քանի ճաձանչ  
 Մութ ։որիթզոնի մուայլ ամպերում:  
 Առավոտն ա՛ա՝ բացազանշեցի,  
 Եվ թնդաց ։ոզիս. թեթև շնչեցի...  
 8 Յանկալի կյանքի նշան ակներեւ.—  
 10 Պատառվեց ա՛ա թանձր խավարը,  
 Օրը բացվում է և զլխիս վերե  
 Շառագունել և երկնակամարը...

\* \* \*

Ես սիրել եմ վարդը տըժգույն  
 Սիրուց տանջված այտերի,  
 Մելամաղձուր խաղաղությունն  
 Զույգ սկորակ աշքերի:

- 5 Ես պահել եմ սրտիս խորքում  
 Մի լուռ գաղտնիք սիրային,  
 Եվ այն երբե՞ք, ոչ մի երգում  
 Հայտնելու չեմ աշխարհին:  
 Բայց և պահել անկարող եմ,  
 10 Օ՛, դըժվար է համբերել,  
 Զասել՝ ինչով բախտավոր եմ,  
 Զասել՝ ինչպե՞ս եմ սիրել:

ՀԻԾԻՐ...

Յուր շար բախտի ճանկում բռնված՝  
Նա քեզանից հեռու մնաց.—  
Սիրեցի քեզ հեռվից  
Զրկված քո բուլրից,  
5 Եվ տանշվեց թաքուն  
Գիշերը անքուն:

Նորա սերը մնաց անհաս,  
Բայց անունը շրմոռանաս.—  
Պահի՛ր քո մտքում,  
10 Հիշի՛ր աղոթքում.  
Եվ քո սրտում նա  
Թող անմահանա:

Ինձ մի՛ խընդրիր, ես չեմ երգի  
Իմ տիսրությունն ահագին,  
Աղեկըտուր նըրա ձայնից  
Կըխորտակվի քո հոգին...  
5 Ո՛ւ, քեզ համար այսպիսի երգ  
Երգելու չեմ ես երրեք:  
  
Ես երգեցի սարի վըրա,  
Ու չորացան խոտ ու վարդ,  
Անապատ է այնտեղ հիմա,  
10 Սկ՝, ամայի անապատ...  
Հառաշանքից այրված սարում  
Էլ ծաղիկ չի դալարում:  
  
Բույր ու գեղիյուռ ես կուզեի  
Եվ արշալույս ոսկեվառ,  
15 Որ մի պայժառ երգ հյուսեի  
Ու երգեի քեզ համար...  
Բայց իմ սիրտը բըռնած են դեռ  
Հուր հառաշանք, սև պիշեր:

## ՕՐ. Բ.-ԻՆ

- Դու արտասվում ես, և քո ծանրավիշտ  
Սրտից լճացած արցունքի տակից  
Փայլում է միտքը բոցոտ աշքերիդ—  
Խելոք տրտմություն և քնքուշ թափիծ,  
  
5 Եվ այդ առավել վեհ ու սիրուն է,  
Թեև ամպամած գիշերվան գրկում  
Փայլակն էլ շողում և ցոլանում է  
Խաղաղ ջրերի խորին հատակում:

## ԿԱՍԿԱԾ

- Ո՞վ ես, չար ոգի, դո՞ւ, որ իմ սրտում  
Այսպիսի անխիղճ խոսքեր ես կարգում.  
«Խղճալի», նույնիսկ այն շըրթոնքները,  
Որ համբուրում ես կախարդված մտքով,  
Գաղտնի ծաղրում են քո անբիծ սերը,  
Որ փայփայում ես այդքան խնամքով...»:

Սիրելի Զիվան, ընկերդ իմ հոգու,  
Մարդկային սիրտը հասկանում ես դու,  
Եվ քո ձայները երգիդ հարազատ,

- 5 կի են հուզմունքով անկեղծ և ազատ.  
Երբ հայրենիքն է քո երգում խոսում,  
Կամ նրա վհատ որդին արտասվում,  
Զարթնում է իմ մեջ խոր վիրավորված  
Հպարտությունը իմ հզոր նախնյաց...  
Բայց, ասա, ինչո՞ւ դու սեր երգելիս

10 Ինձ վերա տանջող թախիծ է գալիս:

Ա՛խ, ո՞րքան փարթամ կյանքը ծաղկում է  
Մատաղ կրծքի տակ.  
Աշքերի մթնում փայլատակում է  
Կենդանի կրակ.

- 5 Հեշտախտի տապից այրվող շրթումքը  
Խոսում են անբան,  
Եվ արքեցնում է անուշը բուրմունքը  
Նորա թարմության.  
Եվ այս բոլորը քեզ պատմում են ճոխ  
10 Սիրո գաղտնիքը,  
Բայց, ափսո՞ս, չըկա նաև մի պատմող,  
Թե այս աղջիկը  
Տերն է պոետի  
Հոգու և սրտի:

## ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Իմ եղբայրները օտարության մեջ  
ինձ ասում էին. «Կարոտ ենք, երգի՛շ,  
Մեր հայրենիքի երգերիցն ասա՛.

5                          Քո երգից նորա  
Մայրական զըվարթ  
Հողի ու ջըրի  
Եվ մեր հարազատ  
Հայ ժողովրդի  
Համն ու հոտն առնենք,  
10                         Որ մխիթարվենք...»:  
Սիրոս լցվեցավ, և հառաշեցի...  
Նրանք էլ ինձ հետ սաստիկ ցավալի  
Աղաղակելով արտասվում էին.  
15                         Եվ հոսում էին  
Արտասուրները  
Տիուր աշքերից,  
Եվ մեր ձայները  
Մի ծանոթ կոկիծ  
Ուժեղացնում էր  
Եվ միացնում էր...  
20                         Եվ, ախրության մեջ կամ թև խնջույքի,  
                          Օտար աշխարհում,  
Մենք այսպիս էինք մեր հայրենիքի  
                          Երգերը երգում...

\* \* \*

Լսո՞ւմ ես դու էլ, թե ինչ են խոսում  
Մեր մասին ամբողջ ամարանոցում.  
Աշքերի տակից, տեսնո՞ւմ ես, ինչպես  
Շածուկ նայելով հետեւում են մեզ,  
5                         Մեր ամեն խոսքին ականջ են դնում  
Եվ կասկածավոր աշքով են անում...  
Մեզանից հետո էլ մեկը մյուսին  
Կասն. «Հիշո՞ւմ եք դուք այն երկուսին,  
Ազգական չին, ոչ քույր ու եղբայր,  
10                         Ման էին գալիս անընկեր, անմայր...  
Եվ գիշերները այս ծառերի տակ  
Երգ էին ասում ձայնով ներդաշնակ,  
Եվ նրանց երգը զգացմունքով լի,  
Որ կախարդանք էր գիշերին տալի,  
15                         Որ ծավալվում էր այնքան հեշտալուր,  
Լցված սրտերի զեղմունք էր մաքուր:  
Նկատո՞ւմ էիք, անտառի մթին  
Ստվերում երգը ընդհատում էին.  
Այն լուսթյունը հասկանո՞ւմ էիք...  
20                         Մտաբերո՞ւմ եք դեմքը գեղեցիկ  
Վայելահասակ այն աղջկանը.  
Երբ երիտասարդ օտարականը  
Ագահ աշքերը վրան հառում էր,  
Իսկույն շիկնելով նա խոնարհում էր  
25                         Միրուն գլուխը և ձեռքին բռնած  
Մաղկափնջին էր նայում շփոթված...  
Ուրախ հնչյունը նորա ծիծաղի,  
Որ տարածվում էր այնքան դյուրալի

Այս ամայացած, խուլ շրջակայքում  
30 Եվ սուր ճիշերով սրտերը ծակում...  
Հիշո՞ւմ եք արդյոք  
Այն ախտաբորբոք,  
Միշտ զվարի զույգին.  
Միրահար էին...»:

### ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԵԿՈ

Ամռան գիշերվա երկինքն աստղալի,  
Ցուր հսկայական վրրանի ներքո  
Գրկած շարքերը բարձր լւռների,  
Պատմում է երկրին մեծությունն աստծու:

- 5 Եվ բարիքներով լցված-լիացած  
Երկիրն ունկնդիր երկնքի ճառին,  
Քնելուց առաջ խոնարհ, Երկյուղած  
Փառաբանում է մեծազոր տերին:  
10 Եվ փառք են տալիս իմ շուրջը բոլոր,  
Ամեն մի տերեւ, ամեն շընչավոր...

Սրբտիս թագուհի,  
Կարոտել ևմ քեզ.  
Ա՛խ, ի՞նչ կը ինի  
Հանկարծ հայտնրվես  
5 Եվ, թէկուզ իսկույն  
Դարձյալ շըքանաս,  
Ինչպես գիշերվան  
Կարճատե երադ:  
Միայն թե տեսնեմ  
10 Պատկերը մեկ էլ,  
Միայն թե ասեմ՝  
Ո՞նց ևմ կարոտել:

0՝, լո՛ւռ կաց, ընկե՛ր. այդ ի՞նչ ես երգում,  
Ինչո՞ւ ես խաղաղ հոգիս փոթորկում  
Ուրախ օրերի սիրելի երգով  
Եվ սիրու վառում անցյալի կրակով...  
5 Քո ձայների հետ վաղուց հեռացած  
Մի ուրիշ պատկեր մտքումս երևաց.  
Աչա, կենդանի կանգնեց առաջիս,  
Եվ, ահա՛, դարձյալ կարու ականջիս  
Հնչում է նորա ձայնը սրտալի,  
10 Որպես երբեմն, երբ սիրված էի,  
Եվ մտքումս, ահա, լուսավորվեցան  
Հին ցնորքներս, անցքեր զանազան,  
Գծերը հոգուս ծանոթ դեմքերի,  
Տեսարանները հայրենի երկրի,  
15 Այն օրհնյալ երկրի, ուր մի ժամանակ  
Վայելում էի լիովի հրճվանք...  
Բայց զրկված եմ ես այժմ բոլորից.  
Դու հիշեցնում ես կորուստս նորից—  
Երջանկությունս մոայլ վիճակում  
20 Եվ այդպես անգութ սիրու կտրատում...  
Ո՞հ, ներում եմ քեզ, չեմ հանդիմանում.  
Զըգիտես, հոգիս, թե ի՞նչ ես անում.  
Սակայն մի՛ երգիր այդ երգը ինձ մոտ,  
Թո՛ղ, երգիր ուրիշ մի երգ անծանոթ:

## ՏԵՇ2

Մեկն էլ այն է հոգուս անթիվ տենչերի,  
Որ իմ աշքով տեսնեմ հույզը շըրերի.—  
Ալեկոծվող օվկիանոսի մի տագնապ.  
Ահեղագոշ ալիքները լեռնաշափ  
5 Բարձրանային իրար վրա անդադար  
Եվ մըրրիկը նրանց վրա սաստկանար...  
Եվ դիտեի ժայռի գլխին ես կանգնած,  
Երբ հողմակոծ կոհակները մոլեգնած  
Մինչև երկինք փրփուր ու ջուր ցայտեին  
10 Եվ, ոռնալով, բարձր ափերին զարկեին,  
Եվ, խորտակված, օրհասական հեծծանքով  
Հեռանային խաղաղացած հորձանքով,  
Եվ, խլածայն մռնշալով, նորից նոր  
Բարձրանային աղջամղջում հեռավոր.  
15 Նոր հարձակմունք, անհաշտ կոփվ  
Եվ նայեի ժայռի գլխին ես կանգնած...  
պայրագնած...

## ՄՈՌԱՑՎԱԾ ՍԵՐ

Սիրում էի երբեմն քեզ...  
Այժմ ևս տակալին  
Իմ սրտումը դու ապրում ես,  
Բայց ոչ ուժով քո նախկին:

5 Առաջ հընչում էիր մաքուր,  
Որպես աղոթք իմ հոգում,  
Որպես սիրո նախանձ ու հոկ'  
Տաք արյունս բորբոքում:

10 Այժմ՝ որպես վաղուց մեռած  
Բարեկամի հիշատակ,  
Կամ մանկության օրով սիրած  
Մի հին երգի եղանակ...

Եվ անունը այժմ տալիս,  
Էլ «հոգյակ» շեմ ես ասում,  
Զեմ աշխատում քուն մտնելիս,  
Որ քեզ տեսնեմ երազում:

15 Բայց զարմանքով երբեմնապես  
Մտածում եմ ակամա,  
Ինչո՞ւ էլ դու սիրելի շես,  
Ինչո՞ւ ես քեզ մոռացա...

ՎԱՏ ՕՐԵՐ

- Ցուրտ է, իմ ընկե՛ր, ու հողմ ահագին.  
Սև թևերը լայն փռուած մեր գըլիսին  
Որոտում է խուզ երկինքը խավար.  
Դես ու դեն ցըրված ամպերն հողմավար  
5 Փընտրում են, ասես, մի տեղ, օթևան,  
Մոլորված մարդու մըտքերի նըման:
- Այս խավար, ճընշող, ցուրտ մըթնոլորտում  
Հանգիստ չեն, ընկե՛ր, նաև իմ հոգում  
իմ վեհ ցընորքներն, իմ տենչերն աննենդ.  
10 Նույնպես հալածված՝ նըրանք էլ երբեք  
Չեն կարողանում գըտնել ապաստան,  
Երկընքի ցըրված ամպերի նըման:

- Երբոր բացվելիս է եղել արփին,  
Սարերի լանջում կամ թե քարափին,  
Դիմացը կանգնած ես շատ եմ դիտել.  
Առաջին շողը դեռ ինձ է դիպել.  
5 Եվ ես ծանոթ եմ այն հրաշալի  
Գույն ու ձեւերին արեագալի,  
Որ այնքան շըքեղ մեզ ցույց են տալիս  
Երկինք ու երկիր քնից արթնելիս:
- Բայց քեզ տեսնելուց օրեր անցկացած,  
10 Երբոր վերստին տեսա լուսաբաց,  
Հասկացա գաղտնի կապերը բնության.  
Բացվում էր պայծառ առավոտն ամռան,  
Եվ ցոլանալով շաղախվում էին  
Վաղ արշալույսի շողերն առաջին  
15 Զինջ կապուտակին անամպ երկնքի,  
Որ գիշերային քողը յուր դեմքի—  
Թեթև մշուշը դեռ արևմուտքում  
Խսպառ վայր ձգել չէր համարձակվում,  
Մինչ առավոտյան լույսի երերուն  
20 Փապավենները խայտալով սիրուն  
Երկնային ծովի կապուտակ ծոցում  
Հեռու և հեռու էին տարածվում.  
Եվ մի կյանք, ասես, նուրբ ու սիրազեղ  
Շանոթ ակնարկով խաղում էր այնտեղ.  
25 Շանոթ էր թվում կապույտն երկնքի  
Եվ ծիծղուն շողը անտես արեգի...  
Եվ ես հիշեցի սրտի թնդյունով,  
Աշքերդ կապույտ, նույնպիսի գույնով,

Նրանց ժպիտը զվարթ, կուսական,  
30 Որ արշալույսին նման է այնքան.  
Տեսա՝ երկուսն էլ մի բան են պատմում,  
Երկուսն էլ տեսա՝ արև են բերում,  
Մեկը՝ լույսի,  
Մյուսը՝ հույսի:

### ԱՂԲՅՈՒՆԾ

Սարի լանջին, ժայռի տակ,  
Ճուր էր բըխում սառնորակ  
Ու ցրվելով խոտերում  
Իզուր ճահիճ էր դառնում:

5 Նրա առջև մի խոր գուշ  
Շինեց հովիվն ու անուշ  
Խաղ ասելով նա տարավ  
Ճրեց հոտը իր ծարավ:

Պախրեն անցավ էն սարից՝  
10 Շոգից հանած շոր լեզուն.  
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,  
Ապա նայեց աստծուն:

Անցվորն եկավ տոթակեղ,  
Սառն աղբյուրին որ հասավ,  
10 Գլխարկն առավ ու շոքեց՝  
Խմեց, սիրտը հովացավ:

Ու տվավ իր օրհնանքը  
Անցվոր մարդը էն բարի.  
«Քո շինողի օր-կյանքը  
20 Զրի նման երկարի»...»

## ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ

- Կովկասի ամպած երկինքը պարզվեց  
 Հեռու հարավում, շողակի նման,  
 Հսկա Մասիսի գագաթը փայլեց  
 Վիթխարի Կազբեկ սարի հանդիման.
- 5 «Ողջո՞ւյն բարեկամ», — Մասիսն որոտաց՝  
 Թունդ կայծակների ձայնով ահաբեր.  
 Եվ մեծ Կովկասի լեռները հանկարծ  
 Խուզ դղրդացին. «Ողջո՞ւյն քեզ, ընկեր:
- 10 Մենք հին փառքերով ու նոր ցավերով  
 Ազգականներ ենք, իրար խորթացած,  
 Մտաբերո՞ւմ ես, որքան ենք սիրով  
 Միասին կանգնել փոթորկի դիմաց...
- 15 Բայց ի՞նչ փոխվել ես մի քանի դարում,  
 Էլ չես շողջողում ամպերից վերև.  
 Ինչո՞ւ ես այդպես թիպոտ երևում,  
 Դու էլ իմ ցավիցն ունես ակներեա:
- 20 Կովկասի երկինքն ամպեց վերստին,  
 Ճայթեցին անթիվ կայծակներ ահեղ,  
 Այն սեգ լեռները համբուրվում էին,  
 Եվ ուրախության արցունքն էր հեղեղ:

## ՕՐ. Օ. Գ.-Ի ԱԼԲՈՍՈՒՄ

- Ի՞նչ ես ուզում, որ թողնեի  
 Քո ալբոմում հիշատակ,  
 Սիրո հրդե՞հ փոթորկալի,  
 Ուրախությո՞ւն, թե՞ տանշանք...
- 5 Դու խնդրում ես, բայց որի՞ց,  
 Սիրու լիքն է բոլորից:

Քրիստոս հարյավ... Ա՛խ, և այս հոծ  
Մութ-մըռայլից, երանի,  
Հառներ հոգիս կըրակ ու բոց,  
Զըվարթ հոգիս երբեմնի:

- 5 Եվ, երանի, նույն սաստկությամբ  
Սիրո կիրքը ևս հառներ,  
Երկինքս էլի դառնար անամպ,  
Միտքըս ուժգին սավառներ...

- 10 — Լո՛ւռ կաց, անմիտ, ի՛նչ ես լավիս  
Վըհատ ձայնով ծերության,  
Դեռ քո ճամփին լույս է տալիս  
Ճառագայթը վաղորդյան:

- 15 Եվ մըռայլից, որ կա իշած  
Մանր ու տարտամ քո սըրտին,  
Պիտի հառնեն տանջված, խաշված  
Յընորքները քո նախկին:

Ատելուս համար  
Դեռ չեմ զղացել,  
Բայց սիրուս համար  
Շատ եմ ողբացել:

## Ն. ԲԱՐԱԹԱԾՎԻԼՈՒ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱ

- Միմիթարությո՛ւն, սգավոր Վրաստան,  
Ինչո՞ւ է տիրել գեմքըդ այրական.  
Շարժված աճյունը հանգած պոետի  
Շարժե՞ց վերստին ցավը քո սրտի,  
5 Թե՞ նորա մըթին գերեզմանը խոր  
Որբ հոգուդ համար շատ է ահավոր...
- Կըթաղես, այո՛, դարձյալ քո երգչին,  
Բայց նորա վառած զգացմունքներին  
Զըկա գերեզման և ոչ էլ վախճան.  
10 Նրանք կենդանի կըմնան հավիտյան,  
Եվ դու նրանցով պիտի մի այլ օր  
Թաղես քեզ մաշող ցավերը բոլոր:
- Եվ քե՞զ, անցավոր շիրիմից շիրիմ,  
Հեգ ժողովրդի երգիշ մտերիմ,  
15 Քե՞զ, որ տանջվել ես անհանգիստ սրտով,  
Հավիտենական հանգիստ անվրդով:

- \* \* \*
- Հոսի՛ր, արտասուզս անկեղծ տիրության,  
Գարնան հորդահոս տարափի նման,  
Որ ծաղկեցնում է ծարավ արտերը...
- 5 Հոսի՛ր այդպես հորդ, անկեղծ երգերով,  
Եղբայրսիրության գթով ու սիրով,  
Գուցե ծաղկեցնես խոպան սրտերը:

## ՊՈԵՏԻՆ

- Մեր ուշքն ինչո՞ւ ես կախարդում  
Սիրո անհոգ երգերով,  
Մեր աշքն ինչո՞ւ ես դու իսթում  
Յնորական պատկերով:
- 5 Այս օրերում հարկավոր չեն  
Զբոսանքներ հոգեկան,  
Նայի՛ր կյանքին, մեզ կանչում են  
Մեր եղբայրներն օգնության,
- 10 Իսկ դու, անփույթ մեր տանջանքին,  
Հարզածներին մեր բախտի,  
Արբեցնում ես արթուն հոգին  
Քաղցըր թույնով հեշտախտի:
- Քո սիրային երգերի հետ,  
Նայի՛ր, սուգ ենք մենք անում.  
15 Բավակա՞ն է, կանգնի՛ր, պոետ,  
Կյանքի կովի սահմանում:
- Եվ տարածիր աջըդ անզենք  
Ընդդեմ շարին մահաբեր,  
Մենք էլ այնժամ քեզ հետ կասենք  
20 «Մնաք բարյավ, կույս և սեր»:

## ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

- Ելած՝ օվկիանի անզուսպ ալիքներ,  
Մանրը հորձանքով զարկելով դեպ վեր,  
Լեռնանում էին, գոռալով ահեղ,  
Եվ մըրրիկն ուժգին շընչում էր այնտեղ  
5 Անեզր ու անվերջ  
Տարածության մեջ:
- «Կանգնեցե՛ք», գոշեց վըրձինը ձեռքին  
Կախարդ ժերունին հուզված տարերքին.  
Ու լուս, հլնազանդ հանճարի ձայնին,  
10 Մութ ալիքները, փոթորկի ժամին,  
Կըտավի վըրա  
Կանգնած են ահա:

## ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ

Գնա՛ս բարով, ա՛յ ուխտավոր,  
Երանի քեզ, հայ ուխտավոր,  
Որ կարոտով ու սիրառատ  
Ուխտ ես գնում դեպ Արարատ:  
5 Զեփյուռներով, ծաղկանց բույրով,  
Ինչպես ծնող սիրագորով,  
Քեզ կողջունեն զմրուխտ հագած  
Գեղամ սարերն ու Արագած,  
Ու կարոտած աշքի նըման  
10 Քեզ կըժպտա վճիտ Սևան,  
Որ լեռների շուքերի հետ  
Խաղ է անում, խայտում վետ-վետ,  
Փայլփլում է ծրագանքներով,  
Հորինում է լույսերի ծով,  
15 Եվ մերթ վշտով ու տիրությամբ  
Սևանում է, ինչպես մութ ամպ...

---

Հապա էն սա՞րն, էն սար հսկան,  
Էն սարերի սարն ու արքան,  
Լազուր երկնի ծոցը մըտած,  
20 Ճերմակ գլուխն ամպեր փաթթած,  
Ահա կանգնեց ծանր ու տրտում  
Քու առաջն ու քու սրտում...  
Է՛, նա արդեն քանի սկ դար  
Պերճ գագաթովն իր ձյունափառ

25 Շողջողում է, փայլատակում,  
Եվ ուխտավոր հայի հոգում  
Հպարտության ծնում թունդեր  
Եվ սիրելի երազ՝ թե դժու

4

էն երկնահաս Մասյաց կատար,  
Ուր հին տապանն առավ դադար,  
Դադար կառնեն փառքերն մեր հին,  
Որ նորափայլ իշնեն կըրկին...

---

Հենց խոնարհես աշքերըդ ցած,  
Լայն դաշտի մեջ, առջեղ հանկարծ,  
Մառախուղից իր խաչի հետ  
Կըբարձրանա մի սուր գըմբեթ,  
Որ կըխոսի մարդու առգուն՝  
— «Խաղաղութին ամենեցուն»...

35 Էնտեղ էն հին դարերից վեր,  
Երկնաքարող, հուժկու ձայներ,  
Մահակ Պարթև, ներսես մեծին  
Խաղաղություն քարոզեցին:  
Էնտեղ լցված ահեղ հոգով,  
Աստվածային իր տեսիլքով,  
40 45 «Էջմիածինն ի Հօրէ»,  
Որ Հայաստան լուսավորեւ:  
Ու լույսն առան ծաւալեցին  
Լուսավորիչն ու մեծ Տրդատ,  
Ու տակավին այնտեղ կեցած  
50 Կըսավառնեն հոգիացած:

\* \* \* \* \*

## ՆԱ ՆՍՏԱԾ ԷՐ...

Նա նստած էր դաշնամուրի առաջին,  
Որպես երգի մի վշտացած դիցուհի,  
Եվ, նըվագի հնչյուններով տըխրագին,  
Այնքան ազդու պատմում էր վիշտն յուր սրտի,  
5 Որ թվում էր այն հիացման ժամին ինձ,  
Թե արցունքն էր հոսում տըխուր աշքերից...

## ԽՐՇԻԹՈՒՄ

Մանուկները գոռում, գոշում,  
Հալիս էին աղեկեզ.  
— Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,  
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:  
5 Հիվանդ նանը տեղի տակին  
Մանր տընքաց տըխրալի.  
— Մւնք հաց շունենք, ես ձեզ մատաղ,  
Ապին գնաց հաց բերի:  
— Զէ, խաբում ես, սուտլիկ նանի,  
10 Զէ՞ դու ասիր՝ քարափին  
Հենց որ դարկի շողքն արևի  
Հաց կըբերի մեր ապին:  
Արևն եկավ անց էլ կացավ,  
Մենք սոված ենք դեռ էսպես.  
15 Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,  
Վե՛ր կաց, նա՛նի հաց տուր մեզ:  
— Հաց շի գտել ձեր ապին դեռ,  
Տուն շի գալի սկերես.  
Քիշ էլ կացեք, իմ բալիկներ,  
20 Հիմի էնտեղ կերթամ ես...  
Մի մեծ ապի կա երկնքում,  
Նա շատ ունի էնտեղ հաց...  
Նա ձեզ էնքան շատ է սիրում...  
Նա շի թողնի ձեզ սոված...

25 Կերթամ էնտեղ նըրան կասեմ,  
Որ սոված եք, իմ բալեք,  
Զեզ համար շամ-շամ հաց կուզեմ,  
Որ դուք ուտեք, լաց շըլեք...

Մանուկները գոռում, գոշում,  
30 Հալիս էին աղեկեզ.  
— նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,  
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

Բայց չեր լսում էլ ականջը  
Բաղմաշարշար մայրիկի,  
35 Աշքը փակեց նա հավիտյան  
Գընաց, որ հաց ուղարկի:

1894

ՆՈՐ ՏԱՐԻ

Դու էլ արի,  
Նորեկ տարի,  
Գրլսիս վերից  
Անցի, գընա,  
5 Ինչպես մի օր  
Թեթևասահ,  
Որ արեի  
Վառ ժըպիտով,  
Հողմ ու շանթի  
10 Սառն աղմուկով  
Անց է կենում  
Սաղկի վըրից.  
Իսկ նա հովտում,  
Իր հուսալից  
15 Աշքը վերև,  
Փոքրիկ, լընչին,  
Ցնծում է կամ  
Մոտ է վերջին:—  
Ես էլ էնպես,  
20 Նորեկ տարի,—  
Մի խոտ, մի բույս,  
Ու ավելի:

Մի երկիր է  
Տվել մեզ կյանք,

145

25 Մի երկինք է  
Պահել իր տակ,  
Եվ գեղեցիկ,  
Փարթամ, Հըպարտ  
Մի խոտ, ծաղիկ,  
30 Կամ թե մի մարդ...  
Մենակ իրար  
Չենք հասկանում,  
Բայց ապրում ենք  
Մի սահմանում,  
35 Մի ճամփով էլ  
Պիտի գընանք,  
Կըրկին ձուլվենք  
Մի հող դառնանք,  
Անհետ, անտես  
40 Կորչենք, ինչպես  
Չոկ հընչյուններ  
Մի մեծ երգի,—  
Լոկ հյուզեներ  
Տիեզերքի:

\* \* \*

Ես ասացի. «Դու ծաղկում ես,  
Որպես շքեղ մի գարուն,  
Եվ բոլորը, ինչ որ ունես,  
Կյանք է թովիչ ու սիրուն...  
5 Մենակ, ափսո՞ս, սիրտդ է մեռած,  
Մենակ նա է շոր քեզնում...»:  
Նա հառաջեց ու ինձ ասաց.  
«Մենակ սիրտս չես տեսնում»:

## ԺՊՏՈՒՆ ԱՉՔԵՐ

- Դու մի՛ հավատա ժըպտուն աշքերին,  
Շատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ՝  
Բուսած կորըստյան անդունդի ծերին,  
Միամիտ մարդկանց քաշելու համար:
- 5 Ահա պոետն էլ, պատրանքով հարբած,  
Գերվեց մի անգամ ժըպտուն աշքերի,  
Ու որքան տանջվեց, տառապեց խարված,  
Ու որքան սըրտում գանգատներ ունի...
- 10 Դու շատ մի՛ խարվի ժըպտուն աշքերից,  
Շատ անգամ նըրանք ծաղիկներ են վառ,  
Սըլում են սըրտի ավերակներից  
Տըխուր հատակը ծածկելու համար:
- 15 Ահա պոետն էլ՝ տառապած մի մարդ,  
Որ սըրտում էնքան գանգատներ ունի,  
Բայց հաճախ էնպես ժըպտում է զըպարթ,  
Ասես թե քեզնից բախտավոր լինի:

## ՄԻ ՀԱՌԱՉԱՆՔ\*

- Ես տեսա հսկա  
Տաղանդի մի գործ՝  
Անհաշտ Պոնտոսի  
Ափերն ալեկոծ.  
5 Տեսա ծովափնյա  
Ժայռերը մեծ-մեծ,  
Տեսա, հիացա,  
Ու սիրտս բացվեց.  
Ու նըրա միջից,  
10 Որպես վանդակից  
Արծիվը գերի,  
Մի կարոտալի  
Հառաշանք թուավ,  
Ծուխ դարձավ, կորավ  
15 Դեպի ժայռերը  
Իմ հայրենիքի,  
Դեպի վայրերը  
Իմ անցած կյանքի:

\* Այլագովսկու «ՄԿ ծովի ափերը» նկարի առցեւ.

## ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Եթե մի օր, անուշ ընկեր,  
Գաս այցելու իմ շիրմին  
Ու նորաբույս վառ ծաղիկներ  
Տեսնես փըռված չորս կողմին,

- 5 Դու շըկարծես, թե հասարակ  
Ծաղիկներ են ոտքիդ տակ,  
Կամ թե գարունն է այն բերել,  
Իմ նոր տունը զարդարել:

- 10 Նրանք չերգած իմ երգերն են,  
Որ սրտումըս ես տարա,  
Նրանք սիրո էն խոսքերն են,  
Որ դեռ շասած ես մեռա:

## ԵՐԿՈՒ ՍԵՎ ԱՍՄ

Վաղուց թողած բարձր ու կանաչ  
Գահը իրենց հանգըստության,  
Երկու սև ամպ, հողմի առաջ  
Գընում էին հալածական:

- 5 Հողմը սակայն շար հոսանքով  
Բաժնել, զոկել չէր կարենում,  
Ինչքան նըրանց լայն երկնքով  
Դես ու դեն էր քըշում, տանում:

- 10 Ու անդադար գընում էին՝  
Քըշված հողմի կատաղությամբ,  
Իրար կըպած ու միասին,  
Երկու սև ամպ, երկու սև ամպ...

## ՈՎԱ ՏԱՐԱՎ

Դուք ինձնից տարաք հիշատակարան,  
իսկ ես ձեզանից տարա հիշատակ—  
Մեկը կորչելու, մաշվելու մի բան,  
Մյուսը կըմնա երկար ժամանակ:

- 5 Դուք այս նյութական թուղթը գրելու,  
իսկ ես զգացմունք սըրտում կրելու.  
Ես չեմ մոռանալ, երբ հողմեր ու ձյուն  
Մարմնիս և ճամփուս շուրջն էին տիրում.  
Ես ոգնորիչ այնքան շերմություն  
10 Գտա զգայուն, ազնիվ սրտերում:  
Ասացեք՝ իրավ,  
Մեզնից ո՞վ տարավ:

## ԲԱՅՐԸՆԻՆ

Ի՞նչ մեծ հանճարով, ո՞վ հսկա պոետ,  
Ազատությունը կաշկանդող շըղթան  
Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ  
Եվ քաղցրացրել ես վիշտը գերության:

- 5 Ի՞նչպես դարձրել ես բանտը հայրենիք  
Եվ ողջ աշխարհը՝ լայնարձակ մի բանտ...  
  
Ահա տանջանքի աշխարքում բընիկ  
Մեծարում են քեզ որդիքը հիվանդ,  
Եվ արտասվում են քո անմահ երգում,  
10 Թե ոնց է մարդու հոգին խորտակվում:

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

- Քրիստոս հարյավ... երկինք գնաց,  
Երկրում թողեց պատվերներ.  
Բայց պատվերը գրքում մնաց,  
Եվ աշխարհը հեծում է դեռ:
- 5 Դեռ կուրացած ժանգ արծաթից՝  
Մատություններ են անում,  
Եվ փախչելով արդար դատից՝  
Միշտ ձեռքերն են լվանում:
- 10 Ապտակում են դեռ ծաղրելով  
Անմեղության ճակատին,  
Եվ հարության օր տոնելով՝  
Խաչ են հանում ճշմարտին:
- 15 Ո՞հ, կարճամիտ անզգամներ,  
Դրանք այսօր կը մեռնեն,  
Բայց վաղը ձեր փոշու վրա  
Նոր փառքերով կը հառնեն:

\* \* \*

Երանի նըրան, ով որ քընեած  
Ապրում է հանգիստ երկրի մի խորշում,  
Ով որ երագներ ունի դեռ պահած  
Գալոց օրերի ոսկի մըշուշում:

- 5 Ա՞հ, վաղուց արթնած՝ ես շատ եմ հոգնել  
Անհույս ցանկալուց, անվերջ կարոտից,  
Երազ ու անուրջ հատել են, հանգել,  
Ու պաղն է փըշում հեռավոր մութից:

## ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ

Կըոռունկն երկընքում ճամփա կըհանի,  
Կը՛ո, կը՛ո, ձեն կուտա էն խավար ամպում.  
Ղարիբ մոլորել՝ շիտե. ինչ անի  
Անգութ աշխարհքում, անծանոթ ճամփում:  
5 Ա՛խ, էս սև ճամփեն, էս դրժար ճամփեն  
Արդյոք ո՞ւր կերթա, արդյոք շա՞տ մընաց,  
Ո՞րտեղ կըհատնի էս օրը արդյոք,  
Ո՞րտեղ կըհանգչեն ոտներըս հոգնած:  
Է՛յ, բարով զնաս, սիրելի թըռչուն.  
10 Դարուն կըբացվի, ետ կուգաս կըրկին,  
Զագով-ընկերով կուգաս դեպի տուն՝  
Քո բունը հերվան, շինարու զըլխին...  
Ա՛խ, ես բընավեր, ընկած սարե-սար,  
Ու քաշ եմ գալի, ու քաշ եմ գալի,  
15 Անքուն ջրի պես դիպչում քարե-քար,  
Անշուն քարին էլ երնեկ եմ տալի:  
Ամեն քար, աստված, իր տեղն է անժաժ,  
Հենց ես եմ մենակ տեղից գըլորվել.  
Ամեն հավք, անգութ, իր բունը ունի,  
20 Հենց ես եմ դարիբ ճամփում մոլորվել...  
Ա՛խ, էս սև ճամփեն, էս դրժար ճամփեն  
Արդյոք ո՞ւր կերթա, արդյոք շա՞տ մընաց.  
Ո՞րտեղ կը հատնի էս օրը արդյոք,  
Ո՞րտեղ կը հանգչեն ոտներըս հոգնած...

## ԱՆԴԱՐՁ ԾԱՄՓՈՐԴՆԵՐ

Իմ անցած կյանքն ու հին տարին,  
Երկու անգոր ծերի նըման,  
Զըրուց տալով գընում էին  
Դեպի աշխարհն հավերժական:  
5 Մինն ասում էր.—Ես ունեի  
Թարմ ու բուրյան ծաղիկներ,  
Ու բոլորը մարդկանց տըվի  
Գարնան գըրկովն առատաբեր:  
Մյուսն ասում էր.—Ես ունեի  
Շատ ըզգացմունք ու կորով,  
Ու ողջ ես էլ նըրանց տըվի  
Սիրանըվեր երգերով:  
Մինն ասում էր.—Ես թողեցի  
Զըմե՛ռ ու սև էն հովտում:  
15 Մյուսն ասում էր.—Ես թախծալի  
Մի սիրտ բեկված ու տըրտում:  
Մինը ասավ.—Բայց կըծաղկի  
Էն հովիտը նորից նոր:  
Մյուսը էստեղ ոչինչ շասավ,  
20 Ու գնում էր գլխակոր...  
Էսպես իմ կյանքն ու հին տարին,  
Երկու անգոր ծերի նըման,  
Զըրուց տալով գընում էին  
Դեպի աշխարհն հավերժական:

## ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հա՛, կյանքում ես միշտ այսպես եմ եղել,  
ինդացող տխուր, սրտաբեկ ուրախ.  
Հազիվ ուզել եմ անհոգ ծիծաղել  
եվ սրտիս խորքից հառաջել եմ «ա՝իս»:
- 5 Գարնան երկինք է իմ դժբախտ հոգին—  
Մերթ մութ ամպամած, մերթ մեղմ ու պայծառ,  
եվ տարերքների ուժով ահազին  
Շափառուկները ճընշում են իրար:
- Իմ հոգին էլ այն երկնքի նման,  
10 Որ ծավալվում է ձեր գլխի վերև,  
Զեզ անհայտ, գաղտնի տեսնում է շատ բան  
եվ մոտ, և հեռու, և փայլուն, և սև:
- Շեշտակի թափով, բուռն ու մոլեգին  
Ամենայն կողմից ցողանում, հոսում,  
15 Լցվում են նրանք իմ անտակ հոգին  
եվ ալեկոծում, շարշարում, հուզում:
- Ես հազար աշքով բաներ եմ տեսնում,  
Որ թափնված են լոռիթյան ետև,  
Հազար ականջով ձայներ եմ լսում,  
20 Որ դեռ սրտերում շշուկ են թեթև:
- Եվ ամեն կողմից ձայներ ու ձայներ,  
Քնքուշ, կատաղի, թախծալի, զվարթ...  
Եվ ես ընկնում եմ, համբառնում եմ վեր,  
Անզուսպ մոլեգնում կամ ծփում հանդարտ:

25 Լրբենի մի ձայն,—և ինչպես մրրիկ  
Վազում է արյունս իմ երակներում,  
Պայթում է սիրտս, և օձի նման  
Բարձրանում եմ ես, թշում, գալարվում:

30 Մի ձայն էլ ահա,—տկար, խղճալի...  
Եվ ես փոխվում եմ նորից ու նորից.  
Ա՛չ, աստված, աստված, իմ փոթորկալի  
Հոգին տանջվում է այսքան ձայներից:

Վերջը գնացիր ու մտար բանկը.  
Այդ էլ շըշարժեց հայի զարմանքը:

- 25 Բայց շըկարացիր քեզ լավ մշակել,  
Եվ ինչպես շատերն էին գուշակել,  
Համաշխարհային արտիստ շրդարձւր,  
Ոչ ուսում առար, ոչ դպրոց անցւր...  
Ի զուր փշացրիր քո ձիրքն ու կյանքը...  
30 Այդ սաստիկ շարժեց հայի զարմանքը:

## ՀԱՅԻ ԶԱՐՄԱՆՔԸ

Նվեր պ. Գևորգ Տեր-Դավթյանին՝ իր բեմական  
գործունեության քսանինգամյակին

- Մեր բեմի ծիծաղ, քսանհինգ տարի  
Դու հըրճվանք տվիր այսքան սրտերի.  
Անձայն թաքցըրիր ցավերըդ ներքին,  
5 Եվ այդ հանճարեղ ծաղըը քո դեմքին  
Դարձար հայկական բեմի պարժանքը.  
Բայց այդ շըշարժեց հայի զարմանքը:

- Սիրելիդ մեռավ, և նա դագաղում՝  
Դու խեղկատակի դեր էիր խաղում.  
Միմոսի ճամուկ, երկայն գըգակով,  
10 Ծիծաղում էիր հըզոր կատակով,  
Ջսպելով հոգուդ անհուն տանշանքը.  
Այդ էլ շըշարժեց հայի զարմանքը:

- Քո շըքեղ խաղով մարդիկ հիացան,  
Սափեր զարկեցին ու գոհ հեռացան.  
15 Դու տուն գնացիր հոգնած, վաստակած,  
Մու փող ունեիր, ոչ մի պատառ հաց,  
Եվ սակայն տարար այդ շարքաշ կյանքը...  
Այդ էլ շըշարժեց հայի զարմանքը:

- 20 Դու քո ահագին, հսկա շնորհքով  
Շատ տառապեցիր անտրտունզ հոգով,  
Աղքատ, անընկեր, անօգ ու անգործ  
Երկար շրջեցիր փողոցից փողոց,

## ՀԱՅԻ ՏՐՏՈՒՆՁԸ

(Ֆելիկտոնի փոխարեն)

- Զարմանք բան է մեր բախտն, ախպեր,  
Հայ գործիշխն ինչ էլ անես,  
Լավ տեղ կըտաս, պատիվ թե սեր,  
Վերջը պետք է դու փոշմանես.
- 5 Ահա, ևս ձեզ համրեմ մի-մի,  
Մեղքն, ասացեք, ո՞ւմն է հիմի...  
Չէ, մեզանում, աստված վկա,  
Արժանավոր մի մարդ շըկա:
- 10 Պոետն, ասին, տաղանդ ունի,  
Մենք էլ դրինք գործակատար,  
Բայց տեր աստված հեռու տանի—  
Հաշիվն այնպես խառնեց իրար,  
Այնպես անկարգ, ցրված եղավ,  
15 Որ խազելի գահին փախավ...  
Չէ, մեզանում, աստված վկա,  
Մի շնորհքով... պոետ շըկա:
- Դերասանին շատ գովեցին,  
Այնքան ասին—գլուխ տարան,  
Մենք էլ տարանք... բանկի միջին  
20 Մի հեշտ պաշտոն տվինք իրան,  
Մի հեշտ պաշտոն, բայց տես այն էլ  
Կարենում է գլուխ հանել...  
Չէ, մեզանում, աստված վկա,  
Մի հատ կարգին... արտիստ շըկա:

- 25 Վիպասանին քանքար ասին,  
Մենք էլ արինք... աստվածաբան,  
Բայց մի հարցրեք նրա մասին,  
Թե ի՞նչ կասի սովորող տղան—  
Չէ իմանում պատմել իրավ,  
Թե Քրիստոսն ինչպես հարյավ...  
30 Չէ, մեզանում, աստված վկա,  
Կարգին... մի վեպ գրող շըկա:

Հայրենասեր և հոգեխոս  
Քարոզիլ էր մեծ ու բարի,  
Մենք էլ արինք... պոլիտիկոս,  
35 Ասինք՝ թող մեզ կառավարի.  
Բայց գործերը այնպես տարավ,  
Որ աշխարքը լեզու առավ...  
Չէ, մեզանում, աստված վկա,  
Մի հասկացող... գլուխ շըկա:

- 40 Վերջը, խոսքս կտրում եմ կարճ,  
Ով որ մեր մեջ ձայն է հանում,  
Մենք քաշում ենք այսպես առաջ,  
Բայց միշտ նրանք ետ են գնում.  
Դուրս է գալիս մի օր հանկարծ,  
45 Որ խարված ենք աշքներս բաց...  
Չէ, մեզանում, աստված վկա,  
Մի ընդունակ գործող շըկա:

**ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ**

Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում,  
Տանջվում հուսահատ, վաստակած, տրկար,  
եվ մըտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,  
եվ գիշերը մո՞ւթ, գիշերը երկար:

- 5 Ա՛խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,  
Մայրական գիրկ էր աշխարքն ինձ համար,  
Հըրմվանքը սըրտիս շէր թըվում ունայն,  
Ոչ գիշերն այսպես տաղտկալի, երկար:

- 10 Է՛ս, անցա՞վ, գնա՞ց. Ա՛ ցընորք, Ա՛ սեր,  
Ե՛վ ույժ, Ա՛ եռանդ—կորավ՝ ինչ որ կար,  
Եկան սև օրեր ու ծանըր հոգսեր  
Ու դարձին այսպես գիշերը երկար:

- 15 Տանջվում եմ անքուն այժըմ անկողնում,  
Եվ հուսակըտուր, հոգնած, ուժասպառ  
Նայում եմ, նայո՞ւմ, դեռ չի լուսանում.  
Ա՛խ, այս գիշերներն ինչքա՞ն են երկար.

**ՏՐՏՄՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ**

Ա

ՏԼՇՌ, մինչև ե՞րբ մեր աշքերը քեզ մընան.  
Մեր գույժն հասավ հեռո՛ւ-հեռու ազգերին,  
Աշխարհ՝ լըցվեց մեր աղաղակ, մեր կական,  
Ու չի անցել մեր տանջանքը տակավին:

- 5 Ինչո՞ւ, աստվա՛ծ. որբե՞րն արդյոք հայրական  
Գութըդ կօրհնեն կոտորածի էս ձորում,  
Թե՞ տարագիր պանդուխտները կըպատճեն  
Ողորմությունդ օտար-օտար ափերում,

- 10 Մի՞թե, աստվա՛ծ, դեռ բավական լըտեսար  
Էսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն,  
Մի՞թե, աստվա՛ծ, հաճելի չեն քեզ համար  
Աղոթք ու սեր, կյանք ու տաղեր զըվարթուն:

**Բ**

Աստված, ինչպես ծուխ օրերըս անցան,  
Ոսկերքըս, ինչպես խըռիվ, շորացան,  
Սիրտըս ցամաքեց, ընկա խոտի պես,  
Ճամփես մոռացա ահագին վըշտես:

5 Հացըս նախատինքն եղավ օտարի,  
Հանգիստըս ճամփում հալածանքների,  
Լըսեցի ցերեկն աղաղակ ու բոթ,  
Գիշերը լացի մինչև առավոտ:

10 Տըքնեցի, ինչպես բու ավերակում,  
Ինչպես միայնակ ճնճղուկ՝ տանիքում...  
Աստված, տանջանքից ուժերըս հատան,  
Մի՞թե շըհասավ ժամը փըրկության:

ԳԱՐԵԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Մի՞տդ է զալիս մեր քեֆն, ընկեր,  
Էն ճյուղաշատ ծառի տակին,  
Երբ գընացինք դիմավորենք  
Նոր գարունքին ու նոր կյանքին:

5 Էն լավ օրից տարիք անցած,  
Ես էն ճամփով անցնում էի,  
Ու ականջիս դիպավ հանկարծ  
Մեր աղմուկը ուրախալի...

10 Պարզ ու որոշ ես լըսեցի  
Մեր կենդանի ձայներն, ընկեր,  
Շըրըխկոցը բաժակների,  
Աշխույժ ծիծաղ, ճառ ու երգեր...

Ու սրտաթունդ վեր նայեցի...  
Բայց կարոտած աշքիս առաջ—  
15 Հանգում դալար ու ամայի  
Մեր հին ծանոթ ծառն էր կանալ:

Հուռ ու դատարկ մարգի վրա,  
Մենակ կանգնած շրշում էր նա...  
Մի՞տդ է զալիս մեր քեֆն, ընկեր...  
20 Բայց ո՞վ գիտի՝ ուր ես հիմա...

## ՄՈՌԱՅՎԱԾ ՎԱՐԴԵՐ

Զեր վարդերը թողիք մեզ մոտ,  
Ափսոսում եմ ես սըրտանց,  
Եվ նրանց բույրն անուշահոտ  
Ափսոսանքով է լրցված:

- 5 Ափսո՞ս, ափսո՞ս... ինչո՞ւ եք դուք  
Զեր վարդերը մոռանում.  
Զէ՞ կան բաներ մեր կյանքի մեջ,  
Որ մոռանալ չի լինում.—

- 10 Զեն մոռանալ աղջիկ ու սեր,  
Զեն մոռանալ վարդ ու բույր...  
Առանց նրանց՝ կյանքը ձմեռ  
Ու գիշեր է սևաթույր:

- 15 Թե մոռացան—առավոտը,  
(Մի գիշեր է միայն անցնում),  
Ո՞չ այն սիրտը, ո՞չ այն հոտը  
Էլ չեն գըտնիլ նըրանցում...

- 20 Զեր մոռացած այն վարդերը  
Ուղարկում եմ ես ահա,  
Թեո մնում են ողջ թերթերը,  
Բայց բուրմունքը—էլ չըկա:

## ՀԱՅՈՒ ՉՆԵՄԱՆ

Մո ծանրիք բան առ ծանրիք գիշէ.  
Մ չետ տեմունու  
Եւ այսու վերաս  
Տրիստ շատու ճռաւթէ չեմ մին.  
Հայու շներու ճռաւթէ չեմ մին.

Մուսաւթ չ' եմ առ զայզու ոչին.  
Մ զայզու եմ.  
Ինչ որ շներու  
Երես է ծօշ մ. կառչ նոդա  
Հայու շներու  
Ժայզու շներու:  
Ժայզու շներու:

Բայց խոչ մաս չ' ի մասաւու  
Երաւու ու  
Կրուս եւն  
Կուռ շնորհու մ. խոյս ունին  
Հայու շներու.  
Կուռ շներու:

և մ. խոյս շնորհ. ունին  
Կուռ շնորհ զայզու  
և կուռս-կուռս:

Մուսաւթ է կուռ ժողովու ունին.  
Հայու շներու  
Կուռ շներու:

և մ. այսու շնորհ է խորաց  
ինչ անցուուր,  
Ճռաւթ ծօշե:  
Պայ ուն չափած պայն... ունին,  
Հայու շներու  
Կուռ շներու:

*J. B. Դամինչ*

# ՀՅ. ԱՄԵՐ ԱԼՈՒԹ

Կողու աշուղը մի տան բակում  
Եկել պահակ իր է եղու մ.  
Քրզու է ու առջին տախ  
Էնդէս որին լ ու սկսալի.  
«Ե՛լ պարհանիր, երկնէ ի նուն,  
Որ այնու և է ամփե օք  
Կապոյտ թանձ, արժիք յուն Վահետ  
Ու երկոր իրին մօք»:  
Երզու մ առջին տախ  
Տիսու լու ալութ ալութ

Ա. ու մ. Ճ. — Աղյուսի թագ կողի քուստ աշքի լոյժա:

Տ. ակուս աշուղը, աշուղը կառագրք 1908 թ. Բ առարկա օրինակից Հովհաննի թագումներուն

ՀԱՅԻ ՑԱՎԸ  
(Նվեր «Մշակին»)

Հայը թեև շատ ցավ ունի,  
Բայց ողջ մեկ չն նրա համար,  
Մինն է նրան միայն սիրելի,  
Նրա հոգուն, խելքին հարմար:

- 5 Առեք, ահա, մեր թերթերը.  
Ամեն տեղից գրում են միշտ,  
Թե՝ տըգետ է մեր տերտերը,  
Խիզճը մեռած, բարքն ամբարիշտ:  
Զեռք ես առնում—էլ բան չըկա—  
10 Մեր տերտերը ազահ, տըգետ,  
Մատաղահաս մի աղջկա  
Պըսակել է մի ծերի հետ:  
Ծուռ ես տալիս, այլ տեղ—կարդում.  
Մնացել են մարդիկ խաթում.  
15 Տերտերն այնտեղ լոթի մի մարդ,  
Գիշեր-ցերեկ խաղում է կարտ:  
Մի ուրիշ տեղ տերտերն անկին  
(Աստված հայից հեռու տանի)  
Քանի տարի ծուխի միջին  
Կին է պահում ապօրինի...  
Հապա այստեղ—մեր կենտրոնում  
Հայ տերտերը դրժած ուխտին,

Առանց վարձի չէ կամենում  
Հողին հանձնել հայ պանդուխտին,

25 Այսպես անվերջ ու անխըսիր  
Ուր որ գնաս, մի կարճ խոսքով,  
Շուշի, Ղզլար, Բաթում, Իգդիր,  
Կարս, Երևան, Ղազախ, Մոսկով,

Գորի, Գանձակ, Փիբ, Ասխաբադ,  
30 Բաքու, Նուխի, Թիֆլիս, Թելավ,  
Ամեն տեղ էլ տերտերը վատ,  
Ազգի գլխին դարձել է ցավ...

Եվ խեղճ ազգը շատ մտածեց,  
Վերջը մի ճար գտավ սըրան,—  
35 Շատ հոգեոր դպրոց բացեց,  
Մինչև անգամ՝ բնծայարան...

Բայց ահա մեր խելոքները  
Հարց են գնում այսօր կրկին—  
Խելքի՝ կրգա հայ տերտերը,  
40 Եթե ուսում առնի կարգին:

Եվ շատ ճիշտ է այս կասկածը.  
Թե ուսումը խելոքացներ,  
Միթե ուսում առած մարդը  
Այս տեսակ բան կհարցըներ:

45 Այսպես մեր հին ցավը էլի  
Մնաց ընդմիշտ անբուժելի,  
Եվ հայ թերթը շատ տարի դեռ  
Պիտի գրի՝ տերտեր, տերտեր...

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ «ՄԱԶԱՆԴԱ»

(Նվեր իմ բարեկամ Դ. Աղայանցին)

Այսքան երազ, որ մենք հայերս  
Ընդունակ ենք տեսնելու,  
Պարզ է, որ շատ սազում էր մեզ  
Լավ երազգիրք կազմելու:

5 Եվ գրքերից՝ միշտ հայ ազգը  
Երազգիրքն է շատ հարգում,  
Ինչպես կաղմող տեր-հոր ազդը  
Ցույց է տալիս Մըշակում:

Տեր-հայրն այնտեղ ասում է, որ  
10 էլ լթողին երազգիրք.  
Ամեն կողմից ուղարկում են  
Շատ նամակներ ու խնդիրք...

Երազգիրքն է, ասում է նա,  
Հայի ոսկի ընկերը...  
Եվ սրանում կասկած լրկա—  
15 Փաստ է ասում տերտերը:

Երազգիրքը չի կարելի  
Տալ ապառիկ ոչ մի հատ...  
(Ինչ ապառիկ, երբ մի բանի  
Մուշտարի կա այսքան շատ):

20 Դեռ, իմ անգին Ասլան-Ապեր,  
Արի թողնենք ամեն ձիրք.

Էլ շըգրենք երգ ու վեպեր,  
Շինենք մի լավ երազգիրք:

25 Ա՞յս, եթե մենք գեթ մի-մի հատ  
Երազագիրք հորինենք,  
Այնուհետև գրչով ապրող  
Կարգին գրող կըլինենք:

Էլ շենք ծախիլ մեր գրքերը  
30 Ութսունուհինգ տոկոսով,  
Կոպեկ կոպեկ առնիլ փողը,  
Այն էլ՝ կանխիկ միայն կիսով:

Տեր-հոր նման քսան տողից  
Երկար մի ազդ կըգրենք,  
35 Մինչև նոր տիպն ընթերցողից  
Համբերություն կըխնդրենք...

Եվ մեր գործից երբ կըստանանք  
Այսպես առատ վարձ ու փող,  
Նոր կըտպենք ավելի թանկ,  
40 Եվ ավելի մեծ ու ճոխ:

Իսկ երբ տանենք գրախանութ,  
Էլ շենք կանգնիլ լուս ու խեղճ.  
— Հայի ոսկի ընկերն է սա.  
Ոչ ապարիկ և ոչ զեղչ...

45 Ապրիս, տեր-հայր, ինչ լավ գիտես  
Մեր հայ ազգի ճաշակը.  
Թե չէ մենակ պարծենալով  
Զահլա տարավ Մըշակը:

### ԱՅՆ ՕՐԻՑ

Այն օրից, ինչ որ նրան թաղեցին,  
Այլևս խընդալ ես չեմ կարենում.  
Բերկրանք, խնդություն իմ մեջ պաղեցին,  
Ծիծաղս էլ երեք սրտանց չի լինում,  
5 Այն օրից, ինչ որ նըրան թաղեցին:

Միտքս թոշում է միշտ այն կողմերը,  
Ուր որ նա իշավ դալուկը դեմքին,  
Դեպի հանգստյան այն սև բլուրը,  
Դեպի հանդերձյալ աշխարհն անմեկին,  
10 Միտքս թոշում է միշտ այն կողմերը:

\* \* \*

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

Տիսո՞ւր գիշեր, տրտո՞ւմ գիշեր.  
Վիշտս ու ես ենք արթուն մենակ  
Եվ ուզում ենք մի լավ հիշել,  
Թե ո՞րտեղից իրար գըտանք:

- 5 — Ասա՛, իմ վիշտ, իմ սև թախիծ,  
Այ անբաժան կյանքիս ընկեր,  
Դու ո՞ր օրից կամ ո՞րտեղից,  
Ի՞նչ դեպով ես ինձ հետ ընկել...
- Ու գալի՞ս են սև-սև հուշեր...  
10 Տըխո՞ւր գիշեր, տըրտո՞ւմ գիշեր...

(Նմանություն)

- Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, աստղը թռավ,  
Անհետ կորավ երկընքից,  
Ո՞վ էր արդյոք, որ զրկվեցավ  
Կես գիշերին իր կյանքից:
- 5 — Ո՞չ, իմ դստրիկ, հանգիստ եղիր,  
Մի հոգեոր հայր էր նա,  
Գիշեր-ցերեկ մի հոգս ուներ,  
Որ մեզանից փող ստանա:
- 10 Փարիսական իր գործերով  
Աշխարհ խաբեց, զըզվեցրուց,  
Այդ պատճառավ աստված նրա  
Աստղի լուսը խավարցուց:
- Նա ամեն բան ծախեց փողով,  
Ոտքեց ամեն սըրբություն...
- 15 Այժմ այնտեղ ահ ու դողով  
Հաշիվ կըտա աստըծուն:
- Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, մեկն էլ ընկավ,  
Եվ չըթողեց ոչ մի գիծ,  
Ասա, հայրիկ, էլ ո՞վ հանգավ  
20 Ու պակասեց մեր կյանքից:
- Ո՞չ, իմ դստրիկ, խաղաղ մնա,  
Կեղծավորի մի աստղ էր,

- Որ ձեացավ ամբողջ կյանքում  
Առաքինի, ազգասիր:
- 25 Ամեն անգամ նա խնջույքում  
Բախտ էր մաղթում խեղճերին,  
Ազգի կենացն առաջարկում,  
Արտասուրը աշքերին:
- 30 Բայց խեղճերը նրա ձեռքից  
Գիշեր-ցերեկ հալածված,  
Ազգին շեղավ նա կարեկից,  
Ոչ ազգ գիտեր, ոչ աստված:
- Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, աստղը թռավ,  
Հետքից մի կարճ գիծ թողեց,
- 35 Աստղը թռավ դեպի Բաքու,  
Էլ մյուս անգամ շերեց:
- Ո՞չ, իմ դստրիկ, հանգիստ եղիր,  
Այն գործիշի մի աստղ էր,  
Որ իր սրտում ծնված օրից
- 40 Չուներ անկեղծ գործի սեր:  
Նա աղմբկեց, անուն հանեց,  
Սանդուղք շինեց իր ազգին...  
Եվ ողջ ծաղրեց, երբ ապրում էր  
Գըրպանները լի ոսկին:
- 45 — Հայրի՛կ, տե՛ս, տե՛ս, մեկն էլ ընկավ,  
Հետքից թողեց մի ծուռ գիծ,  
Ասա, հայրիկ, էլ ո՞վ հանգավ,  
Աստղը պակսեց երկընքից:
- 50 — Ո՞չ, իմ դստրիկ, մի՛ վրդովվիր,  
Մի խըմբագրի աստղ էր այն,  
Որ իր թերթը տըպագրում էր  
Անձի համար միմիայն:

- նա՝ կուրացած իր ցած կրքից՝  
55 Հայհոյում էր անամոթ,  
Եվ դորա տեղ միշտ իր ազգից  
Պահանջում էր բաժանորդ:
- Գրողները նորա թերթից  
Հիշոցներով հալածված,  
Չուներ մի տեղ մի թղթակից,  
60 Որ շըլիներ վշտացած:
- Հայրի՛կ, հայրի՛կ, ինչ լավ եղավ՝  
Այդ աստղերը վայր ընկան,  
Հայրի՛կ, հայրի՛կ, այդպես մարդիկ  
Մեր աշխարհքումն էլ շըկա՞ն:
- 65 — Ո՞չ, իմ դստրիկ, մի մասն են լոկ  
Այդ աստղերը, որ ընկան,  
Մեր երկնքում, գիտե՞ս արդյոք,  
Որքան այդպես աստղեր կան:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐԾ ՊՈՌՇԱՆՑԻՆ  
ԻՐ ՔԱՌԱՄՆԱՄՅԱԿԻՆ

Այնտեղ ծնված ու մեծացած,  
Ուր դարեվոր վըշտերն հայի  
Մանր ու մոռյլ կան լեռնացած,  
Խնձես Մասիսն այն վիթխարի:

5 Դու ընտրեցիր քեզ ուսուցիչ  
Ազգի վերքերն ողբերգողին,  
Քառսուն տարի ձեռքիդ գըրիւ,  
Անցար, բռնած նորա ուղին:

10 Հայ գյուղացին ցավեր ուներ  
Խեղդված իրան խոլ խրճիթում,  
Այն ցավերին լեզու տըզիր  
Ու խոսեցրիր ամեն սըրտում:

15 Այդ սրբազան գործի համար,  
Այժմ ահա, ծեր օրերիդ,  
Մենք գալիս ենք երախտապարտ  
Պըսակ դընել ալիքներիդ:

20 Եվ թող ապրի անմահ փառքով,  
Ով որ ցավը թույլ թըշվառի  
Կարեկցո՞յան հզոր խոսքով  
Դարձնում է ցավն իր աշխարհի:

ՕՐ. Մ.-ԻՆ

Նայում եմ քեզ... միտս է գալիս,  
Որ տեսել եմ ուրիշ մի տեղ՝  
Կապուտաշյա, թարմ ժպտալիս  
Ու զարդարված այդպես շքեզ:

5 Հա՛... դու չէիր. այն քեզ նման  
Մի ծաղիկ էր, որ ես տեսա...  
Ես այն տեսա վա՛ղ—մի գարնան...  
Է՛օ, դո՛ւ ծաղկիր... թոռմել է նա...

## ԱՓՍՈՒ...

- կըսի՛ր, սիրտըս երգ է ասում,  
նըվո՞ւմ, նըվո՞ւմ անդադար,  
կաց է լինում ու ափսոսում  
ինչ որ շըկար... ինչ որ կար...
- 5 Ափսոսում է ինքը իրան,  
Այնպէս կամաց, այնքան խո՞ր...  
Ափսո՞ս, որ շես լըսում նըրան—  
իմ սկ սըրտին սըգավոր:

## ԿՏԱԿ

- Դե գրի, տեր հայր: «Յանուն հօր և որդոյ...»  
(Այսպէս անիրավ բա՞ն եք տեսել, տո.  
Կյանքս մաշելով փող դիզեմ այսքան,  
Հիմի իմ ձեռքով տամ սըրան-նըրա՞ն...  
5 Բայց դե ի՞նչ անեմ, հետս ո՞ւր տանեմ...  
Գոնե այս վերջին առուտուրն անեմ,  
Գուցե կաշառեմ աստծուն ու ազգիս,  
Սրանով փրկեմ անունս ու Հոգիս...):  
Դե, գրի, տեր հայր: Ուշքս դեռ վրես,  
10 Կտակ եմ անում իմ ազգիս այսպէս:  
Ամենից առաջ ես իմ կըտակում  
եմ մեռած եղբոր որդոցն եմ զրկում.  
Կտակ եմ անում, որ նրանք երբեք  
Զուտնն իմ փողից և ոչ մի կոպեկ:  
15 Զուր տեղը իմ դեմ դատ էին բացել,  
Թե իրանց բաժնին ես եմ տիրացել.  
Լավ էր, որ հազիվ պրծա կաշառով,  
Մարդիկ էլ տեսան՝ ընկել եմ շառով...  
Գրի մեր ժամին մի հարյուր թուման,  
20 Հետն էլ այսպիսի մի անխախտ պայման,  
Որ եկեղեցու գավթում ինձ թաղեն,  
Կնոշս համար էլ կողքիս տեղ թողեն,  
Տարին հինգ անգամ պատարագ անեն,  
Հոգիս անպատճառ դրախտը տանեն.  
25 Սրանից հետո հոգան ինձ վըրա,  
Հոյակապ արձան դնել մարմարյա,  
Ուկի տառերով վըրան փորագրած,


- թև ազգիս համար ինչեր եմ արած:  
 Վանքի դպրոցին գրի մի գումար,  
 30 Որ իմ անունով, իմ հոգու համար  
 Որդեգիր պահեն նըրա տոկոսով.  
 Ամեն տարի գան խմբով, հանդիսով,  
 Դամբանիս վրա գովք ու ճառ ասեն,  
 Ազգի մեծերի շարքում ինձ դասեն,  
 35 Պատկերս էլ կախեն դըպրոցի պատից,  
 Թեկուզ մի քիչ ցած մեր հայրապետից:  
 Ապա այն տունը (որ կեղծ թղթերով,  
 Հոգիս սեելով, սըտով ու զորով,  
 Իբրև պարտքի տեղ, առա այն խեղճից  
 40 Ու իրան լալով դուրս արի միջից...),  
 Իմ հոժար կամքով, իմ վերջի օրին  
 Այն էլ տալիս եմ մեր Մայր Աթոռին,  
 Որ վեհափառը գըրի մի կոնդակ,  
 Անունս սփորի աշխարհ բովանդակ  
 45 Եվ ինձ օրհնանքի այնպես մի գիր տա,  
 Որ երկընքումն էլ աստված հավատա...  
 Դրանից հետո մի գումար գըրի  
 Հօգուտ մեր ազգի խեղճ ու որբերի  
 Ընկերությանը բարեգործական,  
 50 Որ գլուխն անշարժ մնա հավիտյան,  
 Նըրա տոկոսը մեր մեծ տոներին  
 Բաժնեն (իմ զրկած) խեղճ ու որբերին,  
 Ամւն մեկին տան մի-մի աբասի,  
 Որ ուտի—հոգուս ողորմի ասի:
- 55 — Հապա, օրհնըված, տանու տերտերին  
 Ժամոց շե՞ս տալիս քո հոգու խերին.  
 Քանի վախտ ունես, այդ էլ ասա շուտ...  
 Ասա՝ տանըցիք տան լավ կողոպուտ,  
 Ոսկի սհաթըդ, նոր շորերըդ տան,  
 60 Որ հեշտ անց կենաս դուռն արքայության...

- Լավ, տեր հայր, այդ էլ քեզ եմ կտակում,  
 Որ ինձ միշտ հիշես քո պատարագում,  
 Դագաղիս վրա մի քարոզ ասես,  
 Թե ինչ հոգեսեր, մեծ մարդ էի ես...  
 65 Այս կտակն արավ հայ բարերարը  
 Ու մեռավ գնաց այն մյուս աշխարհը.  
 Միշտ երախտագետ մեր ազգը հայոց  
 Նրան հըռչակեց ազնիվ բարեգործ,  
 Իր ժամի գավթում թաղեց ու մարմար  
 70 Արձան կանգնեցրեց իր գործքին հարմար,  
 Վըրան էլ գրեց պերճ տապանագիր.  
 — Ո՞հ, վսեմ հոգի, դու խաղաղ հանգիր.  
 Թւե դու մեռար, բայց միշտ քո հոգին  
 Հըսկում է բարձրից քո թըշվառ ազգին...  
 75 Բայց երբ որ գնաց այն մյուս աշխարհը  
 Եվ ուզեց մըտնել արդարոց շարը,  
 Հանեց օրհնանքի տարած պատճենը,  
 Տերն մեր կարդաց ու գըցեց գենը.  
 — Քո սիրտը հանիր, ասաց, հողեղեն,  
 80 Այստեղ են զըված գործերըդ ամեն:  
 Եվ մարդու սիրտը կարդաց մեր տերը,  
 Ուր տըպված էին նըրա գործերը.  
 Կարդաց շա՞ր գործեր,—նաև կըտակը,  
 Եվ... իսկուն դրկեց դժոխքի տակը:

\* \* \*

Երնեկ թիթեռ ես լինեի,  
Անհոգ թիթեռ գարունքի,  
Ու ցավն ու վիշտն իմանայի,  
Ու անջատումն այս կյանքի:

5 Բայց հեք թիթեռ—ողջ օրն ահա  
Ման է գալիս եղկելին,  
Ու մի ծանոթ թրփի վըրա  
Էլ չի գտնում ընկերին:



## ԿՈՐԱԾ ՑՆՈՐՔՆԵՐ

Հեծում է մըրրիկն իմ դալար հովտում,  
Թոշնել են, թոռմել ծաղկունքն իմ սիրած,  
Զըմեռ է այնտեղ, ձըմեռ՝ իմ սըրտում,  
Ու լալիս եմ ես ծաղկունքըս կորած:

5 Ես ձեզ եմ լալիս, հոգուս ծաղիկներ,  
Է՛յ, իմ վաղուցվան սիրուն ցընորքներ,  
Եկե՛ք, ետ եկեք, մի անգամ կըրկին  
Կյանքով, բուրմունքով լըցրեք իմ հոգին:

6 Բերեք առաջվան աշխարքն ինձ համար—  
Արկի շողեր, գարունքվա դալար,  
Զըրերի կարկալ, հավքերի երամ,—  
Իմ հույսերն անհուն, իմ սերն անթառամ  
Եվ իմ սիրուհին, որ միայն դուք գիտեք,  
Եկե՛ք, ետ եկե՛ք:

15 Զեզ ո՞վ հալածեց, ո՞ր դաժան քամին,  
Ո՞ր շար թըշնամին—  
Շընչում է մըրրիկն իմ անուշ հովտում.  
Թոշնել են վաղուց ծաղկունքն իմ սիրած,  
Զըմեռ է այնտեղ, ձըմեռ՝ իմ սըրտում,  
20 Սաղիկ ու ցընորք—բոլորը կորած...

\*  
\* \*

Մութ ու խավար իմ հայրենիք,  
Անլույս գիշեր, լուս ու տրտում...  
Միտքս այնտեղ, ինչպես շըզիկ,  
Պըտըտում է ու պըտըտում...

- 5 Պըտըտում է լուս, անտերունչ,  
Տխուր, մամոռոտ շիրմաց վերա,  
Ավեր, անտեր հյուղերի շուրջ,  
Ուր լույս շըկա, ուր ծայն շըկա...  
  
Ու ետ դառնում կրկին մոլոր,  
10 Հուսակտուր ու գլխակոր  
Թաքշում դարձյալ սրտիս խորքում՝  
Իր հին ծանոթ ավերակում:

### ՕՉԱԽԻ ԵՐԳԸ

Քեֆ անենք, տղերք—այս պետք է մնա.  
Ապրենք պարերով, խաղով ու թառով,  
Կյանքներս թող միշտ այսպիս անց կհնա,  
Թեկուզ և պակաս մի քանի տարով:

- 5 Գնանք մեր ջահել սըրտի ետկից,  
Ուր կուզե տանի—մին է մեզ համար.  
Նա էլ մեզ նըման հոգնել է ցավից,  
Ուզում է հարբել մոլի, խելագար:

- 10 Իղեալներ ունենք—փակած պադվալում,  
Ո՞վ զիտի՝ այն էլ մըկները կերան,  
Հույսեր ունեինք, տնչեր ունեինք—  
Իրար ետկից մաշվեցին կորան:

- 15 Էլ ընշի՞ հսկենք, ընշի՞ց վախենանք,  
Ամեն բան անցավ իզուր, անկատար,  
Գոնե մեր սըրտի ետկից գնանք,  
Նա էլ մեզ նման այս կյանքում օտար...

- 20 Զարկեցեք թառին, թող գինին հոսի,  
Պատերը դողան մեր ծափ-ծիծաղից,  
Թող դըրսից նայող հիմարը ասի—  
Այս մարդիկ շունեն ո՛չ խելք, ո՛չ թախիծ:



— Ինչո՞ւ էդպես ինձ մոռացար,—  
Ասավ աղջիկն ինձ մի օր:  
— Ինչո՞ւ էդպես մեղ մոռացար,—  
Գանգատվեցին սար ու ձոր:

- 5 — Ո՞չ, մի հարցնեք, չին ընկերնե՞ր,  
Ինչու էլ շեմ երգում ձեզ.  
Շատ եմ փոխվել էն օրից վեր.  
Էնպես մի ցա՞վ ունեմ ես...
- 10 — Ի՞նչ է ցավը, մի ճար անենք,—  
Ասավ աղջիկն անձնըվեր.  
— Ի՞նչ է ցավը, տո՞ւր մենք տանենք,—  
Ասին սարերն ու ձորեր:

- 15 — Ո՞չ, չէ, սիրո՞ւն, էլ ոչ մի սեր  
Ճար չի անիլ իմ սըրտին,  
Դուք էլ, անուշ սար ու ձորեր,  
Չեք դիմանա էս դարդին:



Ի՞նչպես սրտալի, ի՞նչպես կաթոգին  
Սիրեցի նորա հասակը նոճի,  
Հայացքը հպարտ, շրթունքը նըրբին...  
Ի՞նչպես սիրեցի, ո՞րքան տանջվեցի:

- 5 Բայց, ա՞խ, դավեցին շուրթերն իմ սիրած,  
Ժպտացին աշքերն այնպե՞ս նենգավոր...  
Եվ գեղն երկնային արդեն վաճառված,  
Եվ եղծված, պղծված թովշանքը բոլոր:

- 10 Ա՞խ, ինչո՞ւ, ինչո՞ւ անշունչ, կենսազուրկ,  
Շուրթերը կարկամ, աշքերը անթարթ  
Մի անդրի շեր նա, քարեղեն մի կուռք,  
Անվերջ գեղեցիկ, հավիտյան հպարտ...

ԴԱՐԱՄԻՋԻ ԺԱԼՄԻՆ  
XIX—XX

Ինչպես երկու ահեղ սարեր՝  
Պատում են մեզ երկու դարեր—  
Մեկի ևտև՝ հեքիաթ հին-հին,  
Մյուսի ետև՝ լուռ ու մըթին,  
5 Եվ մենք նրանց նեղ արանքում  
Լաց ենք լինում, սիրում, խընդում...  
Ավաղ, կանցնեն սեր, խինդ ու լաց,  
Եվ խղճալի աճյուն կտրած,  
Մւղ կը փակեն երկու դարեր,  
10 Ինչպես երկու ահեղ սարեր:

## ՌՈՒՍԵՄԻՆ

- «Սիրտդ է հիվանդ, պետք է բուժել  
Խաղաղ ծոցում բնության...»  
Գրտար, ընկեր, ու ճիշտ այդպես  
Հիվանդ է նա անպայման:
- 5 Նրա ձայնը դու լըսեցիր  
Ու խոսեցիր սըրտագետ,  
Բայց ես, անփույթ, անուշաղիր,  
Միշտ կը ովկել եմ նըրա հետ:  
10 Քարշ եմ տըվել նըրան անկամ  
Հազար ճամփա, հազար տուն,  
Ծիծաղել եմ հազար անգամ,  
Երբ լալիս էր նա թաքուն:  
15 Զըսպել ես նըրան իմ մեջ  
Խալխի խոսքով ու շափով,  
15 Ճընշել եմ ես նըրան անվերջ  
Կյանքի ամեն տագնապով:  
20 Ու, վերջապես, հոգնել է նա,  
Եվ լըսում ես դու նըրան,  
Լուռ հանգիստ է ուզում հիմա,  
Նույնիսկ թեկուզ գերեզման:

## Հ. Ղ. ԱԼԻՇԱԽԻ ՀԻՇԱՏԱԿԻՒ (Կազմված Բ. Ս. Ալիշանի գրվածքներից)

Ի՞նպէտեւ վաղոց հասել էր աշուն,  
Ցամքած տերեսուկն ըսպասեր հովուն,  
Թէ երբ ՚ի լերաց ծոցում փշչե խոր,  
Զրգե անկրոսկիծ ի մահուն սև ձոր,  
Այլ ևս շանթա՞չար ապշիմ վըշտակոծ,  
Թէ ինչպէ՞ս ընկավ նահապետն հայոց,  
Ե՞ահու սև թախիծն երկիրն հայրենյաց,  
Հոգին ձգելով երկինս—առ աստված:

16 Ու աշխարհն ամեն թեկ անցուգնաց,  
Սեր Նահապետն այլ տի գնար հոգնած,  
Բայց, ավաղ՝ դ, որ մեր լեռներն աննըման  
Իրենց շայիրին շետուն գերեզման,  
Ու օտար լեռներ, անձանոթ հովտին  
Մընաց՝ հայրենյաց անձուկն իր սըրտին.  
15 — Ո՞չ, լեռունք ծաղկած, ո՞չ, զուրք

Ճանուշիկ հովերդ՝ ի յիս ածեք մոտ,  
Հողմունք անուշիկը, եկեք մոտ՝ ի յիս,  
Երգս ու շունչս առեք, տարեք՝ ի Մասիս:  
  
Շարժի՛ր, դե՛հ շարժիր, ավագըդ Մասիս,  
Արձան պարծանաց հայոց աշխարհիս,  
Ահա շունչ ետք քեզ նահապետն հայոց,  
Հուր ետ հողեղեն ու հոգին հուր-բոց.  
Շնչե, հա՛, շնչե ծըխիկ ծիրանի,  
Որ քո դավակաց հուր նըշան ըլնի...  
20

Կգան, կանցնեն շատ-շատ ամիս ու տարի  
Զի մամռութիլ գերեզմանը այդ քարի,  
Եվ տանջալի նորա խաչը սրբազն,  
Նորա անուն՝ միշտ կմնան անսահման.

- 35 Դուք այլ շարժեցիք, մանկլտիք Հայկա,  
ի եզրը հողուն կօրհնեն ձեզ ահա.  
— Պինդ կացիք, աստված ցողե ՚ի վերեն,  
Սրլիք ու ծաղկիք, քանց վարդն ՚ի թփին,  
Մի՛ մոռանաք բընիկ աշխարհքն Հայոց  
30 Ու նահապետին ասացեք հոգոց:

1902

ԱՍՏԾՈՒ ԱՊԱԽՆԱԼԻՔԸ

- Եյժըմ ևս կրգամ, ասում է աստված,  
Օգնել աղքատին իր ծանըր կըովում.  
Չեմ թողնի նըրան Հավիտյան լըքված,  
Կա ինձ ապավին կանչեց նեղ օրում:  
  
Վա՛յ ձեզ, Հրկորներ, որ իր խըրճիթում  
Լացացրիք իւղձին, այրուն ու որրին,  
Ու վես, անպատիժ՝ ասիք ձեր սըրտում—  
Մ՛կ է վերեից նայում մեր ճամփին:  
  
Մի՛թե կարծում եք՝ շէր տեսնում, լըսում,  
Ես, որ ստեղծեց և աշք, և ականչ.  
Մի՛թե կարծում եք՝ ուժն էր պակասում,  
Եթե Համբերեց դատելուց առաջ:  
  
Եմ աչքերն անթարթ ձեր ճամփի վըրա—  
Հրսկել եմ անրուն ևս ձեր գործերին,  
15 Էլ չեմ դանդաղիլ—գալիս եմ ահա,  
Ե՞ս, Տեր զորությանց—և Հուրն իմ ձեռին:  
  
Ես Հուր եմ ձրգում ճընշվածի Հոգին—  
Նորա համարձակ լեզվով ձեզ դատեմ,  
Ես ուժ եմ տալիս աղքատի բազկին,  
20 Նորա թիկունքին՝ գալիս եմ ձեր դեմ:

\* \* \*

### ՏՐՏՈՒՅՉ

Դու քո ճամփե՞ն գընա, քույրի՞կ,  
Եվ թող լինի նա պայծառ:  
Ինձ մի՛ ժբառտա, ինձ մի՛ սիրիր,  
Ես ընկեր չեմ քեզ համար:

5 Ելած կյանքի ամեն ճամփից,  
Կարոտներով անմեկին,  
Ագահ, անվերջ ու անհանգիստ  
Բափառում է իմ հոգին:

Մի ձեռք շրկա, մի գիրկ չըկա՝  
10 Պահի նըրան իրեն մեջ,  
Խենթ, խելազար գընում է նա  
Զրգառումներովն իր անվերջ:

Եվ ո՞վ գիտի՝ դեռևս անմեղ  
Քանի հոգի կըտանջի,  
15 Եվ ո՞վ գիտի՝ ինչ մո՛ւթ, ահեղ  
Անապատում կըհանգչի...

Դու քո ճամփե՞ն գընա, քույրի՞կ,  
Եվ երբ լինենք մենք հեռու,  
Աղոթք արա, որ մյուս անգամ  
20 Զըհանդիպենք իրարու:

Օրերս անպրտուզ, տիսուր, ձանձրութի,  
Ու գնում եմ ես ունայն տրրտունչով  
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի  
Գերեղմանների շարքերի միջով:

5 Թաղել եմ նըրանց: Տիսուր է ճամփան:  
Եվ իմ հայրենի աշխարհում օտար,  
Օտար ու մենակ անցվորի նըման,  
Որ շունի ընկեր, ոչ տեղ ու դադար:

10 Օտար են շուրջըդ ու շեն հասկանում  
Ոմանք քո վիշտը, ոմանք քո լեզոն,  
Անտարբեր գալիք երշանիկ օրին,  
Զըգիտեն նըրա կարոտը անքուն...

Զընչի՞ն մարդուկներ, լըրբորեն հանգիստ,  
Անսիրտ, փոքրոգի, գըծծի ու կոպիտ.

15 Մեռնում են, մարում նըրանց հայացքից  
Ե՞վ հոգու ձըգտում, և՛ սըրտի ժըպիտ:

Էլ ո՞ւմ առաջին սիրտըդ բաց անես,  
Ո՞ւմ համար երգես սըրտալի երգեր,

Ո՞ր շըքին սիրես, կյանքըդ նվիրես,  
20 Էլ ի՞նչպես ապրես անսեր, անընկեր...

Եվ օրերս այսպես տրխուր, ձանձրալի,  
Ու գընում եմ ես ունայն տրրտունչով  
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի  
Գերեղմանների շարքերի միջով:

## ԸՆԿԵՐԻՍ

Իմ վեհ տէնշերի, չըքնաղ վըշտերի,  
Վառ երազների մըտերիմ ընկեր,  
Դու էլ ինձ նըման պանդուխտ ու գերի,  
Անզուսպ կարոտով ձրգում ևս միշտ վեր:

- 5 Այնաե՞ղ, մեր հոգու սուրբ հայրենիքում,  
Խաղաղ օրերի պայծառ լույսի տակ  
Ապրում է սերր, ժրպիաը ծաղկում,  
Ուրախ երգերը թընդում ներդաշնակ...
- 10 Բայց, ա՞խ, նա այնքան, այնքա՞ն է հեռու,  
Ու մինչեւ այնտեղ կը հասնենք մենք դեռ,  
Այնքա՞ն էնք լալու, այնքա՞ն տանջվելու,  
Իմ տանջանքների մըտերիմ ընկեր:

Նըստած եմ տրխուր, մենակ մի ժայռի.  
Կանչում եմ հուշերն անցած օրերի,  
Փընտրում եմ նըրա պատկերը կարոտ  
Իմ մըտքո՞մ... ինձ մո՞տ...

- 5 Եվ ահա զըվարթ ծիծաղը հընչում...  
Ցոլում են աշքերն... ըզգեստը շըրշում...  
Լըսվում են արագ քայլերը ծանոթ...  
Իմ շո՞ւրջը... ինձ մո՞տ...

- 10 Բայց, ա՞խ, միմիայն շի գալիս կըրկին  
Իմ էն լիասիրտ հըրճվանքը նախկին...  
Ու նըստած եմ ես ժայռին նորից նոր  
Տըխո՞ւր, զըլիակոր:

## ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

Հայոց վիշտը անհուն մի ծով,  
Խավար մի ծով ահագին,  
Էն սկ ծովում տառապելով,  
Լող է տալիս իմ հոգին:

- 5 Մերթ դայրացկատ ծառս է լինում  
Մինչև երկինք կապուտակ.  
Ու մերթ հոգնած սուզվում, իշնում  
Դեպի խորքերն անհատակ:
- 10 Ոչ հատակն է գտնում անվերջ  
Ու ոչ հասնում երկնքին...  
Հայոց վշտի մեծ ծովի մեջ  
Տառապում է իմ հոգին:

## ՄԵՐ ՈՒԽՆՏԸ

Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս.  
Ու գընում ենք մեր ճամփով,  
Մըրրիկներով պատաժ անհույս,  
Սև խավարով, մութ ամպով:

- 5 Մենք անցել ենք արյան ծովեր,  
Սուր ենք տեսել ու կըրակ,  
Մեր ճակատը դեմ ենք արել  
Մըրրիկներին հակառակ:
- 10 Ու թեպետե պատառ-կատառ  
15 Մեր դըրոշը սրբազն,  
Ու մենք չունենք տեղ ու դադար-  
Երկրից երկիր ցիրուցան,

Բայց գընում ենք մենք անվեհեր  
Զարկերի տակ շար բախտի,  
15 Մեր աշքերը միշտ դեպի վեր՝  
Դեպի լույսը մեր ուխտի:

Եվ կյանքի հաճույքն, և կընոջ սերը  
լնկան իմ սըրտից։

25 Ես էլ վիրավոր գընում եմ փախած՝  
Անհայտ օրերի խավարի ընդդեմ,  
Ամենքից զըզված, ամենքին թողած,  
Քեզ էլ կը թողնեմ...

\* \*

Հանգուխտ եմ, քույրիկ, մանուկ օրերից.  
Գընում եմ դեպի մի անհայտ երկիր՝  
Կըտրված կյանքի ամեն կապերից,  
Մենակ, տարագիր։

5 Հալածում են ինձ անցած օրերը,  
Ներկա ժամերը հանգիստ չեն տալի,  
Հոգնած են վազուց իմ թույլ ոտները,  
Ու սիրտս ավելի։

Բայց գընում եմ ես հալածված նորից,  
10 Ամեն վայելրից ու բախտից հեռու,  
Նույնիսկ հայրենի հողից ու ջրից,  
Ինչպես եղջերու։

Եվ դու հանդիպած իմ դրժար ճամփում,  
Ասում ես՝ արդեն բախտավոր եմ ես.  
15 Իզուր եմ փախշում, իզուր գանգատվում  
Ու տանջվում այսպե՞ս...

Ո՞վ դու միամիտ։ Բայց երկինք վըկա,  
Զեմ եղել երբեք ես այդքան ըստոր,  
Որ կարենայի այս դաժան բանտում  
20 լինել բախտավոր։

Զեմ եղել, քույրիկ. բոլոր օրերը  
Տառապանք բերին, կորուստ ու կըսկիծ,

## ԽՈՐՀՈՒԱՎՈՐ ՄԵՌԵԼԸ

- Ուր որ կանգնում, նըստում եմ ես,  
Ամենուրեք, անմեկին,  
Աշրիս առջև դըրած է միշտ  
Մի լուռ դագաղ թանկազին:
- 5 Օ՛, մի՛ հարցնեք՝ էն դագաղում  
Ո՞ւմն է դալուկ էն դիակ,  
Կամ թե ինչու ես չեմ թաղում  
Նըրան ընդմիշտ հողի տակ:
- 10 Ու, չեմ կարող ես հավատալ,  
Թե մեռած է նա հավետ,  
Թե նա գընաց, էլ ետ չի գալ,  
Թե նա չըկա էլ ինձ հետ...
- 15 Եվ ուր կանգնում, նըստում եմ ես՝  
Նա մի՛շտ աշքիս առաջին...  
Ու երբ խոսում, ժրպտում եմ ձեզ՝  
Հսպասում է իմ հոգին...
- 20 Հսպասում է ամեն վայրկյան,  
Թե ուր որ է՝ հիմի նա  
Պիտի շընչի ու մանկական  
Իր աշքերը ինձ բանա...

## ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

- Երանի՛ էր ձեզ, զովված երգիշներ,  
Դուք նրգում էիք վաղ առավոտյան,  
Երբոր երազներն ապրում էին դեռ,  
Ուսկի երազներն հայի փըրկության:
- 5 Զեր թարմ երգերում կար մի հայրենիք,  
Խրո՛խտ, վեճապանծ, թեպետև գերի,  
Եվ ձեր քընարի ձայներն երջանիկ՝  
Լիքը հըրճվանքով գալոց օրերի:
- 10 Ա՛խ, նա հոշոտվեց մեր աշքի առջև  
Եվ մեր բզբայուն սըրտերն իրեն հետ,  
Ուսկի երազներ՝ միրաժի նըման՝  
Մեր անապատում շըքացան անհետ:
- 15 Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեզից,  
Անհույս ու դալուկ, ճակատներըս ցած,  
Հնկնում է քընար մեր մատաղ ձեռքից,  
Հնկնում են սըրտից և՛ երգ, և՛ ասոված:

## ՀԱՅՈՑ ԼԵՇՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,  
Ու մենք անհատնում  
էն անլուս մըթնում  
երկա՞ր դարերով զընում ենք պետ վեր  
Հայոց լեռներում,  
Դրժար լեռներում:

Տանում ենք հնուց մեր գանձերն անգին,  
Մեր գանձերը ծով,  
Ինչ որ դարերով  
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին  
Հայոց լեռներում,  
Բարձր լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի  
Օրդուները սկ  
15 Իրարու հտե  
Եկա՞ն, զարկեցին մեր քարվանն աղնիվ  
Հայոց լեռներում,  
Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը շըփոթ, սոսկահար,  
20 Թալանված, ջարդված  
Ու հատված-հատված  
Տանում է իրեն վերքերն անհամար  
Հայոց լեռներում,  
Սուզի լեռներում:

25 Ու մեր աշբերը նայում են կարստ  
Հեռու աստղերին,  
Երկրնքի ծերին,  
Թե երբ կրթացվի պայծառ առավոտ  
Հայոց լեռներում,  
30 Կոստյ լեռներում:

ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆԸ  
Նախերգանք

- ԱՇԽ, ի՞նչ լավ են սարի վրրա  
Անցնում օրերն, անո՞ւշ անո՞ւշ,  
Անըրջային, թիթեասա),  
Ամպ ու հովերն անո՞ւշ, անո՞ւշ:
- 5 ԱՇԽ բացվեց թարմ տուավոտ,  
Վարդ է թափում սարին-քարին,  
Շաղ են շողում ծաղիկ ու խոտ,  
Երնչում բորմոնք եղեմալին:
- 10 ԱՇԽ, ի՞նչ զեշտ են սարի վլրա  
Սահում ժամերն անո՞ւշ, անո՞ւշ,  
Ծրվին փրչեց հովիվն ահա-  
Աղջիկն ու սերն անո՞ւշ, անո՞ւշ:

- Այստեղ, անցվոր էս աշխարհում  
Խարխափելով ապիկար,  
Հուր հավատով քեզ ենք փարում,  
Հո՞ւս երկնային, լուս անմար:
- 5 Եթե մեր կյանքն և ինչ ունենք  
Պատրանք են ողջ անցավոր,  
Պատրանքներից վրսեմն ես դու  
Եվ ըսփոփանք մեծագոր:
- 10 Իսկ թե ունես մարդուն անհայտ  
Անհաս խորհուրդ հաստատուն,  
Ողջո՞ւն, անմահ դու ճառագայթ,  
Որ շողում ես մեր հոգուն:
- 15 Լուսավորի՛ր մեր մութ ճամփան  
Դեպի աշխարհն երջանիկ,  
Ուր փոխվել են և այժըմ կա՞  
Մեր սիրելիք, մել նախնիք:
- Գուցե նըրանց հավերժացած  
Հայացքն ես դու կենդանի,  
Որ ժըպտում ես տըգետներիս  
20 Անձառ ծոցից անհունի:

\*  
\* \*

Այստեղ մի վսեմ խորհուրդ է ապրում՝  
Սանր վեճությամբ իշած երկնքից,  
Այստեղ սրբազն մի շունչ է բռւրում,  
Որ վեր է տանում մեզ այս աշխարհից:

- 5 Մի շունչ, մի խորհուրդ, մեծ, հըրաշալի,  
Խառնըված հայոց մեր խորունկ հոգուն,  
Եվ որքան դարեր, դարեր են դալի,  
Մենք միշտ հավատով, մենք միշտ աննկուն:

\* \* \*

Մենք փառքեր ունենք թաղված հողի տակ,  
Մենք հույսեր ունենք պահված մեր երկրում.  
Մի՞թե հավիտյան կողբանք ավերակ,  
Մի՞թե հավիտյան կըմնանք տրտում:

Փետուրդ արավ ողջ դար ու փռս  
էն շար աղվեսն, ագին ծաղիկ:

25 Աղվես, աղվես, փոքրիկ գազան,  
Ոտներըդ կարձ ու խիստ վազան,  
Շըներն ամեն քեզ շըհասան,  
Ճարպիկ աղվես, ագին ծաղիկ:

## ԱՂՎԵՍԸ

Աղվեսն եկավ բարձըր սարից,  
Հարցմունք արավ լիքը թառից.  
Մեծ խորող է հարկավոր ինձ.  
Քաղցած աղվեսն, ագին ծաղիկ:

- 5 Աղվեսն հագել քուրքը դեղին,  
Պըտուտ կուգա շուրջը գեղին.  
Զուր կըտըրվեց տատիս լեղին.  
Դեղին աղվեսն, ագին ծաղիկ:
- 10 Աղվեսն ասավ պառավ տատին.  
«Մըտիկ չեմ տա ձեռիդ փետին,  
Կարոտել եմ թըմփլիկ ճուտին».  
Անվախ աղվեսն, ագին ծաղիկ:
- 15 Աղվեսն եկել, նստել դեղին,  
Երկար ագին ծըռել վլվին,  
Աշք է ձըգել մեր խորոգին...  
Էն գող աղվեսն, ագին ծաղիկ:
- 20 Մին էլ կանչեց տատըս պառավ.  
Ամա՞ն, հասե՞ք, տարա՞վ, կերա՞վ...  
Գըլիսիս էս ի՞նչ փորձանք բերավ  
Անտեր աղվեսն, ագին ծաղիկ:
- Ա՛յ իմ խորող, կարմիր խորող,  
Ման կու գալիր գոռող-գոռող.

## ԿԱՔԱՎԻ ԳՈՎՔԸԸ

Արե բացվեց թուխ ամպերեն,  
Նաքավ թըռավ կանաշ սարեն,  
Կանաշ սարեն՝ սարի ծերեն,  
Բարե բերավ ծաղիկներեն.  
5                  Սիրունի՛կ, սիրունի՛կ,  
Նախշուն կաքավիկ:  
  
Քո բուն հյուսած ծաղիկներով՝  
Շուշան, նարգիզ, նունաւֆարով,  
Քո տեղ լըցված ցող ու շաղով,  
10 Քընես, կելնես երգ ու տաղով.  
                Սիրունի՛կ, սիրունի՛կ,  
Նախշուն կաքավիկ:  
  
Քո թէ փափուկ ու խատուտիկ,  
Պըստի կըտուց, կարմիր տոտիկ,  
15 Կարմիր-կարմիր տոտիկներով,  
Կըշորորաս ճուտիկներով.  
                Սիրունի՛կ, սիրունի՛կ,  
Նախշուն կաքավիկ:  
  
Երբ կըկանգնես մամուտ քարին,  
20 Մաղմոս կասես ծաղիկներին,  
Սարեր ձորեր զըվարթ կանես,  
Դարդի ծովեն սիրտ կըհանես.  
                Սիրունի՛կ, սիրունի՛կ,  
Նախշուն կաքավիկ:

\* \* \*

Ժամանակն անվերջ, տիեզերքն անհուն,  
Ու նրանց միջում հավիտյան սիրուն:  
Կյանքը հարաշարժ հոսանք է վարար...  
Նորանոր ուժեր ճնշում են իրար,  
5                  Ելնում են թափով,  
Իջնում տագնապով  
Ու կենդան, կայտառ,  
Միշտ նոր ձեի մեջ,  
Անդով, անդադար  
Հոսում են անվերջ...  
10                 Էն լայն հոսանքի, մեծ աղմուկի տակ  
Հավիտյան անշարժ, համբ ու անգիտակ,  
Անտարբեր էն տաք, եռուն պայքարին,  
Անցնող օրերին, ապրող աշխարհին՝  
15                 Հզորն ու տկար  
Ընդմիշտ հավասար,  
Անխտիր հալվում  
Մեծ հանգըստի մեջ,  
Հալվում են, ձուլվում,  
Հանգչում են անվերջ...  
20

## ԸՆՏՐՅԱԼԸ

Հոգու սըրբազն կրրակով վառված  
Իշնում էր Մովսես լերան գագաթից,  
Իշնում էր ահեղ պատգամներն առած,  
Երդթայից հանող աստուծո մոտից:

- 5 Եվ մինչ կանխատես աշքովն իր հոգու  
Տեսնում էր գալոցն իր ժողովը ըրդի,  
Եվ մինչ հրճվում էր... ահա ներքնից  
Զայներ բարկության ու խառն աղմուկի...  
Ու տեսավ Մովսես լերան բարձունքից,  
Ժողովուրդն էնտեղ ներքն, հովիտում  
Աստված է շինել ոսկուց, արծաթից,  
Պարում է շուրջը ու հարբած գոռում.  
«Ինչո՞ւ մեզ բերավ Մովսես անապատ,  
Կի Եգիպտոսից ինչո՞ւ հանեց մեզ...»  
15 Ո՞ւր է մեր սըխտորն ու սոխը առատ...  
Էնտեղ հանգիստ էր ու լիքն էր էնպե՞ս...»  
Գոռում է էսպես ու հարբած պարում:  
Ու... սուրբ Սինայի մըռայլ ամպերում  
Կանգնեց մարգարեն, նայեց դեպի վեր.  
20 «Մի՞թե այս ամբոխն իմ եղբայրն է, տե՛ր...  
Լսում եմ ձայնը լեռների գլխին,  
Մովեր եմ պատում, անցնում անապատ,  
Հըրեղեն սյունով տանում իր ուղին,  
Նա մի՛շտ կասկածոտ, նա մի՛շտ հուսահատ...»

25 Տանջանքի միջից նըկատում եմ ես  
Երկիրն ավետյաց հեռո՞ւ մըշուշում,  
Իսկ նա փոքրոպի, կույր ու կարճատես,  
Գերության սըխտորն ու սոխն է հիշում...

Եվ երբ ամպերում խոսում եմ քեզ հետ,  
30 Քեզնից փըրկության պատգամ եմ բերում,  
Նա այնտեղ ցածում մոլի՛, անհեթե՞թ  
Ուկի է պաշտում ու հարբած պարում...

Ինչո՞ւ են, աստված, քո վեհ պատգամներ,  
Իմ տանջանքն ինչո՞ւ...» Գոշեց զայրացած,  
35 Ու մեծ խորհուրդի քարյա տախտակներ  
Փայունի գըլխից թողեց դեպի ցած...  
Բայց... մյուս առավոտ, երբ որ դեռ քընած,  
Հանգչում էր ամբոխն աղմուկից հոգնած,  
Իր ցուպը ձեռքին բարձրանում էր նա  
40 Դարձյալ միայնակ վե՛ր՝ դեպի Սինա:

## ԱԾԽԱՆ ՎԵՐՋԸ

Սարի լանջին,  
Մեզի միշում  
Խոխոչում է  
Բև տըրտընջում  
5 Զուրը բարակ,  
Զուրը տըխուր.  
— Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,  
Ո՞ւր կորան, ո՞ւր,  
Տերև ու խոտ,  
10 Վարդը շաղոտ,  
Սարվորն ուրախ,  
Սըրինդ ու խաղ:  
Շուրջըս դատարկ,  
Շուրջըս տըխուր...  
15 Վաշ-վի՛շ, վաշ-վի՛շ,  
Ո՞ւր կորան, ո՞ւր:

## ԿՈՒՅՐ ԱԾՈՒՂԸ

Կույր աշուղը մի տան բակում  
Եկել նստել՝ երգ է երգում.  
Երգում է ու սազին տալի  
Էնպես տխո՛ւր ու սրտալի.  
5 «Է՛յ, պարոններ, երնե՛կ նրան,  
Ով տեսնում է ամեն օր  
Կապույտ կամար, արևի լույս  
Ու երեսը իրեն մոր»:  
Երգում է ու սազին տալի  
10 Տխուր-տխուր ու սրտալի:

## ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

Ամպը եկավ նստեց սարին,  
նստեց սարի սուր կատարին:  
— Լըսի՛, պապի՛, ասավ նրան,  
կավ օրերըդ անցան, կորան.  
5 Իիստ սոսկալի  
Ցուրտ է գալի:  
Ասավ, գնաց:  
Սարը կամաց  
Մտավ սիպտակ  
10 Վերմակի տակ:

## ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

(Ժողովրդական)

- Սուլրուղո՛ւ.
- Աքլորը զիլ կանչեց թառին.
- Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,  
Զարթնեց մթնում ծիտը ծառին:
- 5 Սուլրուղո՛ւ.  
Խոսեց ծեզին երկրորդ բերան.
- Հո-հո՛, հո-հո՛,  
Նախիրն արդեն հանդը տարան:
- Սուլրուղո՛ւ.
- 10 Լույսը բացվեց երրորդ կանչին.
- Վո՛ւ-վո՛ւ-վո՛ւ-վո՛ւ-վո՛ւ,  
Նստեց նանը տեղի միջին:

## ՓԻՍՈՆ

Փիսոն, փիսոն մլավան,  
Թավրիզ թողեց, փախավ կան,  
Հեզուն թաթխան, երկար պոշ,  
Ինչ որ ուզեց, ասին՝ ո՞չ:

- 5 Փիսոն գնաց գողեգող,  
Փորը դատարկ, սիրտը դող,  
Դունչը մեկնեց կովկիթին,  
Շերեփն իշավ ճակատին:

## ՈՒՐԱԳ ՈՒ ՍՂՈՑ

Մի՛ լինի ուրագի պես,  
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,  
Այլ եղիր սղոցի պես,  
Մին դեպի քեզ, մին դեպի մեզ:

## ԿԱՆԱՆՉ ԱԽՊԵՐ

ԷՇ կանանշ ախպեր,  
ԷՇ ճանանշ ախպեր,  
Արի՛, քեզ հետ բե՛ր  
Արեի շողեր.  
5 Բեր անուշահոտ  
Ծիլ, ծաղիկ ու խոտ,  
Կարկաշուն վըտակ,  
Երկինք կապուտակ,  
Խատուտիկ հավաեր,  
10 Զընգան երգեր,  
Գառների մայուն,  
Խաղ, ուրախություն.  
ԷՇ կանանշ ախպեր,  
ԷՇ ճանանշ ախպեր:

## ԾՈՒՅԼ ԱՂՋԻԿԸ

Բանն ի՞նչ կանեմ՝ կեղտոտ է,  
Բամբակը կորիզոտ է,  
Մետաքս պիտի, որ մանեմ,  
Մաստակ պիտի որ ծամեմ,  
5 Կտերը տիտիկ անեմ,  
Անցնողին մըտիկ անեմ,  
Ուտեմ, խմեմ,  
Մթնի քնեմ:

ԿՈՌԻՆԿԱՆԵՐ

Կը՝ ու կը՝ ու, կըոկըոան  
Կոռւնկները հա՛ թոան.  
Կոռւնկների թեի տակ  
Եկավ գարուն մեր դուան:

ԱՐԱԳԻԼ

(Ժողովրդական)

Արագի՛լ, բարով եկար,  
Հա՛յ, արագի՛լ, բարով եկար.  
Դու մեզ գարնան նշան բերիր,  
Մեր սրտերը ուրախ արիր:

5 Արագի՛լ, երբ գընացիր,  
Դու մեզանից երբ գընացիր,  
Հա՛ փըշեցին բուք ու բորան,  
Սաղիկները ամեն տարան:

Արագի՛լ, բարով եկար,  
10 Հա՛յ, արագի՛լ, բարով եկար.  
Բունըդ շինիր էն հին ծառին  
Մեզ մոտ մնա ամբողջ տարին:

## ԳՈՒԹԱՆ

Հուսը լուսացավ,  
Բարին շատացավ.  
Վաղ լուսաբացին  
Գութան լըծեցին.

5 Հորովել հո՛...

Գութանը լարած,  
Հոտաղը շարած,  
Մաճկալը մաճին,  
Ջեռը ականջին.

10 Հորովել հո՛...

Գութան ջան, վարի՛,  
Ակոսը շարի՛.  
Թափ տուր, թև արա,  
Շուռ տուր, սև արա.  
15 Հորովել հո՛...

Յանենք, արտ անենք,  
Հնձենք, տուն տանենք,  
Ունենանք շատ հաց.  
Օրհնյալ է աստված.  
20 Հորովել հո՛...

## ԾԻՏԸ

Հուռին գնաց բանջարի,  
Բանջար չեղավ՝ խոտ եղավ,  
Խոտի տակին ծիտ եղավ,  
• Ծըլվըլալեն դուրս թռավ:  
5 Ծիտը թռավ գերանին,  
Կանաշ խոտը բերանին:

## ՃՆՃՂՈՒԿՆԵՐ

### ՈՒԼՈՒՆՔ

Գարունը եկավ ամպերով,  
 Ամպերը եկան անձրեռվ.  
 Անձրեռ տանեմ արտին տամ,  
 Արտը ինձ ցորեն տա.  
 5 Ցորենը տանեմ ջաղացին տամ,  
 Ջաղացը ինձ ալյուր տա.  
 Ալյուրը տանեմ տաշտին տամ,  
 Տաշտը ինձ խմոր տա.  
 Խմորը տանեմ թոնրին տամ,  
 10 Թոնիրը ինձ հաց տա.  
 Հացը տանեմ բոշին տամ,  
 Բոշեն ինձ ուլունք տա.  
 Ուլունքը տանեմ նանիս տամ,  
 Նանս ինձ ծեծի՛, ծեծի՛,  
 15 Տանից քշի, դուրս անի:

Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար,  
 Ճնճղուկներ թռան եկան ուտելու համար,  
 Կոացա քար վեր առա զարկելու համար,  
 Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,  
 5 Աղջիկներ թև քաշեցին փետրելու համար:  
 Պառավներ պղինձ դրին եփելու համար:  
 Դուռ-դրկից շուրջ բազմեցին ուտելու համար,  
 Տերտերներ խաչով եկան օրհնելու համար,  
 Աշուղներ սազով եկան գովելու համար.  
 10 Ա՛յ ճնճղուկիկ,  
 Կարմիր տոտիկ,  
 Սիպտակ փորիկ,  
 Ուտեն կուտիկ,  
 Խմեն ջրիկ  
 15 Առվի եղրիկ,  
 Պստիկ-մստիկ,  
 Փախշեն երթան ման գալու համար:

## ԽՆՈՑԻ

Հարի՛, հարի՛, խնոցի՛,  
Մեջդ բարի, խնոցի՛,  
Ունկըդ բարակ, խնոցի՛,  
Մեշըդ կարագ, խնոցի՛:

## ԾԱԳՈՒՄՆ

Ելնում է ահա նազելի փառքով  
Հոգուս խորքերից իմ նոր դիցուհին,  
Պճնած կուսության ճերմակ պսակով,  
Վառվելով իր սուրբ շողերի միջին:

- 5 Ելնում է շոայլ իր փառքից շիկնած,  
Ցոլուն աշքերը գետին խոնարհում,  
Թեև նրանց մեջ երկնքից ծագած  
Ամենից պայծառ ճաճանչն է բերում:
- 10 Թոշում են երգերս նրան ընդառաջ,  
Ցնորքներս աշխույժ պարում են իր շուրջ,  
Թոշում եմ և ես իմ բախտից հարրած  
Ու կյանքը թեթև թվում է անուրջ:

## ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ

### ԾԱԽԱՐԱԿ

Մանի՛, մանի՛, ճախարակ,  
Նըստենք բանի, ճախարակ,  
Անտերին տեր, ճախարակ,  
Որբերին հեր, ճախարակ:

- 5 Լուսնյակը դուրս է եկել,  
Աշքերիս լուս է եկել:  
Լուսնի լուսով մանեմ ես,  
Սիպտակ ոստեր անեմ ես.  
Աղքատ օրով ու լացով  
10 Որբեր պահեմ մանածով:

Մանի՛, մանի՛, ճախարակ,  
Նըստենք բանի, ճախարակ,  
Անտերին տեր, ճախարակ,  
Որբերին հեր, ճախարակ:

Եկավ գարուն, եկան հավքեր,  
Տաքցավ արև, գլուխն ջրեր,  
Եկան վարի-ցանքի օրեր:  
Կռունկն ամուլ արեցի,  
5 Սագերն հորիք լըծեցի,  
Ճնճղուկն հոտաղ վարձեցի,  
Կաքավն հացվոր բռնեցի,  
Արտ ունեի՝ վարեցի,  
Ցորեն, գարի ցանեցի:

## ՔԱՄԻՆ

- Ու-ու-ու-ու...  
Քամին է, քամին,  
Տես անզգամին.  
Բերան շունի՝ փըշում է,  
5 Թեւեր շունի՝ թոշում է,  
Չեռքեր շունի՝ քաշում է,  
Իմ փոքրիկին քըշում է:  
  
Կորի՛, դու քամի,  
Անպիտան քամի:  
10 Մի վախի, ջանիկ,  
Փեշըս պինդ բոնի,  
Ես թող չեմ անի,  
Քամին քեզ տանի:

## ԱՐՏՈՒՏԻԿ

- Արտուտիկ,  
Նախշուն տոտիկ  
Իջնեն կալեր  
Գողտիկ-մողտիկ,  
5 Բնտրեն քարեր,  
Ուտեն կուտիկ,  
Կըծըլվըլան  
Կըլթիկ-կըլթիկ:

ԿԱԼԻ ԵՐԳԸ

Արի, եզը շան, Սիրան շա՛ն.  
Հորովել ա՛, հորովել ա՛...  
Ոտիդ արա, ուսիդ արա,  
Կալը կալսենք, անձրև շըգա:  
5 Տա՛ր, ման արա, ա՛ քեզ մեռնեմ,  
Դարման արա, ցավըդ առնեմ:  
Դարմանը՝ դու, ցորենը՝ մենք  
Ջմեռն ուտենք, հանգիստ ապրենք:  
Օրը գնաց, ա՛ Սիրան շան,  
10 Բանը մնաց, շան, ախպեր շան:  
Ոտիդ արա, ուսիդ արա՛,  
Կալը կալսենք, անձրև շըգա:

ԴԺԱՐ ՏԱՐԻ

Վարի՛, գութան շան, վարի՛,  
Շատ է դըժար էս տարի.  
Պապին տարան քյոխվի դուռ,  
Հարկ են ուզում.—տո՛ւր հա, տո՛ւր...  
5 5 — կըտամ, քյոխվա, փող շունեմ:  
— Զունե՞ս, Շեկոն կըտանեմ:  
— Ամա՞ն, քյոխվա, քեզ դուրբան,  
Շեկոն գընա թող գութան,  
Գարնան անենք վար ու ցանք,  
10 10 Կալը կալսենք, բերենք տանք:  
Գարունքը ետ դառակ էլ,  
Գովթան լըծվեց—հորովե՛լ...  
Վարի՛, գութան շան, վարի՛,  
Գատենք ցորեն ու գաղի,  
15 15 Տանենք ածենք քյոխվի փեշ,  
Որ շըտանի մեր գոմեշ:

ԱՌԱՎՈՏ

Հավը խոսեց երեք բերան.  
— Եյ քնածնե՞ր, ծուղրուղո՞ւ,  
Բացվեց կարմիր աղոթարան,  
Ժամանակ է զարթելու:

- 5 Խավարն անցավ գիշերային,  
Հեռու մեզնից ու փարատ,  
Աշխարհ լցվեց լուսն ու բարին,  
Լուսն ու բարին անարատ:
- 10 Գյուղում աղմուկ, գյուղում խնդում,  
Օրը պայծառ, բուրավետ,  
Ժիր մըշակի երգը հանդում  
Զրծնդում է գործի հետ:

Է՞հ, ո՞վ գիտի, մենք ապիկար՝  
Ժամանակի խաղալիք,  
Ու անհայտ են միշտ մեզ համար  
Օրն ու սերը մեր գալիք:

- 5 Մեկ էլ տեսար, քո սիրելին  
Ընկավ օտար ու հեռու,  
Պատահեցիր ուրիշ մեկին  
Ու ժպտացիք իրարու:
- 10 Բայց չի տևում այդ էլ երկար՝  
Նոր օր, նոր մարդ, նոր ալիք,  
Ու ծփում ենք մենք անդադար,  
Ժամանակի խաղալիք...

## ԳԱՐԵԱՆ ԱՌԱՎՈՏ

## ՎԱՅՐԵԶՔ

Քառասուն տարի բըռնած ճանապարհ՝  
Շիտակ, անվեհեր  
Գընում եմ ես վեր—  
Դեպ Անհայտը սուրբ, աշխարհքը պայծառ:

- 5 Քառասուն տարի ճամփովն ահարկու  
Անցել եմ էսպես  
Ու հասել եմ ես,  
Խաղաղությանն եմ հասել ես հոգու:
- 10 Թողել եմ ներքես, մեծ լերան տակին,  
Ե՞վ փառքը, և՛ գանձ,  
Ե՞վ քեն, և՛ նախանձ—  
Ամենը, ինչ որ ճընշում է հոգին:
- 15 Եվ էն ամենը, արդ նայում եմ ես—  
Տեսնում եմ նորից  
Իմ լերան ծերից—  
Էնպես հասարա՞կ, դատարկ են էնպե՞ս...
- 20 Եվ ես իմաստում ու բեռը թեթե,  
Անհոգ ծիծաղով,  
Երգով ու տաղով  
Իշնում եմ զըվարթ իմ լերան ետեւ:

Բարի լուսի զանգեր զարկին  
Ջընգընգալեն անո՞ւշ, անո՞ւշ:  
Լուսը բացվեց մեր աշխարհքին  
Ճըղճըղալեն անո՞ւշ, անո՞ւշ:

- 5 Հովտում առուն խոխոջում է  
Գըլգըլալեն անո՞ւշ, անո՞ւշ.  
Քամին բարակ շընկընկում է  
Ջըլգըլալեն անո՞ւշ, անո՞ւշ:
- 10 Կոռուկն եկավ երամ կապած  
Կըռկըռալեն անո՞ւշ, անո՞ւշ,  
Կաքավ քարին տաղ է կարդում,  
Կըղկըղալեն անո՞ւշ, անո՞ւշ:
- 15 Հարսն ու աղջիկ հանդերն ելան  
Շորորալեն անո՞ւշ, անո՞ւշ.  
Մաղկանց բուրմունքն անմահական  
Սըլսըլալեն անո՞ւշ, անո՞ւշ:

## ԳԵՏԱԿԸ

— Ո՞ւր ես վազում  
Այդպես արագ,  
Այս դու կայտառ,  
Սիրուն գետակ.  
5 Կանգ առ, խաղանք  
Էս ծառի տակ:

«Զէ՛, փոքրիկըս,  
Գնամ պիտի.  
Տէ՛ս ջաղացը  
10 Գյուղի մոտի,  
Պետք է ուժ տամ,  
Որ պըտըտի:

Ցածն էլ հովառում  
Անուշահոտ  
15 Ինձ են մնում  
Մաղիկ ու խոտ,  
Հոգնած-ծարավ  
Տավարն ու հոտ:

Սառն աղբյուրը  
20 Բարձըր սարի  
Դրանց համար  
Է ինձ տալի  
Իր զով չուրը  
Կըկըլալի:

25 Իսկ կամուրջի  
Տակն էլ որ գա,  
Կա լվացքը  
Պառավ կընկա,  
Պետք է լվամ  
30 Քանի լույս կա:

Դէ՛, տեսնո՞ւմ ես,  
Մնա՛ս բարով,  
Ճամփաս ցանած  
Հազար գործով.  
35 Դադար շոնեմ  
Ես մինչև ծով»:

Խոսե՛, լավիկը՛ս, խոսե՛,  
Խոսե՛, խոսքիդ ես ղուրբան:

Նորից եկան էն հավքերը,  
Հեռվից եկան էն հավքերը,  
30 Որ գարնանը կուգային:  
Ճերմակ կապա են հագել,  
Ճերմակ ճամփա են եկել,  
Ճերմակ ձարգին ման կուգան:  
Չենե՛, հավիկը՛ս, կանչե՛  
35 Չենե՛, լավիկը՛ս, կանչե՛,  
Չենե՛, կանշիդ ես ղուրբան:

- \* \* \*
- 5 Նորից եկան էն հավքերը,  
Հեռվից եկան էն հավքերը,  
Որ գարնանը կուգային:  
Կանանշ կապա են հագել,  
Կանանշ ճամփա են եկել,  
Կանանշ մարգին ման կուգան:  
— Կանշե՛, հավիկը՛ս, կանշե՛  
Կանշե՛, լավիկը՛ս, կանշե՛,  
Կանշե՛, կանշիդ ես ղուրբան:  
10 Նորից եկան էն հավքերը,  
Հեռվից եկան էն հավքերը,  
Որ ամառը կուգային:  
Կարմիր կապա են հագել,  
Կարմիր ճամփա են եկել,  
15 Կարմիր վարդին ձեն կուտան:  
Երգե՛, հավիկը՛ս, երգե՛,  
Երգե՛, լավիկը՛ս, երգե՛,  
Երգե՛, երգիդ ես ղուրբան:  
20 Նորից եկան էն հավքերը,  
Հեռվից եկան էն հավքերը,  
Որ աշնանը կուգային:  
Դեղին կապա են հագել,  
Դեղին ճամփա են եկել,  
25 Ու խաշամին ման կուգան:  
Խոսե՛, հավիկը՛ս, խոսե՛,

## ԱՎԵՐԱԿՈՒՄ

- Մոլոր, մենակ ես շըրջում եմ  
Ավերակում հայրենի,  
Աշք եմ ածում ու հիշում եմ  
Անցած կյանքը վաղեմի:  
5 Է՛, այստեղ էլ ժամանակով  
Ծեն ու կենդան է եղել,  
Ուրիշ օրով, ուրիշ կյանքով,  
Ուրիշ մարդիկ են ապրուլ:
- Ահա նըրանց տեղ-տըները  
Լուռ-լուռ փոսեր ցիրուցան,  
Ահա նըրանց շիրիմները,  
Մամուտ, անշուք, աննըշան  
Ահա մեծի ապարանքը  
Ու ամրոցը կիսավեր,  
10 15 Ահա նըրանց խաղաղ վանքը,  
Աղոթում է կարծես դեռ...
- Մթընշաղը գետինն առել,  
Լուռ է աշխարհ-արարած.  
Բեկորներին աչքերս հառել  
20 Մըտածում եմ շըվարած:  
Հին դարերի մըշուշի մեջ  
Նըշմարում եմ ես ահա  
Փարթամ քաղաք, տներ անվերջ...  
Մեծ պալատներ... ու սըրահ...
- 25 Ու սըրահը ճոխ զարդարված  
Վառվում է ուշ գիշերով...

- Էն սըրահում, լուսավորված  
Բյուրեղյա թանկ շահերով՝  
Հայրենիքի ազատանին  
30 Հավաքվել է խընջույքի,  
Տոն է տոնում, տո՞ն հաղթության  
Իր հավատի ու զենքի...

- Ու փափկասուն տիկինները  
Հանդիսավոր ընթացքով  
35 Ճեմ են առնում, աշք են ածում,  
Սեր են թափում հայացքով:  
Պարիկները պար են պարում  
Ու դոփում են համարձակ,  
Ու թընդում են մեծ սըրահում  
40 Երգ ու նըվագ ներդաշնակ...

«Վո՞ւ...», «Վո՞ւ...», բուն էր, վայեց ահա...  
Մութն է: Ու ես գըլիխկոր  
Էն ավերակ քաղքի վըրա  
Կանգնած, ինչպես մի բեկոր...

## ՕՐ. Պ. Պ.-ԻՆ

Քույրիկ, այդքան որ սիրում ես  
Հայի հնչուն, հայի տաղ,  
Որ սրտալի մեծարում ես  
Ազգիդ երգին դեռ մատաղ,

- 5 Ներշնչում ես նորա հոգուն  
Հզոր թոփշք և եռանդ,  
Եվ հիշում է նա յուր մտքում  
Յուր պաշտոնը երկնավանդ,  
  
10 Այս հարազատ ներշնշանքի  
Փոխարենը ընդունիր  
Նորա սիրո և տանջանքի  
Անվարժ տողերն ինքնազիր:

## PARODIA

Հովի. Հովիաննիսյանի «Իմ հայրենիքը  
տեսե՞լ ես, ասա՛» բանաստեղծության

- «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»  
Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,  
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,  
Ուր թալանում են մերոնք ու այլերը,  
5 Ուր հոսում է միշտ արցունք ու արյուն:  
Տեսե՞լ ես արդյոք այն այգիները,  
Ուր իբրև գոհար խաղողն է համնում,  
Որից դատարկ են նըստում տերերը,  
Որ միշտ ցեցերի գըրպանն է լըցնում:  
  
10 Տեսե՞լ ես ծերուկ ժայռերի միջով  
Կատղած անցնելիս գետը փրրփրրած.  
Վախե՞լ ես անցնել կոտրած կամուրջով,  
Նստե՞լ ես արդյոք ափին մոլորված:  
Տեսե՞լ ես գյուղը հովտի մեջ մենակ  
15 Ու շուրջը փըռված հին աղբակուլտեր.  
Տեսե՞լ ես ո՞նց են այնտեղ շարունակ  
Կըռվում, կեղեքում քյոխվեն ու տերտեր:  
Եվ գու տեսե՞լ ես նրա գանձն անգին,  
Հարավի գուստը—խըղճուկ արարածն

20 Եռության կնիքն իրևն շըրթոնքին  
Ու ինքը ամբողջ կեղտի մեջ կորած:

Տեսե՞լ ես նորա եպիսկոպոսին  
Դեմքին գոհության տափակ կնիքը.  
Գիտե՞ս ինչ զարդ է թաղման հանդեսին,  
25 եվ կամ ի՞նչ արժե մատի մատնիքը:

Եվ դու տեսե՞լ ես նորա գաղեթը,  
Որ ազատ միտք է վաճառում հային.  
Զգո՞ւշ, բարեկամ, շըվիճես հետը,  
Թե չէ՝ կըմատնի քեզ պոլիցիային...

30 «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա՛...»

## ՍՈՒՆԱԿԻ ՎԻՇՏԸ

Մի օր տեսավ օտար թըռչուն՝  
Սոխակ կուլար կուց-կուց արուն.  
— Ինչո՞ւ, ասավ, սոխակ սիրուն,  
Ինչո՞ւ կուլաս կուց-կուց արուն.  
5 Ինչո՞ւ, մինչ ե՞րբ դու երերուն,  
Տըխո-ր կուլաս չոր թըռիրուն,  
Աշխարհ ամեն վառ քո սիրուն,  
Էդ ճըռվուան քո երգերուն,  
Հապա ինչո՞ւ դու օրն ի բուն,  
10 էս լուս ու մութ առավոտուն,  
Էս շատ անուշ զով հովերուն  
Ախ ու վախով կուլաս արուն:  
— Ի՞նչ կըխոսես, օտար թըռչուն,  
Խենթ ու խելառ դու ցընորուն.  
15 Զըմե՛ռ նստեց մեր սարերուն,  
Կըտրեց շըրիկ աղբյուրներուն,  
Կըտրեց հոտիկ ծաղիկներուն,  
Կըտրեց ձենիկ իմ ձագերուն,  
Ի՞նչպես շըլամ կուց-կուց արուն:  
20 Էլի ասավ օտար թըռչուն.  
— Հերիք դու լաս, սոխակ սիրուն,  
Հերիք դու լաս կուց-կուց արուն.  
Էլի կուգա քեզ նոր գարուն,  
Արև ձագե էս վայրերուն,  
25 Հալին ձյուներ մեր սարերուն,  
Բացվին շըրիր աղբյուրներուն,  
Ու շուրջ առած քո ձագերուն  
Բարե կուտաս ծաղիկներուն:

ԿԱՔԱՎԻ ՈՂԲԸ

Ա

- Կըտուցը լիքը արին  
Կաքավը նըստել քարին,  
Զեն է տալիս, կըղկըղում,  
Գանգատ անում հավքերին.  
5 Ա՛յ քուրիկնե՛ր,  
Ա՛յ հավքե՛ր:
- Թուն շինեցի էս սարում,  
Զագ հանեցի աննըման.  
10 Իշավ՝ խաղա մարգերում,  
Եկան կալան ու տարան,  
Ա՛յ քուրիկնե՛ր,  
Ա՛յ հավքե՛ր:
- Էն կարկաշուն վըզիկը  
Սուր դանակով զարկեցին.  
15 Էն կարմըրիկ կըտուցը  
Հուր կըրակին ձըգեցին,  
Ա՛յ քուրիկնե՛ր,  
Ա՛յ հավքե՛ր:
- Էն մանրաքայլ տոտերը  
Կըտրատեցին ծունկն ի վար,  
Էն խատուտիկ փետուրը  
Ո՞րն արին ձոր, ո՞րը՝ սար,  
Ա՛յ քուրիկնե՛ր,  
Ա՛յ հավքե՛ր:

- 25 Էն, որ սարերն էր հասել,  
Քամին եկավ գում արավ,  
Էն, որ ձորերն էր անցել,  
Հեղեղն ելավ ու տարավ,  
Ա՛յ քուրիկնե՛ր,  
30 Ա՛յ հավքե՛ր:

Բ

- Էլ ո՞նց անեմ, էլ ի՞նչ անեմ էն բընում.  
Հանգիստ շունեմ, դադար շունեմ էն բընում:  
Զօրը մենակ՝ շեմ դիմանում էն բընում,  
Գիշերն անտակ՝ շի լուսանում էն բընում.  
35 Անցած օրերն եկել նորից էն բընում,  
Գել են դառել, ուտում են ինձ էն բընում.  
Էլ շի մընում իմ սըրտիկը էն բընում,  
Ցավով լիքը, լացով լիքը էն բընում:

Գ

- Սև կաքավիկ, ո՞ւր պիտի դունըստես հիմա:  
40 — Չորուկ բարդի ծառի վրա:  
— Սև կաքավիկ, թե որ նըրա տերը գա՝ ո՞ւր:  
— Լացող ուռու ճյուղքին տըխուր:  
— Սև կաքավիկ, էն տեղից էլ քշեն որ քե՞զ:  
— Կըրակ կըլնեմ, կէրեմ ինձ ես...

Դ

- 45 Վա՛յ կաքավիկ,  
Սև կաքավիկ,  
Զալիկ-մալիկ  
Սիրուն հավիկ:  
  
Վա՛յ քո ճուտին,  
Էն խորոտին,

Վա՞յ սըգավոր  
իր մոր սըրտին:

1911

Էլ շես կարդում  
Հանդ ու արտում,  
Մեր սարերից  
Կորար տըրտում:

55

Վա՞յ կաքավիկ,  
Մե կաքավիկ,  
Վա՞յ իմ կորած  
Սիրուն հավիկ:

60

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐԸ  
(Ժողովրդական)

Ամպոտ սարեն ուրախ ձենով  
Զուր է գալիս, անցնում շենով:  
Մի թուխ մանուկ դուրս է վազել,  
Զեռքն ու երես պաղ լըվացել,  
5 Լըվացել է ձեռքն ու երես,  
Ու դարձել է՝ խոսել էսպես.

— Դու ո՞ր սարեն կուգաս շըրի՛կ,  
Իմ պաղ շըրիկ ու անուշիկ:  
— Ես էն սարեն կուգամ մըթին,  
10 Որ հին ու նոր ձյունն է գլխին:

— Դու ո՞ր առուն կերթաս, շըրի՛կ.  
Իմ պաղ շըրիկ ու անուշիկ:  
— Ես էն առուն կերթամ զվարթ,  
Ուր ափերն են շուշան ու վարդ:

15 — Դու ո՞ր այգին կերթաս, շըրի՛կ,  
Իմ պաղ շըրիկ ու անուշիկ:  
— Ես էն այգին կերթամ դալար,  
Որ տերն է ժիր մեջն այգեպան:

## ԳԱՐՆԱՆ ՀՐՈԱՎԵՐ

Իմացվում են գարնան  
Օրերը պայծառ.

- Կգա՞ս, իմ ընկե՛ր,  
Գընանք դեպի սար,  
5 Գընանք դեպ այնտեղ՝ երկնահաս վերև,  
Կյանքը լայնարձակ, երկինք ու արև...

Փըթթում են գարնան  
Սաղկունքը վառ-վառ.  
Վե՛ր կաց, վե՛ր, ընկե՛ր,  
10 Ելնենք դեպի սար.  
Հազար գույներով, հազար-հազար ցեղ  
Ժըպտում են նըրանք ու բուրում այնտեղ...

- Կանչում են գարնան  
Հավքերն անհամար.  
15 Գընանք, իմ ընկե՛ր,  
Թոշենք դեպի սար,  
Երգենք նրանց հետ՝ երկնահաս վերև,  
Կյանքը լայնարձակ, ծաղիկ ու արև...

## ԵՐԿՈՒ ՀՈԳԻ

(Իր տաղանդավոր պաշտպան Գրուզենբերգին)

Մարդիկ կյանքում իրար համար  
Ամեն մի տեղ ու ամեն օր՝  
Որը ուժեղ, որը տըկար՝  
Կամ պաշտպան են կամ պրոկուրոր:

- 5 Մինը գիտի լոկ չար վայրկյան  
Եվ չարագործ ու թըշնամի,  
Մյուսը հոգին հավերժական  
Ու պատճառը դժբախտ ժամի:

- Մինն իր առջև տեսնում է ցած  
10 Մի հանցավոր խավար ու կուր,  
Մյուսը՝ իր պես մի արարած,—  
Ծընող, որդի, եղբայր կամ քուր...

- Մինը մարդու օրենքն ունի,  
Որ միշտ մարդուն ցավ է բերում,  
15 Մյուսը մարդու և Անհունի,  
Որ և անհուն սեր է բուրում:

- Եվ օրհնեալ է, ով այդ սիրով  
Կյանքի ճամփում ընկնող մարդուն  
Պաշտպանում է եղբոր ծեռով,  
20 Տանում դեպի խաղաղովյուն:

Եվ խաղաղ է նրա հոգին  
Կյանքի ամեն ասպարիզում,  
Եվ թե երբեք հուզվում է նա,  
Սերն է միայն նրան հուզում:

- 25 Ահա ինչու էս աշխարհքում  
Խաղաղ է միշտ և իմ հոգին,  
Պաշտպանում է նա իր խորքում,  
Սիրում է ողջ ու ամենքին:

ԽՈՐՃՐԴԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՐՑԻ ՎՐԱ

- Հողմերի առջև ցըրված, հալածված,  
Քարեքար զարկված, տանջված ու հյուծված  
Ի՞նչ է ուզում նա դալուկ շրթունքով,  
Անվերջ բողոքով, անզոր խնդիրքով.  
5 Իր փա՞ռքն է ուզում, թե թագն ու գահո՞ւք:  
— Իր կյանքն է ուզում, իր պատիվն, իր գույք:  
Ո՞վ, ամո՞թ, ամո՞թ... ամո՞թ ամենքին,  
Ամո՞թ և մարդուն և ժամանակին:  
Շունն էլ շըպիտի էն խընդրեր շանից,  
10 Ինչ մարդն է խընդրում իրեն նմանից  
Էս առատ-արձակ աշխարհքի միշին—  
Իր կյանքն, իր պատիվն, իր գույքը շընչին...  
Ափսո՞ս էն պայծառ, պարզ արեգակին,  
Ափսո՞ս էն զառվառ ծըլին ու ծաղկին,  
15 Ափսո՞ս աստղերին, ծովին ալեծուի,  
Ափսո՞ս դաշտերին, լերանց երկնահուա.  
Ինչպե՞ս սըրանց մեջ ծընան հըրեշներ  
Էսքա՞ն մարդատյաց, անխիղճ ու անսեր...
- Ո՞չ, հանգի՞ստ, հոգի՞ս, իզուր չի ոշինչ.  
20 Ոչ ծիլ ու ծաղիկ, ոչ արել շինչ,  
Ոչ խոսքն հանճարեղ, ոչ երգը քնքույշ:  
Կա մեծ ու զըվարթ, իմաստուն մի ույժ,

Որ Մութն աշխարհից տանում է մարդուն  
Դեպի լույս աշխարհք, սեր, եղբայրություն...

- 25 Ամեն մի շարիք ունի իրեն վերջ  
Ու կա հատուցում ամեն գործի մեջ.  
Կա մխիթարանք տառապող հոգուն,  
Լացող աշքերին կա հանգիստ ու քուն,  
Եվ դարձ կա նըրան, որ վառեց խարույկ  
30 եղլեց ուրիշից կյանք, պատիվ ու գույք:

\* \* \*

Տաղով եկավ,  
Ախով գնաց Սայաթ-Նովան.  
Երգով եկավ,  
Վերքով գնաց Սայաթ-Նովան.  
5 Սիրով եկավ,  
Սրով գնաց Սայաթ-Նովան.  
Սիրով մնաց Սայաթ-Նովան:

Հուսավոր կյանքի սիրով երջանիկ  
Ու ձըգտում տըվիք—ձրգուել դեպի վեր,

25 Քանի որ զուք կաք, քանի կըմնաք,  
Հոյակապ սյուներ հայության ոգու,  
Մենք միշտ անսասան առաջ տի գնանք,  
Ինչքան մեր ճամբան լինի ահարկու:

30 Եվ տոն կըտոնենք էսպես խնդագին,  
Եվ թող իմանա բովանդակ երկիր—  
Ապրում է անմեռ հայությունը հին,  
Ապրում են անմահ իրեն գիրքն ու գիր:

- Թեպետև բախտը մեզ շատ հարվածեց  
Երկար դարերով, ահեղ հարվածով,  
Թեպետև էսպես ցրվեց, տարածեց,  
Զըգեց հողեհող, փըռեց ծովեծով,
- 5 Վկա է սակայն բովանդակ երկիր,  
Որ մենք կարեվեր ապրում ենք կրկին,  
Եվ ուր հասնում է հայի գիրքն ու զիր—  
Կենդանի է դեռ հայության ոգին:
- 6 Եվ թարմ աղմուկով մանկունք մեր մատաղ  
10 Առաջ են խաղում լուսավոր տենչով,  
Եվ թնդում են դեռ հայի երգն ու տաղ  
Հարազատ լեզվով, հայրենի շընչով:
- Եվ իր փըլատակ տըների տակից  
Ելնում է ահա հզոր ժողովուրդ,  
15 Իր վեհ ճակատին տանջանք ու թախիծ,  
Խորունկ հայացքում մեծ կյանքի խորհուրդ:
- Ո՞վ դուք սրբազան Մասիս, Արագած,  
Էդ ձեր երկնամուխ գոհար թագերով,  
Եվ որ նրանցից վերև խոյացած  
20 Փայլատակում եք լույս-պըսակներով—
- Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք,  
Որ լըցրիք Հայոց աշխարհքն ու սրտեր

## ՔԱԶ ԿԻՎԻՎԸ

Ճախիններում, գետին մոտիկ,  
Գեղափետուր ու խատուտիկ,  
Բարձրասըրունք, ցըցունազարդ  
Ո՞վ է ճեմում սեգ ու հպարտ,—  
5 Կի՛-վի՛վ, Կի՛-վի՛վ...

Գեղափետուր ու խատուտիկ  
Քաջ Կիվիվն է գետին մոտիկ,  
Իր զինվորներն արթուն շորս դին—  
Ուրուրն ու բուն, բազեն ու ցին:

10 Ուրուրն ու բուն, բազեն ու ցին  
Լագլագի դեմ արշավեցին:  
Թկին արավ լագլագն ահից.  
«Ամա՞ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,  
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.

15 Ճաշճի միջին, առվի եզրին  
Մի հատ ոտիս կանգնած էսպես՝  
Քաջ Կիվիվի շըրվորն եմ ես»:

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին  
Ագռավի դեմ արշավեցին:  
Թկին արավ Ագռավն ահից.  
«Ամա՞ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,  
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.  
Սառի ծերին, սարին, քարին—

Սկեր հագած ծընած օրես  
25 Քաջ Կիվիվի երեցն եմ ես»:

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին  
Սագի վըրա արշավեցին:  
Թկին արավ Սագը ահից.  
«Ամա՞ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,  
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.  
Տիղմի միջին ու մարգերին  
Օրոր-շորոր, խոնարհ ու հեզ,  
Քաջ Կիվիվի տընտեսն եմ ես»:

Ուրուրն ու բուն, բազեն ու ցին  
Կըռունկի դեմ արշավեցին:  
Թկին արավ Կըռունկն ահից.  
«Ամա՞ն, ասավ, մի՛ դիպչեք ինձ,  
Ինձ ու մանրիկ իմ ձագերին.  
Ամեն աշխարհ, որ աշխարհին  
40 Գարունը գա՝ բանա հանդես—  
Քաջ Կիվիվի աշուղն եմ ես»:

## ՎԵՐՋԻՆ ՏԱԳԽԱՊԸ

- Վեր է կացել հին վիշտապը նոր թափով,  
Վեր է կացել վերջին մոլի տագնապով,  
Արյունըուշտ, ոճիրներով ահավոր  
Մահ է շընում լեռներն ի վեր ալեռոր:
- 5 Ու նրա դեմ ելած անզուսպ, անսահման,  
Հորձանք տալով ամեն կողմից՝ հայության  
Հին հույսերն ու հուզմունքը դարավոր  
Մասս են լինում լեռներն ի վեր ալեռոր:
- 10 Մասս են լինում քաջ խմբերով անձնվեր,  
Մասս են լինում տանջվողներով կիսամեռ,  
Մասս են լինում անընկճելի ու արի  
Մինչև ճերմակ գույխները լեռների:
- 15 Ու լեռները պառավ մոր պես վերստին  
Արնոտում են գլուխները իրենց հին,  
Միշտ խորհելով ամպերի տակ սեակնած,  
Որ հենց իրենց հառաշանքն են կուտակված:
- 20 Ու ամպերում, բարձըր ուսից Մասիսի  
Սլանում է մեծ արծիվը հյուսիսի  
Շիտակ դեպի բարձունքները հայկական  
Իր հետեից հայի բախտն ու ապագան:

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

- Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում  
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,  
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝  
Մըղկըտում է սիրտը անվերջ քո թառանչից աղեկեզ,  
5 Ու գաղթական զավակներիդ լուր շարքերից ուժասպառ,  
Ե՛կ գյուղերից, և շններից՝ տըխո՞ւր, դատարկ ու խավար,  
Զարկվա՞ծ հայրենիք,  
Զըրկվա՞ծ հայրենիք:
- Կըռնըվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,  
10 Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,  
Ու շարդարար ռհմակները աղաղակով վայրենի,  
Ավարներով, ավերներով, լընջուցներով արյունի,  
Որ դարձըրին քեզ մըշտական սկ ու սուգի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,  
15 Ողբի՛ հայրենիք,  
Որրի՛ հայրենիք:
- Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,  
Կանգնած խոհո՞ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու հընի.  
Հառաշանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու  
ՀԵՏ
- 20 Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում  
շարադեա,  
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհին  
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձըտում է մեր հոգին—  
Հույսի՛ հայրենիք,  
Լույսի՛ հայրենիք:

- 25 Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,  
Հազա՞ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
Կենսաժրպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,  
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,  
30 Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,  
Իմ նո՞ր հայրենիք,  
Հըզո՞ր հայրենիք...

### «ԶԵՌԱՅ»

- Արգո պարոններ, հայրեր սրբազան,  
Վաղուց ենք կովել ես ու իմ մուսան,  
Նրանից հետո էլ շեմ կարող ես  
Սահուն ու ձեռաց հորինել էնպես:
- 5 Արգո պարոններ, հայրեր սրբազան,  
Վաղուց ենք զոկվել ես ու իմ մուսան,  
Ես եկա դեպի աղմուկներն անվերջ,  
Քեֆեր ու ճառեր, ժողովներ ու վեճ,  
Դարձա թամադա ու քաղաքագետ...  
10 Իսկ նա ինձանից հեռացավ անհետ...  
Ասում են, իբրև, թափառում է նա  
Բյուրակնյան ծաղկու սարերի վրա.  
Ու չի մոռացել, գեռ հիշում է ինձ,  
Տանջվում է, մաշվում սիրուց, կարոտից:
- 15 Բայց ճամփաները շատ են արյունոտ,  
Զի կարողանում ետ դառնա ինձ մոտ:  
Երբ ճամփաները դիակների տեղ  
Բուրյան ծաղիկներ կփռեն շքեղ,  
Երբ էլ գաղթական չի լինիլ քաղցած  
20 Երբ խոսք ու ծողով կըլինեն բաց-բաց,  
Ողջի հետ հայն էլ կապրի ինքնորեն  
Ու կպահանջի, որ երգեր գրեն,—  
Նա ետ կդառնա նոր աշխույժ առած,  
Ես էլ էն օրը կգրեմ «ձեռաց»:

## ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

- Եփրատի ափին դեմուղեմ եկած՝  
Զարկվում էին խիստ, զարկվում ու զարկում  
Աննահանջ ու քաջ խըմբերը հայի  
Եղ քուրդն ու թուրքը կիտված արենխում:  
5 Երբ որ հոգնեցին երկար զարկվելուց,  
Երբ որ հոգնեցին բազուկները կուռ,  
— «Հե՞յ, ընկե՞ր, ասավ խըմբապետն արի,  
Հե՞յ, ընկե՞ր, ասավ, բարձրացի՛ր շուտով,  
Բարձրացի՛ր Հայոց բարձրը լեռների  
10 Ամենից բարձրը գագաթն ու նայի՛ր,  
Որտե՞ղ է, մի տե՛ս, վերջը թըշնամու...»  
Բարձրացավ շըլուտ հայդուկը հայի,  
Բարձրացավ բարձրը գագաթը լեռան  
Ու հոգնած ձեռքը դըրեց ճակատին.  
15 — «Խըմբապե՞տ, ասավ, ընկեր խըմբապետ,  
Տեսնում եմ հեռու հորիզոնները մութ  
Եփրատի դալար հովիտներն ի վար՝  
Մինչև Տավրոսի լեռները կապուտ,  
Մինչև մըշուշուտ պարը Պոնտոսի,  
20 Մինչև բարձրաբերձ ժայռերը Մոկաց...  
Սուխ է բարձրանում Մուշի հովիտից,  
Սուխ է բարձրանում Սասմա սարերից,  
Սուխ է բարձրանում Վանա կողմերից,  
Սուխ է բարձրանում Արաղա դաշտից,  
25 Կըրակ է կանգնած Զեյթունի վըրա...  
Ամեն կողմերից թըշնամին գունդ-գունդ  
Շարժվում է մեր դեմ, ու չի երևում,

- Զեմ տեսնում վերջը նըրա շարքերի...»  
— «Հե՞յ, ընկե՞ր, ասավ խըմբապետն այնժամ,  
Հե՞յ, ընկե՞ր, ասավ, ետ նայիր հապա,  
Ետ նայիր, մի տե՛ս, հայերը հեռվից  
Զե՞ն գալիս արդյոք մեզի օգնության...»  
Ու հոգնած ձեռքը դըրեց ճակատին,  
Կըտրիծ հայդուկը նայեց դեպի ետ.  
35 — «Խըմբապե՞տ, ասավ, ընկեր խըմբապետ,  
Տեսնում եմ ահա, ինչպես ափիս մեջ,  
Սև ծովից մինչև ծովը Վըրկանա,  
Մինչև Կովկասի պատնեշը ձյունոտ.  
Գալիս են խումբ-խումբ հայերը ճեպով,  
40 Գալիս են ճեպով մեզի օգնության:  
Իջնում են Սյունյաց մութ-մութ սարերից,  
Ելնում Գուգարքի խոր-խոր ձորերից,  
Շիրակի դաշտից մինչև Այրարատ,  
Ու ողջ ափերը Անուշ Արաքսի  
45 Անվերջ տագնապով իրար են անցնում...  
Գալիս են ամեն կողմից Կովկասի,  
Գալիս են հեռո՛ւ, հեռու կողմերից,  
Գալիս են կարոտ պանդուխտներն ամեն,  
Գալիս են ցըրված տըղերքը նորից,  
50 Գալիս են՝ պարզած դրդոշն հայրենի...»  
— «Հե՞յ, ընկե՞ր, ասավ խըմբապետը փորձ,  
Հե՞յ, ընկե՞ր, ասավ, սուր աշք ունիս դու,  
Նայի՛ր դեպ հյուսիս, ավելի հեռու,  
Զի՞ շարժվում արդյոք հյուսիսը հըզոր...»  
55 Ու նայեց հայդուկն ավելի հեռու,  
Նայեց սրբատես աշքով արծվենի:  
— «Խըմբապե՞տ, ասավ, ընկեր խըմբապետ,  
Աշքը չի կըտրում՝ որտեղից մինչ ուր՝  
Շարժվում է, ահա, հյուսիսն ընդհանուր.  
60 Հորձանք է տալիս ծովն ըռուսական,  
Հորձանք է տալիս ծանր ու ահավոր,  
Դեպի ամեն կողմ—ափերն հեռավոր.

- Եվ, հուր ու շոգի շընչելով ուժզին,  
Դընացքը կըտրած գընացքի ետե,  
65 Ու, գալարվելով հովիտից հովիտ,  
Գալիս ևն, ինչպէս վիշապներ սե-սե...»  
— «Հե՞յ, ընկե՞ր, կանչեց խըմբապետն արի,  
Հե՞յ, ընկե՞ր, կանչեց, դե՛ ցած եկ արագ,  
Առ հըրացանըդ, դաշտն իշիր շուտով,  
70 իշիր Սըրբազն ափը եփրատի.  
Հին պատերազմի վերջին զարկն է սա,  
Հին ոճրագործի հոգեվարքն է սա...»  
— «Խըմբապե՛տ, կանչեց, ընկեր խըմբապետ,  
Խըմբապե՛տ, կանչեց հայդուկը ջահել,  
75 Հայոց երկնաշաս լեռների վըրա  
Խո՞ր, խորհրդավոր ձայներ ևն լսվում.  
Դրդըրդում է խոզ երկինքը վերից  
էն անհուն, անքուն, անթիվ ձայներից...»  
— «Հե՞յ, ընկե՞ր, կանչեց խըմբապետը հին,  
80 Հե՞յ, ընկե՞ր, կանչեց, խաչ հա՛ն երեսիդ.  
Էդ կյանքում տանջված, տանջանքով մեռած  
Անթիվ, անհամար, անբախտ հայերի  
Հոգիներն ևն հեգ, որ լաց ու կոծով,  
Արյան մըրրիկով երկինք վերացան,  
85 Փոթորկում ևն դեռ աստծու առաջին,  
Բողոքում անհուն երկընքովը մին.  
Նրանց բողոքի աղմուկն է անլուռ,  
Հասնում է ներքե՛ հայի ականջին...  
Հե՞յ, ընկե՞ր, ասավ, խաչ հա՛ն երեսիդ,  
90 Առ հըրացանըդ, դաշտն իշիր շուտով,  
իշիր Սըրբազն ափը եփրատի,—  
Մեծ տառապանքի վերջին օրն է սա...»

- \* \*
- Շուռ է գալիս ծանր քարը  
Մեր մոր կրծքից տենչավառ,  
Վեր է կենում մեր աշխարհը  
Ավերներից անհամար...  
5 — Հե՞յ, ջա՛ն տղերք, ուս տվեք, ո՞ւս,  
Միահամուռ, միաբան,  
Հե՞յ, ջա՛ն տղերք, ուժ տվեք, ո՞ւժ,  
Քարը մոտ է գլորման:  
  
Մտիկ տվեք՝ ինչ վեհ պատկեր  
10 Մեծ հիացման արժանի,  
Էսքան դարեր նա քարի տակ  
Դեռ շընչում է կենդանի.  
Ու աշքերը, թեև լացուտ,  
Լիքն են կյանքով ու հույսով,  
15 Ու հույսերը, համակ ազնիվ,  
Լիքը բարով ու լուսով...  
— Հե՞յ, ջա՛ն տղերք, ուս տվեք, ո՞ւս,  
Միահամուռ, միաբան,  
Հե՞յ, ջա՛ն տղերք, ուժ տվեք, ո՞ւժ,  
20 Քարը մոտ է գլորման:

Տեսե՞ք, թեև ծվեն-ծվեն  
Ծիրանի է իր հագին

- Ու ցոլում է իր ճիգերեն  
Ազնվական իր հոգին...  
 25 Ամեն շարժում դեպի կյանքն է,  
Ամեն ձգտում՝ դեպի վեր,  
Աչքերն էն կողմ, ուր ծաղկում են  
Ընտիր ազգերն ու ցեղեր...  
 — Հե՞յ, ջան տղերք, ուս տվեք, ո՞ւս,  
 30 Միահամուռ, միաբան,  
Հե՞յ, ջան տղերք, ուժ տվեք, ո՞ւժ,  
Քարը մոտ է գլորման:

### ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

- Սըրտիս խորքերեն,  
Հովեն թե ծովեն  
Մի ձեն ևմ լըսում.—  
Ո՞նց է մի աղջիկ  
 5 Մեղմ ու հանդարտիկ  
Անվերջ արտասվում:

- Կոպիտ աշխարհ է,  
Մարդը միշտ շար է,  
Կյանք է կործանում,  
 10 Կյանքն էլ կործանված  
Որ անցավ գնաց,  
Էլ ետ չի դառնում...

- Սըրտիս խորքերեն,  
Հովեն թե ծովեն  
 15 Մի ձեն ևմ լըսում.—  
Ո՞նց է մի աղջիկ  
Մեղմ ու հանդարտիկ  
Անվերջ արտասվում:

- «Թամա՛ր... Ա՛խ, Թամա՛ր...»  
 20 Իզո՞ւր... ոչ մի բառ...  
Չի պատասխանում:  
Մերը որ կորավ,  
Միբար որ մեռավ,  
Արցունքն է մնում...

- 20 Սըրտիս իսորքերէն,  
Հովեն թէ ծովեն  
Մի ձեն ևմ լըսում.—  
Ո՞նց է մի աղջիկ  
Մւղմ ու հանդարտիկ  
30 Անվերջ արտասփում...

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը չին՝  
Վերջին հանգիստը կարդամ իմ ազգի անբախտ զռհերին,  
Որ շեն ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով  
Մարած են, մեռած, փրոված ու ցըրված հազար  
հազարով...

- 5 Ու կըրակ առա հայոց հրդեհի կարմիր բոցերից,  
Էն խաղաղ ու պաղ երկնքի ծոցում վառեցի նորից  
Մասիսն ու Արան, Սիփանն ու Սըրմանց, Նևմրութ,  
թանդուրեք,  
Հայոց աշխարհքի մեծ կերոնները վառեցի մեկ-մեկ,  
Սուրբ Արագածի կանթեղն էլ, ինչպես հեռավոր արև,  
10 Անհաս, աննըվագ, միշտ վառ ու պայծառ, իմ գըլիսի  
վերև...

- Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նըման,  
Լւանչեցի թըշվառ էն հոգիներին՝ ցըրված հավիտյան  
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Սովն հայոց,  
Մինչև Հելեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ:  
15 — Հանգեհք, իմ որբերու իղո՛ւր են հուզմունք, իղո՛ւր և  
անշահ...

- Մարդակեր գազան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...  
Աջիցըս հիփատ, ձախիցըս Տիգրիս՝ ահեղ ձեներով,  
Սաղմոս կարդալով՝ անցան, գընացին խոր-խոր ձորերով,  
Ամպերն էլ ելան Զիրավի ձորից, Հըսկա բուրվառից,  
20 ձանապարհ ընկան ծաղկանց սարերից, Հայկական  
պարից,

Բուլլ-բույլ, բուրավետ, շարժվեցին դեպի կողմերը հեռու,  
Գոհար ցողելու, ծաղկունք բուրելու, բուրմունք խընկելու  
Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Ծովն հայոց,  
Մինչև Հելլեսպոնտ, մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ...  
25 — Հանգե՞ք, իմ որբեր... իզո՞ւր են հուզմունք, իզո՞ւր և  
անշահ...  
Մարդակեր գաղան՝ մարդը՝ դեռ երկար էսպես կըմնա...

## ԲԱՐՁՐԻՑ

Իմ բարի սըրտի էն մեծ խոհերից,  
էն մեծ խոհերի անհուն խորերից՝  
Կամեցավ՝ ելավ իմ հըզոր հոգին,  
Որ բարձրից նայի աստծու աշխարհքին:

5 Ու պայծառ ցոլաց դեպ վերին այեր՝  
Մարդկային ամեն հընարքներից վեր,  
Վե՛ր ամեն շուրից և շամանդաղից՝  
Մինչև լուսեղին ոլորտն անթախիծ:

10 Ու իր հարազատ բարձունքիցը լույս՝  
Անշար, անշառ, անդորր ու անհույզ՝  
Պարզ, ամենատես հայացքովը նա  
Ճառագեց ներքե՝ աշխարհքի վըրա:

15 Տեսավ՝ աշխարհքը՝ գեղեցիկ, անվե՛րչ,  
Եվ հայրենիքներն անձուկ նըրա մեջ,  
Եվ աստվածները նըրանց զանաղան,  
Եվ սուրբերը խիստ, խըրտող ու դաժան:

20 Տեսավ՝ ուտում են ամենքն ամենքին.  
Ամեն հայրենիք՝ իրեն զավակին,  
Եվ իր պաշտողին՝ ամեն մի աստված,  
Եվ կյանքը տանջանք, ցավ՝ համատարած:

Ու ոչ մի երկիր չըկա հանգշելու—  
Խոր, արարշական հանգիստն անխըռով,

Ու ոչ մի անկյուն չըկա շընշելու  
Շունչն աստվածային՝ լի անվերջ սիրով...

- 25 Անպատում վըշտռվ վերըստին նայեց  
Իմ էս մեծ սըրտին՝ աշխարհից էլ մեծ,—  
Անսահման աշխարհ, և սեր ընդհանուր,  
Եվ մարդք ուրախ, և երգ ամենուր...

- Ու իշավ նորից էնտեղ հանգչելու—  
30 Խոր, արարշական հանգիստն անխըռով,  
Էնտեղ հանգչելու, էնտեղ շընշելու  
Էն մեծ խոհերով, էն անվերջ սիրով...

<ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ>

Մեզ մոտ եք Ակել ձյունի աշխարհից,  
Կոչում դեպ բարին, դեպ վսեմն ու սեր  
Մեր ցավոտ սրտում զարթնում են նորից  
Երշանիկ կյանքի իդձեր ու հույզեր:

- 5 Աշխարհից աշխարհ թռո ձեն տան իրար,  
Որոնք իշխում են մարդկանց սրտերին,  
Ազգերն ինչ ունեն աղնիվ ու պայծառ,  
Թող ի մի բերեն էս դառն օրերին:

- 6վ թող սրտերի դաշըն կապեն կուռ,  
10 Ամուր շաղկապեն անսահման սիրով,  
Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր,  
Կյանքը ջերմացնեն հոգեղեն հըրով:

- 6վ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝  
Թե ով ավելի ուժգին կրսիրի,  
15 Եվ թող մի մրցում լինի միշտ անվերջ՝  
Բարու, գեղեցկի ու վեհ գործերի:

- Եվ բանաստեղծի խոհերն իմաստուն  
Քանդի խոսքեր չեն ապարդյուն ու սին,  
Եվ բանդի մարդք կարող է մարդուն  
20 Սիրեւ—երշանիկ ապրել միասին:

## ՆԺՈՒԽԻ ՀԱՆՐԵՊ

Հո՞ւշ. Հասավ օրը՝ վերջին, ահավո՞ր:  
Սըրով ու Հըրով բացվում են կար  
Հայոց զբժոխքի դրուերն ամրափակ.  
Սարսափի պիտի աշխարհքը համակ.  
5 Եվ մարդն ամաչի գիլից ու շանից,  
Որ մարդ է ծրնվել՝ մարդու նրմանից:  
Ո՞ւ, ինչքան մութն է, զարշահոտ ու պաղ...  
Ինչքան ոսկորներ, կըմախներ անթաղ...  
Էլ ի՞նչ կա հեռվում... հեռվի խավարում...  
10 Եվ է, իմանում... ում աշքն է, զորում...  
Մեջահղը մենակ, մեսուտ բարձունքին,  
Կանգնած է մայրը հողմերի տակին.  
Որու արցունը իր ձեռքն են տըվել.  
— Խրմիր սուլթանի կենացը զու էլ...  
15 Եվ նա, որ մարդ էր ու մայր էր երեկ,  
Այժմ, էն մայոին կանգնած կիսամերկ,  
Անուժ ու ապուշ խելագար է մի,  
Բաժակը ձեռքին, որ պիտի խրմի...  
Կանգնած է մենակ, և լոկ մոլեզին  
20 Հողմերն են ոռնում, ու նբրանք շորս դին...  
Բայց՝ հո՞ւշ. լոռութո՞ւն... մրթին, ահավոր  
Երկինք են նայում կրմախները շոր,  
Ու իրենց կարկամ շրբունքները բայց  
Խո՞սք են ասելու աշխարհքի դիմաց,  
25 Խոսք, որ չի լրաված դեռևս լուսնի տակ...

Սարսափի պիտի աշխարհ: բովանդակ  
Եվ մարդն ամաչի գիլից ու շանից  
Որ մարդ է ծրնվել՝ մարդու նրմանից:

## ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ (ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

Բարելոնի գևտեզերքին նրստել էին նրանք գերի,  
Հիշում էին իրենց Սիոնն, Երուսաղեմն ու լալիս,  
Կախել էին տավիղները վեր՝ ճյուղերին ծառերի,  
Հիշում էին անցած փառքերն, անցած երգերն ու լալիս:  
5 — Առե՛ք տավիղն, երգե՛ք, տեսնենք երգերը ձեր Սիոնի.  
Ասում էին գերիշները հսրայելի որբերին,  
Ու՝ սըրբելով նըրանք լացը իրենց տիտոր աշքերի՝  
Տավիղ առած երգում էին օտար գետի ափերին:  
— Ո՞վ սըրբազան Երուսաղեմ, ըսկիզբը մեր երգերի,  
10 Եվ քեզ, Սիոն, մեր սըրբություն, թե մոռանանք մենք  
երբեք,  
Թող մոռանա մեզ մեր աջը, հավետ մընանք մենք գերի,  
Թող շըտեսնենք մենք հավիտյան ոչ խնդություն և ոչ երգ...  
— Ո՞վ անօրեն զու Բաբելոն, երնեկ բազկին ոխառու,  
Որ կըզարկի աշքիդ առաջ զավակներդ քարերի,  
15 Երնեկ օրին, երբ կըզարթնի հսրայելի եհովան  
Ու կըլսի հառաշանքը մեր գերեզար քընարի...  
Էսպես նըրանք երգում էին իրենց վըրեժն ահարկու,  
Ու զարմանքով հարցնում էին գերիշները մեկմեկու.  
— Մի՞թե դեռ էլ կենդանի է հսրայելը աշխարհում,  
20 Մի՞թե նըրան ըսպանեցինք պատերազմի դաշտերում...

**ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ  
(հոդվածի փոխարեն)**

Երբ խոսում են Վըրաստանի  
Թըշնամանքից արյունոտ,  
Զարմանք է ինձ պատում հայտնի,  
Եվ խորին ցավ, և ամոթ:

5 Ո՞չ ապաքեն զիտեն նըրա  
Ոսոխները մինչ անգամ,  
Աղ ու հացն է սիրել միշտ նա,  
Միշտ աշխարհքին բարեկամ:

10 Թես պատաժ հազար վերքով՝  
Շատ ցավեր է նա տարել,  
Բայց խաշակիր իրեն ձեռքով  
Դեռ ոճիր չի կատարել:

15 Եվ իր ձեռքը եթե համառ  
Տարածում է հին վըկան,  
Ոչ թե դաժան գործի համար,  
Այլ դեպ պայծառ ապագան:  
  
20 Եվ ի՞նչպես չեն տեսնում ոմանք  
Նըրա ընթացքն աննըկուն,  
Ո՞նց են ասում.—իր բախտի տակ  
Նա ընկել է անկանգուն:

Ո՞չ ապաքեն Կովկասն անսաստ  
Պատ է կանգնած մինչ երկին,

Որ շԾաղթի բուքը նըրան,  
Ինչքան սուրա մոլեգին:

25 Ո՞չ ապաքեն Պոնտոսը հար  
Շունչ է հոսում հով ու զով,  
Որ նա հավետ մընա դալար,  
Խորշակներից ապահով:

30 Եվ չե՞ն լըսել դեռ վըրացու  
Երգը զըվարթ ու անհոգ,  
Ո՞նց է ծաղրում նա մահացու  
Ամեն հարված անողոք:

35 Երբ խոսում են իր անկումից,  
Թըշնամանքից արյունոտ,  
Զարմանք է ինձ պատում անվերջ,  
Եվ խորին ցավ, և ամոթ:

ԱՆՈՒԾԻ ԱԼԲՈՄԻՑ

- \* \* \*
- Շնորհավոր  
իրեն պես նոր  
Տարին ու օր  
իմ թամարին.
- 5 Անվերջ, անհատ,  
Առաստ-առատ  
Ու անարատ  
Սերն ու բարին  
Փըսվեն, փարին,
- 10 Փըթթեն, բուրեն  
Ամբողջ իրեն  
Ճանապարհին,

Երազեցի շարունակ  
Իմ կյանքի մեջ ես մանկուց,  
Ու մընացի միշտ մենակ  
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

- 5 Ես լըգուա ոչ մեկին  
Երազներից իմ շըքեղ,  
Եվ ոչ մի մարդ, ոչ մի կին՝  
Հերոսներից իմ շըքեղ:

- 10 Երազեցի շարունակ  
Իմ կյանքի մեջ ես մանկուց,  
Ու մընացի միշտ մենակ՝  
Պատրանքի մեջ՝ ես մանկուց:

## ԳՐԱԴԱՐԱՆԸ

Բազմած են շուրջըս նըրանք ամեն օր—  
Բոլոր հանճարեղ մեծերն աշխարհի,  
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր  
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:  
5 Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,  
Ու հաց են ուզում ինձանից, ու շորւ

## ԱՐՓԵՆԻԿԻՆ

Հիշում ևս թորժումն, այժյամնե՞ր, ժայռե՞ր...  
Ինչպես որ թողիր՝ էս ժամին էլ դեռ  
Վայրենի՛, չըքնա՞ղ կանգնած են ու կան,  
6 Եվ հիշում են միշտ էն զիծ աղջրկան,  
Որ իր կուսական զըվարթ աղմուկով,  
Արժաթ ծիծաղով, ճիշով ու երգով  
Լըցնում էր անտառն իրենց շըրջակա—  
Ու... հիմա չըկա՞... ու հիմա չըկա՞...

## ԱՐՓԵՆԻԿԻ ԱԼԲՈՄԻՑ

- Դու շըգիտե՞ս՝  
Ինչու եմ ես  
Անբուժելի  
Տըխուր էսպես:
- 5 — Ինչ ունեի լավ ու պայծառ՝  
Հնկա՞ն, հանգա՞ն մի-մի, մի-մի.  
Օրորանս էլ՝ միակ, որ կար,  
Արնոտ եղավ ու թըշնամի...
- Դու շըգիտե՞ս՝  
Ինչու եմ ձեզ  
Քընարիս հետ  
Գըրկել էսպես...
- Մըթնեց հոգուս երկինքն անհուն,  
Սիրտըս պատեց մեծ շափառուկ.
- 15 Մեռա՞ն, կորա՞ն շուրջս ու հեռուն,  
Քընարս է լոկ մնացել... և դուք...
- \* \* \*
- Մայրըդ էն օրն ասում էր ինձ,  
Թէ՝ զուր թողիր տունը ձեռից,  
Էնքան էժան ու էնքան հեշտ,  
Էնքան հարմար, անհըրաժեշտ...
- 5 Նա տակավին չի իմանում,  
Թէ աշխարհն էր ինձ պատկանում.  
Նույնիսկ ձըրի, առանց փողի,  
Սիրտըս շուզեց—ձեռից թողի...

## ՆՎԱՐԴԻ ԱԼԲՈՄԻՑ

Հուսապրսակ  
իմ Արուսյակ,  
Ի՞նչ գեղատես  
Ու ի՞նչ դըվարթ  
5 Վառվըռում ես  
իմ աստղազարդ,  
Պայծառ ու պերճ  
Դիշերվա մեջ...

Այո՛, թեհ  
10 Չեղավ արկ  
էս պաղ կյանքում  
Ու երկընքում,  
Բայց բյուր արեգ  
Ու բյուր ցերեկ  
15 Միշտ արժեր  
էսքան շրբե՛ղ,  
Հրբաշագե՛ղ,  
Մի դիշեր...

Կանցնեն օրերն, Անուշ ջան,  
Կանցնի քո հերն, Անուշ ջան,  
Ու կըտանի իրեն հետ  
Իր ցավն ու սերն, Անուշ ջան,  
5 Ցավը՝ անտակ ծովի պես,  
Սերը՝ անհազ սովի պես.  
Ծովի միջին ու սովի՝  
Անբախտ Սայաթ-Նովի պես:

Քոշաքարում ես վազել եմ  
Եղնիկի հետ երազ, Անուշ,  
Զըմբուխտ սարում երազել եմ  
Չընաշխարհիկ երազ, Անուշ:

- 5 Զըմբուխտ սարը ամպէ է պատել,  
Իմ արևի լույսը վատել,  
Աստծուն ինդիրք արի շատ էլ՝  
Ինձ շըտըվեց մուրազ, Անուշ:

- 10 Իմ մուրազը շատ էր շըտեղ,  
Դըրախտ պիտեր քաղաք ու գեղ.  
Երզը հոսեր հառաչքի տեղ,  
Սերն ու բարին՝ Արազ, Անուշ:

- 15 Շատն են եկել էսպես անցել,  
Հաղար ափսոս էն մարդկանց էլ.  
Ես էլ կերթամ, վեր եմ կացել,  
Էսքան վաղ ու վըռազ, Անուշ:

Երկար, Երկար ման եկա  
Ոտքով, մըտքով ես կյանքում,  
Երկու, երկու բան գըտա  
Զար ու դըժվար էս կյանքում:

- 5 Վաղուց, վաղուց կար ասված,  
Բայց կյանք տրվի ես բարին.  
Դարձավ, դարձավ ինձ աստված՝  
Գեղեցիկը ու բարին:

- 10 Դըստրիկ, դըստրիկ իմ անգին,  
Դու գեղեցիկ ու բարի,  
Աշխույժն, աշխույժն իմ կյանքի  
Եկ իմ վըշտոտ քընարի:

- 15 Նայի՛ր, նայի՛ր սըրտաբաց  
Էս լեն արձակ աշխարհին  
Առատ, առատ տարածված  
Գեղեցիկը ու բարին:

- 20 Էսքա՛ն, էսքա՛ն մոտ ու շատ  
Բախտը փըռված մեր կյանքում,  
Մարդը, մարդը՝ միշտ անբախտ՝  
Որոնում է երկնքում:

## ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտաշկ, անծեր,  
Ես հարուստ եմ, զան, ես հարուստ.  
Սով բարություն, շընորհք ու սեր  
Հոլիս պարգև եմ առել վերուստ։

5 Անհուն հանքը իմ գանձերի,  
Սիրոս է առատ, լեն ու ազատ.  
Ինչքան էլ որ բաշխեմ ձըրի—  
Սերն անվերջ է, բարին՝ անհատ։

10 Երկյուղ շունեմ, ահ շունեմ ես  
Գողից, շարից, շար փորձանքից,  
Աշխարհքով մին՝ ահա էսպես  
Շաղ եմ տալիս իմ բարձունքից։

15 Ես հարուստ եմ, ես բախտավոր  
Իմ ծընընդյան պայծառ օրեն,  
Էլ աշխարհ շեմ գալու հո նոր,  
Իր տրվածն եմ տալիս իրեն։

## ՏԻԿԻՆ ՆԻՄՖԱՆ ԳՈՐՈԴԵՑԿՈՒՆ

Հյուսիսի կողմից,  
Խստաշունչ հողմից  
Եկաք դուք մեզ մոտ,  
Մեր անհոգ, ուրախ  
5 Ու զոռով խաղաղ  
Երկիրն արևոտ։

Եկաք ու ընկաք  
Մի նոր դրժշնդակ  
Փոթորկի առջեն,  
10 Ուր կիտվում են դեռ  
Ահեղ, շանթարեր  
Ամպերը սե-սե։

Մեղ մոտ էլ ավաշղ.  
Արև ու խաղաղ  
15 Անկյուն շըկա էլ,  
Ուր որ կարևնանք  
Գոհ ու անվըտանգ  
Զեղ պահել, շահել։

Արևն ու լավ օր,  
Երազուն ու իսոր  
Մեր սըրտումն են արդ,  
Իսկ դուք, մեր փերի,  
Գիտեք սըրտերի  
20 Ճամբաները բարդ։

- 25 էնտեղ ապրեցեք  
 Ու էնտեղ կացեք  
 Մեզ հյուր թանկագին,  
 Դըրանից ավել  
 Չի էլ գըրավել  
 30 Դեռ կյանքում մի կին.

### ՊԱՏՐԱՆՁ

Վեր է կացել էն սարում  
 Մեր ջալակը իր թկից.  
 Գընում է մութ անտառում,  
 Քաջ ախպերըս ետևից:

- 5 Զըրնգում են նըրանք խոր  
 Էն անտառում կուսական.  
 Ես կանշում եմ նորից նոր,  
 Ինձ թրվում է, թե կըգան...

- 10 Ջուր... վաղուց են, աշխ, նըրանք  
 Մեր սարերից գընացել.  
 Էն զիւ ձեներն են մւնակ  
 Իմ ականջում մընացել...

## Ս. ՆՈՒԽԵԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՌԱՋ

Խունկի բորյան մըշուշներում,  
Մըրմունջներով պատած երգի՝  
Կանգնած է նա կապույտ հեռվում՝  
Վարդը կյանքի, հարսն երկընքի,  
5 Եվ շըգիտեմ՝ աղո՞թք անեմ,  
Թե՞ ըզմայլեմ իր գեղի դեմ։

Համակ շընորհք ու սըրբովթյուն,  
Նայում է լուռ՝ լուռ սըրտիս մեջ,  
Լուս հայացքի խորքում անհուն  
10 Վառված սիրո կըրակն անշեց...  
Եվ ո՞վ կասի՝ կըրա՞կն է շատ.  
Թե՞ սըրբովթյունն իր անարատ։

Խաչ է բըռնած իր կույս ձեռին,  
Որ նըման չի ոչ մի խաչի,  
15 Ու որթն, ասես, աստվածային,  
Պիտի շընչի ու կանաչի.  
Մի նըշանում կապված հանդարտ՝  
Տանշանքը վեհ, կյանքը զրվարթ։

Մութի թւթե օող է իշել  
20 Պայծառությանն իր իրկնային,  
Վշտի ամպից լուս ճածանշել,  
Լուսն ըսքողվել վշտովն իր հին.  
Ու շարիքն էլ, ասես, անկար,  
Չարդ է դարձել իրեն համար։

25 Ա՛խ, առնեի եղբոր ձեռով  
Բախստի ձըգած քողը աըրտում,  
Որ նա հառներ իր ողջ գնդով,  
Ապրեր անփութ էն ճոխ հովտում,  
Վերին Պուտն ուր որ նըրան  
30 Կերտեց, դարձավ ապշեց վըրան։

## ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԻՆ

- Զէ՛, մի լըոել մեծ Շոթայի  
Երգի ձենը կաթոգին  
Ու դարավոր ցավն ամեհի  
Չի խորտակել էն հոգին:
- 5 Թընդում է դեռ նոր ձեռքերում  
Էն քընարը գովանի,  
Խընդում է դեռ նոր երգերում  
Վըրաստանը գեղանի:
- Ողջո՞ւն, ողջո՞ւն ձեզ հին ու նոր  
10 Արի, բարի ընկերներ,  
Արարատի կողմից էսօր—  
Եղբայրական երգ ու սեր:
- Հի՞ օրերի վերջալուսին,  
Արշալուսին նոր կյանքի  
15 Երգենք սըրտանց ու միասին  
Երգը հանուր բերկրանքի:  
Քարձը՝ հընչի մեր երգը թող,  
Չարի ձենը խըլացնի,  
20 Հընչյուններով, իր կախարդող  
Երկրե երկիր թող անցնի:  
Ամեն կողմից թող ամենին  
Հըրապուրի ու բերի

Բազմալեզու խըրախնանին  
Մեր կովկասի ազգերի:

- 25 Ելնե՞նք՝ տեսով ու ճանաշով,  
Ընկեր, ախաղեր, մեր ու քուր՝  
Մեր քյամանշով, ուրախ կանշով  
Գընանք դեպ կյանքն ընդհանուր:

- Շատ, շատ արցունք թափվեց մեզնում,  
30 Մէն մի կաթիլն—մի խըրատ,  
Անլուռ, անդուլ էն է ասում—  
Ճամփա շոնի գործը վատ:

- Թող՝ ով կուզի՝ երկար-բարակ  
Ջոռ տա խելքին մինչև մահ,  
35 Մէնք իմաստոն—սիրենք, խնդանք,  
Կյանքը էս է, ինչ որ կա:

- Զարկե՞ք ուժգին մեծ Շոթայի  
Էն քընարը ոսկելար,—  
Մարդը ինչ տա — էն կըշահի  
40 Թող իմանա ողջ աշխարհ.—

- Տեսնի քանի նոր ձենով է  
Խոսում մուսան էս երկրում,  
Պատգամներով պայծառ ու վեհ,  
Հազար ու մի երգերում:

- 45 Ողջո՞ւն, ողջո՞ւն ձեզ հին ու նոր  
Արի, բարի ընկերներ,  
Արարատի կողմից էսօր—  
Եղբայրական երգ ու սեր:

\* \* \*

Զըվարթ երամով դուք եկաք ինձ մոտ  
ինչպես գարունքվան օրերը ծաղկուտ,  
ինչպես տարագիր հավքերը՝ երգով  
Կանցնեն իմ հոգու աշնան երկընքով:


- 5 Եկաք ու կերթաք, ինչ որ կըմընա,  
էս լավ գիշերվան հիշատակն է նա,  
Զէ՞ որ հուշերն են թանկ գանձերը մեր—  
Ա՞խ, ինչ գանձ բերիք էսօր ինձ նըվեր:

### ՏԻԵԶԵՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

- Որ հայացք ես ինձ տըվել վերամբարձ՝  
Սուզվելու վերին սահմաններն արփի,  
Որ միտք ես տըվել երկնաճեմ ու բաց՝  
Չափելու ահեղ բացերն անշափի,
- 5 Որ կապել ես մեզ, հոգիս քեզ արել՝  
Հոգուս անհունի հըրճվանքը տալով,  
Բարձըր ճակատիս ժրպիտ ևս վառել,  
Վառել, զարդարել արփենի փայլով,
- 10 Անթարթափ աշքով, անխարխափ հոգով  
Կարդում եմ քո վեհ ազդումներն անվերջ,  
Կարդում եմ պայծառ, ուրախ ցերեկով,  
Ու գիշերները ահավոր ու պերճ:
- 15 Վերանում է վեր հոգիս զըվարթուն—  
Զըկա մոտ ու տար, լըկա վեր ու ցած,  
Տիւզերքն ամբողջ հայրենիք ու տուն,  
Ու ես մի ազատ՝ անտարբեր աստված:

- Սիրիոնի Հրաժեօծը
- Սիրիոն, երկնից ահեղ անցվոր,  
Ո՞ւրկից եկել,  
Ո՞ւր ես թեքել,  
Ո՞ւր ես ճեպում էղքան հըզոր,  
5 Անձառ թափով,  
Անձեր ճամփով,  
Դարե՛ր, դարե՛ր հազարավոր:
- Սիրիոն, երկնից շըքեղ գոհար,  
Որ խաղում ես,  
10 Փաղիաղում ես  
Ճերմակ ու բիլ լուսով քո վառ  
Ու զարդարում,  
Զըվարթ վառում  
Մեր գիշերվան ճակատը մառ—
- 15 Ի՞նչքան աշք են վըրադ հառել,  
Նայում են քեզ  
Հիմի մեզ պես,  
Ի՞նչքան աշք է նայել, մարել,  
Եվ կամ ի՞նչքան
- 20 Դեռ պիտի գան,  
Որ անհայտից կյանք շեն առել:  
Ո՞վ առաջինն ասավ ողջերթ  
Քեզ մեր հողից,  
Մարդու ցեղից,

- 25 Կամ ո՞ւմ աշքում պիտի անհետ  
Մի օր հատնի,  
Մարի, մըթնի  
Հըրաժեշտի շողըդ հավետ...
- 30 Բարի ճամփա՛, հյուրըդ մեր հին,  
Եվ թե տեսնես՝  
Մեղնից էսպես  
Մի հարցում տուր հըզոր մահին.  
— Մարդու քանի՞  
Մերունդ կանի  
35 Մի հըրաժեշտն աստեղային,



ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԵՎ ՀԱՏՎԱԾՆԵՐ



## ՕՐՈՌՔ

Քնե՛, քնե՛, իմ որդի,  
Աւելըդ խուփ, շըբանաս,  
Որ քո թշվառ հայ ազգի  
Դառն ցավերը շըտեսնաս.

5 Քնե՛, գուցե երազում  
Տիրոջ բարի հրեշտակը  
Քեզի պատմե, թե ինչպէս  
Պիտի փրկվի քո ազգը.

10 Քնե՛, գուցե քեզ ասե  
Նրա իւղճության պատճառը,  
Քնե՛, գուցե նա ասե  
Նրա փրկության ճարը.

15 Գիտե՞ս արդյոք, գառնուկս,  
Անցան դարեր այն օրից,  
Երբ քո ազգը զրկվեցակ  
Իրան շքեղ աթոռից.

20 Տարիք ու դարեր անցան,  
Այլոց է լուր ծառայող,  
Այդ առթիվ դառնաճաճան  
Վիճակն էլ կա անփոփոխ.

Քնե՛, քնե՛, հոգվույս հատոր,  
Ուրախություն իմ միակ,

Քնե՛, կասկմ քեզ օրոր,  
Զըտէսնես նրան ավերակ.

1883

25 Մի պատկեր է նա տխուր,  
Աչքերն արցունք, ինքը լուռ,  
Մի սուր է մեր սրտի մեջ,  
Մեղ այրելու հուր անշեշ.

Նրա հիմքը քանդելու  
30 Շատ, շատ դարեր տանջեցին  
Տանիկ, պարսիկ, հույն և քուրդ  
Մինչև վերջը քանդեցին.

Եվ այն օրից մինչ այսօր  
Տկլոր, բորիկ ու քաղցած  
35 Թափառում է սարե ձոր  
Անգութներից հալածված.

Ապա, քնիր, անուշ զավակ,  
Աշքդ խփիր, զըբանաս,  
Որ քո թշվառ հայ ազգիդ  
40 Դառն ցավերը ըլտեսնաս:

### ՀԱՅ ՎԱԾԱՌԱԿԱՆ

Հայ վաճառական, հայ վաճառական,  
Խարիր ու զրկիր աղքատ եղբորդ,  
Հարամ ոռնիկով լից քո գանձարան,  
Ու միշտ կուշտ պահիր ուսած մեծ փորդ.

5 Քեզ ի՞նչ փուլթ, ասա, թե ազգդ խեղճ է,  
Շատ հարկավոր է թե նա չունի հաց,  
Քեզ ի՞նչ փուլթ, թե եղբայրդ մեղք է,  
Միայն քո փորդ լինի տկրզած.

9 Քեզ ի՞նչ փուլթ, ասա, թե խեղճ վանեցին  
10 Հեծում է սոված, տուն ու տեղ թողած,  
Տանջվում է տաճկի ու քրդի ձեռքին,  
Միայն քո փորդ լինի տկրզած.

Քեզ ի՞նչ՝ շինվում է հայ ուսումնարան,  
Իր ուսում առնի տգեստ հայ տղան,  
15 է՛, օշոյ ույջիո, խավար մնա Հայաստան,  
Տրիցատկի համար պինդ պահիր լուման.

Կողքիդ է տիկը, գրպանդ լիքը,  
Քեֆ արա, ի՞նչ բան է հայրենիքը.  
Քեղ ի՞նչ՝ անուսում մնան հայ որդիքը,  
20 Թող նրանց զարդը բաշեն հայ մարդիկը.

Կուշտ է թափանդ, լի է գրպանդ,  
Ամենը թամամ է, բայց վատ է բանդ—

Աղքատ մշեցին կանգնած է դռանդ.  
«Աստված տա»—ո՞վ է կապում բերանդ.

25 Հայ վաճառական, շուտով փախիր տուն,  
հաւարի միջի հմուտ ղեկավար,  
Որ ժապավինյալ ցուցակ են բերում  
Սովատանց Եղբարցդ՝ վանեցոնց համար.

\* \* \*

Դե՛մ, գառնազգեստ գայլին դու նման,  
30 Խաբիր ու զրկիր աղքատ Եղբորդ,  
Աշքերը կապիր, առ վերջին լուման,  
Գուցե նրանով լցնես մեծ փորդ.

Միայն գիտենաս, հայ վաճառական,  
Հեռու չե օրը, օրն օրհասական  
35 Նա կրգա շուտով և գաբրիելյան  
Փողը կըկանչե և քեզ դամբարան.

Մահից չի փրկիլ քեզ ժանգոտ փողը,  
Մարմինդ կրկլանե անգոպ սե հողը,  
Ամեն բան կանցնի և կանհետանա,  
40 Միայն բարի անունն այստեղ կըմնա:

Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ,  
Դարձյալ կըգս գարուն քաղցրիկ,  
Կըպճի կրկին մեր հայրենիք,  
Կըկանաշեն դաշտեր, լեռինք,

5 Հայնժամ գայցեն դեպ Արմենիա  
Մարավ, նոթի որդիք նորա.

Երբ որ արևն Հայաստանի  
Զվարթ, ուրախ, պայծառ փայլի,  
Երբ որ դաշտըն Ավարայրի  
10 Կրկին կներկվի արյամբն հայի,  
Հայնժամ գայցեն դեպ Արմենիա  
Մարավ, նոթի որդիք նորա...

Երբոր Ղեռնդ ու Ներսեսներ  
Կըլնեն ազգիս առաջնորդներ,  
15 Երբոր կանցնեն դառն ժամեր.

Հայնժամ գայցեն դեպ Արմենիա  
Մարավ, նոթի որդիք նորա:

հոցալից սրտով մայր իմ Հայաստան.

25 Շրջիր աշերդ,  
Որդիքդ ցրված են,  
Ժողովիր բաշերդ՝  
Արցունքդ կըսրբեն,

\* \*

Ինչո՞ւ ես տխուր,  
Թշվառ Հայաստան,  
Է՞ր է զիզըդ ծուռ,  
Մայր իմ սիրական.

5 հոցալից սրտով մայր իմ Հայաստան.

Ինչո՞ւ աշերդ  
Լի են արտասուք,  
Է՞ր ես խեղճ նայում  
10 Դեպի արևմուտք.

հոցալից սրտով մայր իմ Հայաստան.

Դուն ես լավ զիտես,  
Որ արևմուտքեն  
15 Օգուտ շըկա քեզ  
Զատ անբույժ վերքեն.

հոցալից սրտով մայր իմ Հայաստան.

20 Թշվառ Հայաստան,  
Քաջաց դամբարան,  
Անջուր բուրաստան,  
Իւղճ, անօգնական:

«ԹՈՂ ՓԶԵ ՔԱՄԻՆ» ԵՐԳԻ ԵՂԱՆԱԿԱՎ

Հուսնկա գիշեր.  
Պայծառ երկնքում  
Չկային սև ամպեր.  
Աստղերն էին փայլում:

- 5 Հանդարտ ու տիսուր  
Լուռ էր բնություն,  
Չի ամենայն ուր  
Մորփեն էր տիրում:  
  
10 Այդ ժամին, ընդարձակ  
Արարատ դաշտով,  
Մի տիսուր չակ  
Գնում էր ճեպով:  
  
15 Մուսեցա նորան.  
Ա՛խ, տեսնում եմ մի  
Գեղեցկատիպ ու  
Զվարթ պատանի:  
  
20 Ո՞ւր ես շտապում,  
Առա՛, պատանի,  
Անունդ, ազգանունդ,  
Այսպես հարց արի:  
— Դեպի Հայաստան,  
Պատասխանեց ինձ,

նորան օգնության,  
Ճավին կարևկից:

- 25 Դեպ սրտիս միակ  
Սիրած առարկան.  
Անունս՝ Աղեքսանդր,  
Ազգավ՝ Գոլոշյան:

- 30 Երբ «դեպ Հայաստան»  
Բաւը լսեցի,  
Ճարմանք ինձ պատեց,  
Եվարած մնացի:

- 35 Փա՛ռք քեզ, տեր աստված,  
Մտքումս ասացի.  
Տաքացավ սառած  
Արյունն հայ ազգի:

- 40 Եվ էլի դարձա  
Ես դեպի նորան,  
Այսպես խոսեցա  
Զայնիվ հեգնական.

- 45 Դարձի՛ր, պատանի,  
Փոխի՛ր ընթացքդ.  
Համապատասխան  
Չէ ուժիդ միտքդ:

- 50 Զմեռն է սաստիկ  
Հայաստան երկրի.  
Դու միակ ծաղիկ,  
Դարուն չես բերի:  
Ամայացած է  
Հայաստան աշխարհ.  
Հայը ցրված է  
Երկիրներ օտար:

Անցյալն է ողբում  
 ևնդ բուն շարգուշակ.  
 55 Գյուղեր, քաղաքներ  
 Կան ողջ ավերակ:  
  
 Ծնողը, աղքական,  
 Եղբայր ու քույրեր,  
 Քեզ են սպասում  
 60 Անդուլ, անհամբեր,  
  
 Դարձիր, պատանի,  
 Թո՞ղ այդ մտքերդ,  
 Քեզ են միշտ խնդրում  
 Բարեկամներդ:  
  
 65 Բացեց բերանը,  
 Խոր հոգվոց հանեց,  
 Երկու աշերից  
 Զուրդ արցունք կաթեց:  
  
 — Քնկերությանն այն,  
 70 Որին երդվեցա,  
 Սրտովս ամենայն  
 Հպատակ, ծառա:  
  
 Ա՝ի, չկա հնար  
 Այլևս բաժանման.  
 75 Վճռած է արդեն՝  
 «Դեպի Հայաստան»:  
  
 Ես իրագործել  
 Կամիմ մի սուրբ միտք,  
 Միայն քավ մոռնալ  
 80 Ծնողը, ընտանիք:  
  
 Այսուհետ պիտ լինի  
 Իմ բարձս չոր քար

Ռւ վառ լապտերս՝  
 Կուսինը պայծառ:  
  
 85 Շքեղ դահլիճս՝  
 Մոսկ անտառները.  
 Փափուկ մահիճս՝  
 Կանաչ խոտերը:  
  
 90 Փափուկ վերմակս՝  
 Մասյլ ամպերը.  
 «Ղույթուկ դոշակս»՝  
 Կանաչ դաշտերը:  
  
 95 Մայրական «որդյակ»  
 Քաղցր բառի տեղ,  
 Կսեմ որոտ, կայծակ  
 Այսուհետև թող:  
  
 Եվ զի այն որոտ  
 Հայաստանինն է.  
 Ինձ համար անշուշտ  
 100 Հարածամ քաղցր է:  
  
 Որսաք ծեր Մասյաց  
 Ճերմակ գագաթեն  
 Թւ լսեմ, անկասկած  
 Ինձ համար քաղցր են:  
  
 105 Դե՛մ, գնաս բարյավ,  
 Գնա՛, Տեր ընդ քեզ,  
 Միայն հեգացյալ  
 Մորդ միշտ հիշես:  
  
 110 «Նատալիա» անունն  
 Մոքումդ ունենաս,  
 Ժամեժամ սպասում  
 է քեզ, իմանաս:

- Արև է մտնում,  
Իրիկուն գալիս,  
115 Միշտ քեզ է հիշում  
Աստղեր տեսնելիս:

Ամեն իրիկուն  
Լուսնին նայելով  
Անոնդ է հիշում  
120 Ու ասում լալով.

«Ա՞խ, երանի քեզ,  
Ո՞վ պայծառ լուսին,  
Որ միշտ տեսնում ես  
Իմ Աղեքսանդրին»:

### ՆԱՀԱՊԵՏԻ ՈՂԲԸ

Այս ի՞նչ ձայն է գալիս բարձրից, այս ի՞նչ կռուց է  
տխուր,  
Այն ի՞նչ շղթա վեր եթերքում, սլանում է դեպի ո՞ւր.  
Ա՞խ, քեզ տեսնեմ, սիրուն կռունկ, անցյալ գարնան է՝  
իմ հյուր.

5 Ինչո՞ւ նախկին բնեղ ելար, դեպ մեզ իջար, ա՞խ, ի զուր...  
Կռունկ, ի տար, օ՞ն,  
Դեհ, դեպի Տարոն  
Թռի՛ր, սլացի՛ր,  
Գնա հեռացիր:

Այս, ծիծեռնակն էլ եկել է, տեղ չի գտնում բուն շինի,  
10 Օճորք շըկա, ողջ քանդվել են, ավերակումն ի՞նչ անի.  
Քեզնից վերև, տե՛ս, արծիվը պտտվում է, զգույշ կացիր,  
Սիրուն կռունկ, խախալ արա, գութան արա ու դարձիր.  
Կռունկ, ի տար, օ՞ն:

<Դեհ, դեպի Տարոն  
15 Թռի՛ր, սլացի՛ր  
Գնա հեռացիր: >

Ես էլ պետք է ձեռքս առնեմ զախշախ քնարս ու քեզ մոտ  
Այս ավերակ պատի տակին կուշ գամ մինչեւ առավոտ.  
Հնչե քնարս, թող վշտաձայն, խոսե սիրտս այս ցավոտ.  
20 Ա՞խ, գիշերը տարի դառնար, շըլուսանար առավոտ.  
Կռունկ, ի տար, օ՞ն,  
<Դեհ, դեպի Տարոն

Թոփ'ր, սլացի՛ր,  
Գնա հեռացիր: >

**25** Վարք ու բարքով, խելք ու մտքով հատը հատին

Հպատակներին, Ախուսով պիտի ապրեն, վայ նրանց դառն օքերին. Աշխ, դժվար է, սիրուն կռունկ, դժվար ապրել միասին, Ընկեր լինի, թե հարևան, ծառա, տեր, թե ամուսին.

30 <ԴԵՒ, դեպի Տառն

Թոփ'ր, սլացի՛ր,  
Գնա հեռաղիր:

**Թե տեսանես ողջ Պարսկաստան, արար, չուրին կամ**

ՀԵՌԱԿԱՆ

35 Զորք ժողոված ու պոկ եկած արշավում են Հայաստան.

35 Ասա, կոռնկ, ասա, Հոգիս, այդ ի՞նչ անթիվ զորք, բարան.  
Ասա, կոռնկ, ասա, Հոգիս, Առաջին համար է այս պատճենը.

Ասա, կոռնկ, ասա, հո  
կոռնի ե առաջ

**Դաւիթ, դեպի Տառնի**

40 թոփ'ր, սլացի'ր,  
Գնա հեռագիռ:

Մշտական մշտական դաշտի միջով համառձակ

45 Սուրբ շիրիմներն իմ հայրերի՝ ահեղազոր դյուցազանց  
Ոտնատակի անարգում են քյուրդ, տաճիկը լիրք, անսանձ,  
Մշու սովորան սուրբ Կարապետ մեր տաճարը վեհափառ  
ինչ սև սգո քուրծ է հագել, ողբում է անմիխթար:

50 Վոհակ, ի տար, օ՞ն,  
Հեծ, ոկան Տառըն.

*Թոփ'ը, ալագի՛ց*

Գնա հեռացիր։ >

Ախ, թե տեսնես ազգիս բախտը... Կտրուկ, քաջարի,  
Մոլորել է ավերներում Տուրութերան աշխարհի,  
Կռունկ, ասա, բավական է, թափառելուց դադարի,  
Ասա, կռունկ, ասա, Հոգիս, ասա արի՛, ա՛խ, արի՛:  
Կռունկ, ի տար, օ՞ն,  
<Դեհ, դեպի Տարոն  
Թոփ՛ր, սլացի՛ր,  
Գնա Հեռացիր: >

... ես ուզում եմ սեր երգել,  
երգել սրտանց և վառվել,  
ես ուզում եմ և գրկել,  
Փարել նրան և փարվել.

- 5 Ես ուզում եմ հրատապ  
Սաստիկ սիրով ինձ տանջել,  
Նրա կրծքին անարատ  
Բոցավառվիլ և հանգչել:
- 10 Թողե՛ք, թողեք ինձ խնդրե՛մ,  
Թողեք ինձ միայն սեր երգեք,  
Թողե՛ք, թողեք որ գրկեմ,  
Սիրեմ նրան անարգել...

Տաշիք

Խելաց քանի իւսուս է առաջաւ  
Յերազ ու 1887  
Տաշիք է առաջաւ  
Ինչ Ալեքսանդր և այլ աշխատեած զարդար

Իւսուս պատրի յաջուտ պատրի  
Իւսուս պատրի  
Իւսուս պատրի  
~~Տաշիք է առաջաւ~~  
Իւսուս պատրի

Խելաց քանի իւսուս է առաջաւ  
Ալեքսանդր և այլ աշխատեած  
Իւսուս պատրի  
Իւսուս պատրի իւսուս է առաջաւ

Խելաց պատրի Խելաց պատրի  
Ալեքսանդր և այլ աշխատեած  
Իւսուս պատրի  
Ալեքսանդր և այլ աշխատեած

Իւսուս պատրի պատրի  
Ալեքսանդր և այլ աշխատեած  
Իւսուս պատրի  
Ալեքսանդր և այլ աշխատեած

? «Վայրէցք» բանաստեղծության ինքնագիրը



Տ. Հայրենիքիս հետա ժողովածուի կազմը, 1916 թ.

\* \* \*

Փայլուն աստղիկ երկնադիտակ,  
Դուն, որ տեսնում ես ամե՞ն բան,  
Սառն հյուսիսի երկնքի տակ  
Ունիմ ընկեր, տեսնո՞ւմ ես նրան...  
Նա էլ ինձ պես  
Նայո՞ւմ է քեզ...

Ո՞չ, թող, սեր իմ, հրավիետուր  
Դևզի հյուսիս խոյանա,  
Տնծա հոգիս այս տիսուր,  
Միրտս առժամ հովանա...

Այստեղ ահա ինչ են ասում,  
Միրելիդ իմ Անուշավան,  
Ահա ինձնից ինչ են ուզում  
(Որին, գիտես, ես չեմ հավան):

5 (Սրանով էլ չեմ ասում թե  
Այնքան էլ խելոք եմ ես,  
Դե, այնքան որ, աստված գիտե,  
Ուղիղ գնում եմ ճամփես).

10 Ինձ ասում են, թե սարսադ ես,  
Որ չես ուզում տերտեր դառնալ,  
Պետք է հանգիստ կնքես, թաղես,  
Հարստանաս անակնկալ:

15 Այն գյուղ<աց>ին, որն որ թողած  
Սարումն իրանց ոչխարն անտեր,  
Եկավ այստեղ այնքան սողաց,  
Մինչեւ վերջը դարձավ տերտեր:

Ինչո՞վ ես դուն նրանից պակաս,  
Ինչու դուն չես կարողանում:  
Չենդ լավն է, բոյդ [լավն է],  
20 էլ ինչի՞ ես մտիկ անում:

Քեզ կ'արգեն, քանի սադ ես,  
Քեզ կտան ազիզ սեղան,

իսկ երբ մեռնես՝ ո՞նց կթաղվես,  
Հենց այն արժե ամեն բան:

25 Արի սրանց հասկացրու դուն,  
Թե այս դարում [խառնված]  
Ինչ պաշտոն է տերտերությունն...  
Ի՞նչ ժամանակ է, աստված:

Այսպես մի բան պատահեց ինձ  
30 Հենց այս մոտիկ, անցյալ ամսում,  
Կոնսիստորում սաստիկ ահից  
Հետո ոչ ոք չէր էլ խոսում:

Կոնսիստորում գլուխ քարը,  
Դու տանն ասա թե ինչ արին...  
35 Այ տղա, ինչ պիտի լինի իմ ճարը,  
Ինչ պտի լինիլ սրանց միջին.

Կարճը, պատմեմ որ իմանաս,  
Թե բանն ինչումն է եղել,  
Ինչու համար էին վրաս  
40 Այնպես սաստիկ կատաղել.—

Ախպեր, մի օր առաջնորդի  
Ռառան եկավ ինձ տարագլ վեր,  
Առաջնորդը թե՝ այ որդի,  
Էս բանը տար գրիր ու բեր.

45 Շրջաբերական էր ութ հատ  
Ուղած մեր խեղճ դպրոցներին,  
Թե հարգեցեք շնորհաշատ  
Նոր տեսուշ հայր Եղիշեին:

50 Ես էլ անսաս, տարա մեր տուն,  
Ճաշից հետո անմիշապես  
Նստած մինչև [լավ] իրիկուն  
Վերջացրի, ասա՝ ապրես:

Մյուս օրն եկավ հայր-քարտուղար—  
Տելեգրաֆիստ Մոյինյանը,

55 Թե այս թղթերն առ հետդ տար  
Ու գիշերս գրիր տանը:  
Ասի՝ տեր հայր, ես չեմ կարող,  
Խնդրեմ գտեք ուրիշ գրող:

Բայց տեր հայրը և նրա հետ  
60 Ամբողջ խումբը ներքինեաց  
Բացատրություն, բացատրություն  
Պահանջեցին զայրագնաց:

Բացատրեցի—ահա թե ինչ.  
Դուք էլ տեսնում եք տկար եմ,  
65 Տկարությունս ասենք ոչինչ,  
Սպասեցեք գործերն շարեմ:

(Գիտես, եղբայր իմ, քարի պես  
Առողջ կուրծքս ոնց մաշեցի...  
Ա՛խ, կարծատես [նիամտություն]  
70 Ինչ տանջանք էր, որ քաշեցի...).

Գրությունը վերատեսչի,  
Որ կուտած են,  
Նույնպես շտատը քաղաքի  
Հրամայված է վերջացնել:

75 Ես էլ ունեմ իմ անձնական  
Գրելիքը նամանավանդ,  
Հանգստանալն էլ չեմ ասում,  
Տանը ունենք երկու հիվանդ.

(Հակառակին այդ օրերում  
80 Տագնապի մեջ տենդական,  
Ոտանավորներս էի գրում  
Որ ուղարկեմ տպագրության),

- Ինչ որ լինի, գուն գրագիր ես,  
Մանավանդ արագագիր ես,  
85 Հրամայում են և պրծավ,  
Պէտք է անխոս տանես գրես:  
  
Զայնակցեցին քաղցրաբարբառ  
Չորս քահանա.—բարձրադիր,  
Ինչպես ես դուն խոսում, տղա,  
90 Լոփիր, վերցրու, տար գրիր:  
  
(Ելու գարշելի սողունները  
Քահանա են դարձել.։  
Այժմ՝ ուզում են անունները  
Իրանց հարդել տալ զոռով):  
  
95 Ասի կգրեմ, բայց ոչ մի տող  
Տուն չեմ տանիլ, լավ իմանաք,  
Ինչ ուզում են ինձ անեն թող:  
  
Իսկուն և եթ հավաքեցի  
Ջեռիս թղթերն Կոնսիստորի,  
100 Սեկրետարին տվեցի  
Այսպիսի բան եմ գրում ասի:  
  
Մեկ եւ ահսնեմ շոբան շան պես  
• Որսուալով եկավ ծառան,—  
Ինչ {որ} հրամայում են քեզ  
105 {ինչու} չե՞ս կատարում:  
  
Սրբազնի հրամայեց,  
Որ վերցնես ու տանես տուն,  
Գրես, անշուշտ առավոտյան—  
Հետք րերես պատրաստի:  
  
110 Ասի ասա սրբազնին  
Տուն չեմ տանիլ գիտնաք, թեկուղ  
Վեհափառը զիի կռնդակ:

- Ապշած, սարսափած  
Շառան զուրս գնաց  
115 Ցուցամատը թափ տալով,  
  
Վերեկցը համբավ եկավ,  
Թե սրբազն <ն> սաստիկ  
Զայրանալով կնիժկումը նշանակեց:  
Այսուհետև հալիդ մտիկ:  
  
120 Ես նստեցի ծանր ու բարակ,  
(Գիտես եղբայր՝ որ այս խայտառակ  
Մարդոցն ալսպես է հարկավոր).  
  
Էլ գլուխդ ինչ ցավացնեմ,  
Կաղ անելով ես այսպես,  
125 Մինչկ ժամի երկուսը  
Պատրաստեցի երեք ու կես:  
  
Հիմա խոսում են իրար հետ՝  
Թող շըգրի, թող շըտանի,  
Առավոտյան մի լուսանա,  
130 Մբազանը տես ինչ կանի:  
  
Մյուս օրն չեկա ծառայության.  
(Գլուխս էլ ցավում էր մի քիշ,  
Այն գիշերվան հիվանդների  
Մբանալիկ տնքոցից).  
135 Միայն բանալին ուղարկեցի,  
Ասի՝ թղթերը հանեցեք:  
  
Երանի թե չի ուղարկել,  
Մբանք կարգին բաց են անում,  
Իրենց անտեր թղթերի հետ  
140 Իմ թղթերս էլ առնում տանում:  
  
Մի քանի մանր ոտանավոր  
Երկու հատ էլ պոեմա,

Մեջին և նոր  
«Դարձ» անունով, որ [էլ] ըբկա:

- 145 Ինձ ասում են՝ այս աշխարհում  
Քո խելքով չես կարող ապրել,  
Եվ այսպես են բացատրում—  
Կուգես ապրել—պետք է հափոել,  
Հափոիր, այո՛, որտեղ հասնես,
- 150 Խնդրի՛ր, որին ուժդ պատեց  
Եվ մարդիկը մեկ էլ տեսնես  
Քեզ կանվանեն արդար ու մեծ,  
Աշխարհս դմակ, տղեն դանակ,  
Որքան կարաս կտրիր ու կեր,
- 155 Ներկլի էր մի ժամանակ  
Այս դկիզը [մահաճրավեր]  
Գաղանների օրենսգրքում  
Գուցե հողվածն է առաջին,  
Բայց չըփատեմ մարդոց սրտում
- 160 Ո՞նց է ընկեր դարձել խղճին.  
Եվ ինչ զարմանք, եթե նրան,  
Որ չէ կարող քրտինք անել  
[Դուր էլ] եկել սրա նման  
Մի բնաբան է հավանել:
- 165 Սիրելիդ իմ Անուշավան,  
Այս ոսկու և արյան դարում,  
Հանուն սիրո և փրկության  
Մարդիկ ինչեր են կատարում.
- Կատարում են թող կատարեն,  
170 Իրանց մեղքը իրանց վզին,  
Բայց թե այնքան լիրք ու շար են,  
Քարոզում են նույն ուրիշին:
- Զահլես գնաց, Անուշավան,  
Այստեղ կըտրենք, աստծու խաթեր,  
175 Խայտառակ թելն այս պատմության,  
Ոտի համար դնենք Սաթեր:

...նա մի տգիտ, աղքատ մարդ էր,  
Որ ուզում էր դառնալ տերտեր,  
Այդքանն, հարկավ, բավական էր,  
Բայց կան նաև քանի բաներ,  
Ե Գիտելիքներ և նոր և հին,  
«Ուսմունք պատշաճ քահանային»:

0', ցած խոսքերով անդուռն բերանի  
Մի՛ հիշեք, մի՛, այն սուրբ անունը,  
Դուք, որ չգիտեք փառքն Հայաստանի,  
Որ շեք ճանաչում նրա զորությունը...

Հնդունիր, իմ քույր,  
Գուցե քաղցրաբույր  
Զըկան ծաղիկներ,  
Բայց իբրև նվեր՝  
Նվաստ եղբորից  
Մի գնահատիք ինձ:

## ՄԱՐԾ

- «Շնորհավոր նոր տարի».  
Եթե թւեր առնեի,  
Սրտով վշտոտ ու կարոտ  
Կըթուեի ես քեզ մոտ,  
5 Որ իմ պանդուխտ, հեգ եղբոր  
Տարին անեմ շնորհավոր...  
Բայց ես զուրկ եմ թւերից,  
Իվ ստիպված եմ շատ հեռվից  
Այս տողերով անտաղանդ  
10 Շնորհավորել քո կաղանդ  
... Զիցե թե մենակ նա մտաբերի  
Քաղցրիկ հիշատակն հայրենի երկրի,  
Զիցե թե նրա հայացքը կարոտ  
Չըգտնի ինդրած դեմքերը ծանոթ,  
15 Դառնացած սրտով անիծի իրան,  
Անիծի օրերն յուր պանդիստության...

- Կեցցե՞ «Մշակ» և ժողովուրդ  
Եվ այս օրը մեծախորհուրդ—  
Մեր ազգային իրավունքի,  
Համայնական ազամ կամքի:  
5 Անդառնալի թող վերանան  
Ամեն գործեր կամայական.  
Հնորությունը ապօրինի,  
Կռպիտ չոբանն Աբարանի:  
Կեցցե՞ կեցցե՞ մշտազվարթ  
10 Նոր սերունդը երիտասարդ,  
Յուր նոանդով ամենազոր,  
Գաղափարով պարզ, լուսավոր:  
Կորչի՛ Մամբրե, սև է Աբգար  
Իրանց խմբով գիշերավար,  
15 Եվ անսասան կեցցե՞ հավետ  
Մեր ժողովուրդն Արծրունու հետ:

[Միամիտ] ընկե՛ր, դու մի՛ զարմանար,  
Որ չեն երգերըս պատանու կորով.  
Ես ձեռքս շառած տակավին քընար;  
Տանջվել եմ կյանքի բոլոր ցավերով:

5 Վիշտն ու [ցավերը] դեռ վաղ ծըծեցին,  
Քամեցին հյութերն իմ մատաղ սըրտի,  
Հոգսերն էլ տըհաս միտքըս կըրծեցին,  
[Թրթուրներն ինչպես բողբոշը վարդի]:

6Վ ես [հյուծված] երգում եմ այսօր  
10 ԵՎ սիրտս մաշված, և ձայնըս տկար,  
ԵՎ երգըս տիսուր, և կուրծքս անզոր,  
ԵՎ խիստ նախատված բոլորի համար:

Հա՛, ուրիշ բան էր՝ եթե ինձ ընկներ  
Գոնե մի նշույլ բաղդավորության...  
15 Բայց իմ բաժինը՝ այս եղավ, ընկեր,  
իմ այզն ու մութը միասին եկան:

\* \* \*

Գիշերը բազմեց լեռների վրա.  
[Թանձր մոայլը] կոխեց դաշտ ու ձոր,  
Ու մի լուսատու երկնքում լըկա,  
Մենակ մի լույս է փայլում հեռավոր.

Եղբ վանական պահանջ  
Ծիր.

Ո՞ւ, չի լուսի մօք զայտաց  
Խթի վեց հարուցե  
ու կուրածութեա ու ոչի  
Ղի բուրդունի և երգե -

Թիշու, ու ու ու ու ու ու ու ու  
Հե գընոց զայրաց,  
իրենու շին օստ ի զաւո  
Կօրտուրուն զւացօ:

— Ուզոյէ, ու ու ու ու ու ու ու ու  
Արհիթունի ըզդուոր,  
Արմառացի բազոյ օւնե  
Երժադրացն իշ և սցու -

Ի թե ու ու ու ու ու ու ու ու ու  
Ար բարունի օստ կուտէի  
Խզետ ԱՌ առաջ և քուրի  
Միջ նաևու թուրանէի -

9. «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» բանաստեղծության ինքնազիրը

night mystery  
in a winged  
silence becomes & suffuses us  
from 10 AM -

11  
Но Гарр. Аренх.  
~~известно~~,  
когда же вчера  
они находятъ

*Superior* *superior*,  
*inflata* *superior*.

- 9 Գերեզմաններում վաղուց հանգչում են  
Նրանց շարչարված մարմիններն անշռնչ,  
Իսկ հոգիները խաղաղ պտտում են  
Սիրած վայրերում, սիրելիների շուրջ.

5 Այժմ հալածել դժվար է սրով  
Այն եթերային գոյություններին,  
Որ զարմանալի գորություններով,  
Գիտեն մոտենալ մարդկանց սրտերին...

10 Հաճախ մտորման ժամին լոռեցուն  
Ուրվական ձայներ այլ եղանակով  
Խոսում են այնպես և ալեկոծում  
Դժո՞հի հոգին համարձակ մտքով—

15 ... Այ կարճամիտ մարդ, միտքդ բեր դու մեզ,  
Երկրում հավիայան խո շես ապրելու,  
Մի օր ծնվել ես, մի օր կըմեռնես,  
Ի՞նչ ես համբերում ձաղքին թշնամու...

## ՕՐ. Ն. Ս.-ԻՆ

Քեզ, գոված մուսա, ես չեմ ճանաշում,  
Ոչ ձեռքիս ունեմ ոսկեղեն քնար  
Ոչ էլ ծովերի ափերն եմ փախշում,  
Վայրենի երգս երգելու համար.

- 5 Բայց ճանաշում եմ ես մի ժողովուրդ  
Ճտահար թաղված տառապանքներում,  
Ունեմ և հոգումս մի գաղտնի խորհուրդ  
Ինձ [հրապարակ նրանք] են բերում.

- Նրա ցավն է ինձ ոգի ներշնչել,  
10 Նրա տանջանքն է շունչը իմ երգի,  
Եվ ո՞վ է կարող իմ երգը մերժել  
Արպես հառաշանքն իմ ժողովրդի.

- Անթիվ դարերի անողորմ հարված,  
15 Լկանք ու ավեր,  
Եվ ահա այսօր նա խեղաթյուրված  
Դատ է պահանջում թշնամու գլխին  
Եվ իրավունքներ.  
Էլ ո՞վ էր կարող այդպես բողոքել  
Թե կարենայի եղածը երգել:

Ալբոմիդ մեջ մի քանի տող  
Հեշտ է խորհել և հորինել,  
Բայց սրտումդ միշտ աղմկող  
Մի հիշատակ կուզեմ թողնել,  
5 Որ սիրտդ ինչքան բաբախի,  
Ինձ էլ այնտեղ նա պահի...

\* \* \*

Ես վիշտ ունեմ բերած երկրից հայրենի,  
Նրանով են իմ երգերը կենդանի,  
[Նրանով է իմ քնարը պարծենում,  
Նրանով եմ ես թե առնում, բարձրանում...]  
5 Եվ չեք կարող դուք հասկանալ բնավին—  
Ինչ սիրով եմ ես հանդիպում այն ցավին:

[Եվ ձեր ուրախ խնջույքների ժամանակ  
Չեզիս բռնած կենաց գինով լի բաժակ  
Ես լալիս եմ, թեև դուք չեք նկատում,  
10 Իմ արցունքը սրտիս միջին է կաթում,  
Իսկ իմ երգը... դուք չե՞ք լսում, թե ինչպես  
«Իմ հայրենիք, իմ հայրենիք» հառաշում է  
աղեկեց:]

\* \* \*

Հանկարծակի սիրոս տիրեց—  
Միտքս եկան հին տենչեր,  
Որ ոչ մեկը լըկատարվեց,  
Եվ այն, գիտե՞ք, ինչե՞ր, ինչե՞ր...  
5 Նրանք էին ինձ ապրեցնում,  
Նրանք էլ արդեն զուր են անցնում—  
Դատարկ ձայներ գլխիս վերից  
Կարծես թե միշտ ծաղրում են ինձ...

\* \* \*

Այդպիսի աշքեր ես դեռ չեմ տեսել.  
Աշքերն այդպիսի կրակ չեն ցայտում,  
Արեգակն այդպես երբեք չի կիզել  
Այրող շանթերով տաք անապատում:

- 5 [Այդտեղ երկրային ու մի նյութ շըկա.  
Եղեմում փայլող արեշողն է դա,  
Որ իրան տեղից սլացել փախել  
Աշքերիդ մթին ծովումն ցոլացել]:
- 10 Ո՞չ, այդ աշքերին ով որ պատահի,  
Տեր Աստված նրա սիրտը թող պահի,  
[Այդ քո սպանող] գեղեցկությունից  
Որ իմ հանգիստը խլեց ինձանից:
- 15 Այդ աշքերն արդյոք ո՞վ է տվել քեզ,  
Եվ հետը մի սիրտ ամուր քարի պես  
15 [Եվ մեկի ուժով մյուսը շարաշար  
Չարչարանքների դառնում է պատճառ]:

\* \* \*

Հայոց վարժուհի, ողջ 10-ը տարի  
Սրի տանջվելով պարտքդ կատարի,  
Լոիր ու տոկա, համբերիր ու տար  
Թեմական տեսուչ, Կոստո ու Կատար:

- 5 Թե ինչ է, մի օր ազգը քո սիրած  
Գալու է քեզ մոտ, ուտելու է հաց,  
Վեր է առնելու մի բաժակ գինի  
Եվ շնչալու «կենացդ լինի»:
- 10 Սակայն երբեք փառք չի եղել  
Նպատակը քո շանքի,  
Ոչ կենացն ես դու համարել  
Արդյունքը քո տանջանքի:
- 15 Այլ, որպես մերթ բանաստեղծը  
Շորջն ու իրան մոռացած  
15 Սնում է յուր հոգու իղձը  
Աղմուկներեն խլացած,

- Նույնպես և դու շարշարանքով  
Սերունդներ ես վերածնել  
Եվ տքնել ես շերմ եռանդով  
20 Մութն ու խավար վերացնել:

Դրա համար, թեև այսօր  
Բաժակներ ենք մենք լցնում,  
Բայց բաժակիցն էլ առավել  
Մեր սրտերն են լիք-լցվում—

- 25 Լցվում ենք վեհ պատկառանքով  
Պաշտոնյայի կրթության.  
Եվ ողջունում հեռվից հոգով  
Լուսավորված Հայաստան:

\* \* \*

Այս տողերը գուցե ջնջվեն,  
Գուցե կորչի հուշագիրը,  
Բայց ինձ համար դրանք ցավ չեն,  
Ու էլ այդ է իմ խնդիրը:

- 5 Ես քեզանից ուրիշ անանց  
Մի հիշատակ եմ խնդրում,—  
Թող կենդանի մնամ պահված  
Մտքիդ պայծառ հուշագրում:

- 10 Որպես անկելծ մի բարեկամ,  
Որ կարող էր այդ խնդրել,  
Որ խոսքերից հազար անգամ  
Ավելի է քեզ սիրել:

Անմիտները՝ մտան պարտեզ—  
Ամբողջ բուրմունք ու գարուն,  
Ու շիմացան—ինչո՞ւ այնպես  
Եվ անուշ էր, և սիրուն:

- 5 Ու ստքեցին, ու ճմլեցին  
Մաղիկները [բուրավետ],  
Ու շիմացան—ինչ եղավ գեղն  
Եվ բուրմունքը նորա հետ:

ՀՈՒՅՍ

- Մթնեց... ինչո՞ւ ես տխուր, իմ ընկեր.  
Ո՞չ, մեր գիշերը շատ հեռու է դեռ,  
Այս միայն վաղանցուկ մի ամպ էր խավար,  
Բախտի մրրիկը բերեց մեզ համար,  
5 Բերեց, քարշ արեց մեր գլխի վերև,  
Մեր աշքից փակեց երկինք ու արև:  
Բայց դու տակավին մի՛ ընկիր հոգով,  
Նա կանցնի, կերթա յուր սև ընթացքով  
Եվ լուսապայծառ արել կրկին  
10 Քաղցըր կը ժպտա քո քնքույշ սրտին.—  
Հավատա՛ [ուժին] գալոց օրերի,  
Բայց [պարտությունը] հաստատ է շարի,  
Որ ձգտեց բարվո շենքը խորտակել,  
15 Հուսավորության շավիղը փակել,  
Որ քո [գեղեցիկ] աշքին մանկական  
Տվեց տիրություն և արցունք այդքան...

\* \* \*

Երբ թույլ եք տալիս, որ Զեր ալբոմում  
Անշնորհքները գրեն և արձակ,  
Ինձ այնուհետև էլ ի՞նչ է մնում,  
Եթև ոչ այսպես ասել համարձակ,—  
5 Ինչո՞ւ Զեր ալբոմն, ազնիվ օրիորդ,  
Դուք բաց եք անում ամեն մեկի մոտ,  
Որոնք ոչ ցանկալ, ոչ հայտնել գիտեն.  
Եվ ալբոմն իզուր պիտի մըրռտեն:

\* \* \*

Կարծես թե քիչ էր, ինչ որ արեցին,  
Դեռ այնուհետև դարձյալ գրեցին,  
Որ էլ ավելի պարզորոշ ցույց տան,  
Թե որքան համառ ...եր կան:

ՀԵՇ, ափսոս էցեր...  
Ի՞նչ հիմար վեճեր,  
Ի՞նչ անմիտ տողեր,  
Խինթ բառախաղեր  
5 Լցրեց... այն էլ ո՞վ,—  
Մի ամբողջ ժողով,  
Հըրատարակեց  
Որ Հորիզոնը  
Եվ խայտառակեց  
10 Մեր զատկի տոնը:

ԱՇ ծիծեռնակ,  
Մի լուր շունե՞ս դարիքին.  
Մի խրճիթ կա [կանգնած] Սասմա  
էն ահարկու քարափին,  
5 էն խրճիթը տեսե՞լ ես դու,  
Մի լուր ասա դարիքին.

Էնտեղ մեկին թողել եմ ես  
Աշքը լացով ու ճամփին,  
Էն սիրունից, Աստված սիրես,  
10 Լուր շե՞ս բերել դարիքին.

Սիրած ընկեր ունեմ այնտեղ ինձ,  
Անմխիթար հայր ու մայր,  
Ապրում են դեռ արտասվելով  
[Աղոթում են ինձ համար].

15 Կարոտ յարից, ծեր ծնողից,  
Էն սուրբ հողից, էն շեն գեղից,  
Մի լուր շունե՞ս դարիքին.

Երգում էի ես քո երդիկին  
Ամեն ըիգուն-առավոտ,  
20 Եվ քո կինը միշտ լալագին  
Դունդունում էր քեզ կարոտ.

Քո տիսուր զավակները  
Խնդում էին ու հրճվում,  
Երբ իմ անթե ձագուկները  
25 Ճըվում էին, ճըվճվում:

Այսպես մենք հաշտ ապրում էինք  
Շատ շատ գարուն ու ամառ,  
Ո՞չ մի արած մեղք ունեինք,  
Ո՞չ թշնամի մեզ համար.

30 Քուրդը եկավ  
Սև ու խավար էն տարին,  
Կրակ զարկեց, թալան արավ,  
Դերի տարավ քո յարին,

25 [Ես լսեցի ծվծվոցը  
Իմ սիրելի ճուտերի,  
Ես լսեցի ճիշն ու կոծը  
Եվ քո անտեր փոքրերի].

Վերջին օրն էլ որ ես եկա,  
Սև էր էնտելն ու դատարկ,  
40 էլ ոչ քո հին օճորքը կա,  
Ոչ իմ բունը. նրա տակ.

Զկա ձեր հին եկեղեցին,  
Գյուղ ու դպրոց էլ լըկան,  
Թուրքն ու քուրդը ավերեցին  
45 Հիմնահատակ ամեն բան.

Միժառն այսպես երգ էր ասում  
Հայ պանդուխտին վաթանից,  
— Լսի՛ր, դարիբ, լսի՛ր, ախազեր,  
Լուր եմ բերել քո տանից:

### ԷՔՍՊՐՈՍ

Օրբելն իմ մուսան՝ յուր խելքը կորցրած՝  
Կավալերության պաշտոն էր տանում,  
Բայց քնքուշները ավելի...  
Նրա արժեքը չէին հասկանում:

5 Այժմ ժամանակն այնպես է փոխվել,  
Որ նա կույսերից հեռու է փախել,  
Եվ այսուհետև էլ ոչ մի օրիորդ  
Ինձնից չի տեսնիլ մի տող կամ մի ոտ:

## ՄՐՏԻՍ ԽՈՍՏՈՒՄԸ

- Դաշնակահար պոետն երբոր  
Էլ չըգրի դաշնակներ,  
Սիրտը մեռնի վշտակոտոր,  
Պատեն գլուխն ալիքներ,
- 5 Երբ մոռանա հիշել պես-պես  
Անունն ու սերն ամենքի,  
Գիացեք, որ դեռ հիշում է ձեզ  
Եվ այս օրերն իր կյանքի:
- Գիացեք, որ նա, ալեվորած,  
40 (Եթե հասնի այն օրին)  
Դողդողալով, ոգի առած  
Պատմում է յուր թոռներին,
- Թե ի՞նչ օրեր տեսավ կյանքում,  
Ո՞ւմ ունեցավ բարեկամ,  
15 Եվ ձեր անունն հիշատակում,  
Միտն է բերում շատ անգամ:
- Բայց թերես... ի՞նչ եմ ասում.  
Նա ձեզ անվերջ կը հիշի,  
Եթե միայն գերեզմանում  
20 Հիշողություն կը լինի:

## 1 ՀՈՒՆՎԱՐԻ

- Շնորհավոր նոր տարի...  
Թեև պիտի նա մարի  
Իմ վաստակած սրտի մեջ  
Դարձյալ մի հին իղձ կամ տենչ,  
5 Թեև պիտի ինձ բերի  
Միայն ծանրություն հոգսերի,  
Տան ծախքերի պրոզան,  
Եվ հալածի իմ մուզան...  
Բայց ինչքան էլ լինի վատ,  
10 Ես միշտ ունեմ ժայռ հավատ  
Դեպի կյանքն ու ապագան,  
Եվ հույս ունեմ, թե կը գան  
Սեր, սփոփանք, խնդություն...  
Այդ հույսով էլ աննկուն  
15 Ես կանչում եմ՝ սրբտվիլի—  
Շնորհավոր նոր տարի,  
Եվ մաղթում եմ ձեզ համար  
Նոր բաղդ, նոր օր ոսկեվառ:

ՊԱՇՈՏՆՈՒ ՏՈՏՈՒՆՁԸ

Առաջ մեր՝ գյուղում պաշտոնի մարդը  
իսկի չեր քաշում գյուղական դարդը.  
Ո՞չ խարջ էր տալիս, ո՞չ մասրափ գիտեր,  
խարջի ավելն էլ դեռ ինքը կուտեր:  
5 Ա՞խ, ինչպես լավ էր,  
էն վախտ Շուկավեր:

Շրջվել է հիմի դարը հակառակ,  
Պաշտոնի մարդն էլ ընկավ խարջի տակ,  
Աստված վե՞ր կոնի—պաշտոնի ու խա՞րջ,  
10 Ո՞վ էր իմացել էս բանը առաջ—  
Ա՞խ, առաջ լավ էր,  
Ափսո՞ս Շուկավեր:

Պաշտոնու եզը, գոմեշը թե ձին  
Թևկուզ հենց քանդեր քյասիբի այգին,  
15 Ո՞վ կհամարձակեր պահանջել տուգանք—  
Այնքան ունեինք պատիվ ու հարգանք—  
Ա՞խ, ինչպես լավ էր,  
<էն վախտ Շուկավեր:>

Հիմի թե հորթ է, պատահի այնպես,  
20 Ընկնի մի հիմար աղքատի պարտեզ.  
— Հե՞յ, ինչո՞ւ մարդին տալիս ես վնաս,  
Դե, սիրտ, դու սրան ի՞նչպես դիմանաս—  
Ա՞խ, էս ինչ ցավ էր,  
<Ափսո՞ս Շուկավեր:>

25 Ամեն մարդ իրան գյուղումն էր պահում,

Գինի էր առնում իր փողի շահում,  
Մեծ էր թե ինչ որ—այն էր գյուղյումը,  
Ո՞վ դեմ կըխոսեր—թեկուզ մտքումը—  
Ա՞խ, ինչպես լավ էր,  
30 <էն վախտ Շուկավեր:>

Հիմի աղքատի—հարուստի համար  
Բերել են մի շափ շինել հավասար,  
Վրան էլ գեղի պեշատն են զարկել,  
Պետք է նրանով շիրա հավաքել:  
35 Էս ինչ նոր ցավ էր—  
<Ափսո՞ս Շուկավեր:>

Գեղի քյասիբին պապական ծեսով  
Փող էինք տալիս 60 տոկոսով—  
Դեռ խեղզում էինք պարտքերի տակին  
40 Եվ հետո խլում տունը կամ այգին—  
Ա՞խ, ինչպես լավ էր,  
<էն վախտ Շուկավեր:>

Ասում են հիմի զակոն է եկել,  
Որ այս տեսակ բան թե անենք մեկ էլ՝  
45 Վինավաթ կըլնենք ու Սիրիր կերթանք.  
Հապա էլ ինչո՞վ անենք աշխատանք—  
Ա՞խ, էս ինչ ցավ էր—  
<Ափսո՞ս Շուկավեր:>

Ախ, մի ժամանակ մեր ամբողջ գյուղը  
50 Գիտեր պաշտոնու ահն ու երկյուղը—  
Գիտեր, որ մենակ պաշտոնին էր մարդ,  
Մյուսները նրան կամ ծառա, կամ պարտ.  
Ա՞խ, ինչպես լավ էր,  
<էն վախտ Շուկավեր:>

55 Հիմի, տեր աստված, այս ի՞նչ է դառել,  
Աղքատ և գյաղա լեզու են առել,  
Խոսում են, վիճում, դատում, պահանջում—

Պաշտոնու հարգը էլ չեն ճանաշում—.  
Ա՞խ, ևս ինչ ցավ էր,  
60 <Ափսո՞ս Շուկավեր: >

Առաջ ժամանակ ամեն պաշտոնում  
Պաշտոնի մարդ էր ընտրված լինում  
Հարուստ ու ղիրքով, մազով ու միրքով—  
Գործն էլ տանում էր պաշտոնու կարգով.  
65 Ա՞խ, ինչպես լավ էր,  
<Են վախտ Շուկավեր: >

Էնպես վախտի ենք հիմի պատահել—  
Նոր ձվից ելած ամեն մի ջահել,  
Որ գլխին ճերմակ մի մազ շունի դեռ  
70 Դառնում է գեղի սուդիա-տանուտեր—  
Ա՞խ, ևս ինչ ցավ էր,  
<Ափսո՞ս Շուկավեր: >

\* \* \*

Իմ սիրելի Ասլան-ապեր,  
Մինչև այսօր բաղդդ կապ էր.  
Փողդ շուտով պիտի ստանաս,  
Հանկարծակի հարստանաս.  
5 Երեք օր էլ կացիր հալա...\*  
Քո կարոտյալ Ասլան-բալա:

\* Մինչև գրեն հրամանը,  
Ինչպես ասաց երիմյանը:

\* \* \*

Այսօրից ահա անում եմ ես ուխտ,  
Որ այսուհետեւ չըխաղամ էլ թուղթ:

Բայց բանը շուտով այնպես պատահեց,  
Որ բանաստեղծը խոսքը չըպահեց:

5 Էլ ինչ թաքցնեմ, եղո՞ւկ իմ հոգուն,  
Երկու անգամ էլ տարվել եմ թաքուն,  
Բայց թե չըթողնեմ այժմ թղթախաղ,  
Ուրեմն էլ չըկա ինձ նման սարսադ:

\* \* \*

Սիրեցի, Կոնո, քո անուշ երգը,  
Թող աստված օրհնի Գուգարքի բերքը:

## ՍԻՐԵԼԻ

\* \* \*

Էլ շեմ կարող գրել «ձեռաց».  
Սիրտս վաղուց է մեռած...

Խորն է քո հոգին երկընքի նման,  
Գաղտնիքներ ունի իր խորքում ահեղ...  
Եվ ցույց ես տալիս այժըմ դու ճամփան,  
Որ քո սիրելին ներս մտնի այնտեղ...

5 Եվ դու անզգույշ. ստեղծման օրից  
Հայտնի [ . . . . . . . . . . . ]  
Տերն ինքը լավին ողջ էակներից  
Ընորեց ու տարավ խորքերն երկընքի.

10 Այնտեղ անպատում լիովիյան միջին,  
Անվերջ երջանիկ, լուսեղեն հարկում...  
Եվ սակայն, հանկարծ, իրան Արարշին  
Ուզեց կողոպտել երկընքի խորքում:

15 Մնացած<ն> արդեն դու գիտես անշուշտ.  
Երկուսն էլ հիմա տանջվում են տրտում,  
Մեկը երկընքում մըռայլ ու մենակ,  
Իսկ մյուսը մերժված՝ խավար անդընդում:

20 Զգույշ կաց, ընկեր. Թեկուզ «սիրելի»—  
Մի բանար հոգիդ նորա առաջին.  
Դու ներս կըթողնես, նա ներս կըմտնի,  
Նա... որ դավ նյութեց նույնիսկ Արարշին:

\*  
\* \*

0՝, սիրո իմ, սիրո իմ, տակավին մատաղ,  
Քեզ ո՞րքան ցավեր ճմլել են հաճախ...

(ՀԱՏՎԱԾ)

... Ամեն բան երկրում ունի մի սահման,  
Որտեղից որ նա ևս է նահանջում.  
Աննահանջ է միայն սիրու սիրահար,  
Սիրը չէ միմիայն սահման ճանաշում...:

\* \* \*

Ի՞նչ է բռւյրը ծաղիկի,  
Մրրիկն եկավ—նա ցրվեց,  
Ի՞նչ է երգը սոխակի,  
Բաղեն հասավ—նա լռեց:

- 5 Ի՞նչ է սերը աղջկա.  
Աչա մեռավ, էլ շըկա.  
Ի՞նչ է կյանքը մարդերաց,  
Մի այսպիսի դատարկ բան.
- 10 Նույնպես ծաղիկ մի սիրուն,  
Որ կորշում է սև հողում,  
Նույնպես մի երգ թրթուն,  
Որ լուս է դագաղում:

Է՛յ, գիծ շահելներ, վառ-վառ ծաղիկներ  
Բուսած մեր կյանքի տխուր ճամփի շուրջ,  
Աշխարհի մայրական .... գիրկ է ձեզ դեռ,  
Հառաշքը՝ [օրորք] և կյանքը՝ անուրջ:

- 5 Ա՛՛, վաղուց զարթնած ու շատ տառապած  
Ես անց եմ կենում այս տըխուր ճամփով,  
Բուրմունքս՝ [ցըրված], պըսակս՝ թափված,  
Երկինքս էլ մթնած թուխպով ու ամպով:
- 10 Ես անց եմ կենում և ժպտում եք դուք,  
Տրում եք առծամ թախիծն իմ սըրտի...  
Ոչ, դալար մընաք, մեր կյանքի ծաղկունք,  
Ժպտացեք այդպես ամեն անցորդի:

## ՉՈՆԳՈՒՐԻՍ

Քո պատմածներն,—այդ ձայները տրտմության,  
Հառաշանքով, հեծեծանքով մշտական  
Հուշում են ինձ հին օրերի հիշատակով  
Թախտաբեր:

5 Էյ իմ շոնգուր, երբեկցե երանի  
Ուրախ հնչյուն քեզնից լսած լինեի,  
Որ իմ վշտոտ սրտի ցավին դարման լիներ,  
մեղմացներ:

Հայոց ապաբախտ գըրողը նըստած  
Ու միտք էր անում.—ի՞նչ անեմ, աստված,  
Թերթը փող շունի,—վարձ չի վրճարում,  
Դիրքն առնող շունի,—գիրք չի վաճառվում,  
5 [Անվարձ ու անհաց] ես ի՞նչպես գըրեմ.  
Սակայն... բան շըկա, պետք է համբերեմ.  
Երբ որ լրանա 40 տարի,

Ազգը հորելյան պիտի կատարի:  
—Կախարդական այն աշխարհում երջանիկ,

10 Ուր ապրում են երազները...  
—Էդ ի՞նչ ես նըստել, այ... մարդ  
. . . . . Անհոգ ու անդարդ,  
Եկել են ահա ձմեռվան օրեր,  
Պիտք են մեզ պաշար, ձմեռվա շորեր:

15 —Ինձ մի՛ խանգարիր, հեռացիր, ա՛յ կին.  
Կըլինի անշուշտ ամենն իր կարգին.

Դու միայն սպասիր 40 տարի...  
Ազգը հորելյան պիտի կատարի...

—Կախարդական այն աշխարհում երջանիկ,  
20 Ուր ապ...

—Հայրի՛կ, ներս մրտավ ուսանող որդին.  
Ի՞նչ ասեմ հիմի ես իմ վարպետին.

Ասում էր՝ էգուց էլ դպրոց լրգա,  
Ով փող շըբերի, ուսման վարձը տա:

25 —Հա՛, որդի, կըտանք, իրավ ես ասում.  
Վարպետն էլ է մարդ, ապրել է ուզում...

Բայց թող սպասի 40 տարի...  
Ազգը հորելյան պիտի կատարի...

Ո՞րտեղ մնացի... ա՛յ քու վարպետը  
30 [Ձըհանդամ] գընա, հենց դու էլ հետը...

«Կախարդական այն աշխարհում երջանիկ,  
Աւք ...»:

— Պարոն, դուք երբ որ ունեիք կարիք,  
Էնքան բան թողի ես ձեզ ապառիկ.

- 35 Ախար չէ մեղք ենք... մենք էլ ենք ձերը,  
Դուն մեջ կանգնեց խանութի տերը:  
— Հա՛, կըտամ, կըտամ... ի՞նչ ես խանգարում,  
Տեսնում Ես՝ նըստած [ես բան] եմ գըրում...  
Գրնա, սպասիր 40 տարի...

- 46 Ազգը հոբելյան պիտի կատարի...  
— Ո՞րտեղ մնացի... ի՞նչ էի գըրում...  
Ի՞նչ եք ներս գալիս մարդու խանգարում...  
«Կախարդական այն աշխարհում...»:

- 45 Բո պարտիքը, ախպեր, պիտի վրճարե՞ս,  
Ծէնց միշտ էղպես հայոց գըրողը  
Պիտի կրլանի ձեռն ընկած փողը...  
[— Գրում եմ, ախպեր, հանգիստ թող արա,  
Չի կորչիլ տված փողդ ինձ վրա.]

- 50 Դև գոնե սպասիր ... 40 տարի—  
Ազգը հորելյան պիտի կատարի...  
Ի՞նչ եղավ [թուղթս] գլուխ... ո՞ր կողմը  
կորավ...

- Էսպես էլ մարդի՞կ կըլնեն անիրավ...  
«Կախ...»:
- 55 Հոգին էլ էստեղ հասավ բերանը,  
Ու մեծ գըրողը կանգնեց դռանը.  
— Դեհ, ժամը հասավ, պատրաստվիր, պոետ,  
[Տենչերդ] հավաքիր ու արի ինձ հետ—  
Վա՛հ, այսպես անժամ... դրամաս հապա՞...

- 60 [Ցնորթ, ծրագիր,] ուսում... Եվրոպա...  
Հըրեշտակն այստեղ այնպես ծիծաղեց,  
Խեղճ մարդը, իսկույն դալկացավ, պաղեց...  
Եվ էլ լըսպասեց 40 տարի...  
Ազգը մեծ թաղում պիտի կատարի:

Այօրմ ահա ազատ եմ Ես  
իմ մուզայի բըռնությունից,  
էլ չի տանջվի սիրտըս այնպես—  
Յավ բերելով դեսից գենից...

- \* \* \*
- Սիրելի ընկեր, որ պատահեցիր  
իմ և մուսայիս վեճի ժամանակ,  
Զգայուն հոգով այնքան ցավեցիր,  
Այնքան ջանացիր, որ մենք հաշտ մնանք,  
5 Քեզ եմ նվիրում այս տրտում՝ (?) էջը  
Քե՞զ, որ հասկացար այն ծանր վեճը:  
  
 {Այսպիսի} ծանըր ու լուս վեճերով  
Մաշվում է մեր կյանքն.... սպառվում,  
Հոգնում . . . . .  
10 Հոգու սրբազն կրակը մարում,  
Անպտուղ դառնում կյանքը բեղմնավոր,  
Թարշամում, ինչպես ծաղիկ մենավոր:  
  
 Այսպես է մեր մեջ գրողի կյանքը...  
Եվ մեր աշխարհում խավար (?) ու մթին,  
15 Ո՞վ է հասկանում այս վեհ տանջանքը  
Ո՞վ է թափանցում գրողի հոգին.  
 {Եվ ո՞վ է առնում իր սրտին մոտիկ...  
Ո՞ւր է այն մարդը, ո՞ւր են այն մարդիկ!}
- Ես ևս առած քնար գրողի,  
20 Թեև շատ անշուք, երերուն (?) ու կարձ,  
Անցել եմ կյանքում մի դժվար ուղի,  
Կանգնել եմ անթիվ փորձության առաջ.  
Վիճել եմ—անցել... և այժմ գրում,  
Քե՞զ, որ իմացար, քեզ եմ նվիրում:

- \* \* \*
- Ես քո լեզվով եմ ուզում քեզ սիրել,  
Քո լեզվով ասել քեզ սիրո խոսքեր...  
  
 Երգել եմ ուզում ալքերդ կապուտ,  
Աչքերդ կապույտ, որպես հանգիստ ծով,  
5 Մազերդ ոսկի, հայացքդ հանդարտ,  
Մեղմ ու կախարդիչ, քողարկված լույսով:  
  
 Օ՛, Վրաստանի դու շքնաղ հոգի,  
Ես քեզ եմ տեսնում, թե՛ բուն, թե՛ արթուն,  
Ի՞ովշանքով դու լի, չքնաղ վիրուժի,  
10 Հեքիաթ . . . աշքերի մեջ դու
- Քո շարժումները եղնիկի նման,  
Հեքիաթների մեջ թագուհու նման,  
Նայվածքդ բարի, մի քիչ վախվորած,  
Որսորդից փախած [Եղնիկի նըման]:

### ԱՆՈՒԾ ԸՆԿԵՐ

Անցել են օրերն այն երանելի,  
Հին հիշատակներ իզուր եմ կանչում,  
Լոել են ձայներն ուրախ երգերի,  
Եվ դաշտերն այնպես էլ չեն կանաչում.

5 Վիշտը շորացրեց լարերը սրտիս,  
Չեն դողում նրանք այլևս աշխուժ...

\* \* \*

Շնորհավոր նոր կաղանդ.  
Աստված ինձ տա նոր տաղանդ,  
Իսկ ձեզ՝ իսելոք մի փեսա,  
Ամեն բանից լավն էս ա:

եւ պատվեր ունեմ,  
 Որ այսուհետեւ  
 Երվեր շըամանեմ  
 Աշ մեծ, ո՛չ թեթև,  
 Եկ իրնդիք շկա—  
 Եվ էլ որ լինի.  
 Թեկուղ աղջըկա  
 Մերնդյան տոնի.  
 Եկ մինչեւ անզամ  
 10 Թեկուղ նա ըլի  
 Եվ լավ բարեկամ  
 Եվ շատ սիրելի:—  
 Ես կարող էի  
 Խնդրել Մուսային,  
 15 Թե մի բան գրի  
 Մեր Մարուսյային,  
 Բայց ավաշու, նա էլ,  
 Ինչ եկավ նոր «Մուրճ»,  
 Շատ է փրշացել,  
 20 Դասել թանկ ու լուրջ,  
 Եվ էլ ոչ մի տող  
 Չի գրում անփող:

Մեր սիրելի հայր Ճռւղուռով,  
 Նորամանկանդ ոտն ուղուրով,  
 Բարի բախտով լինի թող սա  
 Ու քեզ բերի մի լավ փեսա:  
 5 Ու թե գըրող և կամ տերտեր,  
 Հետն էլ հազար ցավ ու դարդեր,  
 Այլ մի հարուստ—մի Մանթաշով,  
 Փող ունենա իրան քաշով,  
 Որ երբ լըսի գըրքից—երգից,  
 10 Կուշտ ծիծաղի սըրտի խորքից:

1901-ի ՏԱՐԵՄՈՒՏԻՆ

## ՀԱՆԵԼՈՒԿ

Հապա գտեք, էն ո՞վ էին,  
 Որ մի դարում նշան տըվին,  
 Իսկ մյուս դարում ամուսնացան,  
 Ոչ թոռմեցին, ոչ ծերացան,  
 5 Ու մընացին մինչև պըսակ  
 Թառմ ու ջահել, ծաղկահասակ...

Խոսքս, տեսաք, որ կատարվեց...  
 Բայց թե ձեզնից ո՞րը տարվեց,  
 Այդուղ արդեն գործ չունեմ ևս,  
 էն մոցիքուլ տերտերի պես,  
 5 Որ ինչ անի,  
 Միշտ մեղ չունի...  
 Ինձ հանգ էր պետք, իսկ ձեզ՝ փեսա.  
 Իս ինչ զիտեմ խելոք է սա.  
 Հանգում բերեց խեղճ պոետը,  
 10 Ինքն իւ իսկույն եկավ հետք...  
 Այլ է հանգը,  
 Այլ է կյանքը,  
 Ինչ որ հանկարծ հանգում կրգա,  
 Մեկ իւ տեսար՝ կյանքում շըկա,  
 15 Բայց և ինչ որ գտնեք կյանքում,  
 Զեք պատահիլ ոչ մի հանգում—  
 Եվ թող ամեն դարդ ու ցավիդ  
 Հանգն ու վերջը լինի Դավիթ:

## ԱԶՆԻՎ ՏԻԿՆԱՅՔ, ԶԱՀԵԼ ՀՅՈՒՐԵՐ

- Ազնիվ տիկնայք, ջահել հյուրեր,  
Ծատ շեն կյանքում այսպես օրեր...  
Եվ, միշտ այսպես, երբ որ լինի,  
Նըստեք ուրախ մի սեղանի,  
5 Ողջ մոռացած—սիրո ու հոգի  
Նըմիրեցեք տաղ ու երգի.  
Բարձր երգեք խընդում ու սեր.  
Ծատ շեն լինում ուրախ օրեր:  
Ահա լեռներ, կանաչ անտառ,  
10 Գևի կարկաչ, երկինք պայծառ,  
Եվ բաժակներս լի-փըրփըրուն,  
Ինչպես այս մեր սրտերն եռուն,  
Որ աշխուժով թըռչում են վեր.  
Ծատ շեն լինում այսպես ժամեր,  
15 Բայց այստեղից, մեր սիրելի  
Հալեյ, Քյարամ, Աբգար-օղլի,  
Ուր ուղենաք դուք արշավել,  
Չը մոռանաք հեք Ուրավել,  
Եվ այս հարկը, այ իգիթներ,  
20 Ծատ շեն լինում այսպես տըռեր:

- Հայր Գարեգին, մենք երեքով  
Պոետ—գիտուն ազգին հայոց,  
Ընտրվել ենք հանձնաժողով  
Որ մոմ առնենք, սարքենք հոգոց:  
5 Հոգոց սարքենք հայոց ժամում,  
Աղոթք անենք ըստ հայ ժամի,  
Որ տեր աստված իր եղեմում  
Տեղ տա հոգուն Ալիշանի:  
10 Թեև, պետք է այս էլ ասել,  
Ամբողջ տարով շենք գնում ժամ,  
Ու ինչ օրից խելքի հասել,  
Շենք հաղորդվել ոչ մի անգամ:  
15 Զենք հավատում արքայության  
Ինչքան լինի ցանկալի բան,  
Ոչ էլ, ներեք, հայր Գարեգին,  
Զեր հոգոցին ու աղոթքին:  
20 Հանգուցյալը նույնպես թեւ  
Հայ դրախտը շեր հավանում,  
Չուներ և մեր խեղճ ժամի հետ,  
Կուզեր մընալ քավարանում,  
Բայց մենք նրան երախտապարտ  
Ցույց պիտի տանք մեր սերն անհուն,

Թեկուղ իրան կամքին ընդդեմ  
Տանենք հայոց արքայություն:

- 25 Գնա այնտեղ խընկենու տակ  
Նըստի կողքին կուսավորչի,  
Ու ժամանակ առ ժամանակ  
Երբորդության համար վիճի:

Արդարները տըկլոր-տըկլոր

- 30 Շուրջները գան բազմեն բոլոր,  
Բառաշաշ անեն մեծ ծերերին,  
Տևանեն՝ որն է հաղթում որին:

Ահա այսպես բան ենք սիրում  
Թե այս կյանքում, թե հանդերձյալ,  
25 Նրա համար և ձեզ խընդրում  
Ու կրկնում ենք նույնը դարձյալ:

Մւնք ուզում ենք, որ մեր ազգի  
Եկեղեցին լինի ազատ,  
Կըրոնական չըլնի իսկի

- 40 Եվ տա ամեն համ ու լազաթ:

Դուք էլ, հայր սուրբ, լինեք մեզ հետ  
Ազատամիտ, մեծահոգի,  
Ու մըտածեք ինչպես պոետ,  
Որ ազգ ազգից չի էլ չոկի:

- 45 Դե տեսնում եք—ինչպես ենք մենք  
Լուրջ-լոյն նայում այս մեծ գործին,  
Եվ դուք եթե հոգոց շասեք,  
Մւնք կըդիմենք էջմիածին:

Իսկ թե մերժեն նաև այնտեղ

- 50 Մեր այս իղձը սաստիկ անմեղ,

Այն ժամանակ, օ՛, տեր իմ, տեր,  
Որ մեզ շատ խելք պետք է տաս դեռ,

- Այն ժամանակ, հայր Գարեգին,  
Օ՛, Էլ հանգիստ չեն ունենալ  
55 Ոչ հանգուցյալ ծերի հոգին,  
Ոչ գոզեթը մեր լիբերալ:

Պատգամավոր Հ. Թումանյան

\* \* \*

Թափառելով Բորժոմ-պարկում  
Հիշում է Զեղ և ուղարկում  
Շատ բարեներ ու սեր անկեղծ  
Զեր բարեկամ մի բանաստեղծ:

\* \* \*

Մընաս բարով, ուղտ բարեկամ,  
Տըզզաց ճանձը, ամեն անգամ  
Քո լավությունն ևս կհիշեմ,  
Ծնորհակալ եմ, մընաս բարին:  
— Ընդի՞ համար, իոժոռադեմ  
Հարցմոնք արավ էն վիթխարին:  
— Ընդի համար—այ զարմանք բան,  
Նրա համար, որ ինձ այսքան  
Ցույց տըզիր դու պատիվ ու սեր,  
10 Քո ականջում այսքան օրեր  
Ասրել եմ ես ու տաք կացել...  
Ասավ տըզզան մեր պանդոխտը:  
— Ոչ գալըդ եմ ես իմացել,  
Աչ գընալըդ, ասավ ուղտը:

\* \* \*

Ինչ կարող է տալ մի պոետ  
Քնիքուշ, մաքուր, սըրտալի,  
ողջ տալիս ևմ իմ գըրքի հետ,  
էլ բան չունեմ ավելի:

Իմ սիրելի Մըխիթարին  
Եվ գեր-ազնիվ նորա յարին  
Ու կըլաւպըլտան լավ Թամարին,  
Սեր փրկչական քսան դարին,  
5 Քսան դարի շորրորդ տարին,  
Զորրորդ տարու փետրվարին,  
Փետրվարի տասնութ օրին  
Նըվիրում է խորին-խորին,  
Խորին սիրով ու հարգանքով,  
10 Այսքան հանգով ու տանջանքով՝

Հեղինակը

## &lt;ԷՔՍՊՐՈՍ&gt;

- Կարմիր դրոշն ազատության  
 Բացվեց Հայոց սարերում,  
 Յոլաց շողբը առավոտյան,  
 Մեր աշխարհի խավարում:
- 5 Բացվեց, թնդաց քաջ Ֆիդայու  
 Հրացանը մահաբեր,  
 Հայ բողոքը տարավ հեռու,  
 Հեռու աշխարհ ու ափեր:
- 10 Հայոց դժբախտ ժողովուրդ,  
 Ու վեր կացավ Հայը ցրված,  
 Արևելից արևմուտք:
- 15 Վեր են կացել մի մարդու պես,  
 Թէ են առել չն հողմից,  
 Արշավում են կռվի հանդես  
 Ամեն երկրից ու կողմից:
- 20 Խումբ է գալիս ծեր Կովկասից,  
 Հեռու ափից նեղոսի,  
 Խումբ է գալիս երկրեն Պարսից,  
 Պաղ ձյուներեն Հյուսիսի:
- Բանա, կախաղան, սուր, հալածանք  
 Էլ չեն առնի սըրա դեմ,  
 Մինչև շըտան մեզ ազատ կյանք  
 Ու աշխարհը մեր եղեմ:
- 25 Կեցե՛ դրոշն ազատության,  
 Բարձր ու մաքուր, հաստատուն,  
 Կեցե՛ ծերուկ մեր Հայաստան,  
 Կարմիր Սասուն ու Գեյթուն...
- \* \* \*
- Անցավ հին տարին, կանցնի և նորը.  
 Կանցնի՝ և արդյոք մեր անբախտ օրը:

Ну, господа! *այսուհետեւ*  
 Զի կարելի նայել թեթև,  
 Պետք է հոգու, հրսկել արթուն,  
 Ինչո՞ւ է թանկ փողոցում ձուն,  
 Կամ թե անտեր այն շըները  
 Ո՞ւր են քրնում գիշերներ...  
 Պետք է այստեղ հարցը փակել  
 Աւ միաձայն աղաղակել  
     Քաղաքի շահ,  
 10 Հա՛, Հա՛, Հա՛, Հա՛...  
 Կամ կենտրոնը էլեկտրական,  
 Ինչո՞ւ [քաղքից] մոտ է այնքան,  
 Ար թե մի օր պայթի հանկարծ  
 Հինգերորդից ներքն կածի  
 15 Ամբ երեխուն բանաստեղծի,  
     <նրանց> կանի հանկարծամահ.  
     Հա՛, Հա՛, <Հա՛, Հա՛>...

Հետներն առած պատգամ ու թուղթ  
 Գավառացիք, ելած ջուխտ-ջուխտ,  
 Եկան հարգով, սըրտի գողով  
 Համագումար հայոց ժողով:

- 5 — Բարով եկաք, հազար բարի,  
 Դուք ծաղիկներ մեր գավառի.  
 Ողջույն տվավ, ինչպես կարգն էր,  
 Մեր հինօրյա թիֆլիզը ծեր.  
 Դուք, որ էղպես ջուխտ եք գալիս,  
 10 Բա մեզ քա՞նի ձայն եք տալիս,  
 Գավառացի մեր ախակերտինք:  
     — Հինգ:  
     — Բայց թիֆլիզը կենտրոն ու մեծ...  
     — Թող լինի վեց:  
 15 — Զիջում արեք, մեկն ավելի,  
     — Զի կարելի:  
     — Աւրեմն էղպե՞ս.  
 Դև հիմի տես:  
 Թիֆլիզն եկավ շարան-շարան.—  
 20 Ընկերություն, ուսումնարան,  
 Ինձներներ, բըժիշկ, տերտեր,  
 Տիկին, գրող, բյուրո մի բեռ,  
 Կըմբագիրներ թերթերից շատ,  
 Երեցփոխներ մի քանի հատ,  
 25                  Վանքից եկան,  
                 Բանկից եկան,  
                 Երենց տանից,

Ու Քըլդանից...

- Սո՛, էս ինչ է, աստծու խաթեր,  
30 էսպես ժողով չենք տեսել դեռ,  
Այսուհետև ո՞ւր կըմքնա  
Գալառի ձայն... գավառի շահ...  
Այսպես ասին  
Ի միասին
- 35 Մեր Երեան, Գյումրին ու Կարս.  
Աղա Թիֆլիզ նայեց թարս-թարս,  
— Տեղբդ նըստի՛ր, կոպի՛տ գավառ.  
Քառոսն ձայնով ձգեց հավար,  
Այնպես թնդաց ու վեր կացավ,  
40 Որ գավառը նոր հասկացավ,  
Թե ինչին ևն սեյմը ասում,  
Ինչ է իրեն վաղն ըսպասում,  
Ու, վախեցած էս փորձանքից,  
Հանեց իսկույն իրեն ցանկից:

\* \* \*

Պարոնների դարը անցավ,  
Պատճառը չեն հարցնում,  
Անարդարության ծանր օրերից  
Մինքը լիայի աշխարհում:

- 5 Պարոնները կերան ամբողջ  
Աշխատանքը ժողովրդի,  
Ժողովուրդն էլ ոտի կանգնեց,  
Ելավ սարերն իր աշխարքի:

- 6 Էն անաստված պարոնները  
10 Հավլ շթողին ոչ մի գյուղում,  
Եվ գյուղացին ու տերերը  
Կորիվ արին նապիշխովում:

- 7 Բայց խղճացին գյուղացիք,  
Չըկարեցին գլուխները,  
15 Ու գունատված նրանք էսպես  
Շունչ քաշեցին իրենց տներում:

- 16 Նրանց խանում տհկինները  
Կանանչ խաշեցին,  
Սոված աղաները  
20 Առանց ծամել կու տվին:

Կալկածատեր մարդ ու կնկան  
Գոմին > բուսավ երեք հավ,

Գիշերն իրենք վերիցն մըտան,  
Մեծին՝ [էդ երեք] հավերն:

25 Զըղիտեին հասկ թակելը,  
Իրար զլսի զարկեցին  
Ու ձեռների փետե թակերն  
Կուրատեցին ու թողին:

30 Կուրատանքն էլ ընկան, դիպան  
Նրանց քնքույշ ոտներին—  
Ամոթանքից ու զայրութից...

Աշխենիկին՝ իր հայրիկը—  
Ամեն տեսակ մրգով լիքը.  
Պակաս էր միայն բաղիբուդին,  
Էն էլ եկող իր «Ծընունդին»:

190 Օ-ական թվականներ

Որ ինձ հավատաք,  
Երբ որ ասում եմ—

25 Ոչ իւանդս է մարել,  
Ոչ մուղաս մեռել,  
Սակայն շեմ կարող,  
Չեմ կարող գրել:

\* \* \*

Ոչ իւանդս է մարել,  
Ոչ մուղաս մեռել—  
Սակայն շեմ կարող  
Այժմ բան գրել:

5 Կարծես թե օգում,  
Կարծես իմ սրտում  
Մի թույն է <1 անընթ.>,  
Մի խորշակ խեղդում:

10 Բղձեր ու աենշանք,  
Թախիծ ու տանջանք,  
Բոլորը տկար  
Նիրառում են անկյանք:

15 Եվ ճողմանման  
Կորչում է անձայն  
Սրբազան շունչը  
Ազեռության:

20 Ոչ, ես շեմ կարող  
[Չեզ չամար գրել  
[Չեզ ոգեռող]  
Թեկուղ երկու տող:

Այս միայն կը գրեմ,  
Միշտ եւ կը ինդրեմ,

## ԽՈՍՏՈՎԱՆՔ

Ես տակավին մանկուց գիտեմ  
Հիմար խոսել, սուտ ժըպտալ,  
Եվ սիրում եմ՝ շատ մարդկանց դեմ  
Ես դիմակով երևալ:

5 Եվ շատ շըքեր զիտեն կյանքում,  
Որ թեպետե ես՝ պոետ,  
Եվ ըգգում եմ, և մըտածում  
Հաշտ-համաձայն իրենց հետ:  
Ժըպտում եմ, ու ... դուրս է գալիս  
10 Կրխունջն իրեն պատենից,  
Արևի տակ ցույց է տալիս  
[Իրեն] փոքրիկ պողերն ինձ:  
Մինչդեռ գաղտուկ, իրեն պաշտպան  
Քողի տակից, մեն մենակ,  
15 Իմ լուս, խոհուն փիլիսոփան  
Քընընում է շարունակ...  
Ո՞վ, ի՞նչ հաճույք, երբ որ զիտես  
Եղանակներ բազմազան,  
Նվագում եմ, հանում հանդես  
20 Եվ մարդ, ճըճի և գազան:

Ու ողջ՝ հըլու—քո թովշանքին՝  
Ցույց են տալիս ինչ ունեն,  
Որ դու հասու լինիս կյանքին,  
Գաղտնիք լընի [քո առջեւ]:

Ցոլուն ասաղեր, զինջ եթերում  
Ասկրում եք դուք միշտ պայծառ,  
Զեզ շեն հասնում, Ճեզ շեն տիրում  
Ցածի մըրրիկն ու խավար:

5 Ես էլ այդպես շատ ցընորքներ,  
Շատ երազներ ունիմ հուր,  
Որ ապրում են կյանքից շատ վեր,  
Միշտ անարատ, միշտ մաքուր:  
10 [Ու միշտ մաքուր զիտեմ սիրել,  
Հուռ վըշտանալ Ճեզ նըման,  
Էն լուռ վըշտով, հուր սիրով էլ  
Թըռել, մարել հավիտյան:]

Դու գընում ես Անդարձ ճամփան  
 Մըշտաղալար աշխարհքի:  
 . . . դալար իմ Անուշ,  
 Ուր անհայտ են, ուր որ շըկան  
 5 էս շարիքի ու կարիքի  
 Ամեն մի կիրք, ամեն հուշ,  
 Ուր լոկ վերին կարեկցության  
 Շողն է կապում կոպիտ ու ցած  
 էս կյանքի հետ ապաբախտ,  
 10 Ու վայրերում անմահական  
 Մարդն ապրում է հոգիացած,  
 Միշտ երջանիկ ու անհաղթ:  
 Ո՞վ, դու մանկուց քաջածանո՞թ  
 էդ լույս ճամփին երկնաճեմ,  
 15 Քանի անգամ հրբաթե  
 Անցել եմ ևս, ոտներս ամպոտ,  
 Հասել աշխարհքն էն եղեմ—  
 Բայց միշտ, ավաղ, կարճատե,

\* \* \* \* \*  
 Բոլորն հանգել են—ոչ մեկը չըկան...  
 Եվ բանաստեղծի սրտումը հանգան  
 Վառ կրակներ,  
 Աշխույժն ու սնը,  
 5 Սն ու սուզ հագավ  
 Թալսիծը եկավ,  
 Սառով ու մութով:

\* \* \*

Մեկը բարի, թախծոտ ու հեզ,  
Մյուսը շար սատանի պես...

Հրացաններ են ճայթում սրտիս մեջ,  
Հրացաններ են ճայթում անդադար,  
Ու լաց են լինում սարսափած ու խեղճ  
Որբ երեխաններ անթիվ, անհամար:

- 5 — Ինչո՞ւ եք լալիս, անմեղ փոքրիկներ...  
Զեր հայրերն ընկա՞ն <ամենը> կըովում...  
Էլ ոչ ոք շըկա՞ն, որ ձեզ պաշտպանի...  
Վախենո՞ւմ եք դուք էս շար աշխարհում...  
Խեղճ երեխաններ, անիծվի աշխարհն,  
10 Ուր որ դողում է ձեր մանուկ հոգին,  
Անիծված լինի, քանդվի, կործանվի  
Իրեն մթերած շարության տակին...  
Հրացաններ են ճայթում 'սրտիս մեջ,  
Հրացաններ են ճայթում անդադար,  
15 Ու լաց են լինում սարսափած ու խեղճ  
Հայրեր ու մայրեր, անթիվ, անհամար:  
— Ինչո՞ւ եք լալիս, դժբախտ ծնողներ,  
Զեր որդիքն ընկա՞ն <1 անընթ> կըովում.  
Էլ բան շըմնաց կյանքում ձեզ համար,  
20 Էլ ոչ ոք շըկա՞ն՝ ձեզ մխիթարի.  
Ու ողբում եք դուք դատարկ աշխարհում...  
Դըժբախտ ծնողներ, անիծված լինին,  
Որ դատարկեցին ձեր կյանքը էսպես.

Հրացաններ են ճայթում սրտիս մեջ,  
25 Հրացաններ են ճայթում անդադար,  
Ընդհանուր սուր է ծավալվում անվերջ  
Ու պաղ ոռնում է ժամանակը շաբ:

Եվ ժամանակը լինի անիծված,  
Եվ աշխարհքը լի շարով ու թույնով,  
30 Եվ մեր երգերը լինին անիծված՝  
Լիքը արցունքով, լիքը արյունով:

Բարի իրիկուն, վշտալի մայրեր,  
Կնշ ցեղ էլ լինեք,  
Կնշ տեղ էլ լինեք,  
\* \* \* ու սուր  
5 Իմ մայրն էլ ձեզ պես,  
Դուք էլ նըս պես,  
Ճրիազի առջե,  
Կրրակի առջե,  
10 Դուան առաջե  
Կամ լուսամուտի, ]  
Անկողնում անքուն  
Պտույտ եք կալիս  
Ճամբա եք պահում  
15 Երբ պետք է ծեզի,  
Երբ պետք է մրթնի,  
[Իրբ պետք է օրն անցնի,  
Երբ կյանքը անցնի—  
Տանջանքը անցնի ]  
20 [ . . . . . ]  
Բարի իրիկուն, վշտալի մայրեր,  
Որ զիշերն՝ անքուն, ցերեկը՝ Երեր  
Մի հոգս ունիք լոկ,  
Երբ պիափ արդյոք  
25 Ես կյանքը անցնի,

Տանշանքը անցնի:  
Ի՞նչ ցեղ էլ լինեք,  
Ի՞նչ տեղ էլ լինեք,  
. . . . . ու սուգ

30 Իմ մայրերն եք դուք:

\* \* \*

Նըրանց լըթաղեցին քրիստոնեի ծեսով,  
Եվ նրանք զնացին աստծո դատաստան.  
Այնպէս ճեղքած, արնոտ երեսով:

Եվ ոչ մի աղոթք նրանց բաժին չեղավ,  
5 Որ առաջնորդեր մեղավորներին,  
Եվ ոչ մի մաղթանք—որ այնտեղ  
Ռարեխոս լիներ մեղքերի համար:

Միմիայն մի հույս ունեին նրանք,  
Որ պահել էին մութ անտառներում,  
10 թւ կա մի ուրիշ դատաստան ու կյանք  
Մի տեղ—ուր մարդու ձեռը չի տիրում:

Եվ այն ծառերը, նրանց հոտն ու հովանին,  
էլ այն մարդիկը—նրանց կյանքն կանի (?):

## ԻՄ ԱՐՓԻԿԻՆ

[ԱՇԻ, ԱՐՓԻԿ'Կ ջան, որ արփի ես  
Բացվում հոգուս երկընքում,  
Գիտե՞ս քանի արփի բացվեց  
Քեղնից առաջ էս կյանքում...]

5 Քո լույս ու կույս շաղով, շողով  
Թարմ շաղախված իմ սըրտում  
Անքուն վախով, թաքուն դողով  
Էս սև ամպն է պըտըտվում...

10 [Բայց] դու փայլիր, խաղա, շողա,  
Կյանքը լինի քեզ եղեմ,  
Ցոլա, ժըպտա, հուր բոց տեղա  
Արնմուտքի մութի դեմ:

15 Տիեզերք է իմ մեծ հոգին,  
Դու իր արփին բոցավառ,  
Սա անդունդներ ունի մըթին,  
Դու անըստվիր ու պայծառ,

20 [ԱՇԻ, ԱՐՓԻԿ'Կ ջան, քանի՛-քանի՛  
Սիրտ կա թաղված ոտիդ տակ,  
Քանի արփի կա գեղանի  
Մուգիած խավարն անհատակ...]

## ԵՐԵՒՆԻ ՆՄԱՆ

Երեխի նըման մըտա ես աշխարհ,  
Անվերջ միամիտ, անխելք անձնըվեր.  
Սըրտումըս ինչ կար, ձեռքիս ինչ որ կար՝  
Բաժնեցի մարդկանց՝ [անսեր, անտարբեր]։

5 Երեխի նըման խարեցին ինձ շատ,  
Երազուն ու խենթ երեխի նըման.  
Աաղընցին երազ, [և սեր], և հավատ,  
Խընդացին վըրես իմ դեմ հանդիման։

10 Երեխի նըման վարվեցին ինձ հետ,  
Մի խորթ ու օտար երեխի նըման.  
Ամեն հաճուցիս նայեցին միշտ խեթ,  
Վըրդովմունք տըրին ամեն մի վայրկյան։

15 Երեխի նըման տանշեցին ինձ բիրտ  
Ընկեր, մերձավոր, և եղբայր, և կին.  
Ես էլ հուսահատ, զըզված խորասիրտ  
Երեխի նըման թողի ամենքին...

20 Եվ ահա էսպես՝ հոգնած ու վշտոտ,  
Դադարզուն եղա, ամենքից փախա.  
Ամենքից փախած գալիս եմ ձեզ մոտ—  
Եվ դուք էլ, [ավա՛ղ], ինձ պես երեխա։

## Էկսպրոմտ

### ՄԱՆԵՐԱԿ ՄՈՇԻԿ

Իմ Անուշը, իմ ողջը թանկ,  
Իմ [խնդություն], իմ թարմ հրճվանք,  
Առ քընարս... լանջիդ վըրա  
Ասաղի փայլով շողա թող նա,  
Եվ երբ կյանքում պատի գիշեր  
Ճամփա ցույց տա միշտ դեպի վեր:

\* \* \*

Ափսո՞ս, որ չես տեսնում բընավ  
Տագնապին հոգուս խոր ու վեհ.  
Հաղար անգամ ափսոս ու ցավ,  
Որ պիտ տեսնեմ երթեւք...

\* \* \*

Իրենց վաղանց կյանքի կեսին՝  
Հովհաննեսը Հովհաննեսին:

\* \* \*

Իմ թամարիկին,  
Որ իր հայրիկին  
Ճանալեց նոր—  
Էսօր:

ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ  
(Խմ բարեկամ Շ. Միսաքյանին)

Իմ սըրտին զարկին, էնքան գընդակներ,  
Մեշտեղն էլ զարկին՝ անշուշտ մահաբեր...  
Նայի՛ր, թե ինչքա՞ն մեծ սիրտ ունեմ ես,—  
Կանգնած եմ ահա, ու շեմ ընկել դեռ:

Ինչ էլ բաշխեն  
Քեզ, իմ Աշխեն,  
Սրանից վեր  
Զըկա նվեր:

## ԱՐՈՒՍՅԱԿ

Օդն են ցընդիլ երազները մշուշոտ,  
 Փշում է պաղ դաժան քամին ձյունաբեր:  
 Իրեն արտում արյունաբռւյր ու փոշոտ  
 Նա ընկած է իմ առաջին կիսամեռ:  
 5 Ո՞վ է արդյոք հանցավորը նըզոված,  
 Հին թշնամի՞ն արյունառուշտ, անհավատ,  
 Բարեկա՞մը նենգավոր,  
 Թե՞ իր որդին պոռոտախոս, ապիկառ...

## I

Պայծառ  
 Ու վառ  
 Ծողեր հագած  
 Անապակ,

## II

5 Ո՞վ, թարմ, ուրախ,  
 Շաղաղ-շարմաղ  
 Պայծառ ու պաղ  
 Լույս:

10 Բարձըր սարի,  
 Սաղկի, զըրի,  
 Սիլո գերի  
 Կույս:

15 Անտառ—բույսի,  
 Անտեր որսի,  
 Անսեր կույսի  
 Հույս:

Կանանց—ճերմակ  
 Աշերդ համակ

Կիրք, ան ու զարկ,  
20 Հովով...

### III

Մագի՛ր, ծագի՛ր,  
Զարկի՛ր, զարկի՛ր,  
Զարի, շարքի  
Մութն հալածի՛ր

25 Արուայա՛կ,  
Լույս ցերեկի  
Դուռը բացիր,  
Արուայա՛կ:

Հիվանդն անքուն,  
30 Տրխուր մահին,  
Ուսմիորդն անտուն,  
Ճամփի միջին  
Մընում են քեզ,  
Երբ տի ծագես:

35 Հավքը [թառած]  
Մասի ճյուղից,  
Մառը [սառած]  
Մըթընչաղից  
Մընում են քեզ,  
40 Երբ տի ծագես:

Հանդվորն հեռու,  
Խուլ հանդերում,  
Եղնիկն...  
Խոր անտառում,  
45 Մընում են քեզ,  
Երբ տի ծագես:  
Մագի՛ր, ծագի՛ր,

Զարկի՛ր, զարկի՛ր,  
Զարի, շարքի  
Մութն հալածի՛ր,  
Արուայա՛կ,  
Լույս ցերեկի,  
Դուռը բացիր,  
Արուայա՛կ:

### IV

55 Ահա ծագեց,  
Ահա զարկեց  
Արուայակը  
Աշագեղ,  
Լուս...

60 Ու ոսկեհեր  
Նաժիշտներով իր շըքեղ:  
Զահը ձեռին,  
Ցոլաց վերին  
Դարպասներից

65 Վաղորդյան,  
Վարդ մատներով  
Ետ քաշեց ծով  
Վարագույրը  
Մե մըթան:

70 [Կանգնեց] հըզոր  
Ու լուսավոր  
Անափ ծովում  
Լազուրի,  
Ցոլաց, ցայտից,  
75 Հեռու նհտեց  
Խուրձերն [առատ]  
Լույսերի:

Ու [լուսածին]

- Մոր առաջին,  
**80** Ավետավոր  
 Համասփյուռ,  
 Թղուավ թեթև,  
 Արագաթև  
 Քընքուշ մանուկն  
**85** էն Զեփյուռ:
- Ցողոտ, շաղոտ,  
 Անուշահոտ,  
 Թկին արավ  
 Ու գընաց,  
**90** Զով հով տալով  
 Ու խայտալով  
 Դւակ աշխարհը  
 Քընեած:
- Միլ ու ծաղիկ  
**95** Մւղմիկ-մեղմիկ  
 Օբորվեցին  
 Նազանքով.  
 Հաղար ձեն ձուն  
 Օրնեց աստծուն  
**100** Կիբը անճառ  
 Բերկրանքով:  
 Գիշերն հատած  
 Ու գոնատված  
 Քաշվեց անդունդն  
**105** Իր մըթին,  
 Չարքերն իլ ետ  
 Փախան անհետ  
 Փապարները  
 Ինավարչտին:
- 110** Ամեն մի տուն,  
 Ամեն մի բուն

- Լըցվեց լուսով նորածին,  
 Ամեն անբան  
 Ու բանական  
**115** Ելավ աշխույժ իր գործին:

## V

- Ու փայլում էր սեգ դիցուհին  
 Հաղթանակով աստվածային  
 Մութի դիմաց ջահը ձեռին—  
 Արևելքի երկընքում,  
**120** Լույս ու զվարիթ երկընքում,  
 Լազոր ու վարդ երկընքում:  
 Մարդ, անասուն, թրոշուն, մրջյուն,  
 Ամեն մի ձեն, ամեն հընչյուն  
 Ուղարկում էր նըրան ողջույն  
**125** Արևելքի երկընքում էն:
- Փառք լուսաբեր աստղին էն պերճ,  
 Որ փայլում է խաղաղ, անշեղ  
 Քընատ, գունատ աւտղերի մեջ,  
 Արևելքի երկնքում էն:

## VI

- 130** Ծեգը բացվեց:  
 Հըպարտ ու մեծ,  
 Հագած ամբողջ կըրակ ու հուր,  
 Ելստած կառքը իր ոսկեհուռ,  
 Հոխ ամպերը, կուտակ-կուտակ,  
**135** Առած իր շուրջն ու ոտի տակ,  
 Վեր բարձրացավ Արկը պերճ  
 Ու ճառագեց անհունի մեջ:

Փառքից հարբած

Ագահ աստված,

- 140 Փըուց հայացքն ամենատես,  
Չափեց անշափն [ագահ ու վես]  
Ու նկատեց... կապույտ հեռվում  
Շողշողում էր ու վառվըռում  
Հմայքներով :ըրաշագեղ  
145 Արուսյակը—շարմաղ, շըքեղ:

Կըրքից հարբած,

Հուր գիրկը բաց

Ողջ երկընքով, տիեզերքով,

- [Առաջ] վարեց արագ ձեռքով  
150 Նըյուզները իր ոսկեպայտ,  
Եղ շող տալով ու հըրացայտ,  
Հասավ, առագ իր գըրկի մեջ,  
Հալեց, ձուկեց իր փառքի մեջ...



## ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ



ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ  
(էջ 23)

- |                 |                                                                                                              |
|-----------------|--------------------------------------------------------------------------------------------------------------|
| 12 Դփ           | Սըրտիս ականջին պատմելով<br>թաքուն...                                                                         |
| 20 Դփ, ԲԲ, ԲԲ   | Այդ անդընդախոր ձորերըդ լըցնեմ:<br>Սըրտիս այս տանջող վերքերի նըման.                                           |
| 22 Դփ<br>ԲԲ, ԲԲ | Սըրտիս այս խորունկ վերքերի նըման.<br>Աստծո հարվածի հետքերն եք դուք էլ,<br>Դուք է՞լ եք, տեսնեմ, այնքան մեծ ու |
| 23 Դփ           |                                                                                                              |
| 27 Դփ, ԲԲ, ԲԲ   |                                                                                                              |
| 28 Դփ, ԲԲ<br>ԲԲ | իսոր,<br>Հոգուս անհատակ թախիծն է ինչ որ...<br>Ինչպես իմ հոգու թախիծն ահավոր...                               |

1881

«ՀՈԳՈՒՄ ՀԱՏՈՐ...»  
(էջ 24)

- |       |                       |
|-------|-----------------------|
| 4 Խը. | Ունի նաև՝ Մի զարմանար |
|-------|-----------------------|

1887

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ  
(էջ 26)

հատված

Մեր պապերն էլ ունեին թագ,  
Սուր ունեին ձեռքներին,

Նրանց թոռները ոտնատակ,  
Ա՛յ, հասել են այս օրին,  
  
Էլ աշխատանք, հավատ, հույս, սեր,  
Էլ մեր դառը քրտինքը,  
Շատ են կոտրել այդպես սրեր,  
Աղորմած է երկինքը:

- 5—7 ինք., ՄՃ, Դ, ԴՓ, ԲԲ Քաշիր, եզր, ուսիդ մատաղ,  
Հաշիր, քաշենք, վար անենք,  
Ճիպտին արա, քշիր հոտաղ,  
Դեհ քաշեցեք, դեհ քաշեցեք,  
Էլ մեր դառը քրտինքը,  
Չարչարվեցեք, աշխատեցեք—  
Աղորմած է երկինքը:  
Երեխեքը մերկ ու տկլոր—  
Կրակն ածես հոտ չի գալ,  
Սոված նստած են, ամեն օր  
Հարեանը հաց չի տալ:  
Պակասությունը սևերես է,  
Հալածված եմ իմ տանից,  
Մինչև հարկ է, պարտք է, ծես է,  
Արլրացնեմ գութանից<sup>1:</sup>
- 13—24 Խենազիր շոնի:  
13—20 ԲՄ II շոնի:  
17 Դ, ԴՓ  
20—ց նետ ԴՓ Զեռքս դատարկ, ուժըս հատած:  
Ինչ որ աշքս բաց եմ արել  
Պակաս եմ ու պարտական,  
Քո մաճըդ եմ ձեռքըս առել,  
Իմ ապավեն—իմ գութան:
- Աստված հերու կարկուտ զըրկեց,  
Բարկացել էր ինձ վըրա,

Մի կողմից էլ բանդեն<sup>1</sup> զըրկեց,  
Կորչում էի սովամահ...

Բայց շըգիտեմ ես վըհատել,  
Սով, եկ<sup>2</sup> լինի, թե երաշտ,  
Խոփ ու ձեկիշըդ կարկատել,  
Դուրս եմ եկել կրկին դաշտ...

ԱՄԱՌՎԱ ԳԻԾԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ  
(Է 27)

Տարբերակ

ԱՄԱՌԱՑԻՆ ԳԻԾԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Հուսընկա գիշեր,  
Երկինքը պայծառ.  
Անհամար աստղեր  
Ճրըքճրըքում են վառ:

5 Քնած է Դսեղ՝  
Հին հայի գյուղը,  
Մթնած ու լուռ է  
Գյուղացու խուղը:

6 Վ ժիր գյուղական  
10 Բնտանիքն ահա,  
Սրահում, կալում,  
Կամ կտրի վերա,  
Խոնջացած օրվան  
Դառն աշխատանքից,  
15 Ոտնուծոց արած\*,  
Քնած են հանգիստ:

<sup>1</sup> Դի-ում՝ Հողեղենը, մարդը:

<sup>2</sup> Դի-ում՝ Անձրւալին:

\* Գյուղերամ վերմակի սակագության պատճառվ ունեւած են անոս—մի վերմակի տակ պառկամ են այս և հակառակ կողմերից, այնպես որ մեկի ուները մյուսի ծոցին են լինում:

Մերմանուկ այսպես  
Գրկված են, քնած.  
Վերկիցն ասես  
20 Ժպտում է աստված:

Միայն աղմկում է  
Այս լոռոթյունը  
Գյուղացու սայլի  
Խուլ ճռնչյունը:  
  
25 Եվ նրա գլխին  
Կանգնած գյուղացին  
Հորովել է երգում,  
Հանգիստ է հոգին:  
  
30 Երջանիկ է նա  
Բնության գրկում,  
Հոգետանց ցավեր  
Չունե յուր սրտում:

Հովտում ողջ գյուղը

6 և II

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ  
(էջ 28)

2 24, Դի  
11—12  
  
19  
22—23  
  
27

Իրանց հասակի կարգով, ժալպատակ,  
Նըրանց առաջին գլխամերկ կանգնած,  
Զեռքներս խոնարհ կրծքներիս դրած,  
Եվ մեզ օրհնեցին. «Ապրե՞ք, երեխե՞ք,  
Ուրախ երգերըս վշտալի դարձան  
Եվ ես հիշեցի մեր օրը լալիս,  
Խաղաղություն ձեզ, մեր խելոք պապեր,

13 Ինք.

2  
3 ա  
բ  
4 ա  
բ  
9—18 Զի պահպանվել:  
28 ա  
Ռ  
25—37 Զի պահպանվել:  
39  
44  
47—56 Զի պահպանվել:  
65—73 Զի պահպանվել:  
83—92 Զի պահպանվել:  
101—104 Զի պահպանվել:

1888

ՆԱՀԱՏԱԿ  
(էջ 30)

ԽԵՇԵԱԳՐԻ մշակման պատկերը

Երկնաբերձ լեռան [ծառաշատ] կրծքին,  
Դրախտի հուսով մի սուրբ նահատակ,  
Հանգում է վաղուց մի սուրբ նահատակ,  
Հանգում է հնուց, դարերից ի վեր  
Կուսական և թավ ծմակի միջին,

Բարձրացավ տաճար մի մեծակամար:  
Բարձրացավ խորան գեղեցկակամար:

Եվ ժողովուրդը  
(տողի շարանակությունը չի գրված)  
Մարդկերանցն անհայտ մեղքերի համար:

1889

«ՆԵՐԻՐ, ՈՎ ԿՈՒՅՍ, ՈՐ ՀՈՒԶԵՑԻ...»  
(էջ 41)

Ների՛ր, ո՛վ կույս, եռմունքիս

«ԵՐԲ ԵՍ ՏԽՈՒՐ, ՀՈՒՍԱՀԱՍ...»  
(էջ 43)

10 Ինք. Ունի նաև՝ Հուսադրում է [ինձ] հանկարծ.

«ԱՅԴԻ ԻՆՉ ՍՈՏԱՄԱԾ ՏԽՐՈՒԹՅՈՒՆ Է ՔԵԶ...»  
(էջ 45)

Ինքնազիր ճատկածի մշակման պատկերը

- 5 իմ հայրենիքս տխուզ...
- 7 ա Ամեն տեղ միայն [բռնություն անարգ]
- բ Ամեն տեղ միայն, միայն ցավ...
- 17 Մի՞թե տրտմության թախիծը այդպես
- 19 ա [ԵՎ] մի՞թե [երբեք էլ] չէ երգելու
- բ Մի՞թե այլևս նա չէ երգելու
- 20 ա [Նա իր] պապերի երգած խրախուզը,
- բ իրան պապերի երգած խրախուզը:

«ՊԱՆԴՈՒԽԾՆ ԵՐԳԵՑ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ...»  
(էջ 48)

23 ինք. Ունի նաև՝ հեղձը [երգեց], ողբաց մենակ...

«ՄԻ՛ ՈՐՈՆԻՐ ՄԻ ԺԱՄՄԱՆԱԿ...»  
(էջ 49)

4—7 ԲՄ Եվ դատարկ է տեղը հիմա:  
Մի՛ արտասվիր... հեռո՛ւ, խնդրեմ.  
Քո հայացքից միայն տխրադեմ  
Հիշատակներ պիտի զարթնեն,

ԳԻԾԵՐԱՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂԻ ԴԻՄԱՑ  
(էջ 56)

2 ինք. [Հանգում են] հավարի գրկում արդեն  
ընկղմված,  
6 Այն սիրատենչակ սիրահարներին,

20-ից նետ

22—23

[Դուն ավետեցիր ժամն հանգստության  
հոնջացած մարդուն բազմաշարշարանք,  
իսկ բանաստեղծին, իրան դյուրեկան  
կրքերի հուզմունք և հոգու տանջանք]:  
Ինչպես սիրուհու փայփայած տենչանք,  
Ամենայն գիշեր կրծքում թոշում ես

ԴԱՐՁՅԱԼ ՆՐԱՆՑ  
(էջ 58)

12 ինք. Ունի նաև՝ [Հովանի] բերել հոչակված լորին.

«Ո՛չ, ԽՆԱՑԵՑԵՔ, ՄԻ՛ ՀԻԾԵՑԵՑԵՔ ԻՆՉ...»  
(էջ 60)

### Տարբերակ I

Ո՛հ, խնայեցեք, մի հիշեցնեք ինձ,  
թե ինչպես էր նա արտասուզ թափում,  
երբ շարագործի նենգավոր խոսքից  
հարված, ակներև կորուստն էր ողբում.

5 Ես կանգնած էի տկար և անզոր,  
Զգայուն սրտով լուռ հանդիսական,  
Ա՛խ, ինչպես հանկարծ բացվեցավ  
լեզուս  
Եվ ինչպես նրան կանգնեցի պաշտպան:

6 Եվ այնուհետև, ո՞վ երանություն,  
10 Մի օր էր, մի ժամ, գուցե մի վայրկյան...

<sup>9 9</sup> ինք. Եվ այնուհետև ես լավ շեմ հիշում, թե այն օրվանից  
10-ից նետ [Միրս ժամերը այսպես են հաշվում]

Հեռու ինձանից զուր հիշողություն  
Առաջին սիրո անհույս կորստյան.

Մի՛ հիշեցնեք, մի՛, թե ինչպես դաժան  
Մարդիկ իրարից անջատեցին մեզ,  
15 թե ոնց եմ ապրում նրանից բաժան.  
Թողե՛ք ինձ հանգիստ, ես գոհ եմ  
այսպես...

Օ՛, ես չեմ կարող շարշարվել անվերջ,  
Ուզում եմ խնդալ ցավերից հեռի,  
Եվ մոռացության ալիքների մեջ  
20 թաղել հիշատակն անցած օրերի:

### Տարբերակ II

Ո՛չ, ինայեցեք, մի՛ հիշեցնեք ինձ,  
թե ինչպես էր նա արտասուր թափում,  
Երբ շարագործի նենգավոր խոսքից  
Խարված, [ընկել էր] ակներև կորուստն  
էր ողբում:

5 [Մինչդեռ ծնկաշոք նա հեկեկալով  
Սիրտ էր կտրատում,  
Այն քարասիրտը ժպիրհ ծիծաղով  
Նայում էր անփույթ և չէր ամաշում.]  
Ես կանգնած էի տկար ու անզոր,  
10 Զգայուն սրտով լուր հանդիսական,  
Ա՛խ, ինչպես հանկարծ բացվեցավ  
լեզու,  
• Եվ ինչպես նրան կանգնեցի պաշտպան:

11—14 Հեռու ինձանից [տխուր հիշատակն] զուր հիշողություն  
Իմ [երանության] հստակ սիրո անհույս կորստյան  
[օ՛] Մի՛ հիշեցնեք, մի՛, թե ինչպես դաժան  
Մարդիկ իրարից [մեզ բաժան] անջատեցին մեզ,  
17—18 [Չէ] օ՛, և չեմ կարող շարշարվել անվերջ  
Ուզում եմ խնդալ...

8 ԲՄ II

10

12

12-ից հետո

Բախտը չի մատնել սիրո վտանգին:  
Մարդիկ իրարից անջատեցին մեզ,  
Թողեք ինձ հանգիստ—ես գոհ եմ այսպես...  
Ո՛չ, ես չեմ կարող շարշարվել անվերջ,  
Ուզում եմ խնդալ ցավերից հեռի,  
Եվ մոռացության ալիքների մեջ  
Թաղել հիշատակն անցած օրերի:

ՃիշողութՅուն ՀԱՅՐԵՆԻՔԻՑ  
(էջ 61)

ԹԸԱ պահվող բառատողը

Ա՛յ, մեր աղքատ հարևանի  
Որդին տկլոր ու սալար,  
Կտեր ծայրին կուշ եկած  
Լաց է լինում միալար:

Խճնազիր հատվածի մշակման պատկեր

23

25 ա

բ

գ

28 ա

բ

Ա՛խ, անհանգիստ, շար եղբայրը  
Մեղեդիական ձայն մայրենի  
Եվ մայրական  
Մորս ձայնը մեղեդիական  
Հետևում է [ինձ] զգույշ,  
ինձ հետևում է զգույշ:

«Ո՛չ, ՄԵ՛ՂՄԱՑՆԵԼ 2ԵՍ ԿԱՐՈՂ ՈՐԻՆ...»  
(էջ 64)

Ա. իճնազրի մշակման պատկեր

Ակսում է 21-րդ տողից.

21 ա

բ

[Բայց աղաղակն] և գոյության  
Կյանքի աղմուկն և գոյության

27 ա  
 բ  
 35 ա  
 բ  
 37 ա  
 բ  
 [Համարձակված] և համարձակ  
 Ոգնորված և համարձակ  
 [Անգիտությամբ և ինքնակամ]  
 Համարձակված, հոժարակամ  
 Հոգիս անշափ է տրտում,  
 Հոգիս տիսուր է, տրտում.

Վերջում անի նաև մեկ հավելյալ ժառանազ.

Եվ ինձ տեսնել, խորտակվածին  
 Նորից [դժվար է] էլ շունչ առնել,  
 Բայց [իմանաս] դու գիտես, թե ինչպես և  
 Ուզում ազատ սավառնել:

ՀԱՄԵՐԳ.  
 (Էջ 70)

5 Բոլոր մյուս երաժշտակություններում.

6—7 ԲՄ II, ԴՓ  
 Չայնակցում է յուր թոռնիկի երգին,  
 Այնպես է մոտիկ անտառը կամաց  
 8—9 ԲՄ II, ԴՓ, ԲԲ  
 Արձագանք տալիս ջրի աղմուկին:  
 Սակայն բնության զվարթ համերգի  
 Անխոս ունկնդիրն հավիտենական,  
 Ունկնդիրն անխոս, հավիտենական,  
 10 ԲՄ II, ԴՓ  
 ԲԲ, ԲԲ  
 11 ԲՄ II, ԴՓ  
 Ժայռը մտախոհ յուր անհայտ մտքի

ԳԻԾԵՐ  
 (Էջ 76)

25 ՏՊ, ԲԲ  
 Այն ճամփորդն է, ճամփի տակին  
 Այն ծնողն է իր զավակին  
 Այն կտրիճն է հայրենատենչ

«ԿՈՒՐԾՔՍ ԵՐԲԵՄՆ ԵՌ Է ԳԱԼԻՍ ԵՎ ՀՈՒԶՎՈՒՄ...»  
 (Էջ 78)

2 ՄՃ  
 6  
 8  
 Ես մնում եմ անշարժ, ինչպես մի արձան,  
 Եվ սիրատենչ կուսի կուրծքին է փարվում,  
 Աշխատողի տիսուր ճակատը համբուրում...

1891

«ԱՌԽ, ԵՍ ԵՐԱՆԻ...»  
 (Էջ 83)

3—4 ՄՃ  
 5 ՄՃ, ԲՄ II, ԴՓ  
 7—9  
 Սաստիկ ճայթյունով  
 Ամպերի միջից  
 Թուշեի վերև,  
 Եվ պատառեի  
 Կամարն երկնքի,  
 Ցույց տայի երկրին

ԿԱՆՉ  
 (Էջ 85)

15—16 Ինք., ԲՄ II  
 Եթե դու աստված  
 Ես խաղաղության,  
 Խլացավ իսկույն  
 Ինչո՞ւ չես գալիս,  
 Ո՞ւր ես, եթե կաս,  
 Թե դու չես տալիս  
 Կեղծին պատուհաս,

Այս ժառանազը ԲՄ II-ում դրված է 53-րդ տողից նետ և սրանով պարագան է ստանավոր:

ՆՎԵՐ ԱՆ. ԱԲ.-ԻՆ

(էջ 89)

1—4 ինք. շունի

11

ԵՎ թոշունները, որ ճռվողելով,

ՍԱՐԵՐՈՒՄ

(էջ 92)

1 ինք., ԲՄ 11

4—5

6 ինք.

ԲՄ 11

7—8 ինք., ԲՄ 11

11

12-ից հետո

13—15

25—28 ԲԹ շունի

28 ինք., ԲՄ 11

28-ից հետո ինք.

ԲՄ 11

Խնմագրում կան նետոյալ նեղինակային ծանրագրությունները.  
Ա. Քոշաքար սարը գտնվում է Սևանա լճի հյուսիսային կողմը:

Մութը արդեն գետինն առավ  
Եվ ողջ թաղվեց խավարում.  
Տիուր, ամպած երկնքիցը  
Կամաց անձրեւ է շաղում:  
Մանր անձրեւ է շաղում:  
Հեռու լերանց հետեկիցը  
Մերթ ծովիանն է խաղում:  
Պտըտվելով սարի տակից  
Բինում լռեց աղաղակը,  
Եվ հանգչում են վաստակած,  
Միայն վրանում հանգչող կրակը  
Մերթ բռնկում է հանկարծ:  
Բայց հովիվը դեռ արթուն է,  
Դեռ կանգնած է արխաջում,  
Անքուն աշքով դեռ հսկում է

Մութն է գիշերն-ակնակիր  
Հեղեղը խուզ շրջփում է,  
Վայր է հոսում անընդհատ,  
Աշքն ակամա մարդ խփում է  
Եվ կանգնում է հուսահատ:  
Հեղեղը խուզ շրջփում է,  
Վայր է հոսում անընդհատ,  
«Տարան... հասե՞ք...» դեռ լսվում է  
Հովվի ձայնը հեռացած:

Բ. Բինա-սարվորի վրանների խումբ:

Գ. Արխաջ—տեղը, որ վեր են անում (կանգնեցնում են) ոչխարների  
հոտը:

Դ. («Հե՛յ նեյի՛» համար)—Մի բացականչություն է, որով հովիվը  
հայտնում է յուր արթնությունը և սպասում է գողերին կամ գաղաններին:

Ե. Հավար—օգնության աղերս—բացականչություն:

Հեղինակային ծանրագրություններ կան նաև ԲՄ 11-ում.

Ա. Մովիան—փայլակ:

Բ. Արխաջ, թուրքերն բառ է—հոտի բացօդյա հանգստության տեղն է.

Գ. («Թի՛» համար)—Այն որոշակ տեղն է, որտեղից շունը հսկում է:

«ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԵԼ Է ԿՅԱՆՔԻՆ...»

(էջ 95)

15 ինք. Ունի եակ՝

ՄԻ՞թե շեք սիրում հայոց պարծանքը,

ԽԵՂԾ ԱԴԱՄՑԱՆ

(էջ 97)

3—5 ինք.

Այն շրթունքները պատմում էին ինձ  
լիրի, Համլետի, տաք մավրի սրտից,  
Այն աշքերն ուժեղ հրով ցոլանում—

ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

(էջ 99)

Տարբերակ

ԳԻԾԵՐԱՅԻՆ ՄՏՈՐՄՈՒՆՔ

Եյ աստղե՛ր, աստղե՛ր,  
Երկընքի աշքեր,  
Որ այդպիս ցրված  
Շողում եք վառված,—  
5 Գիտե՞ք թե ինչեր

Կամ ինչ գիշերներ  
 Հիշեցնում եք ինձ...  
 Ապշեցնում եք ինձ.—  
 10 Շողում էիք դուք,  
 Երբ ես դեռ մանուկ,  
 Աշխույժ ու կայտառ,  
 Զեզ նման պայծառ,  
 Թըրթըռում էի  
 Եվ ցավ շունեի:  
 15 Շողում եք և արդ,  
 Երբ երիտասարդ,  
 Անհուն հույսերով,  
 Խանդավառ սիրով  
 Եվ միշտ ուշառու  
 20 Նայում եմ հեռու...  
 Կշողաք նաև  
 Շիրիմիս վերև...

«ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵԻՐ, ՊԱՏՄՈՒՄ ԵԻՐ ԻՆՉ...»  
 (էջ 100)

10—11 ԲՄ II      Մերթ վառվում էին բարկության հրով...  
 Ինձ թվում էր, թե երազում էի,  
 13      Մի խուլ մուզիկա և ոչ թե բարբառ...

ՈՒՐՈՒ  
 (էջ 102)

10-ից նետ «Բարբառ» 0°, միթե դո՞ւ ես,  
 Որ երևում ես  
 Նազելի շնորհքով,

6 ինք. ա Կամ ինչ գիշերներ      18 ինք. ա Սրտալի սիրով  
 բ Թանի գիշերներ      բ Թըրթում սիրով  
 11 ինք. ա Աշխույժ ու կայտառ,  
 բ Տակավին կայտառ,

Եվ թաշկինակով  
 Երեսըդ ծածկած  
 Լալիս ես կամաց...  
 Իմ լուս սենեկի  
 Այդ դո՞ւ ես լինում:

14  
 16

«ՍԻՐԵԼԻ ԱԶԵՐ...»  
 (էջ 103)

5 ՏՊ  
 8  
 18—19

Լցնում եք հոգիս,  
 Ցանկությունով լի  
 Զեզ ապշած պաշտել  
 Ես միայն կուզեի,

«ԹԵ ՀՈԳԻՆԵԼ ԵՍ ՀԱՂԹԱՀԱՐՎԱԾ...»  
 (էջ 104)

ԻԵՔԵԱԳՐԻ մշակման պատկերը

2 ա  
 բ  
 23 ա  
 բ  
 գ

Կյանքի մանր հոգսերով,  
 Կյանքի անվերջ հոգսերով,  
 Ցույց տուր ո՞ւր է այնտեղ աստված,  
 Այնտեղ պիտի լինի աստված,  
 Այնտեղ պիտի ապրի աստված,

1892

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ  
 (էջ 108)

Գլխիկոր նստած, մտախոհ և լուս,  
 Նրա ճակատը մութն էր առավել  
 Նորա ճակատը մութն էր առավել  
 Նա պատրաստվում էր սեր-լույս ծավալել

- 9—10 ինք., ՄՃ, ԲՄ II Այնտեղ լսում էր աղմուկը մարդկանց  
Անօրենք երկրի ամեն մի ծայրից.
- 11 ինք., ՄՃ Յափում էր նրա սիրտը վշտացած  
ԲՄ II Յափում էր նորա մեծ սիրտը շարժված  
Դ, Դփ Եվ վշտանում էր սիրտն աստվածային
- 12 ինք., ՄՃ Մոլության անհոգ երգերի ձայնից.  
ԲՄ II Մոլության երգի և սուզի ձայնից.  
Դ, Դփ Մոլության երգի, սուզի ձայներից...
- 13 ԲՄ II Եվ անապատում մի քարի վերա  
ԲԲ Եվ անապատի մի քարի վերա
- 24 ինք., ՄՃ, ԲՄ II, Դ, Դփ Միայնակ նստած արտասվում էր նա...

«ՄՈՒԹՆ ԷՐ ԵՐԿԻՆՔԸ. ՈՉ ՈՐ ԶԸՏԵՍԱՎ...»  
(էջ 110)

- 3—4 ՄՃ, ԲՄ II, Դ, Դփ Միայն առավոտյան, երբ որ լուսացակ  
Մարդարտափայլ ցող իշել էր դաշտուն  
7 Միմիայն տողերում, երբ որ կարդացին,

«ԲԱՆԱՍԵՂԾԸ ԾԵՐԱՑԵԼ Է...»  
(էջ 111)

- 7 ինք. Ունի նաև՝ Դեպի նորան, կամքով որի

ԱՌԱՎՈՏ  
(էջ 112)

- 2 ԲՄ II Ահռելի սարսափ գիշակերների...

«ԵՍ ՍԻՐԵԼ ԵՄ ՎԱՐԴԸ ՏԸԺԳՈՒՑՆ...»  
(էջ 113)

- 3 ԲԲ, ԲԲ Մելամաղձոտ խաղաղություն  
9 ինք. Բայց և տանել անկարող եմ,

448

11

Զասել՝ ինչով ևս ուրախ եմ, (բախտավոր եմ)

Հիշե՛ր...  
(էջ 114)

7 ԲՄ II

Նրա սերը մնաց անհաս,

«ԻՆՉ ՄԻ ԽԸՆԴՐԻՌ, ԵՍ ՉԵՄ ԵՐԳԻ...»  
(էջ 115)

1—4 ԲՄ II, Դ, Դփ Ինձ մի՛ խընդրիր, ևս չեմ երգիլ,  
Շատ է տիսուր իմ երգը,  
Նորա<sup>1</sup> ձայնը կըխորտակի  
Քնքույշ սրտիդ բերկրանքը.

7 ԲՄ II, Դ Ես երգեցի սարի վերա,  
8 ԲՄ II, Դ, Դփ Եվ շրացան խոտ ու վարդ,  
12-ից ենտո ԲՄ II, Դ, Դփ Ես երգեցի կես գիշերին,  
Վառ աստղերը իմ երգից  
Գունատվեցան, դողդողացին  
Եվ շքացան երկնքից.

Մեկը միայն<sup>2</sup>, որ փայլում էր,  
Այն էլ մահվան աստղն էր...  
Որ մի սիրո երգ հյուսեի  
Եվ երգեի քեզ համար,  
Թույն ու թախիծ և գիշեր:

15—16

18

ԿԱՍԿԱԾ  
(էջ 117)

Ո՞վ ես շար ոգի, որ իմ լուռ սրտում  
Ո՞վ ես շար ոգի, որ դու իմ սրտում

1 ինք.  
ՄՃ  
1 ԲՄ II նրա  
2 ԲՄ II միմիայն

29—23

449

2 ինք., ՄՃ, Դ  
5 ինք., ՄՃ

Այսպիսի անխիղճ վճիռ ես կարդում...  
Կըծաղբեն մի օր քո անբիծ սերը,

«ՍԻՐԵԼԻ ԶԻՎԱՆ, ԸՆԿԵՐՈՒ ԻՄ ՀՈԳՈՒ...»  
(էջ 118)

3 ինք. Ունի նաև՝

ԵՎ քո երգերը երգիդ հարազատ,

ԱՄԱՌԱՅԻՆ ԵՐԵԿՈ  
(էջ 123)

6 ՄՃ  
8

Երկիրն ունկնդիր այս անխոսք ճառին,  
Փառավորում է մեծազոր տերին:

«ԱՋՐՏԻՄ ԹՄԳՈՒՇԻ...»  
(էջ 124)

9 ՏՊ, Դ  
11 ՏՊ, Դ, ԴՓ

Միմիայն թե տեսնեմ  
Միմիայն թե ասեմ՝

ՏԵՎԶ  
(էջ 126)

5 ինք., ՄՃ, Դ  
16-ից նետ ինք.

Թարձրանային իրար վերա անդադար  
Նույնպես կուզեմ դուք էլ տեսնեք իմ հոգին  
Որ, տեսնելիս, նորա հոգմունքն ահազի  
Այդ ձեր հպարտ ուշք ու միտքը կլանի,  
Այն ժամանակ սիրտս հանգիստ կըլինի

ՎԱՏ ՕՐԵՐ  
(էջ 128)

1 ՄՃ, Դ, ԴՓ  
3  
5 ՄՃ  
450

Ցուրտ է, իմ ընկեր, և հողմ ահազին.  
Խոզ որոտում է երկինքը խավար.  
Պըտրում են, կարծես, մի տեղ—օթևան,

9, ԴՓ  
6-ից նետու ՄՃ, Դ, ԴՓ  
7 ՄՃ, Դ, ԴՓ, ԲԲ  
9 ՄՃ, Դ, ԴՓ

Փընտրում են, կարծես, մի տեղ—օթևան,  
Այս աղետակոծ, մոլի և չնշին  
Կյանքի ցավերի, դավերի միշին,  
Այս խավար, ճընշող, ցուրտ մըթնոլորտում  
Մտածմունքներս, տենշերս աննենգ,

ԱՂԲՑՈՒՐ  
(էջ 131)

1 ինք. ա  
բ  
և 11, 1909  
2 ինք. ա  
բ  
3  
Աղ  
4 ինք. ա  
բ  
5  
6 ինք. Աղ  
7 ինք.  
Աղ  
8 ինք.  
9 ինք., Աղ  
12 ինք. ա  
բ  
13-20 ինքնազիրը շունի  
17-19 Աղ

Ականակիտ ջուր էր բխում,  
Ճուր էր բխում լանջերում,  
Սարալանջում, ժայռի տակ,  
Սարալանջում ժաղկավետ  
Ժաղկադալար սարերի,  
Եվ անօգուտ ճահճանում  
Եվ ցրվելով խոտերում  
Ցրվում հանդերում, կանաչում:  
Թավուտներում [դալարի]:  
Նորա առջեւ մի խոր գուշ<sup>1</sup>  
Շինեց հովիվն ու տարավ  
Եվ խոսքերով փաղաքուշ,  
Չայն ածելով փաղաքուշ,  
Չրեց հոտը յուր ժարավ:  
Պախրեն անցավ այն սարից  
Հապա վերև աստղծուն:  
Հետո նայեց աստղծուն:

Ապա թե իր օրհնանքը  
Մաղթեց մարդը այն բարի.  
«Քո շինողիդ օր-կյանքը

ՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ  
(էջ 132)

15-16 Ա ինք.  
<sup>1</sup> Ինք. փոքրիկ փոս

Հենց փաթաթվել ես թխպոտ ամպերում,  
[Կարծես] Զես ուզում, ասես էլ տեսնել արև:

16-ից նետք

Այստեղ տուր ձեռքդ, մոտեցիր, ընկեր,  
Մի նայիր ետև, ինչ է կատարվում...  
Մենք խո եղբայր ենք դարերից ի վեր,  
Մեզ խո միենույն կրակն է այրում<sup>1:</sup>  
  
Մոտեց<իր>... իմ հին բարեկամ,  
Եվ թող որոտան լեռները բոլոր,  
Թող լինեն վկա մեր նոր հաշտության-  
եռաքը վերջացրեց Մասիսն ալեռոր:  
Այն սեգ լեռները [Համբուրվում] ողջունաւ

19

Հին 2-3 ինք.

1893

«ՔՐԻՍՈՍ ՀԱՐՑԱՎ... ԱՌՆ, ԵՎ. ԱՅՍ ՀՈՇ...»  
(էջ 134)

Տարբերակ

ՔՐԻՍՈՍ ՀԱՐՑԱՎ

Քրիստոս հարյավ... ա՛խ երանի  
Կենդանանար իմ մեջ էլ  
[Խնդությունը] Սուրբ եռանդը հին  
օրերի,  
Որ շատ վաղուց է շիշել:

5 Երանի թե նույն սաստկությամբ  
Միրո կիրքը ևս հառներ,  
Երկինքս էլի դառնար անամպ,  
Միտքը ուժգին սավառներ...:

10 Լոի՛ր, անմիտ, ինչ ես լալիս  
Վհատ ձայնով ծերության,  
Դեռ քո ճամփին լույս է տալիս  
Ճառագայթը վաղորդյան:

<sup>1</sup> Ուժի նաև՝ Մեզ խո միենույն կարստն է այրում:

15 Իեռ կան հոգուդ գաղտնարանում  
Կյանքի ժպիտ, սիրո բոց.  
[Նրանք կարթնեն] Պիտի հառնեն  
որպես հարյավ՝ ի մեռելոց:

«ՀՅՈՒՌ, ԱՐՏԱՍՈՒՔՍ ԱՆԿԵՂԾ ՏԽՐՈՒԹՅԱՆ...»  
(էջ 137)

[Որպես] գարնան հորդահոս տարափի նման,  
Որ ժաղկեցնում է [խոպ] ժարավ արտերը...

ԱՅՎԱՋՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ  
(էջ 139)

1-3 Մէ, Դ, Դփ	Սանր ալիքները լայն օվկիանոսի, Խառնելով շերտը մոայլ մշուշի, Կուտակվում էին գոռալով ահեղ, Անեզր և անվերջ
5	Եեր նկարիչը հուզված տարերքին.
8	Եվ հնազանդված հանճարի ձայնին,
9	Եվ լուռ, հընազանդ հանճարի ձայնին,
ԲԲ	Ակ ալիքները, փոթորկի ժամին:
10 Մէ	Կոտավի վերա
11 Մէ, Դ, Դփ	

ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ  
(էջ 140)

1-2 Տզ, Լ Վ	Գնա՛ս բարով, հայ ուխտավոր, Երանի քեզ, ա՛յ ուխտավոր,
4	Ուխտ ես գնում դեպ Այրարատ:
9 Տզ	Եվ կարոտած աշքի նըման
ՆԱ. ԲԲ	Եվ հարազատ աշքի նըման
12-14 Տզ	Հար կըխաղա ալյոք վետ-վետ

452

Կըփալիի ծըփանքներով,  
 Կըհորինի լույսերի ծով:  
  
 15—16 Տղ չունի  
 16 ՀԴ  
 16.ից հետո ՆԱ  
  
 17 Տղ  
 ԼՎ  
 18—19 Տղ  
  
 20 ԲԲ  
 21 ԼՎ  
 22 Տղ  
 ԼՎ  
 23—50 ԼՎ չունի  
 29 Տղ  
 30.ից հետո  
  
 31—32 չունի  
 36—37 Տղ, ՆԱ  
  
 39 Տղ  
 44 ՆԱ  
 47—50 Տղ չունի:  
 Գորգող հատվածն  
ըստ ՆԱ-ի  
  
 Սիրուն է տեսքն էն լըճակին,  
 Տաճարը սուրբ, լյառն ահագին,  
 55 Բայց ավելի մեծ ու շքեղ  
 Արծիվ հայրիկ ունենք Էնտեղ,  
 Ճերմակահեր և հոգեհուր,  
 Հսկայատիպ կանգնած ամուր,  
  
 Տաճարը սուրբ, լեռն ահագին,  
 Արծիվ Հայրիկ ունենք այնտեղ,

60 Ինչպես կաղնին լիբանանի,  
 Որ հողմերին ծաղր կանի,  
 Էնտեղ արթուն կանգնել է նա  
 Լուսավորչի շիրմի վըրա,  
 Բազուկն հպարտ հենել կողքին,  
 Կանգնել է մեծ ու ահագին,  
 65 Ու արծլվի աշքերն հընոց  
 Սևեռել է կողմերն Հայոց,  
 Կողմերն Հայոց ու շատ հեռուն,  
 Դիտե ցրված իր ձագերուն...  
 Ա՛հ, ոխտավոր, աստված սիրես,  
 Եվ ի՞մ կողմե աշն համբուրես:

ՆԱ ՆՍՏԱԾ ԷՐ...  
(Էջ 142)

Այնպես ազդու պատմում էր վիշտն իր սրտի,

ԽՈՇԻԹՈՒՄ  
(Էջ 143)

—Մենք հաց շունենք, ձեզ մատաղ ես,  
 —Քիչ էլ կացեք  
 Դու ասացիր՝ քարափին  
 Հենց որ դիպչի շողքն արկի  
 Հենց որ զարկի շողքն արկի  
 Երբ որ զարկի շողքն արկի  
 [—Հաց չի գըտել ձեր ապին դեռ

4 Տղ

7 Ինք. ա  
 8 Ինք.  
 10 Ինքս  
 11 Ինք. ա  
 12 Ինք.  
 17—18 Ինք.

60 Ինք.  
 61—62 Ինք., Տղ  
 65 Ինք.  
 66—67 Տղ չունի  
 68 Ինք.

Որ հողմերուն ծաղր կանի,  
 Այնտեղ արթուն կանգնել է նա  
 Լուսավորչի շիրմի վըրա  
 Եվ արծիվը աշքերն հընոց,  
 Եվ արծլվի աշքերն հընոց,  
 Հովվե ցրված իր ձուտերուն...

22—23 ևուս  
 25  
 28-ից նետ  
 33  
 35

Տուն չի գալի սկերես.]  
 նա շատ ունի այնտեղ հաց...  
 նա ձեղ այնքան շատ է սիրում...  
 Կերթամ այնտեղ նրան կասեմ,  
 Ասավ, սեղմեց սովալըլուկ  
 Հավակներին իր լանջին,  
 Ու շըրթունը վըրա դալուկ  
 Ասուկ համբույրը վերջին:  
 Կըոներն էլ ետ շըբացվեցան  
 Աւըլ փակեց ու հավիտյան  
 «Էռուսում» վերջին երկու ժառատողերի տեղերը փոխված են:

1894

ՆՈՐ ՏԵՐԻ  
(էջ 145)

### Ա ինքնագրի մշակման պատկերը

4 ա  
 բ  
 8 ա  
 բ  
 12 ա  
 բ  
 35 ա  
 բ  
 3 Տզ  
 5  
 8 Բ ինք.  
 12 Տզ  
 30  
 31—38 Բ ինք.

Անցի[բ], գընա,  
 Անցի, գրնա,  
 Զերմ ժըպիտով,  
 Վառ ժըպիտով,  
 Մաղկի վ[եր]ից,  
 Մաղկի վըրից,  
 Մի [մահով] էլ  
 Մի ճամփով էլ  
 Գլխիս վրայից  
 Որպես մի օր  
 Տաք ժըպիտով,  
 Մաղկի վրայից,  
 Եվ թե մի մարդ...  
 Միայն իրար  
 Չեն[բ] հասկանում,  
 Բայց ապրում են[բ]

[Նույն] Մի սահմանում,  
 [Ու նույն մահով] Մի ճամփով էլ  
 Պիտի գնան[բ],  
 Կըրկին ծովվեն[բ],  
 Մի հող դառնան[բ],

«ԵՍ ԱՍՍՅԻ,—ԴՈՒ ԾԱՂԱՌԻՄ ԵՍ...»  
(էջ 147)

5 ՀՀ, ԲԲ  
 ԳՓ  
 6 ՀՀ, ԲԲ  
 7  
 8

Միմիայն, ափսո՞ս, սիրոտ է մեռած,  
 Միան, ափսոս, սիրոտ է մեռած,  
 Միմիայն նա է շոր քեզանում...  
 Նա հառաշեց և ինձ ասաց.  
 «Միմիայն սիրոտ շես տեսնում»:

ԺՊՏՈՒԽ ԱԶՔԵՐ  
(էջ 148)

### Տարբերակ

Դու շատ մի՛ գերվիլ ժըպտուն աշքերին.  
 Նրանք շատ անգամ ծառիկներ են վառ,  
 Բուսած կորստյան անդունդի ծայրին  
 Միամիտներին քարշելու համար:

5 Ահա պոետն էլ մի անգամ գերվեց  
 Ժպտուն աշքերի հըրապուրանքին,  
 Նրանից հետո էլ վախճան շրկա  
 Նորա ըզգայուն հոգու տանջանքին:

39—44 Բ ինքնագրում շնչված են, փոխարենը կա նետեյալ ժառատողը,  
 նոյնպես շնչված.

[Ու մեզանից  
 Հետո էլ զեռ  
 Անվերջ նոր կյանք,  
 Նոր տարիներ...]

5 ինք.

Ահա պոետն էլ մի անգամ խարվեց

0<sup>o</sup>, մի՛ հավատալ ժըպտուն աշքերին,  
 10 Նրանք շատ անգամ ծաղիկներ են վառ,  
     թունավոր օձ է պառկած տակերին,  
     ներքև նախանձի դժոխվ է խավար:  
  
 Ահա պոետն էլ շատ ու շատ անգամ  
     հարված այդպիսի ժըպտուն աշքերից,  
 15 Զարամիտներին դարձավ բարեկամ,  
     եվ խեղճի սիրտը մաշվեց դավերից:  
  
 Դու շատ մի՛ խարվիլ ժըպտուն աշքերից,  
     Նրանք շատ հաճախ ծաղիկներ են վառ,  
     Բուսնում են սրտի ավերակներից՝  
 20 Տիուր հատակը ծածկելու համար:  
  
 Ահա պոետն էլ, որ այնքան հաճախ  
     Եվ տառապել է, և վշտեր ունի,  
     Ողջը ծածկելով ժպտում է ուրախ,  
     Կարծես քեզանից բախտավոր լինի...  
  
 1 ԲԲ  
 3—4 ԲԲ, ԲԲ  
  
 8 ԲԲ  
 9 ԲԲ, ԲԲ  
 14 ԲԲ  
     ԲԲ  
 15 ԲԲ, ԲԲ

ՄԻ ՀԱՌԱՋԱՆՔ  
(Է 149)

8 ՀՅ, ԴՓ, ԲԲ  
 9 ՀՅ  
  
 9 ԴՅ Դու շատ մի՛ խարվիլ ժըպտուն աշքերին—  
 11 Թունավոր օձ է պառկած տակներին,—  
 13 Ահա պոետն էլ մի քանի անգամ  
 16 Եվ խեղճի սիրտը մեռավ դավերից:

ԴՓ  
  
 3 ԴՓ  
 11 ԴՓ, ԲԲ, ԲԲ  
 12. Ից հետո ԴՓ  
  
 12. Ից հետո ԲԲ  
  
 2 ԴՓ  
 5 ԴՓ  
 6—7 ԴՓ, ԲԲ, ԲԲ

Եվ նորա խորքից,  
 Եվ նըրա միջից,  
  
 ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ  
(Է 150)

Եվ նորաբույս վառ ծաղիկներ  
     Նրանք սիրո այն խոսքերն են,  
     Նրանք իմ չերմ համբույրներն են,  
     Այն աշխարհից ուղարկված,  
     Որի ճամփան քո առաջն  
     Գերեզմանով է փակված...  
  
 Քև համար եմ ողջ ուղարկել,  
     Որ քո կուրծքը զարդարես,  
     Որ իմանաս, թեև մեռել,  
     Չեմ մոռացել սակայն քեզ...  
     Եվ թե մի օր, անուշ ընկեր,  
     Գաս այցելու իմ շիրմին,  
     Հիշիր այս օրն և միտղ բեր  
     Քո հեռացած մտերմին.  
     Նա, կարկամած շրթունքներով,  
     Գերեզմանի մութ խորքում,  
     Ըսփոփկում է դեռ քո սիրով,  
     Քո անունն է դեռ երգում...  
     Նրանք իմ չերմ համբույրներն են,  
     Այն աշխարհից ուղարկված,  
     Որի ճամփեն քո առաջն  
     Գերեզմանով է փակված...

ԵՐԿՈՒ ՍԵՎ ԱՄՊ  
(Է 151)

Գահը իրանց հանգստության,  
     Սակայն հողմի շար հոսանքով  
     Բաժանել չէր կարողանում,

9  
11 ԴՓ

Որքան նըրանց լայն երկընքով  
Եվ անդադար գընում էին  
Իրար կըպած ի միասին

1895

Ո՞Վ. ՏԱՐԱՎ  
(Է 152)

Նախնական գրառման պատկերը

ա

Դուք ինձանից մի [Հիշատակարան] տարաք  
Մի հիշատակարան,  
Իսկ ես քեզանից տարա հիշատակ,  
Մեկը կորչելու, մաշվելու է շուտով,  
Մյուսը՝ մնալու է հավիտյան.  
Դուք ինձնից տարաք հիշատակարան,  
Իսկ ես ձեզանից տարա հիշատակ—  
Մեկը մաշվելու,  
Մյուսը հավիտյան կըմնա,  
Մեկը պահելու սեղանի վրա,  
Մյուսը՝ սրտում,  
Մեկը, որ մի թուղթ գրելու,  
Մյուսը՝ [արժանի] սրտում կրելու,  
Արդյոք ո՞վ տարավ:

Բ ինքնագրի մշակման պատկերը

4 ա  
Բ  
5 ա  
Բ  
6 ա  
Բ  
8 ա

Մյուսը [Հավիտյան] կըմնա:  
Մյուսը կըմնա երկար ժամանակ:  
[Մեկը] նյութական [է] գրելու,  
Դուք այս նյութական թուղթը գրելու,  
[Մյուսը] զգացմոնք սըրտում կրելու.  
Իսկ ես զգացմունք սըրտում կրելու.  
[Մարմնիս և ճամփուս տիրում էին],

460

բ  
գ  
տ  
բ  
10 ա  
բ

[Պաշարել էին մարմինս և ուղիս],  
Մարմնիս և ճամփուս շուրջն էին տիրում,  
Ես այն մոռացա—այնքան ջերմություն  
Ես ոգնորիչ այնքան ջերմություն  
Գտա ձեր... սրտերում:  
Գտա զգայուն, ազնիվ սրտերում:

1896

«ԵՐԱՆԻ ՆՅՐԱՆ, ՈՎ ՈՐ ՔԸՆԵԱՇ...»  
(Է 155)

Ա ինքնագրի մշակման պատկերը

3 ա  
բ  
5 ա  
բ  
8 ա  
բ

Ով որ երազներ ունի դեռ պահած  
Ով որ երազներ ունի պահպանած  
Ա՛հ, վաղուց արթնած՝ ես շատ եմ հոգնել,  
Ա՛հ, վաղուց արթնած՝ մենք շատ ենք հոգնել,  
Ու պաղն է փըշում ապագա մութից:  
Չոր պաղն է փըշում հեռավոր մութից:

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ  
(Է 156)

4 երկիր, ԲԲ

6—7

12 ԲԲ (մշակումը) ա

Ինարկե, տարիների բնաթագրում, բանաստեղծի ռատունացման ու հայ ժողովրդի փոթորկու կամքի թելադրանքով, առաջին շրջանի մոտիվներին գումարվում են նորերը, որոնք ևս նախորդների հման գեղարվեստորեն ընդհանրացնում են բանաստեղծի հոգու խոռվիքն ու յուրավի պատկերում ժամանակի անցուդարձերը, սակայն «հին» մոտիվները երբեք չեն մղվում երկրորդ պլան, Թումանյանը չի դավաճանուած դրանց, այլ աստիճանաբար հղում, փայլեցնում է՝ հասցնելով կատարելության:

Արեւել առաջին քայլերից Թումանյանը արծարծում է համազգային, համաժողովրդական, նաև համամարդկային մոտիվների դաստերն ու բարդականությունը, անձնականի ու հասարակականի փոխհարաբերությունը, մարդն ու բնությունը, կամքի ու մահու հավերժական պայքարը, սերն իր արտահայտման բազմազանությամբ, կարուն ու վիշտը, որն ինչ-որ տեղ աղերսվում է Բայրոնի «Համաշխարհային» վշտին, սոցիալական հարցերը, որոնք համախ ներկայացվում են նրգի-ու ծանրի հնարանքներով և, վերջապես, հայ ժողովրդի ողբերգական ու հերոսական ճակատագիրը, որի գեղարվեստական մարմնավորման մեջ է նաև տեսնում իր կոչումը:

Իր բակ վկայությամբ՝ Թումանյանը ուսանավորներ գրել է դեռևս 1879—1880 թթ., այսպես ուշադրության արժանի իր առաջին բանաստեղծությունը, որն, ի դեպ, նաև առաջինն է մեզ հասանելու մեջ, համարում է «Հոգուս հատորը» տասներկու տարեկան պատանու համար մի զարմանալի երկ և 'աճթերի ձևով, և' սիրո հստակ զգացողությամբ:

Այսպես է սկսվում սիրո մոտիվը Թումանյանի քնարերգության մեջ: «Արտաքին» ու «Ներքին» աշխարհների համադրությունն այնուհետև ներկայանում է բազմաթիվ երանգներով՝ վաղորդյան շողերից մինչև մայրամուտի խոսցող գոյները և զնալով դառնում բանաստեղծի սիրային երգերի հենքը՝ նրա սերն իմաստավորելով որպես խորացն հասարակական զգացում:

Մանավանդ առաջին շրջանի ստեղծագործություններում Թումանյանի սիրո մեջ նկատվում է նաև, այսպես կոչված, անրանձնական զգացման արտահայտությունը: Օրինակ՝ «Ուրու», «Սիրելի աշեր», «Թուման» և մի քանի այլ բանաստեղծությունների առարկան, ինչպես սիրո «Դասական» երկերում, սիրելիի հմարքն է և սիրազորկ ապրելու վիշտը. «Այս, շարտավել ես չեմ կարող, ծանը է ապրել սիրազորկ»: Սակայն Թումանյանի սիրո մոտիվներում այս բանաստեղծություններն, ինարկե, ամենագրավիչները չեն: Նույնիսկ, կարելի է ասել, սրանք ինչ-որ չափով ուսումնառության շրջանում նրա կրած ազդեցությունների հետքեր են պարունակում: Գրականության պատմության մեջ ընդունված

իմաստով՝ սիրային բանաստեղծություններ, որոնցում գովերգվեին սիրելիի հոգեկան ու մարմնական բարեմասնությունները, սիրո պատճանած ցավերով ու ուրախություններով բացատրվեր սիրահարի հոգեվիճակը, նրա ստեղծագործության մեջ գրեթե չկան: Նա հսանակյանի կամ Տերյանի նման չի այրվում սիրո կարոտից: Մերժման ողբերգությունը խորը է նրա բանաստեղծություններին և ոչ էլ երջանիկ սիրո խենթացնող զգացման է դասնում ներշնչանքի աղբյուրը: Նրա սերը խորապես ողբերգական է, սակայն այդ ողբերգության պատճառը անկատար երազը չէ, այլ այն, որ անգամ սիրո ամենարուն զգացումն արտահայտելի Թումանյանը չի կարողանում ինքն իրեն դիտել որպես մերձավորի բախտից ու ճակատագրից գեր մի վայրկյանով հեռացած անհատ, չի կարողանում լիովին տրվել սիրո զգացմանը: Ներքին խորվիթ մեջ սերն, այնուամենայնիվ, խոնարհվում է հասարակական պարտքի ասաց: Կարելի է ասել, որ նա ամենուրեք իրեն ավելի շուտ հայ ժողովրդի պարտապան որդին է զգում, քան «սիրահար» ու սիրո երգի:

Ծովածիկ, այսպես կոչված, «ալրոմային» բանաստեղծություններուն իրար կողքի մեծ ուժով արտահայտվում են հասարակական վիշտն ու անհատական զգացումը: «Ցավը անտակ ծովի պես, սերը անհագ սովի աես»—ահա մարդկային հոգու հանճարեղորեն բացված գաղտնիքը:

Վիշտը, թամիծը, տրտությունը, որոնք, ինարկե, սոցիալական հիմքն ունեն, այսպես կոչված, «մաքուր» քնարերգության լավագույն ներկայացուցիչների՝ Դուրյանի, հսանակյանի, Տերյանի սիրո բանաստեղծություններում, Թումանյանի քնարերգության մեջ ուրիշ կողմերով և ավելի անմիջականորեն են առնչվում «արտաքին» աշխարհին: Մերժված սիրո իրավիճակի պատճառած ցավը տիպական չէ Թումանյանի քնարերգության համար: Նրա սերն անպատճան չէ, ընդհակառակը, ամեն ինչից երևում է, որ նրա «ըրուցիկը», ինչպես կոչուն է նա սիրած էակին, ինքն է այրվում նրանից սիրո խոր լսկու փափագով: Թումանյանի սիրո քնարերգության ողբերգական երանգը և պայմանավորված է հասարակականի և անձնականի հակադրությամբ, բայց այն աշխարհը, որ հնարավոր չէ բանաստեղծի սիրո հալթանակը, ոչ թե նրա հետ կոյի մտած թշնամի է, այլ նման դարտապատված հարազարդի, առանց որի փրկության նա չի պատկերացնում երկրի վրա «ոչ շիտակ խոր, ոչ կյանք, ոչ սեր»: Այս իմաստով Թումանյանի սիրո քնարերգությունն ավելի քաղաքացիական է, քան նրան ժամանակակից որևէ ուրիշ հայ բանաստեղծի:

1892 թ. մարտին Թումանյանը գրել է երեք բանաստեղծություն, որոնք ամենից ավելի լավ են ցուցաբերում սիրո և հասարակական պարտքի հարաբերության նրա ըմբռումը: Առաջին բանաստեղծության մեջ, որն ունի «Եմ սերը» ծրագրային վերնագիրը, երիտասարդ բանաստեղծը կարծես վախենալով, թե մեկ էլ տեսար աշխարհը շիակացաց ու զգահատեց իր փոքր-ինչ ոչ սովորական, զգառումը, խոստվածում

է, որ «սիրո գաղտնիքը» թաքցնելու կարողություն չունի, որ նվիրական զգողություն լիովին համակել է իր սիրութը: Բայց ահա հաջորդ երկու բանաստեղծություններում նա արդեն ակնարկում է արտաքին աշխարհի լուրջինակ ողբերգական ներգործությունն իր սիրո վրա: «Հիշիր...» երգի հմանում ենք, որ նա չի մերժել, բայց մեացել է հեռու իր պաշտամունքի առարկայից «չար բախտի» պատճառով: «Ինձ ո՞ի խնդրիր, ես չեմ երգի» բանաստեղծության «տիրությունն ահագին», ոյի շառաչից հոգիներ են խորտակվում, նույնական զուտ անձնական չէ: Մորապես հասարակական են այն հանգամանքները, որոնց պատճառու կ բանաստեղծի սիրութը համակել են «հոր հառաջանք, ուն գիշեր»: «Հիշեր» և «հառաջանք»—Թումանյանի սիրած այս երկու բառերը, ինչպես մյուս դեպքերում, այս դեպքում ևս հոկտայական տարրություն ունեն: Դրանք համազգային ողբերգության խորհրդանշներն են: «Հայոց վիշտն» է այն անհուն ու խավար ծովը, որի մեջ տառապելով լող է տալիս բանաստեղծի հոգին՝ չիսանելով երջանեկ սիրո ափը: Երազի և դաման իրականության օրինասական մենամարտում ազատության մեջ իրեալի երդվայ պաշտպանը չի կարող լինել «այնքան ստոր», որ «այս դաման բանություն լինի բախտավոր» («Պահուիստ եմ, քույրիկ»):

• • •

1880-ական թվականներին, երբ Թումանյանը դեռ նոր էր ասպարեզ իջնում, հայ գրականության մեջ նահապետի իրավունքով իշխուս էին Ռաֆֆին, Պատկանյանը, Գրիգոր Արծրունին: Այս ժամանակաշրջանի մասին ինքը՝ բանաստեղծը հետազայում գրել է. «Ութունական թվականներն էին: Մեր կյանքում ուզմական փողի նման թնդում էին Գամսո-Քաթիպայի ազատ երգերը, վարար գետի նման հոսում էին Ռաֆֆու վեպերը անընհատ ու խորհրդավոր, մասուի մեջ աշ ու ձախ շառաչալից մտրակում էր Արծրունին» (Եժ IV, 353):

Այս ապամաններում Ռաֆֆու «Ռուկե մադան», «Կտուկ», «Փող», Պատկանյանի «Անվան մարդ», «Հայերու բաղձանքը», «Ազգակեր» և նման երգիծական բանաստեղծությունները, անշուշտ, օրինակ այսի ծառայէին պատահի բանաստեղծի սոցիալական-երգիծական բանաստեղծությունների համար:

Դրանցից առաջինը «Հայ վաճառականն» է՝ գրված 1888 թ., այսինքն այն ժամանակ, երբ բանաստեղծն ընդամենը տասնչորս տարեկան էր: Սա ոչ այնքան ապրված գգացման, որքան նախորդներից փոխանցված ոռմանտիկ-լուսավորական գաղափարների արտահայտություն է, որտեղ ուսուցիչների օրինակով Թումանյանը ևս այն հույսն է փայփայում, թե անարժան վարքագիծը դատապարտելով հնարավոր կլինի դարձի բերել հայ վաճառականին և նրա կարողությունը ծառա-

յեցնել ազգի լուսավորությանն ու բարորությանը: Նա գործի է դնուանդիքու և Պատկանյանի բանաստեղծություններից արդեն ծանոթ հնարանքները, որպեսզի ծաղր ու ծանակի ենթարկի ընչափացությունը, ժատությունը, այն աղավաղված, օտար բառերով լեցուն լեզուն, որով խոսում է հայ վաճառականը և այլն: Զայրացած կշտամբելով իր «հերոսի» այն բանի համար, որ նրան չի հուզում ոչ տուն ու տեղից զրկված վանեցի «Եղբօր» վիճակը (նույնպես հայտնի Պատկանյանի երկերից), և ոչ այն, որ «սիրատուն» ազգը կրթական հասատություններ չունի, պատճանի բանաստեղծը հայ վաճառականին «դարձի բերելու» համար ուրիշ կովան չի կարողանում գտնել, քան ինչեցնելը, թե «գարբիլյան փողը» մի օր նրան էլ դամբարան կկանչի:

Մի տասնամյակ հետո արմատական փոփխություններ են տեսի ունենում բանաստեղծի հայացքների մեջ: 1880-ական թվականների վերջն ու 90-ականների առաջին տարիները նրա կյանքում դառնում են հասարակական-սոցիալական տեղագիտն մտորումների տարիները: Թիֆլիսի հոգևոր կոնսիստորիայում պաշտոնավարեկին բանաստեղծն արդեն ոչ թե տեսականորեն, այլ գործնականորեն է բախվում սոցիալական անարդարությանը և իր հոգեկան խոռվին ու բողոքն արտահայտույ «Հարամիտներին», «Դարձալ նրանց», «Այսուել ահա ինչ են ասում...» և մի քանի այլ ոտանավորներում, որոնք, ինչպես ճիշտ Ակատել է Ս. Խնձիկյանը, նախապարագատել են «Պոետն ու Մուսան» երգիծական պոեմի ծնունդը (ՈՒՀ, 1, 396):

Այս բանաստեղծությունների հմաքը հրապարակախոսական կրքու խոսի մեջ է: Մրանք արդեն կրակ: ած սրտի թելադրանքով գրված մեղադականներ են: Երգիծական բանաստեղծությունների այս նոր շարքում հայ հարուստին վերադասիարակելու միամիտ-լուսավորական գաղափարն այլևս գոյություն չունի: Խոսքը ոչ թե ազգի գործերի Ակատմաք անտարբեր, Ժատ վաճառականների, այլ «քանատի ու խավարի սպասավորների» մասին է, որոնք քսամնելի ուժիրներ են գործում: Մրանց հետ լեզու գտնելու պատրաճ բանաստեղծն այլևս չունի: Մրանոյ է պայմանավորվում այս բանաստեղծությունների հասարական արժեքը, թեև «կապված ամենդին» սեղանավորի ուտքերի տակ գորենու պատրաստ իր «հերոսների» պատճը նաև դեռևս բարձրյալից է ակնկալում.

*Հարցանում եք, թե ո՞ւր է աստվածը.—  
Կհասի նա ձեզ, բարկությամբ արդար  
Արժանի մահով պատուհասելու,  
Եվ ո՞վ պիտի ձեզ ցոյց տա ճանապարհ  
Նորա բարկության պատժից փախչելու:*

Թե ինչ հնաշելություն են ունեցել այս տիպի բանաստեղծությունները, երևում է իր խմ՝ բանաստեղծի հետևյալ վկայությունից դրանցից 525.

մեկի՝ «Պաշտոնու տրտունչը» ուսանավորի մասին՝ գրված 1898 թ. Շույավերում. «Այստեղ,—գրում է Թումանյանը մի նամակում,—մի եերկայացման համար մի ձեռաց ուսանավոր գրեցի Ծովակերի պաշտոնիների վրա: Այնպիսի մի աղմուկ, մի խոլովություն ընկավ, որ եերկայացման երեկոյան եթե նայեիք փողոցները—կարծեիր, թե մի կարևոր բունթ կա զուրում: Ծիծաղելին այլ էր. որ ամբոխը—պաշտոնիների ուսատակած ամրուն ավելի իհաս էր հուզվել: Սպանալիքն այնպես մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստած ուսանավորը հանեցին ցուցակից, վախենալով, որ ինձ ենտ անախործություն պատահի, ինչպես նամակներով ու պատգամավորների բերանով սպանում էին» (Եժ V, 142—143):

Եթե «Պաշտոնու տրտունչը» մերկացնում է զյուղի «վիճակավոր-ներին», որոնք, ինչպես տեսանք, արգելել են ուսանավորի հրապարակում, ապա «Կա բօռուած», այսուհետև...» տղող սկսվող չափած ֆելիտոնն ուղղված է քաղաքի «պաշտոնիների» դեմ:

Սուսհն հայացքից ավելի մեղմ է Թումանյանի երգիծանքը «Հայի զարմանքը», «Հայի ցավը», «Հայի տրտունչը», «Գրականական «մազանդա» և մի քանի այլ բաևատեղություններում: Սակայն այդպես է թվում, քանի որ այս հետքում բանաստեղծը ոչ թե հարատիմարության միջոցների հիշատակությամբ է մերկացնում «դրության տերերին», այլ ավելի շատ միջնորդված ձևով ու նույր վարդետությամբ պատկերում հայ ժնդորդի ու նրա զավակների ողբերգական վիճակը բործուական հարաբերությունների պայմաններում: Արցունքու երգիծանք է սա, որի մեջ ուրախության փայլատակումներ այլևս չկան: Օրինակ՝ անանց տրտությամբ է ղղողված դերասան Գևորգ Տեր-Դավթյանի բնական գործունության բաննենքամյակի առիթով գրված «Հայի զարմանքը», որտեղ նկարագրվում է տաղանդավոր անհատի կործանումը: Այս գելինետնը ժամին չի առաջացնում ընթերցուի շորթերին, ընդհակառակը, տեղի է տալիս տխուր մոտրումների այն հասարակության մասին, որտեղ «աղքատ, անընկեր, անօօ ու անգործ» արվեստագետը ստիպված է միմուի խայտանամուկ զգեստով խնդկատակի դեր խաղալ, եթե սիրելին պառկած է դագաղում: Նոյն ոգով են շնչում «Հայի տրտունչն» ու մյուս բանաստեղությունները, որոնցում ևս առկա են բանաստեղծի բողոքը, անհաջորդությունն ու անելանուի վիճակի գիտակությունը: Մրանք հեռու են այն նույր և ուրախ հումորից, որ այնքան վարպետութեն օգտագործում է գրողը հերիաթներում և ծղողվրդական թեմաների չափած մշակումներում հասցեագրված մանուկ ու պատահի ընթերցողներին:

\* \* \*

Հայ զյուղացիության վիճակը Թումանյանի ստեղծագործության մեջ արտացոլվել է ողբերգական երանգներով: Նոր հարաբերությունների  
526

պայմաններում հահապետական «մաքրուր» բարքերի քայլքայումը տեղի է ունեցել մանուկ Թումանյանի աշքերի առաջ, և այս պրոցեսը ցավագնորեն է արձագանքվել նրա հոգում: Սա թումանյանական «հայոց վշտի» կողմերից մեկն է՝ կապված «Եերքին» թշնամու շահատակությունների հետ, այն թշնամու, որն ավելի ուշ՝ 1910 թ. գրված «Parodia»-ում օրինաշափորեն դրվում է «արտաքին» թշնամու կողքին.

*Տեսե՞լ ես արդյոք այն բլուրները,  
Ուր ճոխ ծաղկում է մշտական գարուն,  
Ուր թալանում են մերոնք ու այլերը,  
Ուր հոսում է միշտ արցոնք ու արյուն:*

Քնարական այնպիսի բանաստեղծություններ, ինչպիսիք են «Հին օրինությունը», «Գութանի երգը», «Խորիթում», «Նկարիչ Գ. Բաշինշաղյանի «Չորագիտը գիշերով» նկարի առջև» և այլն, քաղաքացիական թնարեգության լավագույն հմուշներ են, թեև դրանցում իրավիճակը փոխվելու որևէ ուսակ ճանապարհ չի առաջարկվում, եթե չհաշվենք շատ ընդհանուր հավատը պագագի նկատմամբ և նույնափ ընդհանուր պայքարի կոչը՝ 1889 թ. գրված «Երանություն էր խոտացել հույս ինձ» տղող սկսվող բանաստեղծության մեջ:

*Հառաջ, կռվելով, և կրգա մի օր.  
Որ կընկնի ներկան վատշրվեր, դաժան,  
Նրա ավերի վերա փառագոր  
Ապագան լրւա կրկանգնի նշան:*

Նահապետական-աշխատավորական զյուղի իդիլիան, զուգորդված մանկության բաղցը հիշողության մետք, երկար տարիներ թանկագին զգացում է եղել Թումանյանի համար: Ինչպես տաղանդավոր նկարիչն իր բնանկարն է կենդանացնում դրա մեջ պատկերելով բանական եակին, այնպես էլ Թումանյանը դեռ պատանության տարիներից համարյա թե երեք հայրենի բնությունը չի պատկերում առանց «մեծամարմին և քաջալանց» ու միաժամանակ «քազմահոգ» հայ շինականի: Եվ նայած թե ինչ վիճակում է բնության այդ տերեն ու մշակը, դրանով էլ պայմանավորվում է երկի թախծու կամ ուրախ ոգին, հեղինակի գորովանքը կամ տրտությունը: Գորովանքը կապվում է աշխատանքի, ազնվության, բարության, իսկ համայն՝ կյանքի հարաբերական հանդարտության հետ: Հայ շինականը Թումանյանի բնարական երգերու երջանիկ է գիշերով, վաստակած դադարի պահին, կամ աշխատանքի մեջ, որ բանաստեղծն ու նրա եերուս սուրբ ու նվիրական են համարում, ինչպես երկու «Կայի երգ»-երում և «Գութան», «ԱՇ», ինչ լավ են սարի վրա», «Աղբյուր», «Ամառվա գիշերը զյուղում» և մի քանի այլ բանաստեղծություններում:

Այս հովվերգությունը ինչ-որ չափով և ինչ-որ ժամանակ սփռվում է բանատեղին: Հոգու աշքերը փակելով նա մի ակնթարթ, կարծես, մոռանում է և «մերոն», և «այլերի» արարքները և իրեն երջանիկ է զգում այն բանի համար, որ «հոգնած գյուղական ընտանիքն ահա, սրանում, կալում, կամ կորի վրա, երկնքի դիմաց գրկված են քած, վերնից, ասես, ժպում է աստված»:

Սակայն լոկ մի ակնթարթ: Ո՞չ թումանյանական «հայոց վշտի» սիհագնությանը, և ո՞չ էլ նրա հանձնարկ փայլառակումներին մենք հասու չենք լինի, եթե նա մնար նահապետական իրիալիայի կամ դրա կործանման համար պասիվ ափսոսանքի շրջանակներում: Նահապետական բարքերն ու աշխատավոր գյուղացու «խաղաղ» տքնությունը մեծ բանատեղի ոչ հոյսն են եղել և ոչ նպատակը: Նա տեսնում է նոր հարաբերությունների անկան առաջընթացը, ոչ միայն տեսնում է սոցիալական ահավոր անարդարությունները, այլև նկատում, որ դրանց արմատներն արդեն առկա են նահապետական բարքերում, որոնք այնքան մեծ ուժով պատկերված են «Անուշում», «Մարդում», «Լոռեցի Սարյոյ»: «Անհծած հարսում»: «Պատահական չե, որ «Հին օրինության» մեջ «մեր հսկա պապերն ու մեր հայրերը, գյուղի տերերը», որոնք տիպիկ «նահապետական» բնաշխարհում՝ «կանաչ վիթխարի ընկույզնու տակ», տիպիկ «նահապետական» բարոյականության օրենքներով՝ «իրենց հասակի կարգով ծալպատակ» խնջույքի են նատել, գոյն չեն իրենց անցած կյանքից, երջանիկ չեն: Ներքին մի ցավ, մի խոր դժոխություն կա նրանց սրտերում, որ արտահայտվում է նոր սերներին ուղղված ո՞չ սովորական բարեմաղթությամբ՝ «Ապերք, երեխեր, բայց մեզ պես չապրեք»:

Հայ գեղջուկի ցավն ու բողոքը, ինչպես Հովհաննելիսյանի «Գյուղի ժամը», Աղայանի «Ծախարակ» բանատեղծություններում, Թումանյանի «Գորթանի երգում» ևս արդեն իր միանամայն պարզ ու հասկանալի պատճառներն ունի: Հովհաննելիսյանի ու Աղայանի գեղջկութիների բողոքի նման, Թումանյանի դառնացած գորթանավորի խոսքերը ևս, անկանած, մի փոքր ավելին են, քան «Շեղ օրվա» տրոտուն: Այստեղ նահապետական իրիալիայի հետքն անգամ չկա: «Զեռը պակաս, ուժը հատած, հազար ու մի ցավի տեր» շինականի վիճակը չի պատկերվում որպես սոսկ մոռայ բնանկար: Այստեղ առկա են հասարակության բոլոր «քարեմանությունները» և «թուշին», որով տերունական հարկն են պահանջում, և վաշխառու պարտքատերերը, և գյուղի իշխանավորը, դեպի որի տունն է տանում գողերի հետքը և որը «կզա, կծեծի» կամ, որ ավելի ահավորն է, կտանի գեղջուկի լծկանը, ինչպես իմանում ենք «Խժար տարի» երգից: Ներկա է հոգևոր հովիվը, որ օրինելու վարձը չստանալով «կրարկանա, կանծին»: Կարելի է ասել, որ արդեն 1887 թ. գրված «Գորթանի երգից» է սկսվում հոչակավոր «Հառաշանը», և որ «Գորթանի երգի» կամ «Խորմիթում» սրտածմիկ բանատեղծության

նպատակը միայն տխոր փաստերի Ակարազրությունը չե, այլև սոցիալական հեղարեկման փոքր-ինչ քողարկված պահանջը: Սա է ոգեշնչում բանատեղին նաև Գ. Բաշինչայյանի բնանկարը դիտելիս: Նա հիացած է «քաջերի ծորը», «ժամերի խոր մտածունքը», «համատարած ահուելի խավարն» ու «լուր հանգստությունը» կտավին հանձնելու Բաշինչայյանի կարողությամբ: Նա նկարչին իր գործի «արտիստն» է համարում, բայց միաժամանակ առաջ է քաջում անհնադիր ծորում կույ եւած հայի «հոգու գիշերը» պատկերելու խնդիրը, որպես արվեստագետի առաջին և սուրբ պարտականություն:

Սոցիալական հարցերի լուծման նրա տեսնագին որոնումները ոչ միայն պարբերաբար դրսուրվել են նրա հրապարակախոսական գործունեության մեջ, այլև հաստատվել գոտ գրական փաստերով: Հայտնի է, օրինակ, որ դեռևս 1903 թ. Թումանյանի թարգմանությամբ սոցիալ-դեմոկրատական մի թուուցիկի վրա տպագրվել և մայսինելիքան ցույցի ժամանակ տարածվել է Պուշկինի «Ազատություն» բանատեղծության մի բառատողը, որով բանաստեղծն իր ցասումն ու ատելությունն է արտահայտում ցարական հերթականության նկատմամբ: Հայտնի է, որ հայ հեղափոխականների խնդրանքով նա թարգմանել է նաև «Ենտերացիոնալի» մի հատվածը, որը լույս է տեսել 1904 թ. «Պրոլետարիատի կոփվը» սոցիալ-դեմոկրատական անելեգալ թերթուն: Վերջապես, այժմ հայտնի է դառնում, որ 1905 թ. գարնանը Մինաքրելիայի մի շարք բնակավայրերում ծագած գյուղացիական խոռվություններին արձագանքել է հայ բանատեղծը «Պարուների դարը անցավ...» տղով սկսող բանատեղծությամբ:

\* \* \*

1904 թ. մի նամակում, ուղղված Փ. Վարդազարյանին, որը պատրաստվում էր նաև մասին հրատարակել «Վշտի և թախճի երգիշ Հովհաննես Թումանյան» գրքույկը (տպ. 1905 թ.), Թումանյանը գրել է. «Ընդհանուր առմամբ դու քո բանատեղին նկատել ու ճանաչել ես շատ ջիշտ, որ նա իր ծողովովի թշվառության երգիշն է, թախճի, վշտի բանատեղծ, որ այդ թախճը, այդ տիրությունը ունի զանազան աղբյուրներ, բայց բոլորը մի տեղից են գալիս ու մի տեղ գնում և այդ է մեր—հայկական կյանքը, հայկական աշխարքը: Գոյց այդ լինի իս զիսալիոր արժանիքը» (Եժ, V, 283):

Ողբերգության այդ «գանազան» աղբյուրներից մեկն էլ, իհարկե, հայ ծողովովի արևմտյան հատվածի ազգային-քաղաքական ծանր վիճակն էր, որն ամենապահպանական թեման էր արդեն նախորդ շրջանի հայ բնարերգության մեջ: Ավելին, ազգային-ազատագրական գաղափարների առաջին տաղանդավոր շատագովներն արդեն ապրել էին

իրենց ստեղծ. գործական մայրամուտը, միջնդեռ հարցի լուծման ճանապարհին չկայ որևէ առաջընթաց, իսկ օսմանյան բռնապետության հայլածների ու կոտորածների պայմաններում՝ ժողովրդի դրույթունը գնալով ավելի ողբերգական էր դառնում:

Բնականարար, այս ողբերգությունը պիտի պաշարեր նաև Թումանյանին՝ նրա առաջին իսկ քայլերից ու դառնար նրա ստեղծագործության հիմնական մոտիվներից մեկը:

Թումանյանն այս մոտիվն սկսել է այն համոզմամբ, թե հայության թշվառության պատճառն առաջին հերթին ինքնուրույն պետականության բացակայությունն է, այն, որ «ազգը զրկվեցավ իրան շքեղ աթոռից» («Օրորք»):

Ինարկե, սա նորություն չէր, գալիս էր դեռ միջնադարյան քնարերգությունից: Ինչ վերաբերում է նոր ժամանակներին, ապա Շափայլ Պատկանյանն այս գաղափարն արդեն արտահայտել էր ավելի կատարյալ ձևով, այն էլ ոչ թե մեղմ, օրորոցային, այն մարտական բանաստեղծություններում: Թեմատիկ առումով նորություններ չէին նաև «Երրոր կանցնի ծմեռն սատիկ» (1883), «Ինչո՞ւ ես տխուր» (1884), «Թող փշե քամին» երգի եղանակավ» (1885), «Նախապետի ողբը» (1886) և մի քանի այլ ոտանավորներ, որոնք բանաստեղծն ինքը հրատարակության չի հանձնել:

Սակայն հիշատակված երկերը միաժամանակ շնչում են անկեղծ որդիական կարոտով և խոր տրտմությամբ հայրենիքի վիճակի համար: Բանաստեղծի հույսը սովորովի չէ: Սովորովին արտահայտման ձևն է: Այս կարոտն ու տրտմությունն են դրդել նրան ինքնաբերաբար հետեւելու ժամանակի լավագույն հայրենասիրական երգերին ու դրանց համանությամբ հորինելու սեփական ոտանավորները:

Անկասկած, պատահ Թումանյանը խորապես զգացել է հայ գաղթական վիճակի ծանրությունը և կորցրած վարանի կարոտը: Ահա, թե ինչու է նա հափշտակվել Նախապետ Ռուսինյանի «Կիլիկիա» բանաստեղծությամբ, որն այդ կարոտի ամենագեղեցիկ արտահայտություններից մեկն է, և իր հույսը թողին հանձնել սիրած երգի օրինակով.

Երբ որ կանցնի ձմեռն սաստիկ,  
Դարձյալ կը գա գարուն քաղցրիկ,  
Կը պճնի կրկին մեր հայրենիք,  
Կը կանաչն դաշտեր, լորինք,  
Հայնժամ գայցեն դեպ Արմենիա  
Մարավ, նոթի որդիք նորա...

Ընդ որում, նրա փոխաբերական «քաղցրիկ գարունը», այս դեպքում ևս այլ բան չէ, քան հայահավաքի և հայկական պետականության նույն ոռմանտիկ երազը, որին, ինչպես երևում է բանաստեղծության

հետագա տողերից, Թումանյանի կարծիքով հայ ժողովուրդը կարող էր հասնել նոր Ավարայրով, որը՝ Լևոնիների և Ներսևների առաջնորդությամբ:

Մա արձագանքն է նոյն ժամանակ Արևմտյան Հայաստանում ծավալիու աղատաբրական խմբումների: Իրանց արձագանքն է նաև Ալիշանի հայրենասիրական երգերի հանդիսավոր տոներով հորինված «Խանապետի ողբը»: Իրանց արձագանքներն են 1890 թ. գրված երկու հատվածները՝ «Տարոնի գարունը» և «Տարոնի առավոտը»՝ առաջններն այս տիպի երգերից, որ հրատարակվել է ինքը՝ հեղինակը: Վերջապես՝ դրանց արձագանքները են ավելի ուշ՝ 1896 թ. գրված «Ա՛յ ծիծունակ» սրտակեղեց երգը, որի սեպիին է միայն հասել մեզ:

Առհասարակ Թումանյանի հայրենասիրական երգերի կարևոր առանձնահատկություններից մեկը սկսել կապն է պատմական կոնկրետ իրադարձությունների հետ, որով մեծ չափով պայմանավորվում է այդ երգի անկեղծությունը: Այդ ոտանավորներից է Պատկանյանի աղեցությամբ գրված «Խոր վիշ քամին» երգի եղանակավ՝ երկարաշունչ բանաստեղծությունը՝ նվիրված հետազոտման գրված «Հին կիլիլը» պուեմ Խորսի համակերպարին՝ արևմտահայության պատագրության գործին գինվորագրված պատահի Ավելաները (Վարդան) Գոլոշյանին, որն, ինչպես նկատել է Լևոն, գաղտնի մեկնել էր Արևմտյան Հայաստան «Էյջենիք» նորուներին կանքի մեջ կլնանի, մարմին ու արյուն ունեցող մարդիկ դարձնելու համար» (տևու Լեռ, Հայ նորուներ, 1920, էջ 48):

Եթե հիշելոք հենց միայն այն անձնությաց գործունեությունը, որ բանաստեղծ ծավալեց իմպերիալիստական պատերազմի տարիներին՝ բառոցիորեն իր ուսերին առնելով հայ գաղթականությունը ֆիզիկական բնաջնջումից փրկվում գործը, ապա հասկանալի կդառնա, թե որքան հարզան ու միաժամանակ կնելերող է եղել նրա համար իր տեղահան ժողովրդի ճակատագիրը: Դւռ պատահության տարիներին է նաև ոտանավորներ նվիրել հայ գաղթականին ու պանդուխտին՝ նորանոր հուզական տողեր ավելացնելով այս «գորտ հայկական թևմալով գրված երգերին: Նոյն «Օրորք» բանաստեղծությունը, փաստորեն, պատահ բանաստեղծի սրտի մորմոքն է հայ գաղթականի համար, որը «աւկլոր, բոպիկ ու քաղցած, թափառում է սար ու ծոր, անգորսներից հալավածքն»:

Մորթոսված անմեղենը ու ավերված հայկական գյուղերը շրուժվող վերքեր ևս եղել բանաստեղծի սրտում և իրենց խոր հնտքն են թուլել նրա բնարերգության վրա: Ահա թումանյանական «հայոց վշտի» երկրորդ կողմը, որի արտահայտություններից են նաև «Էտաղբականի երգը», «Մորք ու խավար իմ հայրենիքը», «Հարություն», «Գիշեր», «Օտարության մեջ» և այլն, և այլն: Միայն այս և նման երգերի մեջ խորամուխ թեսլով կարելի է հասկանալ բանաստեղծի վշտի հասարակական խորք

ու ահագնությունը: Սա է, որ սկզբ սոնելով վաղ տարիներին, աստիճանաբար հոգրանում է և անցալ դարի 90-ական թվականներից դառնում կը քնարերգության առանցքը: Բանաստեղծի հայրենիքը խոշտանգումների, սպանությունների, առևանգումների, բանտերի խորքերից լսվող հեծորյան աղաղակների մի աշխարհ է, իսկ ինքը՝ ձուլված իր տառապող ժողովրդին, նրա մասմիկը: Դրա համար էլ նրա վիշտը համագային է, «բերված երկրից հայրենի» և «նրանով են իր երգերը կենդանի»:

Անցյալ դարի 90-ական թվականներից Թումանյանն արդեն վարպետ բանաստեղծ էր, և նրա վշտի պոռքումները հանդես էին գալիս գեղարվեստական այնպիսի ընդհանրացումներով, որպիսիք են «Նախերգանքը» (որ գրված է «Հաստանք» պուեմի համար, բայց հետագայում դարձել է բանաստեղծի գրեթե բոլոր ժողովածուները բացող առաջին, ծրագրային բանաստեղծությունը), «Հայոց վիշտը», «Տրտության» երկու սքանչելի «սաղմոսները» և այլն:

«Նախերգանքում» Թումանյանը գեղարվեստորեն արտահայտում է իր հավատամբը, իր կարծիքը բանաստեղծի տեղի մասին մի ժողովրդի կյանքում: Նրա ներշնչանքի աղբյուրը հայրենի շոայլ ու շրեն և կարծես միայն հերոսական արարքների հնամար ստեղծված բնությունն է՝ երկնախուակ լեռները, անդեղախոր ձորերը, որոնք, ավանդ, ողբերգական զուգահեռներ են առաջացնում բանաստեղծի սրտում: Դրանց վեճությունը հակադրվում է համազգային մեծ վշտին: Թումանյանը «Մաներ» սպատկերերի սիրահար չէ: Ծառ երկերում նա գրեթե չի օգտագործում ոչ մի համեմատություններից շատերում գեղարվեստական միակ հնարանքն այն է, որ որևէ «հնարանք» չկա: Մեծ ու դժվարին արվեստ է աս: Այսպիսի արվեստի մասին է, որ Ե. Չարենցը գրել է.

Բայց հասել է նա մի ջինչ պարզության,  
Որ ձևոք է բերվում դժվար վարժությամբ:

Սակայն, եթե Թումանյանի սիրահ օրհնական ցավի նման կեղծում է սպատությունը, նրա խոսքը երեւն դառնում է նաև արտախարզ շրեն ու պատկերավոր՝ ընդունակ, օրինակ, այնպիսի հիակերրողների, որ հաղվացյուտ կարելի է գտնել որիշ բանաստեղծների մոտ: Հենց արդեն հիշատակված «անտակ ծովի պես» ցավն ու «անհագ սովի պես» սկզբ պատկերավոր մտածողության այդպիսի օրինակներ են: Հապա այն «տարօրինակությունը», եթե բանաստեղծը, ինչպես նկատվել է թումանյանագիտության մեջ, ոչ թե իր վիշտն է չափում անդեղախոր ձորերի տարրողությամբ, այլ, ընդհակառակը, «աստծո հարվածի հնոքենի»՝ ձորերի անդունիներն է համեմատում իր ահուելի վշտին: Հիրավի, պատկերավոր մտածողության հանճարեղ նմուշ է այս տեսակաւորից: «Նախերգանքի» ավարտը:

Զորե՞ր, ա՞յ ձորեր, սև, լայնաբերան,  
Սրտիս էս խորոնկ վերքերի նման,  
Աստծո հարվածի հետքերն եք գուք էւ,  
Զեզ մոտ եմ գալիս, ուզում եմ երգել.

Գուք էլ խոսեցե՞ք, գուք էլ պատմեցե՞ք,  
Զեր անդունդներով հկեք շափվեցե՞ք,  
Դուք է՞լ եք, տեսնեմ, ինքան մեծ ու խոր,  
Ինչքան իմ հոգու թախիծն ահավոր...

Ահա այսպիսի կատարելությամբ ու վարակիչ ուժով է արտահայտվում թումանյանկան «հայոց վիշտը» միջյանց հյուսված իր երկու կողմերով: Այս կատարելության ու վարակիչ ուժի մեջ է նաև բանաստեղծի ժողովրդակնության գաղտնիքը:

Եվ, այնուամենայնիվ, «հոգու ահավոր թախիծն» բանաստեղծին չի համակում անանց հոուտեսությամբ: «Հայոց վիշտի» երգչի ստեղծագործության մեջ նայի հայտնում է նազիկ նշանավող մի կայծ, ապա հետզինեւու ավելի ու ավելի վառ է բոցկուում հավատը ժողովրդի ապագայի նկատմամբ: Ընդ որում, սա միանգամայն տարբեր է նոր Ավարայրի ումանատիկ սպասումից, պայմանավորված այն քաղաքական իրադարձություններով, որոնք ՀՀ դարի առաջին տասնամյակներում պարբերաբար ցեցում ենին աշխարհը և արձագանքվում նաև նայ ժողովրդի կյանքում: Հեղափոխական խմբումները Թումանյանում, ազգային-ազատագրական շարժումները հայկանելուում և Արևմտյան Հայաստանում ընդդեմ օսմանյան բռնապնտության, բանաստեղծին ոգեշնչում են գրելու իր լավատեսական հայրենասիրական բանաստեղծությունները: Դեռ դրասակրին, չնայած հայկական դպրոցների իփակմանը ու եկեղեցական կալվածքների հարբունի գրավմանը, և այդ առիթով տեղի ունեցած ժողովրդական հոգումների ազդեցությամբ, Թումանյանը «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում» բանաստեղծությունների հետ միահան գրում է «Մեր ուխտը», որը մի ձևու է հայ ժողովրդի տոկունության, տոգորված պայծառ լավատեսությամբ.

Բայց գնում ենք մենք անվեհեր  
Զարկերի տակ շար բախտի,  
Մեր աշքերը միշտ դեպի վեր՝  
Դեպի լույսը մեր ուխտի:

1915 թ. հունիսին, եթե աշխարհն արդեն ցնցել էին հայոց եղենի քատմնելի փատերը, կոտրածների խսկ վայրում՝ Վանում Թումանյանը գրում է «Ծոյն է գալիս ծանր բարր...» բանաստեղծությունը, արտահայտելով իր խոր հավատը հայ ժողովրդի ազգային վերածննի նկատմամբ, հավատ, որ նա փայփայում էր ի հակակշիր թորքական բռնակալության կազմակերպած ցեղասպանությամբ: Լավատեսությամբ են

Հնչում նաև 1910-ական թթ. գրված «Խուանու և բախտը մեզ շատ հարվածեց», «Հայրենիքիս հետ» և այլ բանաստեղծություններ:

Հայ ժողովրդի ծանր ճակատագրի և ազգային բարձր արժանապատվության ավկի սեղմ ու պատկերավիր ընդհանրացում, բան «Հայոց լեռներում» բանաստեղծությունը, անհնար է, գտնել մեր քնարերգության մէջ: Պատահական չէ, որ մեր գրականագիտությունն այն անվանել է «Իսյ ժողովրդի բանաստեղծական կենսագրություն» (տես Էջ. Զբաշչյան, Չորս գագաթ, Երևան, 1982, էջ 33): Ընդհամեն երեսուն տողում, րոնցից, տասն էլ կրկնակ տողեր են, Մումանայանը գեղարվեստորեն բնութագրում է հայոց պատմությունն իր եական կողմերով, փոխարևորաբար ներկայացնում որպես շնկ անպատճերից նկած հորդաների զարկած ու գրկած քարավանի ճամփա, որ ճգփում է դեպի մեր հայոց «ողջար», ապա «քարձը», ապա «արնոտ», ապա «սուզի» և վերջապես «կանաչ» լեռներում: Մակդիրից մակդիր, տարողունակ տողերում աստիճանաբար խոտանում են պատմական չարադրությունների պատկերները, մինչև, վերջապես, նշմարվում են լուսի առաջին շողերը՝ հուս ներշնչերով, թե հորդուված քարավանի ճանապարհին դու բացվու է «պայծառ առավոտ»:

Տասներեք տարի անց այս սրբազն հավատը ավելի հումկու պիտի դողմացեր «Հայրենիքիս հետ» բանաստեղծության մէջ:

«Հայրենիքիս հետ» վերնագիրը պատահական չէր Թումանյանի համար: Պատահական չէր նաև, որ բանաստեղծության այդպես անվանեց 1916 թվականին հրատարակված իր ժողովածուն: Այս վերնագրի իրավունքը նա նվաճել էր ավելի քան երեսնամյա հայրենասիրական գործունեությամբ, առավել ևս՝ տասնակ ու հայուրավոր բանաստեղծություններով, պոեմներով, լեգենդներով, բալլադներով, հեքիաթներով, պատմվածքներով, գրուցներով, ինչպէս նաև հրապարակախոսական հոդվածներով ու ելույթներով՝ իր ողջ ստեղծագործությամբ, որն, անկան ժանրից, թեմայից, երկերի կոնկրետ բովանդակությունից ու ներկան առանձնահատկություններից, հայկական է, արդյունք հայ կյանքի:

«Հայոց լեռներում» բանաստեղծության նման, այս գործը նույնական հայ ժողովրդի անցած դժվարին ճանապարհի, ողբերգական ներկայի և սպասվող լուսավոր պապավի հանճարեղորեն սեղմ ու փսոյուն ընդհանրացում է, միաժամանակ՝ բանաստեղծի հավատարմության երդումը իր ժողովրդին:

Սուաջին երկու տաճ մեջ պատկերվում է ժողովրդի անցյալն ու ներկան, նրա գաղթական զավակների լուս և ուժապատ շարքերով և ծանկած երկիրն ամայացնող ոսխների հրատակախմբերով: Հայաստանը ներկայանում է որպես «սև ու սուզի մի հովիտ», շեները՝ «դատարկ ու խավար»: Բայց ահա հաջորդ երկու տների մեջ, հակառակ այն ամենին, որպես պատմության ընթացքի տրամարանական հեռանկար, բանա-

տեղը տեսնում է ազատագրված հայրենիքը ու հավատացած է, որ նա դուք իր ծանրակշիռ խոսք է ասելու աշխարհին:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,  
Հազա՞ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,  
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,  
Կենսածիտ իր շողերը պիտի ժպտան առաջին,  
Ու պետներ, որ շեն պղծել իրենց շորթերն անեծքով,  
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,  
իյ նո՞ր հայրենիք,  
Հզո՞ր հայրենիք...

Միայն Թումանյանի համա մեծ հումանիտար ու ինտերնացիոնալիստ կարող էր տեսնել այս հեռանկարը, այն էլ այն ժամանակ, երբ, իր իսկ բատերով ասած, «կյանքի կովում» կանգնած էին «ամենքը դեմ ամենքին», երբ իր ժողովրդը բառացիորեն ենթակա էր փիզիկական բնաշնչամաս: Հիրավի, այդ երկու բարձր գաղափարները՝ հումանիզմն ու ինտերնացիոնալիզմը միշտ դրված են եղել նրա ստեղծագործության հիմքում: Պատմության և ոչ մի արյունու դեպք, հայ ժողովրդին բաժին հասած և ոչ մի ողբերգական հրադարձություն չի պիտորել բանաստեղծի հոգին ո: Իրից ազգերի դեմ ուղղված ատելությամբ: Այդ են վկայում ժողովրդների համերաշխությանն ու բարեկամությանը նվիրված նրա բազմաթիվ հոդվածներն ու կույտները՝ գրված 1915—1920 թթ., այսինքն՝ հայության համար ամենածանր տարիներին: Այդ է վկայում նրա հերոսական գործունեությունը հայ-վրացական և հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, երբ նա շրջում էր գյուղի գյուղ, համայնքից համայնք՝ հաշտության խոսք շորթերին: Այդ են վկայում դեռևս 1892 թ. գրված «Հաշոտությունը», վրաց ժողովրդին ծովական վերա» (1898), «Վրաստանի համար» (1916), «Ս. Նուևեի պատկերի առաջ» (1918), «Նվեր Վրաստանի բանաստեղծներին» (1919) և այլ:

• • •

Թումանյանն ազգային բանաստեղծ է նաև այն յուրօրինակ սիրով ու հիացմունքով, որ նա տածում է հայկական բնաշխարհի նկատմամբ: Հայրենի բնությունն առկա է նրա բոլոր, այդ բնույթ, նույնիսկ, ամենատխոր երգերում: Խակ բոլոր այն դեպքերում, երբ նա փորձում է ձերբազալել սիրով կեղերող ցավերից, երբ խոնացած ձգուում է հոգու անդորրության, դարձալ հայրենի բնաշխարհն է դառնում նրա սիրո ու երազանքի հանգրվանը: Բնության շքենությունը, «ազնվությունն» ու «ազատությունը» նրան մղում են մտորումների՝ մարդկային փոխարարելությունների և հասարակական բարոյականության շուրջ, մտորումներ, որոնք մի դեպքում արտահայտվում են միշտնրված, մեկ այլ հայ-

քում անթաքրոյց, ինչպես, օրինակ, 1889 թ. գրված «Ես նայում եմ իմ առջև» բանաստեղծության մեջ: Այս իմաստով Թումանյանի բնապաշտությունը այնպիսի երգերում, որպիսիք են «Համերգը», «Ամառային երեկոն», «Ա՛խ, ինչ լավ են սարի Վրա», «Գարնան առավոտ», «Պատրանք» և այլն, հասարակական մեծ հնձեղություն ունի: Այս բանաստեղծություններն աչքի են ընկնում ինչպես բնապատճերի գունագեղությամբ, այնպես էլ իրենց երերին լիցքով: Մրանցում բնությունը ոչ թե սուկ միջավայր է, այլ նաև «գործող անձ»: Օրինակ, «Համերգում» վտակը, անտառը, ժայռը, բացի բնանկարի անհրաժեշտ համամատաներ լինելուց, նաև «բնավորություններ» են և խորհրդանշում են հոգեբանական տարրեր վիճակներ: Վտակը ժայռից ներքև է թռչուն զվարյա ու ժիր պատանու նման, անտառը դողդոց ծերունու պես է ճայնակցու վտակ-թուանը, ժայռը տարիների հոգս ու փորձն ուսերին «իր մոպջ մտքի հետևից ընկած» է ունենդրում համերգը:

Խոր իմաստ է թաքնված «Ամառային երեկո» բանաստեղծության մեջ, որտեղ դրան բանական էակներ են հանդես գալիս աստղագարդ երկներն ու երկնամուռ լեռները:

«Ա՛խ, ինչ լավ են սարի Վրա» և «Գարնան առավոտ» բանաստեղծությունները, որոնք բնույթով և «անուշ, անուշ» կրկնակ բառերով մի տևակ օրգանական միամատթյուն են կազմում, ինչպես նաև «Պատրանք» նույնպես տղղամեծ թաքցրած ավելի խոր իմաստ ունեն, քան պարզ բնասիրությունը: Դրանք «ազատ» բնության գրկում անցած մանկության օրերի հիշողությունն են՝ ողղված խոր կարտով ու տրտմությամբ կորցրածի համար:

Այս տիպի բնապաշտությունն ինքնին խորապես ժողովրդային է: Ժողովրդայնությունը չի կարելի հասկանալ պատմական միջավայրից դուրս: Ընդհակառակը, այն ոչ այլ ինչ է, քան գրողի արտահայտած առաջարկ առաջարկությունը կաղաքական միջամտերի արձագանքը ժողովրդի սրտում, կամ, ավելի ճիշտ, ճշմարիտ գրականության և ժողովրդական մուածողության անխուսափելի փոխազդեցությունը: Այս առումով ոչ ամեն քան, ինչ առաջ է գալիս ժողովրդի ընթերքում, ոչ ամեն գաղափար և ոչ ամեն զգացում կարող են համակել ազգային բնաստեղծին, քանի որ պատմականորեն ծնկած ոչ բոլոր զգացումներն ու գաղափարներն են, որ կենական նշանակություն են ունենում պատմության հաջորդ փուլերում և, որևէմն, ընդունակ են հարատևելու: Անա թե ինչո՞ւ յուրաքանչյուր գրող, հավատարիմ իր ներքին ձայնին, ժողովրդից փոխ է առնում իր թեմաները, իր գաղափարները: Այս տեսակենից ժողովրդայնությունն ունի նաև սուբյեկտիվ կողմ, որն, անկանակ, ավելին է, քան սուկ նախասիրությունը:

Դեռ պատմության տարիներից Թումանյանն արտակարգ հետաքրքրություն է հանդես բերել ժողովրդական ստեղծագործության նըլկատմաբ: «10—11 տարեկան ժամանակն,—գրում է նա, —ժողովրդի

մեջ երգվող երգերին տներ են ավելացնում և գրում են զանազան ուսանակութերու...» (Եժ IV, 87): Արդեն 1889 թ. նա գրել է «Կալի երգը»: Բայց ժողովրդական մոտիվներով հյուսված բնաստեղծությունները մեծ մասամբ երևան են եկել 1907—1911 թթ. և գրված են «Հասկեր» ամսագրի ու «Լուսաբեր» դասագրերի համար: Այդ տարիներին է նա գրել «Ծովի աղջկը», «Արագիլ», «Ծիտը», «Խնոցի», «Քամին», «Կոունկներ», «Արտուտիկ», «Դժար տարի», «Փիտն», «Ուրագ ու սղոց», «Ծախարակ», «Գութան», «Փոքրիկ երկրագործը», «Ուղուն», «Կալի երգը», «Ծննդուկները», «Սոխակի վիշտը», «Կաքավի ողբը», «Մանուկն ու ջուրը» և այլն: Այս փոքրիկ բնաստեղծություններով ևս կարելի է սովորագել նրա ժողովրդայնության բնույթը, կամ այլ կերպ ասած՝ թե ինչն է գրավել Թումանյանին բնահյուսական անրազ հյուտերի մեջ, հատկապես ինչ թեմաներ է լսնորել նա և ինչպես է մշակել դրանք:

Հասցեագրված լինելով մանուկ ու պատանի ընթերցողներին, ժողովրդական մոտիվներով գրված այս բնաստեղծություններն ունեն դաստիարակչական խոչըն նշանակություն, և մասամբ նաև սրանով է պայմանավորված թեմաների ընտրությունը: Սակայն, ինչպիսին էլ լինեն, դրանք նախ և առաջ արտահայտություններն են այն մեծ հումանիզմի, աշխարհի բոլորի համար շեն ու պայծառ տեսնելու այն փափագի, որ գալիս է ժողովրդական մտածողությունից և հարազատ է բնաստեղծին: Լեռնային գյուղի գորովանքով զծված համապատկերը, լոռվա բնությունն իր երթներանգ ծաղիկներով ու խոսնակ թռչուններով, սպրյուրներով ու գետակներով, գյուղի մարդիկ իրենց հոգսերով և ուրախություններով, դարերով մշակված սովորություններով ու չգրված ցրենքներով, նրանց չարքաշ աշխատանքը որպես ամենայն բարյաց ու մարդկային բարձր հատկանիշների աղբյուր—ահա Թումանյանի ըննրած մոտիվները ժողովրդական բնահյուսության գանձարանից: Եթե մի ընդհանուր հայացքով ընկգրկներք բնաստեղծի ողջ ստեղծագործությունը, իսկույն կնկատնենք, որ սրանք առկա են նաև այնպիսի երկրություններ, որոնք բնահյուսական ատաղձ չունեն: Այսինքն՝ այս դեպքում ևս Թումանյանը հարազատ է ինքն իրեն, քանի որ հարազատ է, իր ժողովրդի մարդասիրական մտածողությանը:

Ժամանակին բնակույղ մղեկով ժողովրդայնության թյուրըմբունողության դեմ, Թումանյանը Պոչկինի օրինակով ցույց է տվել, թե ինչ ասել է իսկական ժողովրդայնություն, և թե ինչ հարաբերության մեջ պիտի լինեն միմյանց հետ բնահյուսական հյուրն ու դրա մշակումը: «Ես,—գրում է նա, —իմ լեգենդներն են եմ ժողովրդից առել, բոլոր հերիաներն ու գրույցներն են եմ ժողովրդայնությանց առել ու միշտ աշխատել եմ ինչքան կարելի է մտտի ու հարազատ մնալ» (Եժ IV, 267): Բայց միաժամանակ նա մեծ տարբերություն է տեսնում բնահյուսական հյուրի և դրա գեղարվեստական մշակման միջև. «Մշա-

կածի, գրական լեզվով պատմած, փոփոխածի, զանազան վարժանութեցից կազմածի, չափական ձևի վերածածի վրա,—ասում է նա,—չպետք է գրվի «ժողովրդական»: Նա արդեն ժողովրդականը չի, թեն բնագիրը ժողովրդից է առած» (նույն տեղում, էջ 266):

Նյութը ընտրելով՝ Թումանյանն առաջին հերթին այն ձևում է իր առաջարած խնդրին համաձայն: Օրինակ, «Քաջ կիվիվը» բանաստեղծության հյութը նա առել է Գ. Արվանդյանի «Համով-հրտով» գրքից: Բայց այնուղեք ուսանալու ունի 28 տուն, որոնցից բանաստեղծն օգտագործել է միայն 4-ը՝ առաջինը, երրորդը, տասնմեկերրորդն ու քասերերրորդը: «Փոքրիկ երկրագործի» բանահյուսական տարրերակն ունի 54 տուն, որոնցից բանաստեղծն օգտագործել է միայն առաջին 9 տողերը և այլն:

Պահելով ժողովրդական երգի ընդհանուր ոգին, Թումանյանը միաժամանակ ներքին փոփոխություններ է մտցնում դրա մեջ՝ հարմարեցնելով նոր ժամանակներին: Այս տեսակետից որպես հետաքրքիր օրինակ կարող է ծառայել «Մանուկն ու շորը»: Սրա ժողովրդական տարրերակները պահվում են միջնադարյան ձեռագիր մատյաններում, իսկ առաջին մշակողը եղել է XVII դարի բանաստեղծ Երեմիա Քյոմուրճյանը: Եվ ժողովրդական տարրերակները, և՝ Քյոմուրճյանի մշակումն ավելի ընդարձակ են և միանգամայն համապատասխան միջնադարի ոգուն: Դրանք երկխոսություններ են կամ ջրիկի և «սիրո տեր» երիտասարդի, կամ ջրիկի և պանդոխտի սիրակարու նորահարսի միջև: Այդ պատճառով այս երկխոսությունների մեջ շոշափվում են սիրո ու պանդոխտության մոտիվները՝ համապատասխանաբար ուրախ ու տխոր գուներանգներով:

Թումանյանի բանաստեղծության մեջ «ամպու սարից» եկող ջրիկի գրուցակիցը երեխան է, և, բնականաբար, այսուղեք բացակայում են ուշ միջնադարի բանաստեղծության համար տիպական պանդիստության և կրոնական մտայնության ի հակալշին փառարանվող աշխարհիկ սիրո մոտիվները: Ծիշու է, հարցելը նոյնն են՝ «Դու ո՞ր սարեն կուգաս, ջրիկ», «Դու ո՞ր առուն կերթաս, ջրիկ», «Դու ո՞ր այգին կերթաս, ջրիկ», բայց քանի որ դրանք տախիս է երեխան, ջրիկի պատասխանները խաղացկուն են, թերեն, դրանց նպատակը «ամպու սարերի», առվի ափերին փոփած «շոշագան ու վարդի», կանաչ ու դալար այգիների և, վերջապես, երկրագործի աշխատանքի փառարանությունն է:

Ես էն այգին կերթամ դալար,  
Որ տերեն է միր, մեջն այգեպան:

Առնասարակ չկա մանկական գրականության որևէ ժամը, որնէ տեսակ, որին ձեռք զարկած չլինի Թումանյանը և հասցրած չլինի բարձր կատարելության: Դրա ցայտուն վկայությունն են նաև այս բանաստեղծությունները:

Արդեն տեսանքը, որ ժողովրդական մոտիվները նա մշակել է բացառապես մանուկների համար, և դրանք նրա ստեղծագործության մի գեղեցիկ մասն են կազմում: Նրա ինքնուրույն բանաստեղծություններից ել է երեսում, որ մանկական գրականությունը նրա համար կրեք չի նոյն «գործից ազատ ժամանակ» նորինվող, «ոչ այնքան կարևոր» արվեստ, ինչպես նկատում ենք ուրիշ դասականների ժառանգությունն ուսումնասիրիչին: Այս առումով Թումանյանը մեր ամենակատարյալ մանկագիրն է նաև իր տեսական պատրաստությամբ և մանրամասն մշակված սկզբունքներով, որոնք նա արտահայտել է պարբերաբար անդրադառնալով մատադ սերնդի կրթության ու դաստիարակության հարցերին:

Թումանյան-մանկագրի անգուգական վարպետությունը փայլատակում է ինչպես ժողովրդական մոտիվների մշակումներում, այնպես էլ «Հանկիր» ամսագրի և «Լուսաբեր» դասագրքերի համար նրա կատարած տասնյակ փոփոխություններում և այնպիսի ինքնուրույն բանաստեղծություններում, ինչպիսիք են «Կուսարացին», «Գևտակը», «Աղբյուրը», «Շաղիկները», «Լանաշ ախայեր», «Աշնան վերջը» և այլն: Օրինակ, «Շաղիկները» բանաստեղծության հիմնական նպատակը «արտարիս աշխարհի» ցուցադրումն է: Այսուղեք բանաստեղծը մանուկ ընթերցողին ավլուում է, որ գարնան գալու նետ նորից հայտնվելու են ձմռան ցրտին ձյան շերտի տակ թաքնված ծաղիկները: Բայց այն նուրբ քնչազնը, որով նա համակում է ընթերցողին՝ ծաղիկներին համեմատելով քնից արքնացող մանուկների հետ, անշուշտ, ունի նաև դաստիարակչական նշանակություն: «Գևտակը» բանաստեղծության մեջ ևս, թեև նպատակներից մեկը ցի կնանական մեծ նշանակության մասին տեսնեկություն հաղորդելու է, բայց միաժամանակ փառարանվում է երկրագործի աշխատանքը, այսինքն՝ «քարքուն» անց է կացվում դաստիարակչական նպատակ ունեցող խրատը:

Բանաստեղծությունների այս լուրանակ բնույթով էլ թենց պայմանավորվում են դրանց գեղարվատական առանձնահատկությունները՝ կառուցվածքը, պատկերները, ոնք ու բառապաշտը: Թումանյանը, որի բանաստեղծություններում հաճախ են հանդիպում «գիշեր», «խավար», «հառաշանք», «անտակ ցավ» և նման բառեր, մանկական բանաստեղծություններում ավելի շատ լավատեսական, ուրախ մեղեդիներ է հճեցնում և, հավատարիմ իր այլ համոզմանը, թե երևսան ամեն ինչ ընկալում է ուրախ ծնուվ, խոհական բանաստեղծությունների հանդարտ տողերը փոխարինում է վետապետուն, թերևսաս տողերով, թանձը ու խորունկ պատկերները՝ պարու, «առանց պատկերի» բանաստեղծությամբ:

Ուրիշ են ավելի տարեց ընթերցողներին նաև ագրված երկիրը: Միջին տարիքի երեխաներին ու պատահներին Թումանյանն արդեն առաջարկում է այնպիսի բանաստեղծություններ, որոնցում հիմնական

բարոյագիտական խրատն է, ինչպես, օրինակ, «Ուրագն ու սղոցը», առաջարկում է իր սքանչելի հնքիարենը, բալլադները, լեգենդները, ժողովրդական էպոսի մշակումն իր հայրենասիրական խորքով, թեև այս դեպքում և՛ նա խորաթափանցորդեն խուսափում է մերկապարանոց խրատից:

• • •

Դեռ պատաճության տարիներից Թումանյանի քնարերգությունն աշքի է ընկել խոհականությամբ: Խոտեղագործական կյանքի բոլոր փողերում ևա միաժամանակ, այսպիս կոչված, ինտելեկտուալ բանաստեղծության խոշորագույն ներկայացուցիչներից մենք է:

1890 թ. գրված «Խորհրդածություն» բանաստեղծության մեջ Թումանյանն առաջին անգամ փորձում է կյանքի սկզբնապատճանի մասից իր հոգում ծնված տարակուսանքը հաշտեցնել այն ավանդական «օրինաչափության» հետ, որ, իբր, հաստատել էր քրիստոնեական հավատը՝ համարդելով կյանքն ու մահը, իրական և հանդերձյալ աշխարհները: «Ո՞րն է դրախտը», մի՞թե դա այն սուս միխթարանքը չէ, որ մարդկային տառապալի կյանքն է ստեղծել,—հարցնում է բանաստեղծն ու չի կարողանում պատասխանել այդ հարցին, քանի որ սարսափում է տրամաբանական հետևությունից, իսկ ավանդական պատասխանն այլևս չի համոզում:

Բայց առաջին քարն արդեն հետված է: Այնուհետև ամեն ինչ՝ սերը, կարույր, ազգային ողբերգությունը, հասարակական բարոյականությունն ու կյանքի առօրյա ընթացքն անգամ, ևա պիտի քննի երկու պատասխանների հակամարտության և ավանդականի աստիճանական տեղատվության պայմաններում թեև նրա սիրու դեռ երկար ժամանակ պիտի կենքի պայքարի հավանական երը: Ինչո՞ր չափով այս պայքարի ծնունդն են նաև «Մարգարեն», «Գիշերային աստղի դիմաց», «Դեռ անթշելի վաղ մանկությունից» և այլք:

Այսպես, մինչև «Վայրէջը» (1909) և 1915 թ. գրված «Բարձրից» բանաստեղծությունը, որի իր փիլիսոփայական տարողությամբ, կարելի է ասել, հավասարը չունի, նոյնիսկ, իր՝ Թումանյանի ստեղծագործության մեջ: Ներքին մաքառման վերջին ակորդն է սա, որտեղ տարակուսանքն արդեն տեղի է տվել, բանաստեղծը վերջնականապես հիանափել է ավանդական պատասխանից և դա այլևս ողբերգություն չէ նրա համար, քանի որ նա գտել է իր՝ մարդկային անհատի տեղը տիեզերքում և համոզվել, որ մարդու մեջ է այն ամենը, ինչ դարերով վերագրվել է արարշին:

Իմ բարի սրտի էն մեծ խոհերից,  
էն մեծ խոհերի անհուն խորերից՝

Կամեցավ՝ եղավ իմ հզոր հոգին,  
Որ բարձրից նայի աստծու աշխարհիքն:  
Ու իր հարազատ բարձունքիցը լույս՝  
Անշար, անաշառ, անդորր ու անհույզ՝  
Պարզ, ամենատես հայացքովը նա  
Ճառագեց ներքն՝ աշխարհիք վրա:

Այսպիսով՝ դեպի ճախրելով աշխարհն ավելի ամբողջական ձևով ընկալելու համար (իզուր չէ, որ բանաստեղծությունը կոչվում է «Բարձրից»), բանաստեղծի հոգին մտնում է մարդկային հասարակության ու տիեզերի «առեղծվածները» բացատրելու ոլորտը, միանուն տիեզերի անհունին, երկնադեմ Մասիսի հետ դարենար քննում «կան ու չկան էս աշխարհիք»: Նրա բոլոր մտորումների ելակետը խոր հումանիզմն է, ներքին պայքարում տվանդականի վերջնական պարտությունը, որքան էլ բանաստեղծական խոսքի մեջ Թումանյանը դեռևս աշխարհի պիտի անվանի «աստծու աշխարհ», պիտի օգտվի ավանդական տերմիններից, ինչպես որից առիթներով նոյն աղբյուրից արդեն փոխ էր առել «հոգեհանգիստ», «մարգարեն», «անապատ», «ուխտ», «հարություն» և նման քառեր:

Բայց կարելի է ասել, որ իմաստասիրական իրարամերժ մտորումներից ու տարակուսանքներից մարդակենարուն փիլիսոփայության անցնելու այս պրոցեսն արդեն փաստորեն պարտության էր իր դեռ 1909 թ., երբ Սկետինի բանաստեղծը գրում էր իր հոչակավոր «Վայրէջը», թեև այստեղ առաջին հայուն հայացքից կարու է մշուշապատ թվայի նպատակը, եթե շփոթենք հասկանալ նրա «անհայտը սուրբ, աշխարհը պայծառ», այսինքն՝ նրա իդեալը:

Իսկապես, ո՞րն է հանգրվանը, ո՞րն է այն իդեալական փիճակը, որ որոնել ու գտել է բանաստեղծը: Ներքեւում թողենելով փառք, գանձ, քեն ու համանձ, այն «ամենը, ինչ ճնշում է հոգին», բառասուն տարի «ամիակու ճամփով» քայլելոց հետո, վերջապես նա հասել է «հոգու խաղաղության», այսինքն նոյն «անշար, անաշառ, անդորր ու անհույզ» վիճակին, որը հասուն է միայն աստվածության: Դատահական չէ, որ տարիներ հետո նա հրաշապատում է ներկայացնում իր, որպես բանաստեղծի, կնունքը:

Իմ կնունքին երկինքը ժամ, արկր գահ սրբրազան,  
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն ավազան,  
Սարը եղավ կընքահայրըս, ցողը մյուռոն կենսավետ,  
Ու կընքողըս նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

Դրանից հետո է, որ նա իրավունք ունի ասկելու, թե ինքը հարուստ է ու բախտավոր, քանի որ որքան էլ ծրի բաժանի իր գանձերը, դարձյալ «սերն անվերջ է, բարին անհատ»: Այսինքն՝ բնության մեջ տար-

բալուծելով, Թումանյանն անսահմանորեւ հարստացնում է մարդկային նոգին, դարձնում տիեզերք տիեզերքի մեջ: Անա, թև ինչ պայծառ լավատեսության և հանաստեղծի խոհը կյանքի ու մահու այն վիճի մեջ, որտեղ նյութի հավերժության և մարդկային կյանքի կարծեսության համադրությունը, թվում և, տրամաբանորեն պիտի հանգըներ հոռեստաւրյան:

Առնասարակ այս համադրությունն այն շափանիշն է, որով շատ հաճախ և՛ն փորձել այս կամ այս գրողի աշխարհայացքը՝ սկսած սուր- չնկատիվ իդեալիզմին ու դրան ուղղված հոռեստաւրյանը վճարած հարկից, մինչև, որից դեպքիրում, տիեզերքի մեջ իրեն տիեզերք զգալու գաղափարը, որով պայմանավորվում է շառայ ու շքեղ լավատեսությունը: Հայ գրականության մեջ վերջինիս ամենանոր ներկայացուցիչը Հովհաննես Թումանյանն է: «Վայրէցից» մինչև «Միրիոսի հրամեշտն» ու «Արո սակեր», երկուու և՛լ գրված արդեւ մասնաւ անկողնում, Թումանյանը հավատարիմ է, իդել իր այս լիւնսափիխտիփայությանը: Իրա համար և՛լ նրա նարցը «Միրիոսի հրամեշտում», թև «մարդու քանի» սերունի կանի մի հրամեշտն աստիղային, հոռեստական մտորումներ չի առաջացնում: Իրա համար և՛լ «Արոսյակը» հնչում և, որպէս մի անզուգական ձուց «պայծառ ու վառ շղթեր հագած, անապակ, թարմ, ուրախ, շաղաղ-շարմաղ» լուսին:

Այս լավատեստրյուն, լուսի այս հաղթանակն է: Բնեց այն համագրվածը, այն իդեալական վիճակը, որ «Վայրէցից» մեջ արդեն կուանիլ էր բանաստեղծը ոչ միայն իր, այլև աշխարհի համար: Այս կակետից և, որ հասկանալի է դառնում, թև նա ինչպես է կարողանում դեպի մասիր տանող հանապարհի մասին գրել.

Եվ ևս իմաստուն ու բնոս լեթե  
Անոնց ծիծագով,  
Երդով ու առողով  
Հնում ևմ դվարի իմ բերան հանե:

Թումանյանի բնարեգության խոհափիխտիփայալան մոտիվների բնական գարգացումը Խղան կանքի վերջում գրած բանիակները: Ծավալով ամենափոքր բանաստեղծական այդ ձեզ դարձավ Թումանյանի հումանիստական աշխարհայացքի և տիեզերական մեծ ընդդրկումների ամենալայլ ու խոր արտանայտությունը, նրանց գեղարվեստական բարձրագույն համադրությունը<sup>1</sup>:

Խ. ԳՅՈՒՂՆԱԶԱՐՅԱՆ

<sup>1</sup> Թումանյանի բանյակների բնայանուր բնութագիրը կտրվի սույն հրատարակության 2-րդ հատորում:

Հովհաննես Թումանյանի երկերի ժողովածուի առաջին հատորն ընդգրկում է հեղինակի բանաստեղծությունները (բացի բառյակներից), գրված 1881—1922 թի:

Հատորում գետեղված բանաստեղծությունների համար հիմք են ծառայել Թումանյանի կենդանության օրոք տպագրված ժողովածուներում հրատարակված բնագրերը, և Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում և բանաստեղծի ընտանիքի արխիվում պահպող ինքնագրերը: Ներկայացվում են նաև ցարդ անտիպ բանաստեղծությունները:

Հատորում օգտագործված են հետեւյալ համառոտագրությունները.

ԲՄ I—Բանաստեղծություններ, հ. I, Մոսկվա, 1890

ԲՄ II—Բանաստեղծություններ, հ. II, Մոսկվա, 1892

Դ—Դաշնակներ, թիֆլիս, 1893

ԴՓ—Դաշնակներ, փոփոխված, թիֆլիս, 1896

ԱՄ—«Աղյուրի մատոնագարան» շարք, «Հովհաննես Թումանյան» ժողովածու, թիֆլիս, 1899

ԲԹ—Բանաստեղծություններ, թիֆլիս, 1903

ԲԲ—Բանաստեղծություններ, Բաքու, 1908

ՀՀ—Հայրենիքիս հետ, թիֆլիս, 1916

ԲՊ—Բանաստեղծություններ, կ. Պոլիս, 1922

ԳԵ—Հովհաննես Թումանյան, Գևարգիստական երկեր, Երևան, 1934

ԵԺ I, II, III, IV, V, VI—Հովհաննես Թումանյան, երկերի ժողովածու, գիտական հրատարակություն 6 հատորով, Երևան, 1940—1959

Աղ—Աղյուր, ամսագիր

ԲԳԱ—Բանքեր գրականության և արվեստի, հանդես

ԲԵՀ—Բանքերի Երևանի համալսարանի

ԴԱԹ—Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

ԳԹ—Գրական թերթ

ԴՊ—Գեղարվեստ, հանդես

ԲԸԱ—Թումանյանի ընտանիքի արխիվ

ԹԺՀ—Թումանյանը ժամանակակիցների հուշերում, տեքստը պատրաստեց և ծանոթագրեց՝ կ. Ս. Կարապետյան, Երևան, 1969

ԲՑ—Թումանյանի գոնդ

կ. I, կ. II և այլն—Լուսաբեր, դասագիրք, Ա տարի, Բ տարի և այլն

ԿԳ—Կորհրդային գրականություն, ամսագիր

**Խմբ.** — Խմբագրական կոլեգիա  
 ՀՊ—Հայ գրողներ (Ա. ոռուահայ գրողներ), Թիֆլիս, 1914  
 ՀՀ—Նորիգոն, Հանդես, Թիֆլիս, 1894  
 ՀՄԲ—Համբավաբեր, շարաթաթերթ  
 ՀԱԿ—Հասկեր, ամսագիր  
 ՀՐ—Հորիզոն, օրաթերթ  
 ՀՌՀ—Հորշարար, երկշարաթաթերթ  
 ՄՃ—Մուրձ, ամսագիր  
 ՆԱՌ—Նոր ալիք, օրաթերթ, Թիֆլիս  
 ՆՈՒ—Նոր ուղի, ամսագիր  
 ՆՀՀ—Նոր հոսանք, ամսագիր  
 ՊՐ—Պրոլետար, օրաթերթ  
 ՍԿ—Սովետական գրականություն, ամսագիր  
 ՏԳ—Տարագ, շարաթաթերթ  
 ՈՒՀ 1, 2, 4—Թումանյան. Ուսումնասիրություններ և հրապարակումներ, Հ. 1, Երևան, 1964, Հ. 2, Երևան, 1969, Հ. 4, Երևան, 1985  
 ՓՎՓ—Փիլիպոս Վարդագարյանի ֆոնդ  
 Հեղինակի ծանոթագրությունները տրվում են տողատակ, աստղանիշներով:  
 Ուղանկյուն փակագծերի մեջ դրվում են հեղինակի չնշած բառերը, հատկածները:  
 Սուրանկյուն փակագծերի մեջ դրվում են խմբագրության վերականգնած և ըստ տրամաբանության անհրաժեշտ տառերն ու բառերը:

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

(«Էտոնն՝ Աերշընչված դարձյալ ձեզանով...»)  
(Էջ 28, 433)

Գրված է 1890 թ.:  
 «Հառաշանք» (նախնական վերնագիրը՝ «Շեր այգեպանի պատմություն») պումբի նախնագանքն է:  
 Ինքնագիրը չի պահպանվել: Հավանաբար կորել է 1908 թ. դեկտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը, երբ բանաստեղծին ձերբակալելուց առաջ ժանդարմերին խուզարկել է նրա բնակրանը և այլ ձեռագրերի հետ բռնագրավել նաև հիշյալ պոեմի ձեռագիրը: (Այս մասին մանրամասն տե՛ս եթ 11, 367):

Առաջին անգամ տպագրվել է Դփ, էջ 3—4, այնուհետև՝ ԲԹ, էջ 7—8, ԲԲ, էջ 5—6, ԲՊ, էջ 7—8, ապա՝ ԵԺ 1, 28—29:  
 Պումի մյուս հատվածների հետ առաջին անգամ տպագրվել է ԵԺ 11, 33—34:  
 Արտատպվում է ԲՊ-ից:  
 Դփ-ում, ապա 1903, 1908 և 1922 թթ. ժողովածուների մեջ, թումանյանն այս բանաստեղծությունը գետեղել է սկզբում, դիտելով որպես իր ողջ ստեղծագործության նախնագանք: Արանով է բացվում նաև Յ. Զարենցի խմբագրությամբ 1934 թ. հրատարակված «Գեղարվեստական երկեր» ժողովածուն: Հետևելով այդ պահանջութիւն և նկատի առնելով այս բանաստեղծության բացարձիկ կարեռությունը, խմբագրությունը հարմար գտավ թումանյանի երկերի լիակատար ժողովածուի առաջին հատորը ևս բացել «Նախնագանքով»:

## 1881

### «ՀՈԳՈՒՄ ՀԱՏՈՐ...»

(Էջ 24, 433)

Թումանյանի մեզ հասած առաջին բանաստեղծությունն է: 1916 թ. օգոստոսի 12-ին Ցողակ Խանզադյանին ուղած նամակում, բանաստեղծն այս ոտանակորը համարում է իր ամենահինքն գրամքը: «Ի՞նարկե, — գրում է նա, — շեմ հիշում ամենահինք՝ ին սիրային ոտանակորը, իր պատմությունով հանդերձ, որ գրված է շեմ հիշում 1881 թի 82 թվականին» (տե՛ս ԵԺ V, 415): Սակայն այս տողերը գրելիս բանաստեղծը, ըստ երեսութիւն, նկատի է ունեցել ոչ թէ առնասարակ իր անդրանիկ գրական փորձերը: այլ միայն պահպանված ոտանակորը, քանի որ մեկ այլ տեղում կարդաս ենք: «Եատ վաղ եմ սկսել ոտանակոր գրել: 10—11 տարեկան ժամանակս կորիս Մելիքովի վրա երգեր էին երգում ժողովրդի մեջ: Այդ երգերին տներ էի ավելացնում և երգում էի զանազան ոտանակորներ՝ երգիւուրանկան, հայրենասիրական և սիրային» (տե՛ս ԵԺ IV, 87):

Գրված է 1881 թ. մարտին (Հավանաբար սկզբին): Դա երևում է բանաստեղծի մեկ այլ վկայությունից, որուղի, ոտանակորի գրության ժամանակը նշելիս, հիշատակում է կայսր Ալեքսանդր II-ի սպանությունը, որը տնեղի է ունեցել 1881 թ. մարտի 1-ին: «1881 թվականին, — գրում է նա, — այս ոտանակորը բռնեցին Հմայակն ու Միքայելը, մեր տեսուց Տիգ. (Տիգրան Տիգ-Դավթյանը—խմբ.) ինձ ուղարկում էր ոռզգի տալ, բայց լացով պշտամ: (Թագավորի սպանվելուց հետո այն օրերում)» (տե՛ս ԹՀԱ Խ 10 ծոցատերը):

Նույն ծոցատեսրում պահպում է մեկ ինքնագիր՝ գրված հիշողությամբ 1890-ական թթ. սկզբներին: Այսուղ 4-րդ տողն ունի երկու տարրերակ: ԳԱԹ թֆ № 11 ա պահպում է մեկ ինքնագիր ևս, որը, ըստ երեսվածին, նույնպես ուշ ժամանակի գրություն է, թվագրված՝ «1882—3»:

Առաջին անգամ տպագրվել է «Հավելված «Հույս», 1905 օրացուցի», էջ 21, այնուհետև՝ էմ. ք. Նազարյանց, «Հնատիր հատվածներ», 1907, էջ 268, ապա՝ Եթ I, 427:

Տպագրվում է «Հնատիր հատվածներից»:

Հայտնի չէ, թե ում է ձևնված ոտանակորը: Թումանյանի ժամանակակիցներ Վարսենիկ Գևորգյանի և Սարգիս Արովյանի հուշերում, որպես մանուկ բանաստեղծի հափշտակության առարկա, հիշտակվում է Զաւալովու դպրոցի տևուց Տիգրան Տեր-Դավթյանի դրստր Վերդինեն (Վերդինե Պապաջանյան), որը տարիքով Թումանյանից բավկան մեծ է եղել և մասնագիտությամբ՝ վարժուհի (տե՛ս ԹժՀ, էջ 207—208 և 215): Մեկ այլ ժամանակակից՝ Անուշավան Արովյանը, գրում է. «Սույն ոտանակորը պատասխանն է սիրած այակերտունու այն գրության, որով նա նախազգուշացրել էր Հովհաննեսին, թե չինի՞ սիրով տարված, չկարողանա դասերը սովորել» (Նույն տեղում, էջ 221): Այս աշակերտունին էլ ըստ Ն. Թումանյանի Քալի Սիմոնյանն է, ըստ Ան. Արովյանի՝ Քալի Շահնշահը (այս մասին մանրամասն տե՛ս Ա. Խենքիյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 104—105):

1887

ԱՂՈԹՔ

(«Սոլոմոնի պես, տեր...»)  
(էջ 25)

Գրված է 1887 թ. փետրվարին:

Տիգրան Փիրության իր հուշերում հիշտակում է ԲՄ I-ում տպագրված 13 բանաստեղծություն և, հավանաբար բանաստեղծի գրուցներից քաղած, տեղեկություններ հաղորդում դրանց գրության շարժադիրների և Թումանյանի ներշնչման պահերի մասին: Օրինակ՝ նրա հուշերից տեղեկանում ենք, որ այս՝ «Աղոթք» ոտանագորը, գրելու առիթ է ծառայել մի քահանայի բացականությունը: «Փող է հարկավոր, փող, գոն փող ասա» (տե՛ս ԹժՀ, էջ 345):

Ինքնագիրը չի պահպանվել: Ըստ Արամ Առաքելյանի հուշերի՝ ինքնագիրը եղել է «գրելու թղթի թերթերից կարած» այն տետրում, որը 1888 թ. Թումանյանը ցույց է տվել Ներսիսյան դպրոցի բարձր գասարա-

ցի ընկերներին՝ Դավիթ Շահլամյանին, Գրիգոր Վանցյանին, Արամ Առաքելյանին և Արսեն Ղլուճյանին (նույն տեղում, էջ 288):

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 85, այնուհետև՝ Եթ I, 247: Արտատպվում է ԲՄ-ից:

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

(«Արի՝ գութան, վարի՝ գութան...»)  
(էջ 26, 433)

Գրված է 1887 թ. մարտին:

ԳԱԹ թֆ № 15 պահպում է ՄՃ-ի արխիվից հանված մեկ ինքնագիր՝ 16 տող, վերնագրված «Գութանի երգը»: Վրան կա Ավ. Արասիսյանյանի մակաղորությունը՝ «Մուրճ, № 4», ապա՝ «Շարել ու տպել Թումանյանցի մյուս ոտանագորների հետ (Կրասինիկյանինը առայժմ հանել ու պահել)»:

ԹԸԱ պահպում է մի մասն այն տետրի, որից հեղինակն, ըստ երեսվին, կազմել է ԲՄ I և ԲՄ II ժողովածուները: Այսուղ ոտանագորը վերնագրված է «Հայ երկրագործի երգը», պահպանվել է առաջին տողը և մի հատված, որը չկա հեղինակի կենդանության օրոք լույս տեսած հրատարակություններում: Այդ հատվածը հրատարակել է Ա. Խենքիյանը (տե՛ս Ա. Խենքիյան, Հովհաննես Թումանյան, էջ 236—237):

Առաջին անգամ «Գութանի երգ» վերնագրվ, տպագրվել է ՄՃ, 1891, № 4, էջ 504, այնուհետև՝ ԲՄ II, էջ 93—94, Դ (13-րդ ոտանագոր), Դփ, էջ 5—6, «Գութանի երգը» վերնագրով, վերամշակված՝ ԲԹ, էջ 9—10, ԲԲ, էջ 7—8, ԲՊ, էջ 11—12, ապա՝ Եթ I, 13:

Արտատպվում է ԲՊ-ից:

ԲՄ I-ի հրատարակությունից հետո Թումանյանը բազմաթիվ նամակներ է ստացել ինչպես իր մտերիմներից, այնպես էլ անծանոթ մարդկանցից, որոնցում բարձր կարծիքներ կան ժողովածում զետեղված մի շարք բանաստեղծությունների, այդ թվում և այս երկի մասին: Ահա, օրինակ, թի ինչ է գրում մանկավարժ, քիմիկոս և լրագրող Սիմ: Հովհյանը 1891 թ. մայիսի 14-ին Թումանյանին հղած նամակում. «Հիմանալի եր վերշինը՝ «Արի գութան, վարի գութան...»: Երգի՛ր, սիրելիս, գյուղացու կյանքը, նրա հոգան ու վիշտը, նրա տանշանքն և երշանկությունը, երգի՛ր, շա՛տ երգիր, այդ մեր ամենիս սրտին մոտիկ է: Երգի՛ր, անընդհատ երգի՛ր, որովհետեւ քո երգածի մեջ բնականություն կա և ոչ դատարկ ֆանտազիա: Դու պիտի երգես, որովհետեւ դու նույն իսկ այդ ընկճված, հարստահարված գյուղացու ծնունդն ես» (տե՛ս ՈՒՀ 4, 302):

## ԱՄԱՌՎԱ ԳԻԾԵՐԸ ԳՅՈՒՂՋԻՐ

(«Լուսընկա գիշեր...»)  
(էջ 27, 435)

Գրված է 1887 թ. օգոստոսի 10-ին:

Բայտ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյան այս ոտանավորը գրել է «Թիֆլիսի Մթածմինդա սարից մի լուսնյակ գիշեր քաղաքը դիտելուց և նրա աղուկներն իր հայրենի Դսեղ գյուղի հանդարտության հետ համեմատելուց հետո» (տե՛ս ԹժՀ, էջ 346):

Ինքնազիրը շի պահպանվել:

Ա. Առաքելյանի վկայությամբ՝ այս ոտանավորը ևս եղել է այն տեսրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել ընկերներին (տե՛ս «Աղոթք» բանաստեղծության ծանոթագրությունը):

ԴԱՅ. ԹԺ. Խ. 1418 պահպան է 1908 և 11-ի մի էջ, որտեղ 3—16-րդ տողերը գրված են Թումանյանի ձևորով: Այստեղ 6-րդ տողում հեղինակը կատարել է մեկ ուղղում:

Առաջին անգամ, «Ամառային գիշերը գյուղում» վերնագրով, տպագրութեալ է ԲՄ 1, էջ 76—78 (32 տող): Նույնը, առանց վերշին քառատողի՝ Դ (12-րդ ոտանավոր), այնուհետև, մշակված և ուղիղ կեսը կրծատված՝ 1908 և 11, էջ 98—99, ապա՝ եթ 1, 14:

Տպագրվում է և 11-ի՝ Թումանյանի ուղղած բնագիրը: ԲՄ 1-ը տալիս ենք որպես տարրերակ:

## ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

(«Կանաչ, վիրխարի ընկույզնու տակ...»)  
(էջ 28, 436)

Գրված է 1887 թ.:

Ինքնազիրը շի պահպանվել: Բայտ Ա. Առաքելյանի վկայության՝ այս ոտանավորը ևս եղել է այն տեսրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել ընկերներին (տե՛ս «Աղոթք» բանաստեղծության ծանոթագրությունը):

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 97—98, այնուհետև՝ Դի, էջ 25—26, ԲԹ, էջ 11—12՝ վերամշակված, և հնագա բոլոր ժողովածուներում, ապա՝ եթ 1, 15.

Արտառային 1. ԲԹ. ից:

Հիմնական վերս մշակման է ննիարկվել 1894-ին, տպագրության

հանձնելիս: Դա երեսը է բանաստեղծության բարձր արվեստից և, թերևս, նաև ակնարկից զավակների մասին: «Մենք եւ օրհնելիս մեր զավակներին» (հմմտ. Ա. Խնիֆիյան, Հովհաննես Թումանյան, էջ 76):

## 1888

### ՆԱՀԱՏԱԿ

(«Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ...»)  
(էջ 30, 437)

Գրված է 1888 թ.:

Ա. Առաքելյանի վկայությամբ՝ այս ոտանավորը ևս եղել է այն տեսրում, որ 1888 թ. Թումանյանը ցույց է տվել ընկերներին (տե՛ս «Աղոթք» բանաստեղծության ծանոթագրությունը):

ԹՐԱ պատարիկների մեջ պահպան էն մի քանի հատվածների ինքնագրեր:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 55—61, որտեղից և արտատպվում է:

Պատկանում է Թումանյանի այն բանաստեղծությունների շարքին, որոնք հարազատ են եղել հայ առաջադեմ երիտասարդությանը: Ահա, թի այդ մասին ինչ է գրում Սոսկվայի Ս. Բարխուտարյանի տպարանի աշխատակից է. Ավետիսյանը, 1890 թ. հոկտեմբերի 22-ին Թումանյանին հղած նամակում: «Ձեր «Բանաստեղծությունները», այո՞, այստեղ հավանում են, բայց հավանողներ էլ կան: Թնօուշ մայիսյան վարդը, նույնիսկ, վշշը ունի... իմ կարծիքով, Զեզ հաշողվել է փոքր, կարճ բանաստեղծությունները. ինչպես է՝ «Նա էլ խեղդվեցավ», «Նահատակ», «Մարզաբե», «Միամիտներին», «Երանություն էր խոստացել...» և այլն (տե՛ս ԹՀ 4, 276):

Նույն է գրում Բագրատ Թումանյանը նոյեմբերի 10-ի նամակում՝ Սոսկվայի հայերին հափշտակած բանաստեղծությունների շարքում ավելացնելով «Գիշերային առաջին աստղի դիմաց», «Երանություն էր խոստացել հույսս ինձ», «Ի՞նչ ևս կատաղել անմեղ արարքից», «Չարամիտներին» ոտանավորները (նոյն տեղում, էջ 282): Այս մասին տե՛ս նաև Ա. Աբովյանի դեկտեմբերի 6-ի նամակը (նոյն տեղում, էջ 286):

«ԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐ ԽՈՍՏԱՑԵԼ ՀՈՒՅՍՍ ԻՆՉ...»  
(էջ 35).

Գրված է 1889 թ. մայիսի վերջին, ինպես թվագրված է մեզ հասած ինքնագիր պատառիկներից մեկը:

Ինչպես վկայում է Տ. Փիրումյանը՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է Հիմարավիլելով կոնսիստորիայի հոգևորական պաշտոնյաներից, որոնք հալածանք էին սկսել նրա դեմ:

Թղթ պահպատ է մեզ անհայտ մի անձնավորության շթվագրված սեպիր նամակ՝ ուղղված Եղիշև Գևորգյանին, որտեղ խոսվում է «Մեղու Հայաստանի» և «Եշակ» պարբերականների հակամարտության մասին, և որի վերջում (թղթի առաջ մնացած մասում) Թումանյանի ձեռագրով կան այս ոտանավորի 33—38-րդ տողերը՝ թվագրված «21 մարտի»:

1890 թ. հունիսի 3-ին Ան. Արովյանին հղած նամակում, բողոքելով ժամանակի հայ մամուլից, Թումանյանը գրում է. «Մամուլի մասին որ մի խոսական եմ զգված, որ չեմ ուզում կարդալ և ոչ մեկը՝ դրանց մասին, որպեսզի կարճ կտրեմ, այսուղեա եմ դնում մի տուն իմ ոտանավորից» եվ մեզ է բերում 25—28-րդ տողերը (տե՛ս եֆ V, 15):

Թղթ պատառիկների մեզ պահպատ են նաև 1—4, 15—17, 21—28 և 39—48-րդ տողերի ինքնագրերը:

Առաջին անգամ ապագրվել է ԲՄ I, էջ 88—91, այնուհետև՝ եֆ I, 20—21:

Արտատպում է ԲՄ I-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

### ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔ

(«Հեռո՛ւ, ո՞վ սուրբ խաղաղություն...»)  
(էջ 37)

Գրված է 1889 թ. դեկտեմբերին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ ապագրվել է ԲՄ II, էջ 89—98, այնուհետև՝ եֆ I, 26—27:

Արտատպում է ԲՄ II-ից:

Հ-րդ տողը, որի փոխարեն ԲՄ II-ում կետեր են դրված, վերականգնելուն եվ են եֆ I-ի կազմողները, տողատակ տալով հնաելայլ ծանոթագրություն-

նը. «Այս տողի փոխարեն ԲՄ 2-րդ հատորի մեջ դրված են կետեր: Այդ, հավանաբար, արված է, գրաքննիչի ձեռքով: ԲՄ 2-րդ հատորի՝ Դ. Աղայանին նվիրած օրինակում թղթը կետերի վրա գրել է՝ «Մեր հալածված հայրենիքում», որի հիման վրա և մենք վերականգնել ենք տողը» (էջ 26):

«Ի՞նչ ԵՍ ԿԱՏԱՂԵԼ ԱՆՄԵՂ ԱՐԱՐԹԻՑ...»  
(էջ 38)

Գրված է 1889 թ., ինչպես թվագրված է առաջին հրատարակությունը:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է ի պաշտպանություն Պ. Արծրունու, ընդդեմ նրա հակառակորդների, տվյալ դեպքում՝ կոնսիստորականների (տե՛ս թժՀ, էջ 345):

Թղթ պատառիկների մեջ պահպատ է առաջին քառատողի ինքնագրը: Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 84, որտեղից և արտատպում է:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

«ԵՍ ՆԱՅՈՒՄ ԵՄ. ԻՄ ԱՌՋԵՎ...»  
(էջ 39)

Գրված է 1889 թ.:

Տ. Փիրումյանի վկայությամբ՝ այս բանաստեղծության ներշնչման պահը Թումանյանն ապրել է Թիֆլիսի Թուսարանական այգու բարձունքից քաղաքը դիտելիս (տե՛ս թժՀ, էջ 345):

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ ապագրվել է ԲՄ I, էջ 74, այնուհետև՝ եֆ I, 17—18:

Արտատպում է ԲՄ I-ից:

### ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

(«Երբ որ գարշելով տեսնում եմ շուրջս...»)  
(էջ 40)

Գրված է 1889 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 104—105, այնուհետև՝ օժ 1,  
23—24:  
Արտատպում է ԲՄ II-ից:

«ՆԵՐԻՌ, ՈՎԿ ԿՈՒՑՍ, ՈՐ ՀՈՒԶԵՑԻ...»  
(էջ 41, 437)

Գրված է 1889 թ.:  
Թղթ պատառիկների մեջ պահպում է վերջին քառատողի ինքնադիրը,  
Բվագրված «89 թ.»:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 82, այնուհետև՝ օժ 1, 19:  
Արտատպում է ԲՄ I-ից:

ԿԱԼԻ ԵՐԳ

(«Կալ արա, զնանք...»)  
(էջ 42)

Գրված է 1889 թ.:  
Ինքնադիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ, «Լոռեցոնց» ենթավերնագրով, տպագրվել է ՄՃ,  
1893, № 1, էջ 77, այնուհետև՝ օժ 1, 25:

Արտատպում է ՄՃ-ից:

Օժ 1-ում (էջ 616) կա հետեւալ խմբագրական ծանոթագրությունը.  
Ընդողվրական երգ է: Հնչեցնում է մեր ֆոլկորային ժողովածոներում  
և պարբերականներում տպագրված լոռու կալերգերը: Թ-ը, հավանորնն,  
օգսագործել է բանավոր աղյուսներից իրեն հայտնի լոռու կալերգերը,  
ինչ հաստատում է առաջին հրատարակության ենթավերնագրը»:

Ա. Խնձիկյանը ավելի կոնկրետ է նշում այս և մի քանի այլ ոտանա.  
Վարների սկզբնաղբյուրները. «... իսկ հորեղբայր Մամից լսել է լոռու հո-  
րվելները, սալլերգերն ու կալերգերը: Եվ, անշուշտ, «Գութանի երգը»,  
«Կալի երգը» (լոռեցոնց), «Կալի երգը» (ժողովրական), «Գութան» բա-  
նաստեղծությունները գրված են իր նշանավոր մաճկալ հորեղբոր երգերի  
ներշնչմամբ» (Ա. Խնձիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 64—65):

ԵՐԲ ԵՍ ՏԽՈՒՐ, ՀՈՒՍԱՀԱՏ...»  
(էջ 43, 437)

Գրված է 1889 թ.:  
Տ. Փիրումյանի հուշերում կարդում ենք, որ Թումանյանն այս բա-

նաւուղծությունը դրել է՝ «Բափանցելով Քրիստոսի (և երկի նաև իր)՝  
դրության մեջ» (տե՛ս թժՀ, էջ 346):  
Թղթ պատառիկների մեջ պահպում է վերջին երկու քառատողերի  
ինքնադիրը, թվագրված «1889 թ.»:  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 96, այնուհետև՝ օժ 1, 22:  
Արտատպում է ԲՄ I-ից:

«Ա-Խ, ԵՐԱՆԻ ԹԵ ԼԻԽԵՐ ՄԻ ՀՆԱՐ...»  
(էջ 44)

Գրված է 1889 թ.:

ԳԱԲԻ ԹՖ Խ 280 պահպում է 1892 թ. մարտի 24-ին Թումանյանի՝  
Ան. Աբովյանին գրած նամակը և դրա մեջ՝ ինքնագիրը՝ հետեւալ ծանո-  
թագրությամբ. «Էսօր Թզթերիս մեջ զտա մի ոտանավոր—փոքրիկ էկսքրուտ,  
տակին գրած 1889 թ. «վեշերում». բանից դուրս է գալիս, որ մի տիուզ  
բնավորության տիր սիրելի նազելիի ուրախությունը ինձ շատ է զուր  
եկել, և ես գրել եմ»:

Առաջին անգամ տպագրվել է օժ V, 66, Ան. Աբովյանին հղած նա-  
մակի մեջ, այնուհետև՝ օժ 1, 436: Այստեղ կազմողները վերնագրել են  
«Վեշերում» և իրենց կողմից ավելացրել «էքսպրոմտ» և ներավերնագիրը՝  
ըստ երկությին հնավելով նամակի վերը բերված հատվածի վրա և թյուրի-  
մացաբար ենթավերլով, թի «վեշերումը» ոտանավորի վերնագիրն է, մին-  
դեռ այն վերաբերում է գրության տեղին:

Տպագրվում է ինքնագիր:

1890

«ԱՅԴԻ Ի՞ՆՉ ՍՈՏԱՄՍՅԾ ՏԽՈՒԹՅՈՒՆ Է ՔԵԶ...»  
(էջ 45, 438)

Գրված է 1890 թ. մարտին, ինչպես թվագրված են մեզ հասած պա-  
տառիկն ու առաջին հրատարակությունը:

Թղթ պատառիկների մեջ պահպում է մի հատվածի սևագիր-ինքնա-  
գիրը (տող 17—20, 29—36 և լուսանցքում 5-րդ և 7-րդ տողերի թերի  
սևագրությունը): Սևագիր-ինքնագրում 17—20 տողերը անմիջականորեն  
նախորդում են 29—36 տողերին:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 67—69, այնուհետև՝ օժ 1,  
30—31:

Արտատպում է ԲՄ I-ից:

«ԵԹԵ ԻՄ ՎԵՐՋԻՆ ՀԱՅԱՑՔԸ ՄՆԱԱ...»  
(էջ 47)

Գրված է 1890 թ. ապրիլի 1-ին, ինչպես թվագրված է առաջին հրատարակությունը:

Հստ Տ. Փիրումյանի հուշերի՝ այս բանաստեղծության ներշնչանքի աղբյուրը եղել է, մի ժամոթ աղջկ, որին երկար ժամանակ սիրել է բանաստեղծը (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

Ինքնազիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 83, այնուհետև՝ եժ 1, 32:

Արտատպվում է ԲՄ 1-ից:

«ՊԱՆԴՈՒԽՏՆ ԵՐԳԵՑ ՕՏԱՐ ԵՐԿՐՈՒՄ...»  
(էջ 48, 438)

Գրված է 1890 թ. ապրիլի 2-ին:

Հստ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանն այս ոտանավորը գրել է մի մշակի՝ շինությունից վայր ընկնելու առիթով (տե՛ս ԹԺՀ, էջ 345): ԹէԱ պատառիկների մեջ պահվում է վերջին երեք տողերի ինքնազիրը: Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 72—73, այնուհետև՝ եժ 1, 33: Արտատպվում է ԲՄ 1-ից:

«ՄԻ՛ ՈՐՈՆԻՐ ՄԻ՛ ԺԱՄԱՆԱԿ...»  
(էջ 49, 438)

Գրված է 1890 թ. ապրիլի 21-ին:

Հստ Տ. Փիրումյանի հուշերի՝ թումանյանն այս ոտանավորը հայցիագրել է իրենց տուն այցի եկած մի օրիորդի, որին ժամանակին անպատճախան սիրել է, և որն իր այցելության ժամանակ համակրանքի ուշացած ցույցիր է սրել նրան (տե՛ս ԹԺՀ, էջ 345):

Առաջին անգամ «Ն-ին» խորագրով, տպագրվել է ԲՄ 1, էջ 81, թվագրված՝ «1890 թ. ապրիլի 21-ին», այնուհետև՝ նույնը, առանց վերնագրի՝ գ և ԳՓ, փոփոխված և «Մի որոնիր» վերնագրով՝ ԲԹ, ԲԹ-ի բնագիրն առանց վերնագրի՝ ԲԲ, ապա՝ եժ. 34:

Արտատպվում է ԲԲ-ից:

«ԾԱՏՏԵՐԻ ՆՄԱՆ ՆԱ ԷԼ ԽԵՂԴՎԵՑՑԱՎ...»  
(էջ 50)

Գրված է 1890 թ. ապրիլի 22-ին:

Հստ Տ. Փիրումյանի հուշերի՝ ուղղված է այն մարդկանց գեմ, ովքեր դատապարտել են «Զոփուոփ տղաներին» և նրանց նման «գաղափարական» ավազակներին առանց հաշվի առնելու ավազակության սոցիալական պատճառները (տե՛ս ԹԺՀ, էջ 346):

ԹՀԱ պատառիկների մեջ պահվում է 12—16-րդ տողերի ինքնազիրը: Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 92, այնուհետև՝ եժ 1, 35: Արտատպվում է ԲՄ 1-ից:

Տե՛ս նոև «Խանութակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

ԽՈՐՀՈԴԱԾՈՒԹՅՈՒՆ

(«Ո՞րն է դրախտը, —վայրն երանավետ...»)  
(էջ 51)

Գրված է 1890 թ. ապրիլին:

ԴԱԲ Հավաննես Մալխասյանի ֆոնդ, № 152 պահվում է 1—18 տողերի ինքնազիրը, որ Թումանյանը նվիրել է Մալխասյանին հետևյալ բնայականով. «Հիշատակ պ. Հ. Մալխասյանին, 29-ին հունվարի, 1891 թ., Իլիքիսա:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1891, № 7—8, էջ 877—878, այնուհետև՝ ԲՄ 11, էջ 160—161, թվագրված՝ «1890 թ., ապրիլ», ապա՝ եժ 1, 36—37:

Արտատպվում է ԲՄ 11-ից:

ՄԱՐԳԱՐԵ

(«Երբ որ վեհության կնիքը ճակատի՛...»)  
(էջ 53)

Գրված է 1890 թ. մայիսի 1-ին, Գր. Արծրունու «Հրապարակախռոսական գործունեության քանձինգամյակի կապակցությամբ: Այս մասին բանաստեղծի ժամանակակից Տիգրան Փիրումյանը գրում է. «... նույն Արծրունուն իր վերաբերում նաև «Մարգարեն», բայց Թումանյանը կամհցակ

այդտեղ իդեալական կերպարանք տալ, աչքի առաջ ումենալով նաև Քրիստոսին» (ԹԺՀ, էջ 345):

ԹՀԱ պատարիկների մեջ պահպում է 13—24-րդ տողերի ինքնազիրլը: Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 97—98, այնուհետև՝ Եթ 1,

36:

Արտատպվում է ԲՄ 1-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

### Ա Խ՝ Նադան ՊՈԵՏԻՆ

(«Թաքցրու, պուտ, վշտերդ ամբարված...»)

(էջ 54)

Գրված է 1890 թ. մայիսի 7-ին:

ԳԱԹ թֆ № 17 պահպում է ՄՃ-ի արխիվից հանված մեկ ինքնագիրը: Առաջին անգամ տպագրվել է Եթ 1, 437—438:

Տպագրվում է ինքնագրից:

Իռու բանաստեղծ Ս. Յա. Նազարյան (1862—1887) պոեզիան արտահայտել է նարոդիկության ճգնաժամի շրջանի առաջազեմ երիտասարդության տրամադրությունները: 1885 թ. հրատարակված «Բանաստեղծություններ» ժողովածուն որոշակի ազդեցություն է գործել ժամանակի երիտասարդ, այդ թվում նաև հայ բանաստեղծների վրա: Թումանյանի այս ոռանավորը ևս, ինչպես երկում է նաև վերնագրից, կրում է այդ ազդեցությունը:

### ԳԻԾԵՐԱՅԻՆ ԱՐԱՋԻՆ ԱՍԴՂԻ ԴԻՄԱՑ

(«Արևը թռավ, երկինք ու երկիր...»)

(էջ 56, 438)

Գրված է 1890 թ. մայիսի 12-ին:

ՀԱՄ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյանը մի քանի մարդկանց հետ պատշաճրում նստած դիտել է Երկինքը, և, ներշնչվելով, ներկաներից մեկին թելաղրել այս բանաստեղծությունը (տե՛ս ԹԺՀ, էջ 345—346):

ԹՀԱ պատարիկների մեջ պահպում են 1—8-րդ և 20—24-րդ տողերի և մի հավելյալ բառատողի ինքնագրերը:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 86—87, թպագրված՝ «1890 թ. մայիսի 12», այնուհետև՝ Եթ 1, 39:

Արտատպվում է ԲՄ 1-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

556

### ԶԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ

(«Դուք, մեծ հայրերի ընկած գավակներ...»)  
(էջ 57)

Գրված է 1890 թ. մայիսի 20-ին:

ՀԱՄ Տ. Փիրումյանի հուշերի՝ Թումանյան այս բանաստեղծությունը գրել է «Թիֆլիսի Մթամինդա սարից դիտելով քաղաքը» (տե՛ս ԹԺՀ, էջ 346):

Ինքնագրիը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 1, էջ 93—94, թպագրված՝ «1890 թ. մայիսի 20», այնուհետև՝ Եթ 1, 40—41:

Արտատպվում է ԲՄ 1-ից:

Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

### ԴԱՐՁՅԱԼ ՆՐԱՆՑ

(«Հայտնի եզրիտներ, ի՞նչ եք աղմկում...»)  
(էջ 58, 439)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Հիշեցնում է «Չարամիտներին», «Միամիտներին», «Երանություն էր խոստացել հույս ինձ», «Մարգարե», «Ազգ» բանաստեղծությունները, որոնք գրված են բանաստեղծի Կոնսիստորիայում ծառայելու տարիներին (1887—1892 թթ.): Թվում է, նույնիսկ, որ օրգանական շարունակությունն է 1890 թ. մայիսի 20-ին գրված «Չարամիտներին» բանաստեղծության և պետք է գրված լինի նույն օրերին:

ԳԱԹ թֆ № 49 պահպում է ՄՃ-ի արխիվից հանված մեկ ինքնագրի:

Առաջին անգամ տպագրվել է Եթ 1, 485:

Տպագրվում է ինքնագրից:

Վերը հիշատակված բանաստեղծությունների մասին ժամանակակիցները վկայում են, որ ուղղված են բարձրաստիճան հոգևորականների ու նրանց արրանցակների դեմ, և ժամանակին բանաստեղծը կարդացել է ընկերական նեղ շրջանում (Հմմտ. Արսեն Ղտնիյան՝ «Մտերիմ հանդիպումներ», ԹԺՀ, էջ 279—283): Տե՛ս նաև «Նահատակ» բանաստեղծության ծանոթագրությունը:

### ՄԻԱՄԻՏՆԵՐԻՆ

(«Երանի է ձեզ, որ չեք հասկանում...»)  
(էջ 59)

Գրված է 1890 թ. հունիսի 12-ին:

ՀԱՄ Տ. Փիրումյանի հուշերի՝ ոտանակորը նվիրված է այն խեղճ 557

զլողացիներին, որոնցից մեծամեծ կաշառքներ ևն վերցրել թիֆլիսի կոնսիստորիայի պաշտոնյաները:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ I, էջ 95, թվագրված՝ «1890 թ. Հունիսի 12», այնուհետև՝ եթ 1, 42:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Տես նաև «Նահատակ» բանաստեղծության ժամոթագրությունը:

## «ՈՇ, ԽՆԱՅԵՑԵՔ, ՄԻՇ ՀԻԾԵՑԵՔ ԻՆՉ...»

(էջ 60, 439)

Գրված է 1890 թ. հունիսի 25-ին.

ԳԱԹ ԲՓ № 18 պահպում է մաքուր արտագրված մեկ ինքնագիր, թվագրված՝ «1890 թ. Հունիսի 25»: Նույն տեղում, № 12 կա նաև թերի և շնչումներով մի սևագիր-ինքնագիր, որն, ըստ երկութիւն, մտահղացման առաջին դրառումներից է:

ԹՀԱ պատառիկների մեջ պահպում է ևս մեկ թերի ինքնագիր, որը բնույթով նման է Ա ինքնագրին և սկսվում է դրա 7-րդ տողից:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 87, 16 տող, այնուհետև՝ թթ, էջ 14, 12 տող, ապա՝ եթ 1, 43:

Արտատպվում է ԲՄ I-ից:

Ա ինքնագիրը տալիս էնք որպես I տարբերակ՝ տողատակում նշելով Գ ինքնագրի դրանից ունեցած տարբերությունները, Բ ինքնագրը՝ որպես II տարբերակ:

## ՀԻԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

(«Այս կրծքի տակ ապականված...»)

(էջ 61, 441)

Գրված է 1890 թ. հունիսի 5-ին:

ԹՀԱ պատառիկների մեջ պահպում են մեկ թերի սևագիր-ինքնագիր (12-րդ, ապա՝ 21—28-րդ տողերը) և մի քառատող, որ Թումանյանը գորս է թողել ԲՄ II-ից, և այժմ հնարավոր չէ պարզել, թե ինչ տեղ էր գրավելու բանաստեղծության մեջ: Հրատարակել է Ա. Խնձրիկյանը (տե՛ս Ա. Խնձրիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 76):

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 89—92, այնուհետև՝ եթ 1 44—46:

Արտատպվում է ԲՄ II-ից:

«ՈՇ ՍԵՂՄԱՑՆԵԼ ԶԵՍ ԿԱՐՈՂ ԴՈՒԽ...»  
(էջ 64, 441)

Գրված է 1890 թ. հունիսի 5-ին:

ԳԱԹ ԲՓ № 11 պահպում է մեկ թերի սևագիր-ինքնագիր: Նույն տեղում, № 282 պահպում է նաև մեկ մաքրագիր-ինքնագիր: Երկուան էլ թվագրված են՝ «5 հունիս»: Տարեթիվը պարզվում է 1890 թ. օգոստոսի 27-ին և սեպտեմբերի 28-ին բանաստեղծի՝ Ան. Արովյանին գրած նամակ-ներից, որոնցում ակնարկվում է այս բանաստեղծությունը: Առաջինում կարդում ենք. «Ստեփանի նամակի հետ մի ոտանավոր ուղարկեցի, կարծեմ թախծալի է. չէ...», երկրորդում՝ «Շատ ուրախացա քր նամակի վերջարան ոտանավոր պատասխանովդ, վերջին երկու տունը հավանեցի, որոնք իբրև «Հույս» պատասխանում են իմ «թախիծին» (տե՛ս եթ 5, 23 և 26):

Մաքրագիր-ինքնագրի բնագրից առաջ կան Ան. Արովյանին ուղղված հետեւյալ տողերը. «Ահա, Անուշավան, իմ այս միջոցներում գրած բանաստեղծություններից մեկն իբրև նմուշ, կատարյալ թախիծ է (գուցե թաղիք):

1893 թ. փետրվարի 4-ին Թումանյանն իր բանաստեղծությունների մուկովան հրատարակության երկու հատորները (ԲՄ I, ԲՄ II) միասին կազմած նվիրել է Դարյա Գոլոշյանին՝ անվանաթերթի վրա, ընծայականից հետո մեջ բերելով այս բանաստեղծության 17—23-րդ տողերը: Գիրքը պահպում է ԹՀԱ:

Առաջին անգամ, Բ ինքնագրից, տպագրվել է եթ 1, 439—440:

Տպագրվում է նույն ինքնագրից:

«ԴԵՌ ԱՆՀԻԾԵԼԻ ՎԱՂ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԻՑ...»  
(էջ 66)

Գրված է 1890 թ. սեպտեմբերի 30-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 80—81, թվագրված՝ «1890 թ. սեպտ. 30», այնուհետև՝ եթ 1, 47—48:

Արտատպվում է ԲՄ II-ից:

## ՆՐԱՆ

(«Են ուզում եմ, որ ինձ նման...»)  
(էջ 67)

Գրված է 1890 թ. հոկտեմբերի 5-ին:

Ինքնագրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 11, էջ 110, թվագրված՝ «1890 թ.  
նկտ. 5», այնուհետև՝ ԵԺ 1, 49:

Արտատպվում է ԲՄ 11-ից:

## ԱԶԴ

(«Հետացրեք նրան աստծոն սեղանից...»)  
(էջ 68)

Գրված է 1890 թ. հոկտեմբերի 18-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել։  
Առաջին անգամ «Պահպանողականներին» Էնթավերնագրով տպագրվել  
է ՄՃ, 1892, № 1, էջ 32, այնուհետև առանց հնդավերնագրի՝ ԲՄ 11, էջ  
135, որտեղից և արտատպվում է։

## «ՈՉ ՅՈՐԻՆԱԿ ԱՅԼՈՑ»

(«Ազատ, համարձակ բարձրացի՞ր, արատ...»)  
(էջ 69)

Գրված է 1890 թ. հոկտեմբերին:  
Ինքնագիրը չի պահպանվել։  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 11, էջ 134, թվագրված՝ «1890 թ.  
հոկտեմբեր», այնուհետև՝ ԵԺ 1, 50:  
Արտատպվում է ԲՄ 11-ից։

## ՀԱՄԵՐԳ

(«Վտանը ժայռից ներքև է թըռչում...»)  
(էջ 70, 442)

Գրված է 1890 թ. հոկտեմբերի 2-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել։  
Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1891, № 5, էջ 621, այնուհետև՝ ԲՄ  
11, էջ 79, թվագրված՝ «1890 թ. դեկտ. 2», հետագա ժողովածուներուա  
և ԲՊ, էջ 13, ապա՝ ԵԺ 1, 51:  
Արտատպվում է ԲՊ-ից։

## ԵՐԳՉԻՆ

(«Ապա, այն երգն ասա՛, երգիշ...»)  
(էջ 71)

Գրված է 1890 թ. դեկտեմբերին:  
Ինքնագիրը չի պահպանվել։  
Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1891, № 2, էջ 198, այնուհետև՝  
ԲՄ 11, էջ 86, թվագրված՝ «1890 թ. դեկտ.», ապա՝ ԵԺ 1, 52:  
Արտատպվում է ԲՄ 11-ից։

## ԻՍՐԱՅԵԼ

(«Պանդուխտ, հալածված, հոգմած, վշտարեկ...»)  
(էջ 72)

Գրված է 1890 թ. դեկտեմբերին:  
Ինքնագիրը պահպամ է Վրացական ՍՍՀ Կենտրոնական արխիվում  
(ֆ. 114, գծ. 1130): Հայտնաբերել է Անահիտ Խառատյանը:  
Առաջին անգամ տպագրվել է ՄԳ, 1956, № 4, էջ 141, այնուհետև՝  
ԵԺ VI, 20:  
Տպագրվում է ինքնագրից։

## ՏԱՐՈՒԻ ԳԱՐՈՒՆԸ

(«Գարունն եկավ և քները...»)  
(էջ 73)

Գրված է 1890 թ.:  
ԳԱՓ թվ. № 20 պահպամ է մեկ ինքնագիր, որի վերնագրի տակ փա-  
կագծերի մեջ գրված է «Հատված»: Ինքնագրում 3-րդ և 4-րդ քառատողերի  
տեղերը փոխված են։  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ 11, էջ 72—73, այնուհետև՝ ԵԺ 1,  
56:  
Արտատպվում է ԲՄ 11-ից։  
«Հին կոիվը» պոեմի նախնական տարբերակի հատվածներից է, որը  
հետագայում դուրս է մնացել ընդհանուր հնքից (այս մասին տես՝  
էղ. Զբաղյան, Թումանյանի պոեմները, Երևան, 1986, էջ 267—268):

ՏԱՐՈՒՆԻ ԱՌԱՎՈՅՑ  
(«Կարմիր արևն առավոտյան...»)  
(էջ 74)

Գրված է 1890 թ.:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 95—97, այնուհետև՝ Եթ 1,  
57—58:  
Արտատպվում է ԲՄ II-ից:  
ԲՄ II-ի սեփական օրինակում թումանյանն ուղղել է 33-րդ տաղի  
վրիպակը: Եղել է՝ «Տեսավ հեռվից քաշալերը», դարձել է՝ «Տեսավ հեռ-  
վից քաշ աշխը»:  
«Հին կոիվը» պոեմի նախնական տարրերակի հատվածներից է, որը  
հետագայում դուրս է մնացել ընդհանուր հենքից (տե՛ս «Տարռնի գարու-  
նը» ոտանավորի ծանոթագրությունը):

ԳԻԾԵՐ

(«Եկավ գիշերն, սկսովանքը...»)  
(էջ 76, 442)

Հավանաբար գրված է 1890 թ.:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
ԳԱԹ թիվ № 1355 պահպում է ԲԲ-ի օրինակը՝ հեղինակի ուղղումնե-  
րով:

Առաջին անգամ տպագրվել է Տպ. 1895, № 16, էջ 238, «Հատված  
պոեմից» ենթավերնագրով, այնուհետև, առանց ենթավերնագրի՝ ԲԲ, էջ  
41—42, ապա՝ Եթ 1, 121—122:

Տպագրվում է Թումանյանի ուղղած բնագիրը:  
«Հին կոիվը» պոեմի նախնական տարրերակի հատվածներից է, որը  
հետագայում դուրս է մնացել ընդհանուր հենքից (տե՛ս «Տարռնի գարու-  
նը» ոտանավորի ծանոթագրությունը):

«ԿՈՒՐԾՔՍ ԵՐԲԵՄՆ ԵՌ Է ԳԱԼԻՍ ԵՎ ՈՒՐՉՈՒՄ...»  
(էջ 78, 443)

Գրված է 1890 թ.:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ՄՏ, 1891, № 6, էջ 746, այնուհետև՝

ԲՄ II, էջ 83—84, թվագրված՝ «1890 թ.». ապա՝ Եթ 1, 54:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

Մշ. 1891, 13 օգոստոսի, № 90 տպագրվել է Ասիացու (Գր. Արծրու-  
նու) ֆելիետոնը, որտեղ ծաղրվում է Թումանյանի այս ոտանավորը: Պի-  
տի ասել, սակայն որ Արծրունու ծաղոն ու հակակրանքն ուղղված է եղել  
ոչ միայն նոր գրական ասպարեզ իշնող բանաստեղծի, այլև Ավ. Արաս-  
իանյանի և նրա բրանաստեղծական նոր դպրոցի», այսինքն՝ Մճ-ուա  
տպագրվող նաև մյուս բանաստեղծների (Ալ. Մատուրյան, Լ. Մանվելյան  
և ուրիշներ) դեմ:

Այս հակակրանքն ավելի հին ծագում ունի: Թումանյանն այն բա-  
ցատրում է առհասարակ ժամանակի հայ գրականության և արվեստի նկատ-  
մամբ կյանքի վերջին տարիներին Գր. Արծրունու բռնած ժխտողական  
դիրքով: Այդ մասին նա իր կարծիքն արտահայտել է քանիցս, այդ թվում  
1913 թ.: «Երկու անգամ՝ գեկումբերի 15-ին և 29-ին՝ Հայ գրողների ըն-  
կերության երկու երեսություններում, որոնցից առաջինում՝ դասախոսություն  
է կարդացվել Միթք. Նալբանդյանի, Բաֆֆու և Գր. Արծրունու, իսկ երկ-  
րորդում՝ Գր. Արծրունու մասին: «Նորեւը չեն իմանալ, —կարդում ենք  
գեկումբերի 15-ին բանաստեղծի ունեցած ելույթի շարադրանքում, —բայց  
հները լավ կհիշեն, թե նա (Արծրունին, խմբ.) իմացես էր խոսում հայ  
գրողների դեմ, հայ տաղանդների դեմ»: Այնուհետև հիշում է Ղ. Աղայանի,  
Պ. Աղամյանի և Բաֆֆու դեմ ունեցած նրա ելույթները (տե՛ս Եթ IV,  
456—458):

ՆԿԱՐԻ Գ. ԲԱՇԻՆԶԱՂՅԱՆԻ «ԶՈՐԱԳԵՏԸ ԳԻԾԵՐՈՎ»  
ՆԿԱՐԻ ԱՌԴԵՎ

(«Արտի՛ստ, քաջերի ալս ձորն ահարկու...»)  
(էջ 79)

Գրված է 1890 թ.:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ՄՏ, 1892, № 6, էջ 883, թվագրված՝  
«1890 թ.», այնուհետև՝ Եթ 1, 53:  
Արտատպվում է ՄՃ-ից:  
Գրականության մեջ Թումանյանի ներշնչանքի առարկա նկարը հայտնի  
է «Դերեղ գետը գիշեր ժամանակ» անունով: Ստեղծվել է 1890-ին, նույն  
թվականին ցուցադրվել է Թիֆլիսի, ապա Մոսկվայի և Պետերբուրգի պատ-  
կերասրաններում (տե՛ս Մ. Սարգսյան, Գևորգ Բաշինշալյան, Երևան,  
1957, էջ 70—71):

«ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՅԱՎ ՀՅՐԱԾԱՓԱՌ...»  
(էջ 80)

Գրված է 1890 թ.  
ԳԱԹ ԹՖ № 26 ա պահպում է մեկ ինքնագիր:  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 107, թվագրված՝ «1890 թ.»,  
այնուհետև՝ ԵԺ I, 55:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

ՏԱՊԱՆԱԳԻՐ

(«Կյանքի տղմի մեջ զիշտվին թաղված...»)  
(էջ 81)

Գրված է 1890 թ.

ԳԱԹ ԹՖ № 18 պահպում է մեկ ինքնագիր, որ հանված է ՄՃ-ի ար-  
խիլից: Ա. Խնճիկյանը տալիս է հետևյալ ժամոթագրությունը. «Բանաստեղ-  
ծության ինքնագիրը գտնվել է «Մուրճ» արխիվում: Ժամանակին չտպա-  
գրվելու պատճառը եղել է, հավանորեն, գրաքննության արգելքը կամ  
Արախսանյանի զգուշավորությունը: Հետաքրքրական է, որ ժամանակի  
հասարակության ոսկի կուռքերի հավաքական դիմանկարը բնութագրող  
այս ոտանավորի վերջին տողը բանաստեղծը նույնությամբ օգտագործել է  
իր երգիծական պոեմի «Փողի քանակը, փողի քանակը...» հատվածում  
(«...Կանգնեցին արձան անվախճան փառի»)» (տե՛ս Ա. Խեճիլյան,  
Հովհաննես Թումանյան, էջ 493—494): Խնդպես այս, այնպես էլ մի քանի  
ուրիշ երգիծական ոտանավորներ և էպիկական ֆրագմենտներ («Աղոթք»,  
«Հայի զարմանքը», «Հայի տրտոնը», «Հայի ցալը», «Գրականական մա-  
զանդա», «Կայր ընկնող աստղեր», «Կտակ», «Հայոց անրախտ գրողը»),  
«որոնք գրեթե բոլորն էլ գրված են պոեմի ստեղծման ժամանակաշրջանում»  
և իրենց վշտախան ծաղրով ուղղված են գրողին և արվեստագետին  
խորի հասարակության, նրա բարքերի ու կուռքերի դեմք (նոյն տեղում,  
էջ 494), ուսումնասիրողն իրավամբ կապում է «Պոետն ու Սուսան» երգի-  
ծական պոեմի հետ:

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1932, № 27, այնուհետև՝ ԵԺ I,  
441:

Տպագրվում է ինքնագրից:

1891

«ԽՂՋԱԼԻ ՄԱՐԴ, ՏՈԳՈՐՎԱԾ...»  
(էջ 82)

Գրված է 1891 թ. հունվարի 10-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 100—101, թվագրված՝  
«1891 թ. հունվարի 10», այնուհետև՝ ԵԺ I, 59:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

«ԱՂԽ, ԵՍ ԵՐԱՆԻ...»  
(էջ 83, 443)

Գրված է 1891 թ. հունվարի 13-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է ՄՃ, 1891, № 3,  
էջ 341, այնուհետև՝ ԲՄ II, էջ 85, թվագրված՝ «1891 թ. հունվարի 13»,  
Դփ, վերնագրված՝ «ԱՇԻ», ես երանի, թվագրված՝ «1892», ԲԲ և ԲԲ,  
գարցյալ առանց վերնագրի, էջ 15, ապա՝ ԵԺ I, 60:  
Արտատպվում է ԲԲ-ից:

ԵՐԳՉԻ ՎՐԵԺԸ

(«Ծանր հեծության ժամանակների...»)  
(էջ 84)

Գրված է 1891 թ. փետրվարի 22-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1891, № 10, էջ 1180, այնուհետև՝  
ԲՄ II, էջ 116, թվագրված՝ «1891 թ. փետրվարի 22»: Դփ, էջ 9, թվագր-  
ված՝ «1892», ԲԲ, էջ 19, ապա՝ ԵԺ I, 61:  
Արտատպվում է ԲԲ-ից:

ԿԱՆՉ

(«Եթե կաս, աստված...»)  
(էջ 85, 443)

Գրված է 1891 թ. փետրվարին:  
ԳԱԹ ԹՖ № 21 պահպում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից,  
565

Վրան մակագրված՝ «Զբույլատրված», որից կարելի է ենթադրել, որ ՄՃ-ում տպագրությունն արգելվել է առաջնորդությունը»:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 76—78, թվարկված՝ «1891 թ. փետրվար», այսուհետև ԲԲ, էջ 22—23, ապա՝ ԵԲ I, 62—63;

Արտատպվում է ԲԲ-ից:

Ртп: манжавнб ашпашхн շրջանի լավագույն բանաստեղծություններից է, որ բարձր է գնահատվել նաև ժամանակակիցների կողմից: Այդ մասին ունենք ոչ քիչ թվով վկայություններ: Օրինակ՝ գրաքննադատ և մանկավարժ Գ. Վանցյանը 1893 թ. ապրիլի 8-ին բանաստեղծին հղած նամակում գրում է. «Կանչը» ամեն տեղ փուրոր է անում. «Это действительно высококудожественное произведение». Եթե, Հովհաննես շան, ուրիշ ոչ մի բան չգրեիր, այդ ստեղծագործությունն ըավական էր քեզ բանաստեղծի կոշմանը արժանացնելու: Ունիս, այո՛, ուրիշ գեղեցիկ բաններ, ունիս և շատ թույլ բաններ, բայց «Կանչը», դա գլուխգործող է, դա մի զանց է» (տե՛ս ՈՒՀ 4, 313):

Բանաստեղծության համրդանառը շերմ ընդունելության մասին են վկայում նաև Թումանյանի երրեմնի դասընթերու, Ներսիսյան պարոցի ուսուցիչ Արամ Առաքելյանը (տե՛ս նույն տեղում, էջ 314) և մանկավարժ, Բարգմանիլ Զալալ Տեր-Գրիգորյանը (նույն տեղում, էջ 318).

«Սիրելի Ընկեր, օստ ոգեզՈՐՎԵԼ...»  
(էջ 87)

ԳՐՎԱԾ է 1891 թ.:

ԳԱԹ ԹՖ № 226 պահպամ է 1891 թ. մարտի 2-ին Թումանյանի՝ Արովյանին գրած նամակը, որից երեսում է, որ իր «Անուշ» պեսմը նա ցանկացել է նվիրել ընկերոջը: Այստեղ «Անուշ» վերնագրի տակ, փակագծերում գրիլ է՝ «Նվիր իմ ընկեր Անուշավանին», ապա զետեղել է այս ձոյն ու պոեմի առաջին երկու հատվածներու:

Առաջին անգամ տպագրվել է Եթ II, 368—369, «Մանոթագրություններ» բաժնում, այնուհետև՝ Եթ V, 46, վերը հիշատակված նամակի մեջ և Եթ I, էջ 443: «Անուշի» ձորու վերնապող:

## Տողագրվում է ինքնաղբից:

ՊԱՏՎԵՐ

(«Վանա բանիտի խորրից ելած հառաջանք...»)  
(Ե, 88)

Դրված է 1891 թ. մարտի 7-ին,  
Ինքնազիրը Հի սուհանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 132—133, թվագրված՝  
«1891 թ. մարտի 7», այնուհետև՝ Եթ I, 64:  
Արտատպասմ է ԲՄ II-ից:

ՆՎԵՐ ԱՆ. ԱԲ.-ԻՆ

(«Նորեկ գարունը լեռնական Բային...»)  
(էջ 89, 444)

Գրված է 1891 թ. մարտի 24-ին:

ինքնազիրը, առանց 1—4 տողերի, պահպամ է 1891 թ. ապրիլի 16-ին  
թումանյանի՝ Անուշավան Արովյանին գրած նամակի մեջ (Եթ Վ, 52):  
Նամակում կարդում ենք. «Ե/Խ/Տարագին (բառախաղ է անոն) Խարազ-  
Տարազ՝ խմբ.) տվել էի մի ոտանափոր—պանդստության աշխարհից եր-  
այդ ոտանափորի մեջ թուիը խոսում էր պանդսիստի հետ... Թափին  
ինչպես կխոսա, Հայտնեց և վերադրեց Տարազը, սրա տեղը դնելով  
Սոնդի «Վիշտոր»։ Երանի կարգաւու»:

Դատիկ այս տողերից, «Տարագին» և լզարկած բնագրում առաջին գործությունը այս են եղել. Պանդուխտի հետ խոսել է ու թե ժողովակարությունը», այս «Թումփ»:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 74—75, թվագրված՝ «1891 թ. մարտի 24», անուհետեւ՝ թիվ I, 65:

Արտատպահ է ԲՄ ՀՀ-ից:

N. N.-Hü

(«Կյանքի հոսանքն յուր դնթացքում»)  
(էջ 90)

Գրպածէ 1891 թ. ապրիլի 10-ին:

Ինքնագիրը չի պահպանվել

Պտանավորի երեք քառատողերը (տող 25—36) առաջին անգամ տպագրվել են ՄՇ, 1891, № 12, էջ 1500, թպագրված «1891 ապրիլ 10», կրիկ բնափառը տպագրվել է ԲՄ II, էջ 148—150, այնուհետև՝ օժ Ի.

66—67:

Արտատպում է ԲՄ Հ-ից

## ՍԱՐԾՈՒՄ

(«Մութը իշավ, գետինն առավ...»)  
(էջ 92, 444)

Գրված է 1891 թ. ապրիլի 15-ին:

ԳԱԹ ԹՖ № 22 պահում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «1891 թ. ապրիլի 15», վերնագրված՝ «Մի պատկեր» (հանված է Մճ-ի արխիվից), Առաջին անգամ, «Մի պատկեր» վերնագրով, տպագրվել է ԲՄ II, էջ 66—68: Այնուհետև, «Ասրերում» վերնագրով, կրճատումներով և մշակված՝ ԲԹ, էջ 17—18, ԲԹ, էջ 16—17, ապա՝ եժ I, 68—69:  
Արտատպվում է ԲԹ-ից:

1901 թ. ձմռանը Թումանյանը հիմնովին վերամշակել է «Անուշ» պոեմը՝ Զգացվում է, որ այս ոտանագորը գրելիս բանաստեղծը դեռևս գտնվել է իր մեծ աշխատանքի տպագրության տակ: Անուշու, զրա արդյունքն է, որ այս «Մի պատկերում», նույնիսկ, «Անուշ» առանձին տպերը հիշեցնող տողեր կան: Օրինակ.

Բինից հեռու երևացին  
Երկու մարդու կերպարանք...

Հմմտ.

Երկու մարդկային սև կերպարանքներ  
Եան առաջ փախած՝ ցած իշան դեսը...

«ԵՐԲ ՏԵՍՆՈՒՄ ԵՄ ՄԱՐԴ ՏԱԿԱՎԻՆ...»  
(էջ 93)

Գրված է 1891 թ. ապրիլի 25-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 102—103, թվագրված՝ «1891 թ. ապրիլի 25», այնուհետև՝ եժ I, 70:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

## ԿՈՐՈՒՍԻՑ ՀԵՏՈ

(«Խնդրի՞ն, սիրու իմ կարոտակեզ...»)  
(էջ 94)

Գրված է 1891 թ. մայիսի 7-ին,  
Ինքնագիրը չի պահպանվել:

568

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 117, թվագրված՝ «1891 թ. մայիսի 7», այնուհետև՝ եժ I, 71:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

«ՀՈՒՍԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐԵԼ Է ԿՅԱՆՔԻՆ...»  
(էջ 95; 445)

Նվիրված է Պետրոս Աղամյանին:

Դատելով արտիստի հիվանդ լինելու մասին ոտանագորում արված ակնարկից, պետք է գրված լինի 1891 թ. գարնանը, երբ Աղամյանը կոկորդի տուբերկուլոզով ծանր հիվանդանոցում: Այս ոտանագորով Թումանյանը հայությանը կոչ է անում նյութական օգնություն ցուց տալ հիվանդ արտիստին:

ԳԱԹ ԹՖ № 23 պահում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1932, № 27, այնուհետև՝ եժ I, 445:  
Տպագրվում է ինքնագրից:

## ՀՐԱԺԵՑ

(«Այստեղ անա կըբաժանվենք...»)  
(էջ 96)

Գրված է 1891 թ. մայիսի 27-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 158, թվագրված՝ «1891 թ. մայիսի 27», այնուհետև՝ եժ I, 72:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

## ԽԵՂՃ ԱՌԱՄՅԱՆ

(«Ծանաշում էի ևս օրան, ընկեր...»)  
(էջ 97, 445)

Գրված է, հավանաբար, 1891 թ. հունիսի 4-ին, Պետրոս Աղամյանի մահվան օրը:

569

ԹԸԱՆ Խ 10 ծոցատերում պահպում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է «Թատրոն», 1895, № 1, էջ 132—133, այնուհետև՝ օժ 1, 446:

Արտատպվում է «Թատրոնից»:

## ԴԵՐԱՍՍԱՆ ԱԴԱՄՑԱՆԻ ՄԱՀԸ

(«Ոգևորողն ընկավ արդեն...»)  
(էջ 98)

Գրված է 1891 թ. հունիսի 7-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 111—112, թվագրված՝

«1891 թ. հունիսի 7», այնուհետև՝ օժ 1, 73:

Արտատպվում է ԲՄ II-ից:

## ԱՍՏՂԵՐԻ ՀԵՏ

(«Էլ աստղեր, աստղեր...»)  
(էջ 99, 445)

Գրված է 1891 թ. հունիսի 17-ին, Դսեղում:

ԹԸԱՆ Խ 11 ծոցատերում պահպում է մեկ ինքնագիր, առանց վերնագրի, թվագրված՝ «17 հունիսի, Դսեղ»:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է ՄՃ, 1891, № 11, էջ 1304, այնուհետև, «Գիշերային մտածմունք» վերնագրով՝ ԲՄ II, էջ 108—109, նույնությամբ, բայց «Գիշերային մտածմունք» վերնագրով՝ Պ (16-րդ ոտանափոր), Գի, էջ 20: Վերջինս բերում ենք որպես տարրերակ՝ տողատակ նշելով ինքնագրի տարրերությունները:

Հետազոտմ բանաստեղծը ոտանափորը ենթարկել է հիմնական վերամշակման և հրաարակել ԲԹ, էջ 13, «Էլ աստղեր» վերնագրով: Նույնը, առանց վերնագրի, տպագրվել է ԲԹ, էջ 11, այնուհետև, «Աստղերի հետ» վերնագրով՝ ԲԹ, էջ 15: Այս վերջին հրատարակությունները թվագրված են «1890», ապա՝ օժ 1, 74:

Արտատպվում է ԲԹ-ից:

Հեղինակի դուստր Ն. Թումանյանը հիշողությամբ մեջ է բերում Թումանյանի ինուքերն այս բանաստեղծության մասին: «Հիշում եմ «Էլ աստղերը» գրելու օրը: Դսեղ էի, Զաղի ծորն էի զնացել որսի: Կալի ժամանակն էր. ծորից զուրս եկա մեր կալը, կալի մոտ ել դաֆան էր. աստղա-

լից կեցեր էր, պառկեցի դագից հեռու, կալի մոտ ու էստեղ էր, որ գրել եմ «Էլ աստղերը...» (տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 240):

## «ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՒՐ, ՊԱՏՄՈՒՄ ԵՒՐ ԻՆՉ...»

(էջ 100, 446)

Գրված է 1891 թ. հոկտեմբերի 10-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 82, թվագրված՝ «1891 թ. հոկտ. 10», այնուհետև՝ մասնակի փոփոխություններով՝ ԲԹ, էջ 24, ապա՝ օժ 1, 75:

Արտատպվում է ԲԹ-ից:

## ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

(«Քո աշքերո՞մ, որ փայլում ե...»)

(էջ 101)

Գրված է 1891 թ. նոյեմբերի 9-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 157, թվագրված՝ «1891 թ. նոյեմբ. 9», այնուհետև՝ օժ 1, 76:

Արտատպվում է ԲՄ II-ից:

## ՈՒՐՈՒ

(«Ո՞ր և և, իմ սիրո՞ւն...»)

(էջ 102, 446)

Գրված է 1891 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ «Սիրո տեսիլներ» վերնագրով, տպագրվել է «Թատրոն» հանդեսում, 1899, № 1, էջ 31, այնուհետև, մշակված՝ ԲԹ, էջ 19 և ԲԹ, էջ 18, ապա՝ օժ 1, 77:

Արտատպվում է ԲԹ-ից: Պահև ԲԹ-ի կետագրությունը:

«ՍԻՐԵԼԻՇ ԱՉԵՐ...»  
(էջ 103, 447)

Գրված է 1891 թ.:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է Տպ. 1892, № 18, էջ 274, «Ալրումում»  
վերնագրով, այնուհետև՝ Դ (14-րդ ոստանավոր), թվագրված՝ «1891 թ.»,  
ապա՝ եժ. I, 78:  
Արտատպվում է Դ-ից:

«ԹԵ ՀՈԳԻՆԵԼ ԵՍ ՀԱՂԹԱՀԱՐՎԱԾ...»  
(էջ 104, 447)

Գրված է 1891 թ.:  
ԹԸԱ պահպում է մեկ ինքնագիր:  
Առաջին անգամ տպագրվել է եժ. I, 444:  
Տպագրվում է ինքնագրից:

1892

«ԵՐԲ ԳԻՇԵՐԱՅԻՆ...»  
(էջ 105)

Գրված է 1892 թ. Հունվարի 9-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 153—155, թվագրված՝  
«1892 թ. Հունվարի 9», այնուհետև՝ եժ. I, 80—81:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

ՌՈՒՄԱՆՈՒ

(«Երկու աշբով լալիս եր նա...»)  
(էջ 107)

Գրված է 1892 թ. Հունվարի 13-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:

572

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 6, էջ 884, թվագրված՝  
«1892 թ. Հունվարի 13», այնուհետև՝ եժ. I, 82:  
Արտատպվում է ՄՃ-ից:

ՔՐԻՍՏՈՍՆ ԱՆԱՊԱՏՈՒՄ

(«Անապատի մեջ խավար ու տխորի...»)  
(էջ 108, 447)

Գրված է 1892 թ. Հունվարի 18-ին:

ԴԱԹ ԹՖ № 25 պահպում է մեկ ինքնագիր՝ հանված ՄՃ-ի արխիվից,  
թվագրված՝ «92, Հունվարի 18»: Նույն տեղում, № 1355 պահպում է ԲԲ-ի  
հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը կատարել է մեկ ուղ-  
ղում:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 3, էջ 414, այնուհետև՝  
ԲՄ II, էջ 118, Դ (10-րդ ոստանավոր), Դփ, էջ 10, ԲԲ, էջ 28, ապա՝  
եժ. I, 33:

Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած քնագիրը:

Թումանյանի այս բանատեղծովիշյունն իր ոգով այնքան հարազատ է  
ուսու գեղանկարի Խ. Ն. Կրամսկոյի «Քրիստոն անապատում» նկարին  
(նկարված 1872 թ.), որը տեղի է տվել թյուրիմացության, թե իրը ստեղծ-  
վել է Կրամսկոյի նկարի աղեցությամբ:

Ոտանավորը գրելուց 14 օր հետո, առաջին անգամ տեսնելով Կրամսկո-  
յի նկարը, Թումանյանը ևս զարմանքով նկատել է նմանոթյունը և ասես  
«Ետագայի ուսումնամիջողներին թյուրիմացությունից զերծ պահելու հա-  
մար, ԹԸԱ պահպող պատառիկներից մեկում թողել հետևյալ գրառաւմը.  
«Հիսուսն անապատում», Կրամսկոյի նկարը, Հյանունու օբօքը. 87.՝  
երես 229: «Հիսուսն անապատում» ոտ<անավորը> գրելուց հետո, 92 թ.  
փետր<վարի> 1-ին տեսա Տ.-ի մոտ»:

Տ.-ի անձնավորությունը պարզել շհաշողվեց:

ԵՐԱԶ

(«Գիշերն երազում հալածում էին...»)  
(էջ 109)

Գրված է 1892 թ. Հունվարի 20-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 180—181, թվագրված՝  
«1892, Հունվարի 20», այնուհետև՝ եժ. I, 84:  
Արտատպվում է ԲՄ II-ից:

573

«ՄՈՒԹՆ ԵՐ ԵՐԿԻՆՔԸ. ՈՉ ՈՔ ԶԸՏԵՍԱՎ...»

(էջ 110, 448)

Գրված է 1892 թ. հունվարի 22-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ, 1892, № 2, էջ 263, նույնությամբ՝ ԲՄ II, էջ 106, թվագրված՝ «1892 թ. հունվարի 22»։ Այնուհետև՝ Դ (1-ին ստանավոր), «Մութն էր երկինքը» վերնագրով, Դփ, էջ 27, «Արտասուրներ» վերնագրով։ Վերջապես, մասնակի փոփոխություններով և առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 30, ապա՝ Եթ I, 85։

Արտատպվում է ԲԲ-ից։

«ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԾԵՐԱՑԵԼ Ե...»

(էջ 111, 448)

Նվիրված է Ռափայել Պատկանյանին։

Գրված է 1892 թ. ինքնագիրի 11-ին (Պատկանյանը վախճանվել է նույն լվականի օգոստոսի 26-ին)։

ԳԱԹ ԹՖ № 88 պահպում է մեկ ինքնագիր՝ գրված Ռ. Պատկանյանի լուսանկարի վրա, թվագրված՝ «92.11.11. Տիֆիս»։

Առաջին անգամ տպագրվել է Եթ I, 447։

Տպագրվում է ինքնագրից։

## ԱՌԱՎՈՏ

(«Սրտամաշ տաղտուկ ծանըր գիշերի...»)

(էջ 112, 448)

Գրված է 1892 թ. մարտի 12-ին։

Ինքնագիրը չի պահպանվել։

ԹՀԱ պահպում է ԲՄ II-ի մեկ օրինակ «Յուր պատվարժան բարեկամ Մեսրոպ ք. Մելյանին Հովհաննես Թումանյանից» ընծայականով, որտեղ բանաստեղծը կատարել է մեկ ուղղում։

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 147, թվագրված՝ «1892 թ. մարտի 12», այնուհետև՝ Եթ I, 86։

Տպագրվում է ԲՄ II-ի թումանյանի ուղղած բնագրից։

«ԵՍ ՍԻՐԵԼ ԵՍ ՎԱՐԴԱ ՏԸԺԳՈՒՅՆ...»

(էջ 113, 448)

Գրված է 1892 թ. մարտի 18-ին։

ԳԱԹ ԹՖ № 26 ա պահպում է մեկ ինքնագիր, վերնագրված՝ «Իմ սերը», թվագրված՝ «92 թ. մարտի 18»։

ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը կատարել է մեկ ուղղում։

Առաջին անգամ, «Իմ սերը» վերնագրով, տպագրվել է ԲՄ II, էջ 156, այնուհետև, նույնությամբ՝ Դ (24-րդ ստանավոր), Դփ, էջ 37, ԲԲ, էջ 20, ԲԲ, առանց վերնագրի, էջ 25, ապա՝ Եթ I, 87։

Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած բնագրից։

ՀԻՇԻՇԻ...

(«ՅՈՒՐ ՉԱՐ ԲԱԽՈՒՄ ԲԱՆԿՈՒՄ ԲՈՆՎԱԾ...»)

(էջ 114, 449)

Գրված է 1892 թ. մարտի 20-ին։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է ԲՄ II, էջ 159, թվագրված՝ «1892 թ. մարտի», այնուհետև՝ Դ (26-րդ ստանավոր), ապա՝ Եթ I, 88։

Արտատպվում է Դ-ից։

«ԻՆՉ ՄԻ՛ ԽԸՆԴՐԻՌ, ԵՍ ԶԵՄ ԵՐԳԻ...»

(էջ 115, 449)

Գրված է 1892 թ. մարտին։

Ինքնագիրը չի պահպանվել։

ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը շնչել է «Իմ երգը» վերնագրից։

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է ԲՄ II, էջ 151—152, թվագրված՝ «1892 թ. մարտ», այնուհետև, «Իմ երգը» վերնագրով, Դ (8-րդ ստանավոր), Դփ, էջ 28—29, ԲԲ, էջ 23, հիմնական մշակման ենթարկված՝ ԲԲ, էջ 29, ապա՝ Եթ I, 89։

Արտատպվում է ԲԲ-ից։

(«Դու արտասվում ես, և քո ծանրավիշտ...»)  
(էջ 116)

Գրված է 1892 թ. ապրիլի 5-ին:  
ԴԱԹ ԹՖ № 27 պահվում է մեկ ինքնագիր, հանված ՄԵ-ի արխիվից,  
թվագրված՝ «92 թ. ապրիլի 5»:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 5, էջ 725, «Նվեր» վեր-  
նագրով, որը թումանյանինը չէ. ՄԵ-ի խմբագիր Ավ. Արասիանյանն է  
շնչել «ՕՐ. Բ.-ԻՆ» վերնագիրը, տեղը դնելով «Նվեր», Հետագայում «Նվեր»  
վերնագրով տպագրվել է ԵԺ 1, 90:

Արտատպվում է ՄԵ-ից Վերականգնել ենք թումանյանի դրած վերնա-  
գիրը:

ՕՐ. Բ.-Ի անձնավորությունը պարզել շնչողվեց:

#### ԿԱՍԿԱԾ

(«Ո՞վ ես, չար ոգի, դո՛ւ, որ իմ սրտում...»)  
(էջ 117, 449)

Գրված է 1892 թ. ապրիլի 13-ին:

ԴԱԹ ԹՖ № 28 պահվում է մեկ ինքնագիր հանված ՄԵ-ի արխիվից,  
Ավ. Արասիանյանի կից երկտողով. «Դամիթ, սա շարեք, որ բռնի պա-  
կաս տեղը, առաջնորդողից ու Մանվելյանի ոտանավորից հետո»,

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 11, էջ 1564, թվագրված՝  
«1892 թ. ապրիլի 13», այնուհետև՝ Դ (19-րդ ոտանավոր), Դփ, էջ 33,  
ապա՝ ԵԺ 1, 91:

Արտատպվում է Դփ-ից:

«ՍԻՐԵԼԻ ԶԻՎԱՆ, ԸՆԿԵՐՈՒ ԻՄ ՀՈԳՈՒ...»  
(էջ 118, 450)

Գրված է 1892 թ. մայիսի 1-ին: Այդ օրը 1890 թ. «Թանաստեղծաւ-  
թյունների» առաջին հատորը (ԲՄ 1) թումանյանը նվիրել է Զիվանուն՝  
«Յուր սիրելի երգիշ աշըղ Զիվանուն նվեր Հովհաննես Թումանյանից»  
ընծայականով և 4-րդ ազատ էջում գրել այս ոտանավորը: Դիրքը պահվում  
է ՀՍԽՀ ԳԱ ֆունդամենտալ գրադարանի Գ. Լևոնյանի անհատական ֆոն-  
դում:

ԹՀԱ պահվում է ոտանավորի ֆուտոպատճենը:  
Առաջին անգամ տպագրվել է ԵԺ 1, 448:  
Տպագրվում է ինքնագրից:

«ԱՌԱ, ՈՐՔԱՅԻ, ՓԱՐԹԱՄ ԿՅԱՆՔԸ ԾԱՂԿՈՒՄ Է...»  
(էջ 119)

Գրված է 1892 թ. մայիսի 3-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 10, էջ 1434, թվագրված՝  
«1892 թ. մայիսի 3», այնուհետև՝ ԵԺ 1, 92:  
Արտատպվում է ՄԵ-ից:

#### ՕՏԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(«Իմ եղբայրները օտարության մեջ...»)  
(էջ 120)

Գրված է 1892 թ. հունիսի 26-ին:

ԴԱԹ ԹՖ № 29 պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄԵ-ի արխիվից,  
թվագրված՝ «1892.VI.26»:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է ՄՃ, 1892, № 7-8,  
էջ 1045, այնուհետև՝ նույնը, «Օտարության մեջ» վերնագրով՝ Դ (2-րդ  
ոտանավոր), Դփ, էջ 7, ապա՝ ԵԺ 1, 93:

Արտատպվում է Դփ-ից:

Խոսելով թումանյանի բանաստեղծությունների առաջին ժողովածուի  
(ԲՄ 1-ի) ժամանակի առաջադեմ հայ գրական հասարակայնության, հատ-  
կապես երիտասարդության վրա թողած ազդեցության մասին և մեջք-  
ներ անելով օտարության մեջ ապրող մի խումբ հայ երիտասարդների  
Արքովյանի, Ա. Ղլտճյանի, Ս. Հովհաննի և ուրիշների թումանյանին  
ոզդած նամակներից, Ա. Ինճիկյանը գրում է. «Անշուշտ, իր պանդումտ  
հայրենակիցների և ընկերների այդ նամակներն են թումանյանին ներշըն-  
չել «Օտարության մեջ» բանաստեղծությունը» (Ա. Ինճիկյան, Հովհաննես  
թումանյան, էջ 250):

«ԼՍՈՒՄ ԵՍ ԴՈՒ ԷԼ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ԽՈՍՈՒՄ...»  
(էջ 121)

Գրված է 1892 թ. հունիսի 30-ին:

ԴԱԹ ԹՖ № 29 պահվում է մեկ ինքնագիր՝ հանված ՄԵ-ի արխիվից,

թվագրված՝ «92.VI.30»: ՄՃ-ին ուղարկվել է որպես շարքի երկրորդ ոտանակորը «Օտարության մեջ բանաստեղծության հետ միասին»:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 7—8, էջ 1046, այնուհետև՝

Եթ 1, 94—95:

Արտատպվում է ՄՃ-ից:

### ԱՄԱՐԱՅԻՆ ԵՐԵԿԻ

(«Ամուն գիշերվա երկինքն աստղալի...»)  
(էջ 123, 450)

Գրված է 1892 թ. հունիսի 17-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, առանց վերնագրի, տպագրվել է ՄՃ, 1892, № 9, էջ 1273, թվագրված՝ «1892 թ. հունիսի 17», այնուհետև՝ «Ամառային երեկո» վերնագրով՝ Դ (5-րդ ոտանակոր), Դփ, էջ 21, ապա՝ Եթ 1, 96:

Արտատպվում է Դփ-ից:

### «ՍԸՐՏԻՍ ԹԱԳՈՒՀԻ...» (էջ 124, 450)

Գրված է 1892 թ. հունիսի 26-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Կարոս» վերնագրով, տպագրվել է Տզ, 1893, № 7, էջ 101, այնուհետև՝ Դ (25-րդ ոտանակոր), թվագրված՝ «1892 հունիսի 26», Դփ, էջ 38, ԲԲ, էջ 21, այնուհետև, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 26, ապա՝ Եթ 1, 97:

Արտատպվում է ԲԲ-ից:

### «ՕՌ ԼՈՒՌՈ ԿԱՑ, ԸՆԿԵՐ ԱՅԴ Ի՞ՆՉ ԵՍ ԵՐԳՈՒՄ...» (էջ 125)

Գրված է 1892 թ. օգոստոսի 14-ին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 10, էջ 1433, թվագրված՝ «1892 թ. օգոստոսի 14», այնուհետև՝ Եթ 1, 98:

Արտատպվում է ՄՃ-ից:

### ՏԵՇԶ

(«ՄԵԿԱ Էլ այն է հոգուս անթիվ տեսչերի...»)  
(էջ 126, 450)

Գրված է 1892 թ. սեպտեմբերին:

ԴԱԹ ԹՖ № 30 պահպում է մեկ ինքնագիր՝ «ՏԵՆԼԵՐ» վերնագրով, հանձած ՄՃ-ի արխիվից, թվագրված՝ «92 սեպտեմբեր»:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 11, էջ 1583, այնուհետև՝ Դ (18-րդ ոտանակոր), Դփ, էջ 22, ապա՝ Եթ 1, 99:

Արտատպվում է Դփ-ից:

### ՄՈՌԱՑՎԱԾ ՍԵՐ

(«Միրում Էլ երեւմըն քեզ...»)  
(էջ 127)

Գրված է 1892 թ. դեկտեմբերին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1892, № 12, էջ 1800, այնուհետև՝ Դ (21-րդ ոտանակոր), Դփ, էջ 35, ապա՝ Եթ 1, 100:

Արտատպվում է Դփ-ից:

### ՎԱՏ ՕՐԵՐ

(«Յուրտ Է, իմ ընկեր, ու հողմ ահագին...»)  
(էջ 128, 450)

Գրված է 1892 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԴԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը կատարել է մեկ ուղղում:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1893, № 3, էջ 421, այնուհետև՝ Դ (19-րդ ոտանակոր), Դփ, էջ 8, ԲԲ, էջ 22, ԲԲ, էջ 27, ապա՝ Եթ 1, 101:

Տպագրվում է ԲԲ-ի հեղինակի ուղղած բնագիրը:

## ՕՐ. Մ. Վ.-ԻՆ

(«Երբոր բացելիս է եղել արիհն...»)  
(էջ 129)

Գրված է 1892 թ.  
Խնքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ՄՃ, 1893, № 7—8, էջ 1053—1054,  
թվագրված՝ «1892 թ.», այնուհետև՝ ծի 1, 102—103:  
Արտադրվում է ՄՃ-ից:  
Նվիրված է բանաստեղծի մտերիմ ընկեր Ֆիլիպ Վարդագարյանի քրո-  
ւ՝ Մարիամ Վարդագարյանին:

## ԱՂԲՅՈՒԹ

(«Սարի լանջին, ծայրի տակ...»)  
(էջ 131, 451)

Գրված թվականն ստույգ հայտնի չէ:

Մեզ հասած միակ թերի սեագիր-ինքնագիրը պահպամ է ԹՀԱ № 10  
Ժոցատերում, որի մեջ եղած նյութերը վերաբերում են 1891—1892 թթ.  
(օրինակ՝ «Խեղճ Աղամյան» բանաստեղծությունը): Այստեղից կարելի է  
ենթադրել, որ այս բանաստեղծությունը ևս գրված է այդ տարիներին:

Առաջին անգամ տպագրվել է Աղ, 1893, № 5—6, էջ 198, այնուհետև՝  
մասնակի փոփոխություններով՝ և 11, 1909, էջ 116 և նույն դասագրքի մի  
քանի հետագա հրատարակություններում, ապա՝ ծի 1, 106:

Արտադրվում է 1916 թ. և 11-ից:

## ՀԱԾՏՈՒԹՅՈՒՆ

(«Կովկասի ամպած երկինքը պարզվեց...»)  
(էջ 132, 451)

Գրված է 1892 թ., սակայն 1893 թ. Թումանյանը կրկին անդրադար-  
ձել է այս բանաստեղծությանը:

ԳԱԹ ԹՖ № 9 (լրացուցիչ) պահպամ է առաջին տարրերակը, որն  
ավելի լադացակ է, թվագրված՝ «92/93» 5 և 6՝ տները»:

ԳԱԹ ԹՖ № 11 պահպամ է ևս մեկ ինքնագիր, 20 տող է, խնամքով  
արտադրած և կետադրությունը ճշտած, թվագրված՝ «93 մարտի 30»: Եթևում

է, որ բանաստեղծը հրատարակության և պատրության օրինակը, սա-  
կայն ինչ-ինչ պատճառներով տպագրության չի հանձնել:

Առաջին անգամ, Ա ինքնագիրը, տպագրվել է ԳԵ, էջ 114, այնու-  
հետև՝ ծի 1, 449—450: Երկու հրատարակություններում էլ կան իմբագրա-  
կան միջամտություններ:

Տպագրվում է Բ ինքնագիրը:

## 1893

### ՕՐ. Օ. Գ.-Ի ԱԼԲՈՄՈՒՄ

(«Ի՞նչ ես ուզում, որ թողնեի...»)  
(էջ 133)

Գրված է 1893 թ. հունվարի 6-ին:

ԳԱԹ ԹՖ № 260 պահպամ է Օ. Գիրգիլյանի ալբոմը և դրա մեջ ինք-  
նագիրը, թվագրված՝ «93 1/6»: Թվագրությունից հետո Թումանյանը գրել  
է՝ «Օր. Զ-ի ալբոմում, Մուրճ, 1893 թ. № 1»: Բայց բանաստեղծությունն  
առաջին անգամ տպագրվել է ոչ թե ՄՃ-ի 1893 թ. առաջին, այլ 1892 թ.  
12-րդ համարում (էջ 1815): Այդ համարում նախատեսված է եղել տր-  
պագրել մի թարգմանական բանաստեղծություն, որի տպագրությունը վեր-  
ջին պահին գրաքննությունն արգելել է, և խմբագրությունը բաց էն  
գրադեցրել է այս բանաստեղծությամբ, որը նախատեսված է եղել տպագրել  
1893 թ. առաջին համարում: Այդ է պատճառը նաև, որ ՄՃ-ի 1892-ի 12-րդ  
համարի ցանկում այս բանաստեղծությունը չի հիշատակված: Այնուհետև տր-  
պագրվել է Դ (17-րդ ոտանավոր), թվագրված՝ «1893», «Օր. Օ. Գ-ի ալ-  
բոմում» վերնագրով, ապա՝ ծի 1, 79:

Արտադրվում է Դ-ից:

«ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՑԱՎ... ԱՌՆ, ԵՎ ԱՅՍ ՀՈՇ...»  
(էջ 134, 452)

Գրված է 1893 թ. մարտի 28-ին:

ԳԱԹ ԹՖ № 260 պահպամ է Օ. Գիրգիլյանի ալբոմը, և դրա մեջ  
ինքնագիրը՝ թվագրված՝ «1893 III/28, (Զատիկ)»:

ԹՀԱ № 12 Ժոցատերում պահպամ է ևս մեկ ինքնագիր, վերնագրված՝  
«Քրիստոս հարյավ»: Արտադրված է Օ. Գիրգիլյանի ալբոմից: Վերնա-  
գրից առաջ թումանյանը գրել է. «Թսանի ալբոմից, գրած 93 III/28,  
Զատիկին, էկսպրոմտում»:

Առաջին անգամ տպագրվել է Տպ. 1901, «Իլլուստրացիոն», № 12/4,  
էջ 30, այնուհետև եթ 1, 104:  
Արտատպում է Տպ.-ից:  
Ալբոմի ինքնագիրը բերում ենք որպես տարրերակ:

«ԱՏԵԼՈՒՍ ՀԱՄԱՐ...»  
(էջ 135)

Գրված է 1893 թ. ապրիլի 24-ին:  
ԳԱԹ թֆ № 260 պահպում է 0. Գիրգիղյանի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագիրը, թվագրված՝ «93.IV.24»:  
Առաջին անգամ տպագրվել է Պր., 1929, № 41, այնուհետև՝ եթ 1,  
451:  
Տպագրվում է ինքնագրից:

Ն. ԲԱՐԱԹԱԾՎԻԼՈՒ ԴԱՄԲԱՆԻ ՎԵՐԱ  
(«Մխիթարություն, սգավոր Վրաստան...»)  
(էջ 136)

Գրված է 1893 թ. ապրիլի 25-ին:  
ԳԱԹ թֆ № 31 պահպում է մեկ ինքնագիր, հետևյալ ծանոթությամբ.  
«Կարդացված ապրիլի 25-ին, տե՛ս «Մուրճի» ներկա Թ-ի «Ճանազան լուրեր»:  
Առաջին անգամ տպագրվել է Մճ., 1893, № 4, էջ 520, այնուհետև՝  
եթ 1, 105:  
Արտատպում է Մճ.-ից:  
Թումանյանը, որպես «Մուրճ» ամսագրի ներկայացուցիչ, այս բա-  
նաստեղծությունը կարդացել է վրաց բանաստեղծ Ն. Բարաթաշվիլու աճ-  
յունը Գանձակից Թիֆլիս տեղափոխելու առթիվ Թիֆլիսում կազմակերպված  
սգո միտինգին: Նույն սգո հանդեսում բանաստեղծության վրացերեն թարգ-  
մանությունը կարդացել է կարգադրի հանձնաժողովի անդամ Ախնազարո-  
վը (տե՛ս Մճ., 1893, № 4, էջ 674):

«ՀՈՍԻՐ ԱՐՏԱՍՈՒՔՍ ԱՆԿԵՂԾ ՏԽՐՈՒԹՅԱՆ...»  
(էջ 137, 453)

Գրված է 1893 թ. հունիսի 21-ին:  
ԳԱԹ թֆ № 32 պահպում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «21 հունիսի  
93»:  
Առաջին անգամ տպագրվել է եթ 1, 452:  
Տպագրվում է ինքնագրից:

582

ՊՈԵՏԻՆ

(«Մեր ուշըն ինչո՞ւ ես կախարդում...»)  
(էջ 138)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է Մճ., 1893, № 9, էջ 1329, այնուհետև՝  
եթ 1, 113:  
Արտատպում է Մճ.-ից:

ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ՆԿԱՐԻ ԱՌՋԵՎ

(«Ելած՝ օվկիանի անզուսպ ալիքներ...»)  
(էջ 139, 453)

Գրված է 1893 թ.:  
ինքնագիրը չի պահպանվել:  
ԳԱԹ թֆ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը,  
որտեղ թումանյանը կատարել է մեկ ուղղում և թվագրել՝ «1894»:  
Առաջին անգամ «Այվազովսկու ծովանկարի առաջ» վերնագրով, տը-  
պագրվել է Մճ., 1893, № 9, էջ 1348, այնուհետև՝ Դ (11-րդ ոտանակոր),  
Դփ, էջ 23, ԲԲ, էջ 25 (այսուղեա և թվագրված՝ «1894»), ԲԲ, էջ 38,  
ապա՝ եթ 1, 107:

Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած բնագիրը:

ԹԸԱ, անձնական իրերի ֆոնդ, № 451 պահպում է ԲԲ-ի՝ Մխիթար  
Տեր-Անդրեասյանին հեղինակի նվիրած օրինակը, որի 25-րդ էջում, հայե-  
րեն բնագրից ներբեն, կա Վալերի Բըլուսովի թարգմանությունը՝ նրա իսկ  
ձեռագրով, թվագրված՝ «Բակու, 1916 (9/1)»:

Այժմ դժվար է կռահել, թե Այվազովսկու ո՞ր կտավը նկատի ունի  
թումանյանը: Ավելի հավանական է թվում, թե բանաստեղծությունը գրվել  
է 1870-ական թթ., այսպես կոչված, «Կապույտ ծովանկարներից» կամ  
1880—1890-ական թթ. Այս թարգմանությունը որևէ մեկի կամ  
մի բանիսի տպագրության տակ:

ՀԱՅ ՈՒԽՏԱՎՈՐԻՆ

(«Գնան բարով, այս ուխտավոր...»)  
(էջ 140, 453)

Գրված է 1893 թ.:  
ԳԹ թֆ № 9 (լրացուցիչ) պահպում է մեկ ինքնագիր-պատառիկ՝ ուսա-  
նագորի վերջին հատվածը: Նույն տեղում, № 1355 պահպում է ԲԲ-ի հե-  
տուածությունը՝ անձնագիրը:

583

զինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը ուղղումներ է կատարել: Նման մի օրինակ էլ պահպում է թէԱ:

Առաջին անգամ տպագրվել է Տզ, 1898, № 4, էջ 58, այսուհետև՝ 1907, 2 նոյեմբերի, № 2, «Գրված է 1893 թվականին Հայրիկի ընտրության առիթով՝ Թիֆլիսի երիտասարդության խնչույթին: Ժամանակի ցենզուրական պայմանների պատճառով առաջին անգամ է տպագրվում ամրողաւողատակի ծանոթությամբ: Այսուհետև տպագրվել է առանց վերշին՝ 4-րդ հատվածի՝ թթ, էջ 31—32, 29, էջ 142, 1917 և 5, էջ 34, ապա՝ եթ 1, 108—109:

Տպագրվում է թթ-ի Թումանյանի ուղղած բնագիրը:

Նվիրված է Մկրտիչ Խորիմյանին՝ 1893 թ. սեպտեմբերի 26-ին նրա կաթողիկոս օծվելու առթիվ: Արտահայտությունն է այն հույսերի, որ շատերի նման երիտասարդ Թումանյանը ևս կապել է Խորիմյանի՝ հոգեոր հովիվ զառնալու հետ: Բանաստեղծի այդ զգացումն ունեցել է իր մակ-ընթացություններն ու տեղատվությունները՝ կապված հայ ժողովրդի վիճակի, մասնավորապես XIX դարի վերջերին Արևմտահայաստանում տեղի ունեցած իրադարձությունների հետ:

Ոտանավորի գրության շարժառիթի մասին բանաստեղծի դուստր Նվարդ Թումանյանը հիշում է Թումանյանի հետեւյալ խոսքերը. «Հայ ուխտավորին» էքսպրոմտ է: Խորիմյանի ընտրության առթիվ շորս հոգի քեզ սարքեցինք Օրթածալայում, էն քեֆին գրեցի» (տե՛ս Նվարդ Թումանյան, Հուշեր և զրույցներ, էջ 240):

«Խորիմյանի կաթողիկոս ընտրվելուց հետո,—գրում է Ա. Ինճիկյանը,— նրա մի շարք նախկին կողմնակիցների հետ, Թումանյանը ևս որոշ հիսարքափություն է ապրում: Արս. Ղլտճյանը 1894 թ. նամակներից մեկում նրան խորհուրդ է տալիս ունշացնել գրած ոտանավորը (նկատի ունի, հավանորեն, «Հայ ուխտավորին»), 1893-ին, Խորիմյանի ընտրության առթիվ նրան նվիրված բանաստեղծությունը...), Թումանյանը պատասխանում է. «Ենչո՞ւ կորցնեմ, այն կմնա իրք հիշատակ մեր առաջին զգացումների, իսկ նորը յուր կարգին, նորը քեզ կուղարկեմ, այսպես է սկսվում.

Եթե այդպես է, մենք կիսում կենացնենք

Այն պատվանդանը, որ մենք կառուցինք... (տե՛ս Ա. Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 499: Թումանյանի նամակը Արսեն Ղլտճյանին՝ եթ 5, 86—87):

Հստ երևույթին, այս հիսարքափությունն է եղել պատճառը, որ զեռնս 1893 թ. գրված ոտանավորը տպագրվել է հինգ տարի անց՝ 1898 թ., երբ արդեն տեղի էին ունեցել 1895—1896 թթ. Թուրքական կառավարությունը արդեն էին արյունակի շարդերը, որոնց ժամանակ Խորիմյանը ներկայացել է որպես ազգային-ազատագրական պայքարին նվիրված գործիչ՝ հոգալով տեղահան եղած ու կոտորածներից փրկված

հայրենակիցների կարիքները և որպես գործունյա դիվանագետ, որը մեծ ջանքեր էր գործադրում ուսական կայսեր պաշտպանությունն ստանալու: Արևմտյան Հայաստանում խոստացված բարենորդումներն իրականացնելու համար:

Այսուհետև Թումանյանի համակրանքը, ավելի ճիշտ՝ Խորիմյանի, որպես քաղաքական գործիչ, նրա դրական գնահատականը մնացել է անփոփոխի մինչև կաթողիկոսի վախճանը, որը տեղի է ունեցել 1907 թ. հոկտեմբերի 29-ին: Այս կապացությամբ է, որ բանաստեղծը երկրորդ անգամ տպագրության է հանձնել ուսանավորը:

Ինչ վերաբերում է այն «նոր» ուսանավորին, ապա բացի Արս. Ղլտճյանին ուղարկած երկու տողից, ուրիշ ոչինչ մեզ չի հասել:

## ԱԱ ՆՍՏԱԾ ԷՐ...

(«Նա նատած էր դաշնամուրի առաջին...») (էջ 142, 455)

Գրված է 1893 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տզ, 1893, № 41, էջ 632, այսուհետև՝ Դ (13-րդ ոտանավոր), Դի, էջ 36, թվագրված՝ «1893», ապա՝ եթ 1, 110, Արտատպում է Դի-ից:

## ԽՐԾԻԹՈՒՄ

(«Մանուկները գոռում-գոչում...») (էջ 143, 455)

Գրված է 1893 թ.:

ԳԱԹ ԹՖ № 33 պահպում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «1893», թվագրությունից ներքև Թումանյանը գրել է. ««Լույս» օրացույց, 1905»», որից հետեւյալ է, որ գրված է տպագրությունից հետո:

ԳԱԹ ԹՖ պահպում է նաև «Լույսում» տպագրված բնագրի կտրոնը՝ հեղինակի կատարած բարեփոխումներով:

Առաջին անգամ տպագրվել է «Լույս» օրացույց-հանդես (տպ. 1904), էջ 469—471, այսուհետև եթ 1, 111—112:

Տպագրվում է հեղինակի բարեփոխած բնագրը:

## ՆՈՐ ՏԱՐԻ

(«Դու ել արի...»)  
(էջ 145, 456)

Գրված է 1894 թ. հունվարի 1-ին:  
ԳԱԹ ԹՖ № 34 պահպում է մեկ ինքնագիր, որը վերնագրված է եղել «Հունվարի 1-ին»: Բանաստեղծն այս վերնագիրը չնշել է, փոխարենը գրել՝ «Նոր տարի», թվագրված է՝ «1894»: Նույն տեղում պահպում է նաև երկրորդ ինքնագիրը, վերնագրված՝ «Նոր տարուն», դարձյալ թվագրված՝ «1894»:

Առաջին անգամ տպագրվել է Տպ. 1896, № 1, էջ 2, այնուհետև՝ հօֆ 1, 114—115:

Տպագրվում է Ա. ինքնագրից, քանի որ Տպ.-ում կան մի քանի փոփոխություններ, որոնք ակնհայտորեն խմբագրությանն են:

«ԵՍ ԱՍԱՑԻ,—ԴՈՒ ԾԱՂԿՈՒՄ ԵՍ...»  
(էջ 147, 457)

Գրված է 1894 թ. նոյեմբերի 5-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը ուղղումներ է կատարել:  
Առաջին անգամ տպագրվել է ՀՀ, էջ 108, թվագրված՝ «1894», նոյեմբերի 5», «Օր. Ն.-ին» վերնագրով: Այնուհետև, «Ես ասացի...» վերնագրվ՝ Դփ, էջ 32, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 34, ապա՝ հօֆ 1, 116:  
Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած բնագիրը:

## ԺՊՏՈՒԽ ԱՉՔԵՐ

(«Դու մի՛ հավատա ժըպտուն աչքերին...»)  
(էջ 148, 457)

Գրված է 1894 թ.:  
ԳԱԹ ԹՖ № 35 պահպում է մեկ ինքնագիր՝ «Հարգելի օրինություն երանյակ կարգանցին», 95 թ. նոյեմբեր 9, Ախալքալաք մակարությամբ: (Այս մասին մանրամասն տե՛ս ԹթՀ, էջ 402 և 946—947):  
ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանն ուղղումներ է կատարել, թվագրված՝ «1894»:

Առաջին անգամ տպագրվել է Դփ, էջ 30—31, այնուհետև, վերամշահած՝ ԲԲ, էջ 26, ԲԲ, էջ 39, ապա՝ հօֆ 1, 120:  
Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած բնագիրը:  
Դփ-ի օրինակը տալիս ենք որպես տարբերակ, տողատակ նշելով դրանից ինքնագրի ունեցած տարբերությունները:

## ՄԻ ՀԱՌԱՋԱՆՔ

(«Ես տեսա հնկա...»)  
(էջ 149, 458)

Գրված է 1894 թ.:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը ուղղումներ է կատարել:  
Առաջին անգամ տպագրվել է ՀՀ, էջ 99, այնուհետև՝ Դփ, էջ 24, ԲԲ, էջ 35, ապա՝ հօֆ 1, 117:  
Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած բնագիրը:  
Այժմ դժվար է ասել, թև հայ ծովանկարչի որ նկարը նկատի ունի բանաստեղծը: Գրականության մեջ «Սկ ծովի ափերը» անունով նկար չի հիշատակվում, իսկ նույն թեմաներով կատարված աշխատանքները բազմաթիվ են: Եթեն ոգեշնչած նկարը բանաստեղծը պետք է տեսած լինի մասնավոր անձի մոտ, քանի որ մինչև 1894 թ. Թիֆլիսում Արվագովսկու ստեղծագործությունների ցուցահանդես բացվել է միայն մեկ անգամ՝ 1869 թ.:

## ՆՄԱՆՈՒԹՅՈՒՆ

(«Եթե մի օր, անո՛ւ ընկեր...»)  
(էջ 150, 459)

Գրված է 1894 թ.:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը կատարել է մեկ ուղղում, ապա չնշել շորորդ տունը և վերևում մատիտով գրել՝ «Նման.»:  
Առաջին անգամ, «Նմանություն» վերնագրով, տպագրվել է Դփ, էջ 39—40, թվագրված՝ «1894», այնուհետև, երեք առուն կրծատված և վերնագրված «Եթե մի օր, անու ընկեր»՝ ԲԲ, էջ 27, առանց վերնագրի, 16 առողջ՝ ԲԲ, էջ 40, ապա՝ հօֆ 1, 118:  
Տպագրվում է ԲԲ-ի թումանյանի ուղղած բնագիրը:

Բանաստեղծությունը գրելիս Թումանյանն աշքի առաջ է ունեցել իտալացի բանաստեղծ Լորենցո Սթեքիթիի մի ոստանավորը (այս փաստի վրա ուշադրություն է հրավիրել Հ. Ս. Երեմյանը «Հովհաննես Թումանյան» հոդվածում, տե՛ս Բազմավեպ, 1914, № 5, էջ 333—336), որը ժամանակին երգել է, լայն տարածում գտել և թարգմանվել նաև ոռուերեն։ Դա քնարական-սիրային երգ է՝ ուղղված հեղինակի սիրած կնոջը։ Թումանյանի բանաստեղծությունը, նվիրված լինելով հոգեկից ընկերոջը, պատճենագիր է իւղական բնույթ ունի։

Մեջ ենք բերում իտալական երգը բառացի թարգմանութեամբ։

Երբ կթափվեն տերեները, ու դու կգաս  
Փնտրելու իմ խաչը գերեզմանատանը,  
Մի անկյունում այն կգտնեմ՝  
Ծուրջը բազմաթիվ ծաղիկներ աճած։  
Այդ ծաղիկները ծնվեցին իմ սրտից  
Քո շնկ մազերի համար։  
Դրանք այն երգերն են, որ դու գիտես, բայց ես չերգեցի,  
են այն բառերը, որ քեզ շասացի։

### ԵՐԿՈՒ ՍԵՎ ԱՄՊ

(«Վաղոց թողած բարձր ու կանաչ...»)  
(էջ 151, 459)

Գրված է 1894 թ.։

Ինքնագիրը չի պահպանվել։ Մեզ չի հասել նաև այն հեղինակային գնուրինակությունը, որ 1895 թ. դեկտեմբերին Թումանյանը նվիրել է Ա. Խաչականին (տե՛ս ԹօԺ, էջ 9)։

ԳԱԲ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը ուղղումներ է կատարել։ Դրանք հետագայում արտահայտվել են ԲՊ-ում։

Առաջին անգամ տպագրվել է Դփ, էջ 19, թվագրված՝ «1894», այնուհետև՝ ԲԹ, էջ 24, ԲԲ, էջ 33, ԲՊ, էջ 17, ապա՝ Եթ I, 119։

Արտատպվում է ԲՊ-ից։

Այս բանաստեղծության գրության շարժառիթների մասին կան տարրեր կարծիքներ։ Դ. Գեմիրճյանը բանաստեղծությունը կապում է Փ. Վարդագարյանի և Թումանյանի մտերմության հետ։ «Թումանյանը և Վարդագարյանը շատ մտերմացան, —գրում է նա, —այն աստիճան, որ վերջինս դարձավ Թումանյանի լիրիկական զեղումների ֆիգուրաներից մեկը («Երկու սև ամպ»)» (տե՛ս ԹօԺ, էջ 23—24)։ Ա. Խնձիկյանը մեջ է բերում Երկու ուրիշ վարկած։ «Մի այլ ենթադրությամբ, —գրում է նա, —«Երկու սև ամպ»

բանաստեղծության մտահղացումը կապվում է երկու գաղթական ամուսինների հետ, որոնց աշխանային Թիֆլիսի փողոցներից մեկում կողք-կողքի քայլելիս՝ տեսել է Թումանյանը։ Այստեղից էլ երրորդ ենթադրությունը, թե հայածական երկու սև ամպի պատկերի մեջ բանաստեղծը խոտարել է հայության երկու հատվածների քաղաքական ճակատագրը» (Ա. Խեճիկյան, Հովաննես Թումանյան, էջ 500—501)։

### 1895

#### Ո՞Վ ՏԱՐԱՎ

(«Դուք ինձնից տարաք հիշատակարամ...»)  
(էջ 152, 460)

Գրված է 1895 թ. նոյեմբերի 11-ին։

ԹՀԱ Թ 1 ծոցատերում պահպում են երկու սևագիր-ինքնագիր։ Առաջինը նախնական գրառումն է, որի վերևում Թումանյանը դրել է. «Օր. Ե. Վ., 11 նոյեմբերի, 95, Ախլք.»։ Երկորորդը համեմատարար ավելի մշակված է, չի թվագրված։

Առաջին անգամ տպագրվել է «Երաբեր հասարակական գիտությունների», 1979, № 1, էջ 29, հրատարակել է Խ. Գյուղնազարյանը։

Տպագրվում է ինքնագրից։

Նվիրված է օր. Երանյակ Վարդականցին (հետագայում՝ Գյուղավան, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, գլուղամանտես Ցիգրան Գյուղավանի կինը, 1879—1916)։

#### ԲԱՅՐԸՆԻՆ

(«ԴԵՇ մնծ հանճարով, ո՞վ հսկա պուտ...»)  
(էջ 153)

Գրված է 1895 թ.։

Խենագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ Բայրոնի «Ծիլուոնի կալանավորը» պոեմի Թումանյանի կատարած թարգմանության հետ տպագրվել է առանձին գրքով 1896 թ. այնուհետև՝ Եթ I, 125։

Արտատպվում է հիշատակված գրքից։

Թումանյանը Բայրոնի «Ստեղծագործությամբ» հավշտակված է եղել 1890-ական թթ.։ Գևորգ Ասատուրը վկայում է, թե այդ տարիներին նա տպագերեն դասեր էր վերցնում Թիֆլիսի անգիտական փոխ-հյուպատոս

**Մուրտագից:** Թե որքան առաջադիմեց նա այդ ասպարեզում շգփտեմ, բայց զիտեմ, որ նա անգլերեն էր սովորում, որպեսզի կարողանա «Շիլլոնի կալանավորը» անմիջակես բնագրից թարգմանելու (տե՛ս թժՀ, էջ 352):

1895 թ. մարտի 21-ին, Ավ. Արասիսանյանին գրած նամակում, բանաստեղծը վերհիշում է 1893 թ. աշնան դեպքերը, որից պարզվում է, որ Մձ-ում տպագրելու համար Արասիսանյանը «Շիլլոնի կալանավորի» թարգմանությունը Թումանյանից խնդրել է դեռևս 1893 թ. աշնանը (տե՛ս ծփ Վ, 101): Սակայն Թումանյանը Բայրոնի պոեմը թարգմանել է 1895 թ. և նույն ժամանակ էլ գրել այս ձոնը:

## 1896

### ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

(«Քրիստոս հարյավ... երկինք գնաց...»)  
(էջ 154)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հավանաբար գրված է 1895 թ. վերջերին կամ 1896-ի սկզբներին:

Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տպ. 1896, 24 մարտի, № 12, էջ 181, այնուհետև՝ ծփ 1, 123:

Արտատպվում է Տպ.-ից:

«ԵՐԱՆԻ ՆԸՆՍՆ, ՈՎ ՈՐ ՔԸՆԾԱՌ...»  
(էջ 155, 461)

Գրված է 1895—1896 թթ.:

ԳԱԹ թֆ № 36 պահպան է մեկ ինքնագիր: Նույն տեղում, № 86 կամ մեկ ինքնագիր ևս, թվագրված՝ «1895—6»:

Առաջին անգամ, թիվնագրից, տպագրվել է ԳԵ, էջ 115, այնուհետև՝ ծփ 1, 488:

Տպագրվում է Բ ինքնագրից:

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԵՐԳԸ  
(«Կոռունկն երկնքում ճամփա կըհանի...»)  
(էջ 156, 461)

Գրված է 1896 թ.:

Ինքնագիրը շի պահպանվել:

ԳԱԹ թֆ № 1355 պահպան է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանն ուղղումներ է կատարել:

590

Առաջին անգամ տպագրվել է «Երկիր» օրաթերթում, 1906, 15 հոկտեմբերի, № 13, այնուհետև՝ ԲԲ, էջ 60 և 22, էջ 37—38, ապա՝ ծփ 1, 124:

Արտատպվում է ՀՀ-ից:

ԱՆԴԱՐՉ ԾԱՄՓՈՐԴՆԵՐ  
(«Իմ անցած կյանքն ու հին տարին...»)  
(էջ 157, 462)

Հավանաբար գրված է 1896 թ. վերջերին, թեև ԲԹ-ում և ԲՊ-ում թվագրված է «1897»:

Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ, «Դեպի Հավիտենականություն» վերնագրով, տպագրվել է Տպ. 1897, 1 հունվարի, № 1, էջ 2, այնուհետև, «Անդարձ ճամփորդներ» վերնագրով՝ ԲԹ, էջ 28, ԲԲ, էջ 43 և ԲՊ, էջ 19—20, ապա՝ ծփ 1, 126:

Արտատպվում է ԲՊ-ից:

## 1897

### ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(«Հա՛, կյանքում ես միշտ այսպես եմ եղել»)  
(էջ 158, 462)

Գրված է 1897 թ. դեկտեմբերի 14-ին:

ԳԱԹ թֆ № 38 պահպան է մեկ սեպար-ինքնագիր, ԳԱԹ ՓՎՖ № 413 պահպան է Մարիամ Վարդաղարյանի ալբոմը և դրա մեջ՝ մշակված տարրերակը:

Առաջին անգամ տպագրվել է ՄՊ, 1941, № 3, էջ 3, այնուհետև՝ ծփ 1, 467—468:

Տպագրվում է Բ ինքնագրից:

ՀԱՅԻ ԶԱՐՄԱՆՔԸ  
(«Մեր բնմի ծիծաղ, քսանինգ տարի...»)  
(էջ 160)

Գրված է 1897 թ. դեկտեմբերի 17-ին, նույն օրը կարդացվել է Թիֆլիսի Ազնվականական թատրոնում՝ դերասան Գևորգ Տեր-Դավթյանի

591

(1850—1934) բեմական գործունեության քսանհինգամյակին նվիրված  
Հորելլանական հանդսին:

Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1897, 21 դեկտեմբերի, № 49, էջ  
789, հետևյալ ժամութագրությամբ՝ «Կարգացվեց 17 դեկտեմբերի, 1897,  
թիֆ., Ազնվ. թատրոնում», այնուհետև՝ Եթ I, 248:

Արտատպվում է Տղ-ից:

## ՀԱՅԻ ՏՐՏՈՒՆՁԸ

(«Զարմանք բան է մեր բախտն, ախտեր...»)  
(էջ 162)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հավանաբար գրված է 1897,  
դեկտեմբերին, «Հայի զարմանքը» ուսանալորի հետ միասին:  
Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1898, 1 հունվարի, № 1, էջ  
այնուհետև՝ Եթ I, 250:

Արտատպվում է Տղ-ից: Ուղղել ենք 22-րդ տողի վլրիպակը՝ «Մանել դարձրել ենք հանել»:

Ուսանավորում Թումանյանը նկատի ունի առհասարակ հայ մտավորականության վիճակը, ընդ որում՝ նա կարիք շի ունեցել օրինակների համար հեռուն գնալու: Նրա մտերիմներից կատակերգակ Գ. Տեր-Դավթյանը, որի բեմական գործունեության 25-ամյակին է նվիրված «Հայի զարմանքը», ստիլված է եղել պաշտոնավարել բանկում, Պերճ Պոռշյանը՝ այդ տարիներին կրոնուառոյց է եղել ներսիսյան դպրոցում, ինքը՝ բանաստեղծը և զանազան պաշտոններ է վարել ընտանիքի ապրուստը հոգալու համար:

## ԵՐԿԱՐ ԳԻՇԵՐՆԵՐ

(«Տանջվում եմ անքուն գիշերն անկողնում...»)  
(էջ 164, 464)

Գրված է 1897 թ., ինչպես թվագրված է ԲԹ-ում:  
Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1898, № 9, էջ 153, այնուհետև՝  
վերամշակված՝ ԲԹ, էջ 30, ԲԹ, էջ 45, ապա՝ Եթ I, 127:  
Արտատպվում է ԲԹ-ից:

1898

ՏՐՏՈՒՆՁԸ ՍԱՂՄՈՍՆԵՐԻՑ

Ա.

«ՏԵՇ, ՄԻՒԶԵՎ ԵՐԲ ՄԵՐ ԱՉՔԵՐՈՅ ՔԵԶ ՄԸՆԱՆ...»  
(էջ 165, 464)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Հրատարակություններում  
անդիպում են երկու տարեթիվ՝ 1896 և 1898:

Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԲԹ, էջ 32, այնուհետև՝ ՀՀ, էջ 40,  
թվագրված՝ «1898», ԲԹ, էջ 25, թվագրված՝ «1896», ապա՝ Եթ I, 128:

Արտատպվում է ԲԹ-ից:

Այս բանաստեղծությունն, անշուշտ, արձագանք է 1890-ական թվականներին տեղի ունեցած արևմտահայության կոտորածների ու տառապանքների, որոնք խոր հետք են թողել հայրենասեր բանաստեղծի սրտում: Իր հոյզըն արտահայտելու համար նա դիմել է Աստվածաշնչին՝ օգտագործելով սաղմոսների ոգին, իսկ երրեմն նաև տառը: Օիրնակ՝ ԺԲ սաղմոսն սկսվում է այսպես: «Մինչև յե՛րը, Տէր, մոռանաս զիս իսպառ, մինչև յե՛րը դարձուանես զերսս քո յինէն: Մինչև յե՛րը դնեմ զիսորհուրդս յանձն իմ: և ցաւք սրտի իմոյ զաւուրս: Դժվար չէ նկատել այս նույն տրամադրությունը նաև Թումանյանի բանաստեղծության մեջ:

Բ

«ԱՍՏՎԱՌ, ԻՆՉՊԵՍ ՇՈՒԽ ՕՐԵՐՈՅ ԱՆՑԱՆ...»

(էջ 166, 464)

Գրված է 1898 թ.:

Ինքնագիրը շի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1898, 14 մարտի, № 14, էջ 339,  
այնուհետև՝ ԲԹ, էջ 31, ՀՀ, էջ 39, ԲԹ, էջ 26, ապա՝ Եթ I, 129:

Արտատպվում է ԲԹ-ից:

Մտեղծման շարժադիմների մասին տե՛ս նախորդ բանաստեղծության  
ժանութագրությունը:

ԳԱՐԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

(«Մի՞տո՞ է գալիս մեր քեֆն, ընկեր...»)  
(էջ 167, 465)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ № 33 պահպում է մեկ ինքնագիր, որը գրված է Տղ-ի տը-պագրությունից հետո, քանի որ բնագրի տակ փակագծում թումանյանը գրել է «Տարածու»: Սա ավելի մշակված է և կրծտված:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1898, № 15, էջ 305—306, այնու-հետո՝ Եթ 1, 131:

Տպագրվում է ինքնագրից:

ՍՈՐԱՅՑԱԾ ՎԱՐԴԵՐ  
(«Զեր վարդերը թողիք մեզ մոտ...»)  
(էջ 168)

Գրված է 1898 թ. մայիսի 22-ին: Ուղղված է Մարիամ Վարդաղար-յանին:

ԳԱԹ ԹՖ № 41 պահպում է մեկ ինքնագիր, որը թանգարանին է նվիրել Մ. Վարդաղարյանը: Թվագրված է՝ «22 մայիսի 98»:

Առաջին անգամ տպագրվել է եղ, 1935, № 4, էջ 78, հրատարակչի հետեւալ ծանոթագրությամբ. «Հ. Թումանյանը շատ մոտ էր Ֆիլիպ Վարդաղարյանին, որ խոշոր դեր է խաղացել թանաստեղծի կյանքում: Վարդաղարյանի բույրը, Մարիամ Վարդաղարյանը (հետագայում Միքայելյան) մի անգամ հյուր է գնում Հ. Թումանյանին որոք թանկարանը, որ զորկ էր կահավորումից, բայց մեծ, լավ պարտեզ ուներ: Թանաստեղծն իր հյուրին նվիրում է մի փոնչ ծաղկի, որ երիտասարդ աղջկը մոռանում է վերցնել իր հետ: Հետեւալ օրը Հ. Թումանյանը ուղարկում է իր վաղեմի բարեկամունքն նրա մոռացված փոնչն այս թանաստեղծության հետ միասին»:

Պետք է ենթադրել, որ այս վարկածը պատմել է ինքը՝ Մ. Վարդաղարյանը՝ թանաստեղծության ինքնագիրը թանգարանին նվիրելիս:

Այնուհետև տպագրվել է Եթ 1, 470:

Տպագրվում է ինքնագրից:

ՀԱՅԻ ՑԱՎԸ  
(«Հայը թեն շատ ցավ ունի...»)  
(էջ 169)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Նվեր «Մշակին»» ենթավերնագրով, տպագրվել է Տղ, 1898, 5 հունիսի, № 26, էջ 576, այնուհետև՝ Եթ 1, 252: Արտատպվում է Տղ-ից:

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ «ՄԱԶԱՆԴՐԱ»

(«Այսքան երազ, որ մենք հայերս...»)  
(էջ 171)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Նվեր իմ բարեկամ Դ. Աղայանցին» ենթավերնագրով, տպագրվել է Տղ, 1898, 12 հունիսի, № 27, էջ 505—506, այնուհետև՝ Եթ 1, 254—255:

Արտատպվում է Տղ-ից:

Աղայանին թումանյանը մտերմորեն կոչել է Ասլան-Ապեր, փոխա-դարձարար Դ. Աղայանը թումանյանին՝ Ասլան-Բալա: Երկու գրողների միմյանց այդ կոչումներով մեծաբերլու սովորությունը Մուշել Աղայանն իր հուշերում կապում է ժողովրդական մի գրուցի հետ, որը ժամանակին Աղայանը պատմել է Թումանյանին (տե՛ս ԹԺՀ, էջ 541—542):

Երազգիրը կամ երազահան կին կոչվում այն գրքերը, որոնց մեջ դասդասվում և իրր մեկնարանվում էին մարդկանց տեսած երազները: Գա-լիս են միշնադարից: Բավականաշափ տարածված են եղել նախքան հեղա-փոխությունը:

ԱՅՆ ՕՐԻՑ

(«Այն օրից, ինչ որ նրան թաղեցին»)  
(էջ 173, 465)

Գրված է 1898 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1898, 29 նոյեմբերի, № 46, էջ 1036, այնուհետև՝ ԲԲ, էջ 48, ապա՝ Եթ 1, 132:

Արտատպվում է ԲԲ-ից:

Գրության շարժառիթը Ա. Խնճիկյանը համարում է թանաստեղծի հար-տեր Թագելու մահը: Այդ մասին նա գրում է. «Մեր կարծիքով, հոր մահ-ցան վշտի ծանր տպագրության անդրադառներն են «Այն օրից, ինչ

որ նրան թաղեցին...» (1898) և «Խորհրդավոր մեռելը» (1900)<sup>1</sup> բանաստեղծությունները» (տե՛ս Ա. Խնձիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 49):

Մեր կարծիքով, համոզիլ չէ այս և հիշատակված «Խորհրդավոր մեռելը» բանաստեղծությունները կոնկրետ մարդու (բանաստեղծի հոր) մահվան հետ կապելը, մանավանդ, որ երկու դեպքում էլ բանաստեղծություններից չի երևում, թե խոսքը հասակն առած հարազատի կորստի մասին է:

### «ՏԻՍՈՒԻՐ ԳԻԾԵՐ, ՏՐՏՈՒՄ ԳԻԾԵՐ...» (էջ 174, 465)

Գրված է 1898 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԴԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը թվագրել է՝ «1898», 8-րդ տողից հետո լուսանցքում գրել՝ «Պատասխանը լրացնել», ապա չնշել գրածը:

ԹՀԱ գրադարանում (№ 119) պահպում է ԱՄ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը վերնագիրը դարձրել է «Տիսուր գիշեր» և առաջին երկու բառատողերը գծեկով անշատել մնացած բնագրից:

Առաջին անգամ, «Տիսուր գրուց» վերնագրով, տպագրվել է ԱՄ, էջ 16—18 (տալիս ենք որպես տարբերակ), այնուհետև, կրճատված և «Տիսուր գիշեր» վերնագրով՝ ԲԹ, էջ 33, նույնը, առանց վերնագրի՝ ԲԹ, էջ 49, ապա, «Տիսուր գիշեր» վերնագրով՝ եժ 1, 130:

Արտատպալում է ԲԲ-ից:

1899

### ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

(«—Հայրի՝կ, տե՛ս, տե՛ս, աստղը թուավ...»)  
(էջ 175)

Գրված է 1899 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1899, № 15, էջ 355, այնուհետև՝

եժ 1, էջ 256—258:

Արտատպալում է Տղ-ից:

<sup>1</sup> Ա. Խնձիկյանի գրքում վրիպակ է, ահեղութեան 1902 (խմբ.):

Նմանություն է Մ. Նալբանդյանի՝ Բերանժելից փոխադրած նույնանուն լանաստեղծության կամ, ինչպես նկատված է, ավելի շուտ պարողիա և՝ գրված նույն մոտիվներով (տե՛ս Էդ. Զերայշան, Զորս գագաթ, Երևան, 1982, էջ 78—79):

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՊԱՍԱՆ ՊԵՐԾ ՊՈՌԾՅԱՆՑԻՆ  
ԻՐ ՔԱՐԱՍԱՄՑԱԿԻՆ

(«Այնտեղ ծնված ու մեծացած...»)  
(էջ 178)

Գրված է 1899 թ., Պերճ Պոռշյանի գրական գործունեության 40-ամյակի առթիվ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Տղ, 1899, 16 մայիսի, № 17, էջ 409, այնուհետև՝ եժ 1, 133:

Արտատպալում է Տղ-ից:

5—6-րդ տողերում թումանյանը նկատի ունի Խաչատուր Արովյանին, որի «Վերը Հայաստանի» վեպի խոր ազգեցության տակ է Պոռշյանը գրել իր առաջին վեպը՝ «Սոս և Վարդիթերը»: Արովյանի՝ իր վրա թողած ազգեցության մասին Պոռշյանը գրում է ինքնակննսագրության մեջ (տե՛ս Պ. Պոռշյան, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 223), «Վերը Հայաստանին» և իմ «Սոս և Վարդիթերը» հողվածում (նույն տեղում, էջ 399—408), «Հուշիկներում» և այլուր:

ՕՐ. Մ.-ԻՆ

(«Նայում եմ քեզ... միտս է գալիս...»)  
(էջ 179)

Գրված է 1899 թ.:

ԴԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Մարիամ Վարդաղարյանի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը, վերնագրված՝ «Մաղիկներ»:

Առաջին անգամ, «ՕՐ. Մ.-ԻՆ» վերնագրով տպագրվել է «Թատրոն», 1899, № 2, էջ 88, այնուհետև՝ եժ 1, 475, ինքնագրից, «Մաղիկներ» վերնագրով:

Արտատպալում է «Թատրոնից»:

ԱՓՈՒՄ

(«Էսի՛ր, սիրոս երգ է ասոմ...»)  
(էջ 180)

Գրված է 1899 թ. սեպտեմբերին:

ԴԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Փ. Վարդաղարյանին ուղղված նամակը և դրա մեջ՝ ինքնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ Ե, 162, այնուհետև՝ ԵԺ Ի, 478:

Տպագրվում է ինքնագրից:

Թումանյանն այս բանաստեղծությունը գրել է Փ. Վարդապարյանի «Եսու իմ սիրտը» ոտանագորը կարդալուց հետո: «Թու նյութը կարդալուն պես,— գրում է նա Փ. Վարդապարյանին հղած նամակում,— թեև ոչ ուղղակի նյութի, բայց չի սրտի աշխարհից գրեցի այս երկու տունը»: Նույն տեղում տալիս է նաև բացատրությունը շորորդ տողի մասին. «Առաջին տան շորորդ տողը գուցե մութն է. միտքս այն է, թե— (ափսոսում է) ինչ որ (ուզում էր ու) չի պատահել, չի եղել—չկար, և ինչ որ եղել է, անցել /—կար»:

#### ԿՏԱԿ

(«Դե գրի, տեր հայր: «Յանուն հօր և որդոյ...»)  
(Եջ 181)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ԱՄ, էջ 11—15, այնուհետև՝  
259—261:

Արտատպվում է ԱՄ-ից:

«ԵՐԱԾԿ ԹԻԹԵՌ ԵՍ ԼԻՆԾԻ...»  
(Եջ 184)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Զեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1890-ական թվականներին:

ԳԱԹ ԹՖ № 47 պահպում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 115, ապա ԵԺ Ի, 483:

Տպագրվում է ինքնագրից:

#### ԿՈՌԱԾ ՑՆՈՐՔՆԵՐ

(«Հեծում է մըրրիկն իմ դալար Բովտում...»)  
(Եջ 185, 467)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Զեռագրից կարելի է ենթադրել որ գրված է 1890-ական թվականներին:

598

ԳԱԹ ԹՖ № 45 պահպում է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ԿԳ, 1938, № 3—4, էջ 132, այնուհետև՝  
ԵԺ Ի, 484:

Տպագրվում է ինքնագրից:

«ՄՈՒԽ ՈՒ ԽԱՎԱՐ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ...»  
(Եջ 186, 468)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Զեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1890-ական թվականներին:

ԳԱԹ ԹՖ № 48 պահպում են երկու ինքնագիր, որոնցից առաջինի վրա թումանյանը բազմաթիվ ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ, Բ ինքնագրից, տպագրվել է ԳԵ, էջ 114, այնուհետև՝  
ԵԺ Ի, 482:

Տպագրվում է Բ ինքնագրից:

1900

#### ՕՉԱԽԻ ԵՐԳԸ

(«Քեֆ անենք, տղերը—այս պետք է մնա»)  
(Եջ 187, 469)

Գրված է 1900 թ. մայիսի 30-ին, Բաքվում:

ԳԱԹ ԹՖ № 52 պահպում է մեկ ինքնագիր, որը եղել է Արսեն Բալայինի սեփականությունը, քանի որ վրան կա նրա անձնական կնիքը, բայց թանգարանին է նվիրել Արամ Նազարեթյանը:

Առաջին անգամ տպագրվել է ԿԳ, 1935, № 4, էջ 79, այնուհետև՝ ԵԺ  
Ի, 495:

Տպագրվում է ինքնագրից:

«Օշախը» եղել է Բաքի հայ մտավորականներից կազմված մի խմբակ, 1890-ական թվականներին: Թումանյանը մտերիմ է եղել «Օշախի» անդամների՝ Սեղրակ (Արսեն) Բալայանի, Մկրտիչ Բեզրայանի, Միմյն Հովկյանի, Սահակ Մատինյանի, Արամ Նազարեթյանի և Միսակ Օհանյանի հետ, որոնք բայց Օհանյանից և Բեզրայանից, եղել են Բաքի Մեսրոպյան և Հոփիսիմյան դպրոցների ուսուցիչներ: Բանաստեղծն «Օշախին» այցելել է, ըստ երևույթին, երկու անգամ՝ 1895 թ. գարնանը և 1900 թ. մայիսին: Այս ոտանագորը հորինված է երկրորդ այցելության ժամանակ:

Ինչպես վկայում է Ս. Հովկյանը, Թումանյանն ուրախ հումարով հորինված հանպատաստից ոտանագորներ է նվիրել «Օշախին» և դրա ան-

599

դամներին նաև առաջին այցի ժամանակ: Հովվանը մեզ է բերում դրանցից մեկի երկու տողը:

Այս ձեր «Օշախումը»,  
Զեր «Օշախի» պուճախումը... (ԹԺ, էջ 261):

ԳԱԹ ԹՖ № 45 ա պահպում է մի գծվարընթեռնելի սևագիր, որը երգիծական ոտանակորի էսքիզ է՝ դարձալ նվիրված «Օշախին»: Վերնագրված է «Օշախ» և սկսվում է հետեւալ տողերով:

Քշված կարիքի դաժան հողմերից,  
Մեր հայրենիքի հեռու կողմերից,  
Որը քաղաքից, որը գյուղից,  
Որը սարից, որը ձորից,  
Մի քանի տղերք բնկան Բաքու...

«Ի՞նչո՞ւ եդուս ի՞նչ ՍՈՐԱՅԱՐ...»  
(էջ 188, 469)

Գրված է 1900 թ.:  
Ինքնագրը չի պահպանվել:  
ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ թումանյանը կատարել է ուղղումներ և ջնջել վերջին քառատողը:  
Առաջին անգամ, «Իմ զարդը» վերնագրով, տպագրվել է ՄՃ, 1901, № 1, էջ 44, այնուհետև, «Ինչո՞ւ այդպիս» վերնագրով՝ ԲԹ, էջ 34—35, առանց վերնագրի՝ ԲԹ, էջ 50, ապա՝ ԵԺ I, 134:  
Տպագրվում է ԲԲ-ի հեղինակի ուղղած և կրմատած բնագիրը:

«Ի՞նչո՞ւ ՍՐԾԱԼԻ, Ի՞նչո՞ւ ԿԱԹՈՂԻՆ...»  
(էջ 189, 470)

Գրված է 1900 թ. օգոստոսին, Շուլավերում:  
ԳԱԹ ՓՎՓ № 413/8 պահպում է Փ. Վարդագարյանին ուղղված նամակը և դրա մեջ ինքնագրը:  
Առաջին անգամ տպագրվել է ԵԺ V, 176, այնուհետև՝ ԵԺ I, 496:  
Տպագրվում է ինքնագրից:  
Նամակում ոտանակորի գրության շարժափթների մասին թումանյանը զրում է. «Այժմ խոսնք քո բանաստեղծություններից: Ինձ շատ դուր է զալիս, որ այդպիսի նամակներ եմ ստանում քեզանից: Քո այդ մտորմունք-

ներն ու խոհերը, որոնք լավն են, կամ նյութ են դառնալու ինձ համար, կամ դրդելու են մի ուրիշ բանի... Այս, օրինակ, քո «Կուռքի» հետևանքը, նրա ներհակը սիրեցի ես է, որ այս է: Իսկական էլ կգրեմ երեխ և մի շարք այդպիսի բաներ կթխեմ, այժմ այս»:

1901

ԴԱՐԱՄԻՉԻ ԺԱՄԻՆ

(«Ինչպես երկու ամեն սարեր...»)  
(էջ 190, 470)

Գրված է 1901 թ. տարեմուտին:

ԳԱԹ ՓՎՓ № 413 պահպում է Մ. Վարդագարյանի ալբոմը և դրա մեջ ինքնագրը, թվագրված՝ «1901 տարեմուտին»: Հետո «Թ» տառի վերել թումանյանը գրել է «դ»:

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1933, № 6, այնուհետև՝ ԵԺ I, 499:

Տպագրվում է ինքնագրից:

ՈՐԻՍՏԵՄԻՆ

(«Սիրտ է հիվանդ, պեսք է բուժել...»)  
(էջ 191)

Գրված է 1901 թ. հունվարի 30-ին:

ԳԱԹ ԹՖ № 56 պահպում է մեկ ինքնագրի, թվագրված՝ «30/I, 901»: Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 117, այնուհետև՝ ԵԺ I, 501: Տպագրվում է ինքնագրից:

Ռուսական բժիշկ Արիստակս Զարգարյանը է (1864—1935), թումանյանի մտերմաներից մեկը, Փ. Վարդագարյանի մորաքրոջ որդին: Մ. Թումանյանի վկայությամբ բանաստեղծը Ռուսական մտերմացել է 1896 թ., երբ վերջինս վերագրածել է Սոսկվայից (տե՛ս ԹԺ, էջ 469—470): Ձալալ Տեր-Գրիգորյանը (Սալումյան) հիշում է, որ բժիշկը հաճախ այցել է «Վերնատան» հավաքությներին: «Կողմնակի այցելուներից, — գրում է նա, — «Վերնատանը ես մի քանի անգամ պատահել եմ Ստ. Լիսիցյանին և բժիշկ Արիստակս Զարգարյանին» (նույն տեղում, էջ 405): 1901 թ. Զարգարյանը բուժել է Թումանյանին:

## «ԿԳԱՆ, ԿԱՆՑՈՒԵՆ ԾԱՏԾԱՏ ԱՄԻՍ ՈՒ ՏԱՐԻ...»

(էջ 192)

Գրված է 1901 թ. սեպտեմբերին:

ԳԱԹ Գ. Զալիսուչանի փոնդ, № 6, պահպամ է մեկ ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է ծի Վ, 194, այնուհետև՝ ծի 1, 503; Տպագրվում է ինքնագրից:

Թումանյանն այս ոտանակորը գրել է Ռ. Պատկանյանի արձանի բաց-ման կապակցությամբ, որը տեղի է ունեցել 1901 թ. սեպտեմբերի 23-ին, նոր Նախշեանում: Օգտագործել է Ռ. Պատկանյանի «Հեռացել եմ իմ հայրենի աշխարհից...» բանաստեղծության մի տունը, ապա արտագրել լատինատառ-հայերեն և ուղարկել հեռագրատուն՝ առաքելու նոր Նախշեան, սակայն հաջորդ օրն իմացել է, որ հեռագրը չի առաքվել: Այդ մասին նա գրում է 1901 թ. հոկտեմբերի 5-ին Գ. Զալիսուչանին հղած նամակում, մեջ բերելով նաև քառատողը (տե՛ս ծի Վ, 194, տե՛ս նաև ծի Վ, 418—419):

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՀԻԾԱՏԱԿԻՆ  
(«Թեատրու վաղուց հասել եր աշուն...»)  
(էջ 193)

Գրված է 1901 թ. նոյեմբերին՝ Ղևոնդ Ալիշանի մահվան առթիվ:  
Խեքնագիրը լի պահպանվել:

Առաջին անգամ «Կազմած հ. Ալիշանի գրվածքներից» ենթավերանգրով, տպագրվել է Տպ, 1901, 18 նոյեմբերի, № 44, էջ 401, այնուհետև՝ ծի VI, 22—23:

Արտատպվում է Տպ-ից:

Թումանյանը Ղ. Ալիշանի ստեղծագործություններից փոխ է առել բառեր, տողեր ու առանձին հատվածներ: Օրինակ՝ նրա ոտանակորի 2—4 տողերը Ալիշանի «Հայոց աշխարհիկ» բանաստեղծության 50—52, 15—18-ը՝ նույն բանաստեղծության 77—79 տողերն են, իսկ 19—20-ը՝ «Մասիսու սարերն» բանաստեղծության 150—151 տողերը:

1902

ԱՍՏԾՈ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ  
(«Այժմ ես կրօմ, ասում է աստված...»)  
(էջ 195, 470)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՓ № 58 և № 98 պահպամ են երկու ինքնագիր: Առաջինը՝ թա-նարով արտագրած, 16 տող, վերնագրված՝ «Մարդաբություն»: Երկրոր-  
602

դր՝ գրված է մատիտով, 20 տող, վրան մշակման հետքեր, վերնագրված է «Աստծո սպառնալիքը» և ունի «Ասսովածաշունչ» ենթավերնագիրը: ԳԱԹ ԹՓ № 1 (լրացուցիչ) պահպամ է մեկ ինքնագիր ևս, հանգած Մ. Գեղրդյանի փոնդից, 20 տող, «Աստծո սպառնալիքը» վերնագրով: Հնարավոր է, որ Ա ինքնագիրը վերջին մշակումն է, սակայն այդ բանը պնդելու հիմքեր չունենք:

Առաջին անգամ, «Աստծո սպառնալիքը» վերնագրով, տպագրվել է «Արարատ» ամսագիր, 1902, № 1, էջ 12, այնուհետև՝ ծի 1, 143:

Արտատպվում է «Արարատից»:

Բանաստեղծությունը գրելիս Թումանյանն, անշուշտ, աշքի առաջ է ունեցել Մատթեոսի Ավետարանի հիմքում ամփոփված Քրիստոսի խոսքերն ընդունելու կապիրների և փարիսեցիների: Բայց ավետարանական թեման բանաստեղծը մշակել է նորովի՝ արձագանքելով իր ժամանակի սոցիա-լական սուր խնդիրներին:

Բանաստեղծության առաջին արձագանքներից մեկը նշանավոր հայացւու, «Արարատ» ամսագիրի խմբագիր Գալուստ Տեր-Մկրտչյանի 1902 թ. փետրվարի 17-ին թումանյանին հղած նամակն է, որտեղ, ի միջի ալլոց, կարդում էնք. «Արարատի» 1908 թվի հաստատված ծրագրով իրավունք լոնինք բանաստեղծությունները հրատարակել և ընդհանրապես ունենալ գրական բաժին: Բայց այս անգամ հաջողվեց Զեր գեղեցիկ ոտանակորը տպել կրւնական բաժնում: Հասուկ խնդրում եմ և այսուհետև շարունակել աշխատակցել, աշխատելով վերնագրերը կրոնական բաժնի հարմար մի բառ զնել» (բանաստեղծության մասին և նամակի ամբողջական բնագիրը տե՛ս ՈՒՀ 3, 62—65, Պ. Հակոբյանի «Հովհաննես թումանյանը և հայագետ Գ. Տեր-Մկրտչյանը» հողվածում):

«ԴՈՒ ՔՈ ԾԱՄՓԵՌ ԳԸՆՍ, ՔՈՒՅԹՈՒԿ...»

(էջ 196, 471)

Գրված է 1902 թ. ապրիլի 29-ին:

ԳԱԹ ԹՓ № 57 պահպամ է մեկ ինքնագիր, վերնագրված՝ «Ն.-ին. Բլարդված՝ «29 ապր.»:

Առաջին անգամ, «Դու քո ճամփան գընա...» վերնագրով, տպագրվել է 1903 թ., «Առաջ» օրացույց-հանդես, էջ 313, այնուհետև, մշակված, «Դու քո ճամփան» վերնագրով՝ թթ, էջ 38, առանց վերնագրի՝ թթ, էջ 54, թթ, էջ 27—28, ապա՝ ծի 1, 135.

Արտատպվում է թթ-ից:

Այս և «Պանդուխտ եմ, քուրիկ, մանուկ օրերից» բանաստեղծությունների առիթով նամակագրական զրոյց է տեղի ունեցել բանաստեղծի և Փ. Վարդագարյանի միջև: Վարդագարյանը, որ այդ ժամանակ գրում էր

603

«Վշտի ու թախծի երգիչ Հովհաննես Թումանյան» գրքույկը (լույս է տեսել 1905 թ. Թիֆլիսում), 1904 թ. աշնանը նամակներով մի քանի հարցեր է ուղել բանաստեղծին՝ նկատի ունենալով նրա այս երկու բանաստեղծությունները (այդ նամակներից մեզ է հասել երկրորդը՝ գրված օգոստոսի 13-ին): Թումանյանն այդ հարցերին պատճսխանիլ է օգոստոսի 7-ին և 18-ին գրած նամակներում (տե՛ս եժ V, 273—275 և 277—281): Արանցում նա վերլուծության է ենթակում իր երկու բանաստեղծությունները, կատարելով իր համար անսովոր պինֆաղատության փորձ: «Թու քո ճամփեն գրնա, բույրիկ» բանաստեղծության մասին նա Փ. Վարդագարյանին գրում է. «Կտանգավոր տեղ ես ընկել: Այս այն ոտանավլրներից է, որոնց մեկնությունը իրենցից շատ ու շատ է երկար, որոնք կենսագություն ունեն, պատմություն ունեն իրենց ետքը: Այսպիսի ոտանավլրների առղերում է, որ թաքնված է լինում բանաստեղծի հոգին» (էջ 273): Այնուհետև՝ նա մեկնաբանում է սիրո և «արտաքին աշխարհի» փոխհարաբերության իր ըմբռնումը, հայտնելով այն միտքը, թե իսկական բանաստեղծություններ կարող է ծնվել միայն անկեղծ ու խոր զգացումից և ոչ երբեք սոսկ այս կամ այն գաղափարի ազդեցությամբ: Ավելի մանրամասն տե՛ս եղ. Զբաշյան, Չորս գագաթ, էջ 52—56.

## ՏՐԾՈՒՅԶ

«Օրերս անպետուղ, տխոր, ձանձրալի...») (էջ 197, 472)

Գրված է 1902 թ. օգոստոսի առաջին օրերին, Բելի Կլուշում: ԳԱԹ Փ/Ֆ № 413/10 դ պահպամ է Թումանյանի նամակն այս ոտանավորի առաջին տարրերակի ինքնագրով:

Առաջին անգամ, մեզ չհասած ինքնագրից, տպագրվել է ՄՀ, 1904, № 9, էջ 76, այնուհետև՝ ԲԲ, էջ 20, ապա՝ եժ I, 138:

Արտատպվում է ԲԲ-ից:

Գրության ժամանակը պարզվում է հետեւյալ փաստերով. 1902 թ. օգոստոսի 6-ին, Փ. Վարդագարյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Անցյալ օրը մի ոտանավոր գրեցի, հետեւյալ նամակով կուղարկված» (տե՛ս եժ V, 207), իսկ հաջորդ նամակում՝ գրված օգոստոսի 10-ին, կարգում ենք. «Անցյալ անգամ իրաւուցած հաջորդ նամակով քեզ դրել իմ նոր գրած ոտանավորը: Կատարում եմ խոստումս և մեկի փոխարեն երկուան եմ դրկում» (նույն տեղում, 208): Եվ, իսկապես, ուղարկում է երկու բանաստեղծություն՝ «Ընկերիս», որը գրել է օգոստոսի 10-ին այս ոտանավորը, որ խոստացել էր նախորդ նամակում:

## ԸՆԿԵՐԻՄ

(«Իմ վեհ տենչերի, չըքնաղ վըշտերի...») (էջ 198, 472)

Գրված է 1902 թ. օգոստոսի 10-ին:

ԳԱԹ Փ/Ֆ № 413/10 դ պահպամ է Թումանյանի Փ. Վարդագարյանին ուղղած նամակը, որի մեջ ինքնագրից, վերնագրված՝ «Ֆ-ին», որ նշանակում է՝ Փ. Վարդագարյանին:

Առաջին անգամ տպագրվել է ԲԲ, էջ 37, այնուհետև՝ ԲԲ, էջ 58, ապա՝ եժ I, 137:

Արտատպվում է ԲԲ-ից:

Նամակում Թումանյանը, ի միջի այլոց, գրում է. «Այսօր քո նամակն, ասում եմ, նորից կարդացի և նրա տպագրության տակ գրեցի այս փոքրիկ փոքրիկ ոտանավորը»: Այնուհետև. «Գաղափարների ու երազների աշխարհն է, որ ես մի խոսքով անվանել եմ Վեր» (տե՛ս եժ V, 209):

«ՆԸՍՏԱԾ ԵՄ ՏԽՈՒՐ, ՄԵՆԱԿ ՄԻ ԺԱՅՈՒ...» (էջ 199)

Գրված է 1902 թ. սեպտեմբերի 22-ին:

ԹԸԱ պահպամ է Թումանյանի՝ 1902 թ. սեպտեմբերի 25-ին, Արամայումանից, Վարյա Խանդամիրյանին («Տագայում» Հ. Մանադյանի կի-նը) հղած նամակ և դրա մեջ՝ ինքնագրի:

Առաջին անգամ տպագրվել է ԳԲ, 1955, № 18, այնուհետև՝ եժ VI, 425—426:

Տպագրվում է ինքնագրից:

Նամակում, ոտանավորից առաջ Թումանյանը գրել է. «Սբանչելի, սբանչելի օրեր են: Զգիսեմ Դուք երբեմ աշնանը եղե՞լ եք բնության մեջ, անտառներում, սար ու ձորերում: Արամ-թումանի հովիտը լիքն է արևի շողերով, սոճի անտառների բուրմունքով, թոշուների աշնան-հրաժեշտի երգերով ու մի անուշ-թախծալի խաղաղությամբ: Ամբողջ օրը գրսանքներ եմ կատարում, թաղվում եմ անտառների խորքում, բարձրանում եմ սարերի գլուխները, նստում եմ ժայռերի զագաթներին ու մտրում, ցնորում, չնայելով Զեր խրատին: Հաճախ հենց այդ անտառներում, այդ ժայռերի վրա ոտանավորներ եմ գրում, մեծ մասամբ այսպիսի հիշատակարանի ոտանավորներ» (տե՛ս եժ VI, 425—426):

## ՀԱՅՈՑ ՎԻՇՏԸ

(«Հայոց վիշտը անհուն «Ի ծով»»)  
(Էջ 200, 473)

Գրված է 1902 թ. մինչև հոկտեմբերի վերջերը, թեև ՀՀ-ում թվագրված  
«1903»:

Ինքնագիրը չի պահպանվել:

Հայերեն առաջին անգամ տպագրվել է ԳՊ, 1908, № 1, էջ 48, այ-  
նուհետև՝ ԲԲ, էջ 59, 22, էջ 35, ապա՝ Եթ I, 146:

Արտատպում է ՀՀ-ից:

Այս բանաստեղծությունը, մինչև հայերեն հրատարակությունը, լույս  
է տեսել ուստերեն «Современные армянские поэты» ժողովածում,  
Մոսկվա, 1903, էջ 41 «С авторской рукописи» ծանոթագրությամբ:  
Թարգմանել է Ս. Գոլովաչևսկին: Գրաքննությունը գիրքը տպագրության է  
թույլատրել 1902 թ. նոյեմբերի 6-ին: Այստեղից հետևում է, որ մինչ այդ  
բանաստեղծությունը ոչ միայն գրված, այլև թարգմանված է եղել:

## ՄԵՐ ՈՒԽՏԸ

(«Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լուս...»)  
(Էջ 201, 473)

Գրված է 1902 թ. մինչև հոկտեմբերի վերջերը, թեև ՀՀ-ում թվա-  
գրված է՝ «1903» (տե՛ս «Հայոց վիշտը» բանաստեղծության ծանոթագրու-  
թյունը):

ԳԱԹ ԹՖ № 60 պահպում է մեկ ինքնագիր: Նույն տեղում, № 1355  
պահպում է նաև ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը  
15-րդ տողը՝ «Մեր աշքերը հառած միշտ վեր», դարձրել է՝ «Մեր աշքերը  
միշտ դեպի վեր»:

Հայերեն առաջին անգամ, «Մենք ուխտ ունենք» վերնագրով, տպա-  
գրվել է՝ «Կտակ» օրաթերթ, 1907, 25 նոյեմբերի, № 5, այնուհետև՝ ԲԲ,  
էջ 51, «Մեր աւխտը» վերնագրով՝ ՀՀ, էջ 7, ապա՝ Եթ I, 147:

Արտատպում է ՀՀ-ից:

Այս բանաստեղծությունը ևս, մինչև հայերեն հրատարակությունը,  
լույս է տեսել ուստերեն, «Современные армянские поэты» ժողովածու-  
մա, էջ 43—44, «Песни армян» վերնագրով, «С авторской рукописи»  
ծանոթագրությամբ: Թարգմանել է ՀԱ Ումանեցը: Հստ երկութին, թարգ-  
մանչի ձևոքին եղել է մի նախնական տարրերակ, որը 1907 թ. տպագ-  
րության հանձնելիս Թումանյանը հիմնական վերամշակման է ենթարկել:

(այս մասին մանրամասն տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964,  
№ 3, էջ 183—185, էդ. Զրբաշյանի «Բանասիրական ճշտումներ» հոդվածը):

«ՊԱՆԴՈՒԽՏԸ ԵՄ, ՔՈՒՑՐԻԿ, ՄԱՆՈՒԿ ՕՐԵՐԻՑ...»  
(Էջ 202, 473)

Գրված է 1902 թ., ինչպես թվագրված է ԲԹ-ում:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ № 1355 պահպում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը,  
որտեղ Թումանյանը թվագրել է՝ «1902»:

Առաջին անգամ տպագրվել է ԲԳԱ, 1903, գիրք Ա, էջ 131—132,  
վերնագրված՝ «Պանդուխտ եմ, քուցրիկ», այնուհետև, որոշ փոփոխություն-  
ներով՝ ԲԹ, էջ 40—41, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 55—56, ապա՝ Եթ I,  
139—140:

Արտատպում է ԲԹ-ից:

Տե՛ս նաև «Դու քո ճամփեն գընա, քուցրիկ» բանաստեղծության ծա-  
նոթագրությունը:

## ԽՈՌՀՈՒԱՎՈՐ ՄԵՌԵԼԸ

(«Ուր որ կանգնում, նըստում եմ ես...»)  
(Էջ 204, 473)

Գրված է 1902 թ., ինչպես թվագրված են ինքնագրերը:

ԳԱԹ ԹՖ № 59 պահպում է մեկ ինքնագիր: Մեկ այլ սեփակր-ինքնա-  
գիր պահպում է ԳԱԹ ԹՖ № 8 (լրացուցիչ):

Առաջին անգամ տպագրվել է «Թատրոն հանդես, 1905, № 2, էջ 64,  
այնուհետև՝ Եթ I, 142:

Տպագրվում է Ս ինքնագրից, քանի որ, ինչպես երևում է, դա արտա-  
գրված է «Թատրոնից» և ունի մշակման հետքեր:

## ՄԵՐ ՆԱԽՈՐԴՆԵՐԻՆ

(«Երանի՛ էր ձեզ, գոված երգիշնե՛ր...»)  
(Էջ 205)

Գրված է 1902 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է թթ., էջ 36, այնուհետև՝ թթ., էջ 52, թթ.,  
էջ 29—30, ապա՝ եթ 1, 141:  
Արտատպում է թթ.-ից:

## ՀԱՅՈՑ ԼԵՇՆԵՐՈՒՄ

(«Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր...»)  
(էջ 206, 474)

Հավանաբար գրված է 1902 թ.:

ԳԱԹ ԹՖ Խ 27 պահպում է մեկ ինքնագիր, որն, ըստ երեսյթին,  
ուշ ժամանակի արտագրություն է:

Առաջին անգամ տպագրվել է «ԵՐԿԻՐ» օրաթերթ, 1906, 24 դեկտեմբերի,  
№ 20, այնուհետև՝ թթ., էջ 61—62, թթ., էջ 31—32, ապա՝ եթ 1,  
144—145:

Արտատպում է թթ.-ից:

«Հին կոփվը պոեմի երկրորդ երգի («Ճամփին») նախերգանքն է,  
ինչպես վկայում է ինքը՝ բանաստեղծը: Հը, 1915, № 243 տպագրելով  
պոեմի առաջին երգը («Տանը»), նա տողատակի ծանրթագրության մեջ  
պատմում է, որ իր բնակարանում տեղի ունեցած հուլարկության ժամա-  
նակ մի շաբթ ձեռագրեր կորել են: «Մինը էս պոեմն է, վերնագիրը գրած  
ուեռնի կոփվը» և ջնջած: Հինգ տետրակով հետևալ հինգ երգերը. 1) Տանը  
(որ տպվում է «Հորիզոնն» էս Խո-ոմ): Սրա մշակած ձևը: Էս սեղագրու-  
թյուն է, որ աղջկս է գտել: 2) Ճամփին (որի նախերգանքը՝ «Հայոց  
լեռներում» տպված է):»:

Գրության ժամանակը պարզելու հիմնական կովանը դարձյալ հեղի-  
նակի վկայությունն է: 1902 թ. հունիսի 29-ին Փ. Վարդագարյանին հղած  
նամակում, նա գրել է. «Սակայն քեզ ասեմ, որ միենույն ժամանակ մի  
մեծ ազգային պոեմա եմ ձեռաւ, մի բան, որ վաղուց ներս փոթորկամ էր  
քառային դրության մեջ...» (տե՛ս եթ V, 202): Խոսքն այսուեղ «Հին կոփ-  
վը» պոեմի մասին է, որի մի մասն է այս բանաստեղծությունը:

«ԱՆ, ԽՆՉ ԼԱՎ ԵՆ ՍԱՐԻ ՎՃՐԱ...»  
(էջ 208, 474)

Գրված է 1901—1902 թթ.:

«Անուշ» պոեմի հատվածներից է: Հստ նախնական օրինակի այսպէս  
է սկսվում VII երգը: Հետագայում դորս է մնացել ընդհանուր հնքից:  
Այս հատվածի համար թումանյանը նաև երաժշտություն է հարինել:

608

ԳԱԹ ԹՖ Խ 5, «Անուշի» ձեռագրերի մեջ, պահպում են երկու ինք-  
նագրեր (Ա և Բ):

1939 թ. բանաստեղծի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ 1 և 11  
քառատողերը, նոտանիրի հետ միասին, տպագրվել են առանձին փոստային  
քարտերի վրա, վերնագրված՝ «ԱՌԻ, ի՞նչ լավ են...» և վերնագրի տակ՝  
գրված՝ «Եղուգ և եղանակ Հովհան»:

Տպագրվել է եթ 1, 136:

Տպագրվում է Բ ինքնագրից:

1903

## ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆԸ

(«Այստեղ, անցկոր այս աշխարհքուն...»)  
(էջ 209, 475)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Եթ 1-ում տպագրվել է որ-  
պես 1894 թ. գրված ստեղծագրություն: Սակայն գրության հանգա-  
մանքներից և ձեռագրից երկում է, որ պետք է գրված լինի 1903 թ. որ-  
պես «Դեպի Անհունը» պոեմի նախերգանք:

ԳԱԹ ԹՖ Խ 6 ա պահպում է «Դեպի Անհունը» պոեմի Մճ-ի կտրոնը  
(1903, № 11), որի վրա թումանյանն ուղղումներ է կատարել, ապա դրան  
կցել այս բան տողի ինքնագիրը, վերնագրված՝ «Նախերգանք»: Հետա-  
գայում «Նախերգանք» բառից վեր, որպես վերնագիր, գրել է՝ «Անմահու-  
թյանը»: Խենագրի վրա գիծ է քաշել և ինչ-որ պատճառներով չի զետեղել  
պոեմի հետագա հրատարակությունների մեջ (այս մասին մանրամասն  
տե՛ս Եղ. Զբաղյան, Թումանյանի պոեմները, էջ 203—205):

Առաջին անգամ տպագրվել է եթ 1, 455:

Տպագրվում է ինքնագրից:

1904

«ԱՅՍՏԵՂ ՄԻ ՎՍԵՄ ԽՈՐՀՈՒՐԴ Է ԱՊՐՈՒՄ...»  
(էջ 210, 475)

Բենիամին Ցրտատարյանը թումանյանի մասին կրած իր անտիպ հու-  
շերում նկարագրում է 1904 թ. թարգմանչաց տոնի հանդեսն Օշականում  
և վկայում. «Մեկ էլ կարծես հանկարծակի խորհրդավոր լուսիքն, շշուկ,

609

իրարանցում... Սեղանի կառավարիլը հայտարարում է, որ Օշական է ժամանել Հանրածանոթ բանաստեղծ Հովհ. Թումանյանը և որտեղ որ է կներկայանա մեր սեղանին»:

ԳԱԹ Թֆ Խ 1521 ա պահպում է Մ. Խրիմյանի դիմանկարով մի բացիկ, որի մի երեսին Թումանյանը գրել է. «Հարգելի օր. Հ. Մարկոսյանին, նախագահը», իսկ մյուս երեսին. «Անցած օրին օր չի հասնիլ 21 հունիսի 904, էջմիածին»: Այսինքն՝ հունիսի 21-ին Թումանյանն արգել գտնվել է էջմիածնում: Հավանաբար, Օշականից էջմիածին է մեկնել նախորդ օրը՝ հունիսի 19-ի Թարգմանչաց տոնի հանդիսություններին մասնակցելոց հետո: Այսուղից հետեւում է, որ ոտանափորը պիտի գրված լինի հունիսի 19-ին կամ 20-ին Օշականում:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1949, Խ 6, թվագրված՝ «1904 թ. Երևան», այնուհետև՝ եթ 1, 509: Այսուղի ծանոթագրության մեջ կարդաս ենք. «Գրել է 1904 թ. հունիսին Օշականում: Զեռագիրը չի պահպանվել: Տպագրվում է առաջին անգամ ուսուցիչ Մ. Մխիթարյանի ընդորինակությամբ»:

Անհայտ է, թե ինչ աղբյուրից է հրատարակվել ԳԹ-ում: Զհաշողվեց տպագրվել նաև, թե որտեղից է ընդօրինակել վերը հիշատակված ուսուցիչ Մ. Մխիթարյանը: Այդ «ընդօրինակությունը» ևս մեր ձեռքի տակ չի եղել:

Հստ երեսութին, եթ 1-ի կազմողները տեղյակ չեն եղել, որ ոտանափորն արդեն տպագրված է եղել մեկ տարի առաջ, թեև հնարավոր է նաև, որ գիրը տպագրության է հանձնվել ավելի վաղ, իսկ հետագայում կազմողները մոռացել են ճշտել ծանոթագրությունը:

ԳԹ-ում տպագրվածի 6-րդ տողը մեզ ավելի ճշգրիտ է թվում, ալդ պատճառով հիմք ենք ընդունել ԳԹ-ի բնագիրը:

### «ՄԵՆՔ ՓԱՌՔԵՐ ՈՒԽԵՆՔ ԹԱՂՎԱԾ ՀՈՂԻ ՏԱԿ...»

(Էջ 211)

Գրված է 1904 թ. հունիսի 24-ին, Անի այցելողների ալբոմում, որը պահպամ է ՀՍՍՀ Գետական կենտրոնական պատմական արխիվում՝ ֆ. 57, գ. 704, թ. 83:

Առաջին անգամ տպագրվել է եթ 1, 508:

Տպագրված է ինքնագրից:

1906

### ԱՂՎԵՍԸ

(«Աղվեսն նկավ բարձրը սարից...»)  
(Էջ 212)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն օգտվել է Կ. Կռատանյանցի «Նոր ժողովածով» Ա պրակի (Թիֆլիս, 1892) տարրերակից: Ժողովրդական երգի միջին հայերենը վեր է ածել ծամանակակից գրական-ժողովրդական լեզվի, փոխել բազմաթիվ բառեր ու տողեր, «ի վերայ աղուէսին» վերնագիրը դարձել «Աղվես»:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հսկ, 1906, Խ 12, էջ 405—406, «Միշնադարյան ժողովրդականից», ննթավերենագրով, այնուհետև՝ թթ., էջ 97—98, առանձին նկարագրող գրքույկ (Թիֆլիս, 1909), թթ., էջ 135—136, «Ժողովրդական երգեր» բաժնում, առանց ննթավերենագրի, ապա՝ եթ 1, 219—220:

Արտատպում է ԲԲ-ից:

1907

### ԿԱՐԱՎԻ ԳՈՎՔԸ

(«Արև բացվեց թուխ ամպերեն...»)  
(Էջ 214, 475)

Ակունքը ժողովրդական է: «Վանեցվոց երգ կաթավուա վերնագրով տպագրվել է 1850 թ. «Բազմավեպում» և 1860 թ. Մ. Մխիթարյանի «Քար հայկականուա»: Ժողովրդական երգի 6 բառատողից Թումանյանն ընտրել է 4-ը՝ ողբը թողելով 2-րդ և 6-րդ բառատողերը: Վաեր բարբարը վեր է ածել գրական-ժողովրդական լեզվի, փոխել մի շարք տողեր ու բառեր:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ Թֆ Խ 1355 պահպամ է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը բազմաթիվ ուղղուներ է արել, որոնք մեծ մասամբ մտել են հետագա հրատարակության մեր:

610

611

Առաջին անգամ, «Կաթավի երգ» վերնագրով և «Ժողովրդական» ենթավերնագրով, տպագրվել է Հակ, 1907, № 1, էջ 5, այնուհետև՝ ԲԲ, էջ 99—100, «Կաթավի գովը» վերնագրով և առանց ենթավերնագրի՝ ԲՊ, էջ 139—140, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ ծի 1, 151:

Արտատպավում է ԲՊ-ից:

### «ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՎԵՐՋ, ՏԻԵԶԵՐՈՒՅՆ ԱՆՀՈՒՆ...» (էջ 215, 476)

Գրված է 1907 թ. սկզբներին:

ԳԱԹ թի № 63 պահվում է մեկ ինքնագիր, վերնագրված՝ «Անվերջ ու անվերջ»:

ԳԱԹ թի № 1355 պահվում է ԲԲ-ի մեկ տպարանական առանձնատիպ, որի վրա Թումանյանը ուղղումներ է կատարել Այստեղ վերնագրված է՝ «Անվերջ ու անվերջ»: Շարվել է 65-րդ էջում, հետագայում տեղափոխվել 21-րդ էջ: Այս և նման դեպքերը նկատի ունենալով 1908 թ. օգոստոսին դստերը՝ Աշխեն Թումանյանին, հղած նամակում բանաստեղծը գրում է՝ «Իմ գրում բաներ էին փոխել: Տպագրությունը կանգնեցրի, նորից տպել եմ տալիս փոխած տեղերը» (տե՛ս ծի 5, 314):

Առաջին անգամ, «Անվերջ...» վերնագրով, տպագրվել է Հուշ., 1907, 16 փետրվարի, № 1, էջ 5, այնուհետև, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 21, 24, 1914, էջ 143, ապա՝ ծի 1, 148:

Արտատպավում է 29-ից:

### ԸՆՏՐՅԱԼԸ

#### «Հոգու սըրբազն կըրակով վառված...» (էջ 216, 476)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ թի № 1355 պահվում է ԲԲ-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ՝ Թումանյանը շնչել է 36-րդ տողի «Նետեց» բառը և լուսանցքում գրել «Թողեց»:

Առաջին անգամ, «Ազատության պատմությունից» ենթավերնագրով, տպագրվել է «Ժամանակ» օրաթերթ, Թիֆլիս, 1907, № 71, այնուհետև՝ ԲԲ, էջ 46—47, առանց ենթավերնագրի՝ ԲՊ, էջ 21—23, ապա՝ ծի 1, 149—150:

Արտատպավում է ԲՊ-ից:

ԱԾՆԱԿՆ ՎԵՐՋԸ

(«Սարի լանջին...»)  
(էջ 218)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է լ 1, 1907, էջ 24, այնուհետև՝ լ 11, 1908, էջ 19, ապա՝ ծի 1, 235:

Արտատպավում է լ 11-ից:

### ԿՈՒՑՐ ԱԾՈՒՂԸ

(«Կուլը աշուղը մի տան բակում...»)  
(էջ 219)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ թի № 1784 պահվում է 1908 թ. լ 11-ի հեղինակի սեփական օրինակը, որի վրա Թումանյանը ուղղումներ է կատարել, որոնք, սակայն, չեն մտել հաջորդ՝ 1909 թ. լ 11-ի մեջ:

Առաջին անգամ տպագրվել է լ 1, 1907, էջ 29, այնուհետև՝ լ 11, 1908, էջ 49, լ 11, 1909, էջ 22, ապա՝ ծի 1, 223:

Արտատպավում է 1909 թ. լ 11-ից:

ԱՄՊՆ ՈՒ ՍԱՐԸ

(«Ամպը եկավ նատեց սարին...»)  
(էջ 220, 477)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է լ 1, 1907, էջ 30, այնուհետև՝ լ 11, 1908, էջ 37 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում (լ 11, 1921, էջ 39 տպագրվել է մեկ ուրիշ տարրերակ), ապա՝ ծի 1, 238:

Արտատպավում է 1908 թ. լ 11-ից:

## ՀՈՒՍԲԱՑԻՆ

(«Ծուղրուղու...»)  
(էջ 221)

Ակունքը ժողովրդական է: Հավանաբար Թռմանյանն օգտվել է բահա-  
վոր աղբյուրից:  
Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է և 1, 1907, էջ 49, այնուհետև՝ և 1,  
1908, էջ 45, ապա՝ օժ 1, 221:  
Արտատպվում է 1908 թ. և 1-ից:

## ՓԻՍՈՆ

(«Փիսոն, փիսոն մլավան...»)  
(էջ 222)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Տ. Վարդանյանցի «Ժողովր-  
դական անգիր բանաստեղծություններ» ժողովածուի մեջ (Թիֆլիս, 1901),  
«Կատուն» վերնագրով:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է և 1, 1907, էջ 58, այնուհետև՝ և 11,  
1908, էջ 14 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություննե-  
րում, ապա՝ օժ 1, 229:  
Արտատպվում է և 1-ից:

## ՈՒՐԱԳ. ՈՒ ՍՂՈՑ

(«Մի՛ լինիր ուրագի պես...»)  
(էջ 223)

Ակունքը ժողովրդական է:  
Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է և 1, 1907, էջ 62, այնուհետև՝ և 11,  
1908, էջ 30 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություն-  
ներում, ապա՝ օժ 1, 223:  
Արտատպվում է և 1-ից:

## ԿԱՆԱՆՉ ԱԽՊԵՐ

(«Ե՛ կանանչ ախպեր»)  
(էջ 224)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է և 1, 1907, էջ 63, այնուհետև՝ և 11,  
1908, էջ 69, ապա՝ օժ 1, 234:  
Արտատպվում է և 1-ից:

## ԾՈՒՅՑ ԱՂՋԻԿԸ

(«Բանն ի՞նչ կանեմ» կեղտոտ է...»)  
(էջ 225)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է և 1, 1907, էջ 65, այնուհետև՝ և 11,  
1908, էջ 72, և 1, 1920, էջ 70, և 1, 1922, էջ 70, սրտեզից և արտա-  
տպվում է:

## ԿՈՌԻՆԿԱՆԵՐ

(«Կը՛ո, կը՛ո, կըռկըռան...»)  
(էջ 226)

Ակունքը ժողովրդական է: Հավանաբար Թռմանյանն օգտվել է բանա-  
վոր աղբյուրից:  
Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Խնդնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է և 1, 1907, էջ 66, այնուհետև՝ և 1, 1908,  
էջ 79, ապա՝ օժ 1, 226:  
Արտատպվում է 1908 թ. և 1-ից:

## ԱՐԱԳԻԼ

(«Արագի՛լ, բարով եկար...»)  
(էջ 227, 478)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է 1858 թ. «Բազմավեպում»,  
ապա՝ Մ. Միանսարյանի «Քենար հայկականում»: Ժողովրդական երգի ?

քառասողերից Թումանյանն ընտրել է երկուսը (1-ինը և 4-րդը), վերամշակել, ավելացրել ևս մի քառատող, ուրդ արագիլ» վերնագիրը դարձրել «Արագիլ»:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ Խ 64 պահպում է մեկ սևագիր-ինքնագիր:

ԹԸԱ պահպում է 1908 թ. և II-ի մի օրինակ, որի վրա Թումանյանն ուղղումներ է կատարել:

Առաջին անգամ տպագրվել է և I, 1907, էջ 68, այնուհետև՝ և II, 1908, էջ 68, և III, 1909, էջ 64, և II, 1921, էջ 84, ապա՝ եթ 1, 230:

Արտատպվում է 1909 թ., և II-ից, բանի որ 1921 թ. և II-ում կան վրիսակներ:

## ԳՈՒԹԱՆ

(«Լուսը լուսացավ...»)

(էջ 228, 479)

Ակունքը ժողովրդական է: Թումանյանն օգտվել է Յ. Լալայանի «Ճախախիք բուրմունք» (Թիֆլիս, 1892) և Անեք. Մխիթարյանցի «Տապեր և խաղեր» (Ալեքսանդրապոլ, 1900) ժողովածուների մեջ զետեղված հորովելներից:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ Խ 100 ժգ պահպում է մեկ սևագիր-ինքնագիր, առանց վերնագրի:

ԳԱԹ ԹՖ Խ 1360 պահպում է և II-ի հեղինակի սեփական օրինակը, որտեղ Թումանյանը շնչել է 17—18-րդ տողերը:

Առաջին անգամ տպագրվել է և I, 1907, էջ 70, այնուհետև՝ և II, 1908, էջ 78, և III, 1909, էջ 99, ապա՝ եթ 1, 240:

Արտատպվում է և I-ից:

## ԾԻԾԸ

(«Հուուին գնաց բանջարի...»)

(էջ 229)

Ակունքը ժողովրդական է: Հավանարար Թումանյանն օգտվել է բանագոր աղբյուրից:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Ծիտը» վերնագրով, տպագրվել է և I, 1907, էջ 71—72, այնուհետև, առանց 5—6 տողերի՝ և I, 1908, էջ 86, «Հուուին» վերնագրով՝ և I, 1920, էջ 75, ապա՝ եթ 1, 227:

Արտատպվում է 1920 թ. և I-ից: Պահել ենք նախորդ հրատարակությունների «Ծիտը» վերնագիրը, որովհետև Թումանյանն այն փոխել է՝ նկատի ունենալով, որ նույն դասագրքում ունի նաև «Ծիտը» վերնագրով հեքիաթ:

## ՈՒՂՈՒԿ

(«Գարունը եկավ ամպերով...»)

(էջ 230)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Տ. Վարդանյանցի «Ժողովրդական անդիր բանաստեղծություններ» ժողովածուում:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է և I, 1907, էջ 74—75, այնուհետև՝ և II, 1908, էջ 88 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ եթ 1, 231:

Արտատպվում է և I-ից:

## ԾՆԾՂՈՒԿՆԵՐ

(«Կոտ ու կես կորեկ ունեմ ցանելու համար...»)

(էջ 231)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Մանանայում» (Կ. Պոլիս, 1876): Մեկ այլ տարբերակ հրատարակվել է Կոմիտասի և Մ. Արեգյանի «Հագար ու մի խաղ» ժողովածուում (Բ Հիմյակ, Թիֆլիս, 1905), և այլն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է և I, 1907, էջ 78—79, այնուհետև՝ և II, 1908, էջ 114—115 և նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ եթ 1, 233:

Արտատպվում է և I-ից:

ԽՆ.ՈՑԻ

(«Հարի՛, Բարի՛, Խնոցի՛...»)  
(էջ 232)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում» (գիրք 11, 1904): Ժողովրդական երգի 10 տողերից Թումանյանն ընտրել է 4-ը (5-8 տողերը), մշակել, բանահավաքի «Խնոցու երգ» վերնագիրը՝ դարձրել «Խնոցի»:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Խնբնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է, լ. I, 1907, էջ 85, այնուհետև՝ լ. I, 1908,

էջ 91, ապա՝ եֆ 1, 225:

Արտատպում է 1908 թ. լ. I-ից:

1908

ԾԱԳՈՒՄՆ

(«Ելնում է ահա նազելի փառքով...»)  
(էջ 233, 479)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Խնբնագիրը չի պահպանվել:

ԴԱԹ ԹՖ № 50 պահպում է ուրիշի ձեռքով՝ արտագրված մի օրինակ: ԴԱԹ ԹՖ № 1355 պահպում է նաև ԲԲ-ի հեղինակի սեփական օրինույն տեղում, № 102 պահպում է անկանոն տեղում՝ մասնաւոր պահպանի կողմէն: Վարչության ուղարկել է պահպանի կողմէն՝ առաջարկություն կատարելու համար՝ գրանցություն գրել է հարցական և անվերնագիր պահպանավորը՝ վերնագրել և «Մագումն»:

Առաջին անգամ «Մագումը» վերնագրով տպագրվել է Հուշ., 1908, 18 մարտի, № 1, էջ 6, այնուհետև նույն տարին, առանց վերնագրի՝ ԲԲ, էջ 58, ապա՝ եֆ 1, 152:

Տպագրվում է ԲԲ-ի Թումանյանի ուղած բնագիրը:

ԾԱԽԱՐԱԿ

(«Մանի՛, մանի՛, ճախարակ...»)  
(էջ 234)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում» (գիրք 11): Ժողովրդական երգի 40 տողից Թումանյանն ընտր-

րել է 14-ը, «յուսւկ միմյանց, փոխել բարբառային լեզուն և «Ճախարակի երգ» վերնագիրը՝ ստեղծելով բոլորովին նոր բանաստեղծություն: Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Խնբնագիրը չի պահպանվել: Առաջին անգամ, «Այրի կնոջ երգը» վերնագրով, տպագրվել է լ. II, 1908, էջ 51, այնուհետև, «Ճախարակ» վերնագրով՝ լ. III, 1909, ԲՊ, էջ 133, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ եֆ 1, 154: Արտատպում է ԲՊ-ից:

ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ

(«Եկավ գարուն, եկան հավքեր...»)  
(էջ 235)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Ճամավ-Հոռով» գրքում (Գ. Պոլիս, 1884): Ժողովրդական երգի ունի 54 տող, սրբնակը Թումանյանն ընտրել է առաջին 9 տողերը:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Խնբնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է լ. II, 1908, էջ 85, այնուհետև՝ լ. III, 1909, էջ 103-104, լ. III, 1920, էջ 100, ապա՝ եֆ 1, 241: Արտատպում է 1920 թ. լ. III-ից:

ՔԱՄԻՒՆ

(«Ո՞ւ-ո՞ւ-ո՞ւ-ո՞ւ...»)  
(էջ 236)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Խնբնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է լ. I, 1908, էջ 87, այնուհետև՝ եֆ 1, 224:

Արտատպում է լ. I-ից:

ԱՐՏՈՒՏԻՒԿ

(«Արտուտիկ...»)  
(էջ 237)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Գ. Սրվանձտյանի «Ճամավ-Հոռով» գրքում:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

(«Հակը խոսեց երեք բերան...»)  
(էջ 240, 480)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ Ա 1794 պահպամ է 1908 թ. և 11-ի օրինակը, որտեղ, ըստ  
երկութիւն, ցանկանալով փոխել բանաստեղծության վերնագիրը, Թռամա-  
յանը լուսանցքում գրել է՝ «? Արեգակ»:

Առաջին անգամ տպագրվել է Հոկտեմբերի 1 1907, № 12, էջ 405, այնուհետև՝  
է 11, 1908, էջ 3 և է 11, 1909, էջ 3: Վերջինիս մեջ բանաստեղծը կը ո-  
ճատել է 9—12-րդ տողերը: Ապա տպագրվել է օֆ 1, 222:

Արտատպվում է Հոկտեմբերի 1 1908 թվականի վերաբեցված է  
դասագրքի պահանջմանը:

Ակունքը ժողովրդական է: Տավանարար Թումանյանն օդույվել է բա-  
նագոր աղբյուրներից (այս մասին տե՛ս «Կալի երգ» («Կալ արա, զնանք»))  
առանավորի ծանոթագրությունը):

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Բնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է է 11, 1908, էջ 110, այնուհետև՝ է 111,  
1909, էջ 145, ապա՝ օֆ 1, 239:

Արտատպվում է է 111-ից:

### ԴԺԱԼՐ ՏԱՐԻ

(«Վարի, գութան ջան, վարի'...»)  
(էջ 239)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է «Էմինյան ազգագրական հան-  
դեսում» (Հ. Զ. Մոսկվա—Վաղարշապատ, 1906): Ժողովրդական հորովե-  
լը 75 տող է: Դրանցից թումանյանն ընտրել է մի մասը, փոխել բար-  
րառային լեզուն, ավելացրել տողեր, հղելու ու ստեղծել բոլորովին նոր  
բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ ԹՖ Ա 1402 պահպամ է Հոկտեմբերի հեղինակի սեփական օրինակը,  
որտեղ Թումանյանը չնշել է «Ժողովրդականից» ենթավերնագիրը:

Առաջին անգամ տպագրվել է Հոկտեմբերի 1 1908, № 7, էջ 246, այնուհետև՝  
թղ, էջ 131, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ օֆ 1, 155:

Արտատպվում է թղ-ից:

«Ե՛շ, Ո՞վ Գիտի, ՄԵՆՔ ԱՊԻԿԱՐ...»  
(էջ 241)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ ԹՖ Ա 51 պահպամ է ուրիշի ձեռքով արտագրված մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է թղ, էջ 57, այնուհետև՝ օֆ 1, 153:  
Արտատպվում է թղ-ից:

1909

### ՎԱՅՐԵԶՔ

(«Քառասուն տարի բընած ճանապարհ...»)  
(էջ 242, 480)

Գրված է 1909 թ. փետրվարի 7-ին, հեղինակի ծննդյան 40-ամյակի  
օրը, Թիֆլիսի Մետեխի բանտում:

ԳԱԹ ԹՖ Ա 66 պահպամ է սեպակո-ինքնագիրը, թվագրված՝ «1909  
փետր. 7/20», հետագայում մատիտով կատարված ուղղումներով:

Առաջին անգամ, «Իմ ծննդյան քառասնամյակի առթիվ» ենթավեր-  
նագրով, տպագրվել է «Գործ» (թերթ), 1909, 5 ապրիլի, № 69, այնու-  
հետև՝ 1913, № 1, էջ 71, թղ, էջ 33—34, ապա՝ օֆ 1, 157:

Արտատպվում է թղ-ից:

Թռամանյանի բանտարկության և այս բանաստեղծության գրման շար-  
ժանիքների մասին խոսում են Ավ. Խաչակյանը, Լեոն, Աշխ.

քանը և ուրիշներ: Խսահակյանը գրում է. «1908 թվի դեկտեմբեր ամսին, ցարական ժանդարմերիան Օհաննեսին և ինձ ձերքակալեց և, զանազան հակապետական մեղադրանքով, վեց ամիս պահեց Թիֆլիսի Մետեխի բանտում: Կամերաներով դրացի էինք իրար: Բանտում լրացավ, փետրվար ամսին, Օհաննեսի 40-ամյակու: Այդ առիթով նա գրեց «Վայրէջք» բանաստեղծությունը: Մենք տիրության ու ուրախության խառն զգացմունքով տոնեցինք նրա տարեղարձը» (տե՛ս ԹԺՀ, էջ 19):

Ն. Թումանյանը հիշողությամբ մեջ է բերում հեղինակի խոսքերն այս քանաստեղծության մասին, ասված 1920 թ. մայիսի 19-ին. «Վայրէջքը» իմ ամենալավ բանաստեղծություններից է, շատ է լավը, Մետեխի բանտում եմ գրել ծննդյանս 40-ամյակի օրը» (տե՛ս Ն. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 94—95):

### ԳԱՐՍԱՆ ԱՌԱՎՈՏ

(«Բարի լուսի զանգեր զարկին...»)  
(էջ 243, 481)

Ակունքը ժողովրդական է: «Ամառ» վերնագրով տպագրվել է Աղեք. Միթիարյանցի «Տաղեր ու խաղերում»: Ժողովրդական երգն ունի յոթ բառատող, որոնցից Թումանյանն ընտրել է շորսը՝ վերադասավորել, փոխել տողեր ու բառեր, լեզուն դարձրել գրական-ժողովրդական, նախ վերնագրել «Գարուն», ապա՝ «Գարնան առավոտ» կերտելով բոլորովին նոր բանաստեղծություն:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:

ԳԱԹ թթ № 144 պահպան է «Հին կոփվը» պահմի մի հատվածի անագիր-ինքնագիրը, որտեղ Թումանյանը գրում է. «Առավոտը գյուղում երգում են», ապա մեջ է բերում այս բանաստեղծության առաջին բառատողը:

Առաջին անգամ, «Գարուն» վերնագրով, տպագրվել է Հակ, 1909, № 6—7, էջ 221: Նույն թվականին, «Գարուն առավոտ» վերնագրով՝ լ. III, էջ 96—97, այնուհետև, «Գարնան առավոտ» վերնագրով՝ ԲՊ, էջ 129—130, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ եթ 1, 156:

Արտատպվում է ԲՊ-ից:

### ԳԵՏԱԿԸ

(«—Ո՞ւր ես վազում...»)  
(էջ 244)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է լ. II, 1909, էջ 112, այնուհետև՝ նույն դասագրքի հետագա տարիների հրատարակություններում, ապա՝ եթ 1, 236—237:

Արտատպվում է լ. II-ից:

«ՆՈՐԻՑ ԵԿԱՆ ԵՆ ՀԱՎՔԵՐԸ...»  
(էջ 246, 481)

Ակունքը ժողովրդական է: «Տաղ շորս տարերաց՝ գարնան, ամռան, աշնան և ձմռան» վերնագրով տպագրվել է Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու», Գ պրակ, Թիֆլիս, 1896, էջ 16—18:

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Պատկանում է ժողովրդական երգերի թումանյանական մշակումների այն շարքին, որոնց մեծ մասը տպագրվել է 1900-ական թվականներին «Հումարերում»: Այստեղից կարելի է ենթագրել, որ գրված է նույն ժամանակ:

ԳԱԹ թթ № 87 պահպան են մեկ լրիվ և մեկ թերի ինքնագրեր:

Առաջին անգամ Ա ինքնագրից տպագրվել է ԳԵ, էջ 121—122, այնուհետև՝ եթ 1, 520—521:

Տպագրվում է և ինքնագրից:

### ԱՎԵՐԱԿՈՒՄ

(«Մողոր, մենակ ես շոշում եմ...»)  
(էջ 248)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է լ. IV, 1909, էջ 167—168, այնուհետև՝ եթ 1, 158—159:

Արտատպվում է լ. IV-ից:

### ՈՐ. Պ. Պ.-ԴՆ

(«Քույրիկ, այդքան որ աիրում ես...»)  
(էջ 250)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Զեռագրից կարելի է ենթագրել, որ գրված է 1900-ական թվականներին:

Նվիրված է Պ. Պոռշլանի դուստր Պերճանուշ Պոռշլանին:  
ԳԱԹ թֆ № 54 պահպում է մեկ ինքնագիր:  
Առաջին անգամ տպագրվել է օժ I, 518:  
Տպագրվում է ինքնագրից:

1910

PARODIA  
(«Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա»)  
(էջ 251, 482)

Դրված է 1910 թ., որպես պարողիա Հովհաննես Հովհաննիսյանի «Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա» բանաստեղծության: Հովհաննիսյանի բանաստեղծությունը գրված է 1880 թ., երբ բանաստեղծը ուսմանտիկ հայրենասիրությամբ տողորված պատանի էր: Թումանյանն իր պարողիան գրել է, երբ ոչ միայն հայոց մեծ բանաստեղծ էր, այլև հասարակական խոշոր գործիչ՝ խորապես մտահոգված հարազատ ժողովրդի դառն ճակատագրով: Մրանով պիտի բացատրել, որ նա զրեթե անփոփի մեջ բերելով Հովհաննիսյանի ոգեշունչ տողերը («Իմ հայրենիքը տեսե՞լ ես, ասա // Ուր ծոխ ծաղկում է մշտական գարուն» կամ «Եվ դու տեսե՞լ ես նորա գանձն անգին // Հարավի դուստրը...» և այլն), դրանց հակադրում է հայ ժողովրդի ծանր վիճակի պատկերները, այն, որ Հայոց աշխարհում են մերոնք ու ալլերը», որ «Հարավի դուստրը» խղճուկ, անլեզու և կեղտի մեջ կորած արարած է, որ «կովում, կեղեքում» են քրիստոն ու տերտերը, որ եկիսկոպոսի մատանին խիստ թանկարժեք է, իսկ «գազեթն» «ազատ միտք է վաճառում հային»:

ԳԱԹ թֆ № 94 պահպում է Վերջին երեք քառատողերի ինքնագիրը: Առաջին անգամ, առանց վերջին երկու քառատողերի, որոնք, ըստ երեսութին, արգելել է գրաքննությունը, տպագրվել է Հը, 1910, 18 ապրիլ, № 83: Ամբողջական բնագիրը հրատարակել է Երվանդ Շահազելը՝ ՆՈՒ, 1931, գիրք երկորդ, էջ 136, այնուհետև օժ I, 160—161:

Արտատպվում է ՆՈՒ-ից, որը համեմատել ենք ինքնագրի հետ:

ՍՈՒԽԱԿԻ ՎԻԾՏԸ

(«Մի օր տեսավ օտար թըռչում...»)  
(էջ 253, 482)

Ակունքը ժողովրդական է: Տպագրվել է Կոմիտասի և Մ. Աբեղյանի «Հազար ու մի խաղ» ժողովածուում (Բ հիսնյակ): Թումանյանը պահել է

Ժողովրդական երգի լեզվառնական տարրերը, կրծատել որոշ տողեր, դրանց տեղ ավելացրել նորերը, փոխել տողերի դասավորությունը, վերնագրել «Սովորակի վիշտը» ստեղծելով բոլորովին նոր բանաստեղծություն:

Դրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ, «Ժողովրդական» ենթավերնագրով, տպագրվել է Հակ, 1910, № 11, էջ 309, ստորագրված՝ «Կազմեց Հ. Թ.», այնուհետև, առանց ենթավերնագրի՝ թղ, էջ 137—138, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ օժ I, 162:

Արտատպվում է թղ-ից:

ԿԱՔԱՎԻ ՈՂԲԸ

(«Կըտուցը լիքը արին...»)  
(էջ 254, 482)

Ակունքը ժողովրդական երկու տարրեր են: Առաջինը տպագրվել է Մ. Մինասարյանի «Քնար հայկական» ժողովածուում, երկրորդը՝ «Մասսիսում» (1884, էջ 15): Թումանյանը միացրել է երկու երգերը, կրծատել, վերադասավորել մի շարք տողեր, փոխել բառեր, առաջին երգի միջնադարյան հայերենը և երկրորդի բարբառը վերածել գրական-ժողովրդական հայերենի, իր կողմից ավելացրել թ և Դ հատվածները՝ ստեղծելով բալորվին նոր բանաստեղծություն:

Դրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

ԳԱԹ թֆ № 1360 պահպում է Հակ-ի հեղինակի սեփական օրինակը, որի վրա թումանյանն ուղղումներ է կատարել, որոնք հիմնականում արտահայտվել են հետագա հրատարակության մեջ: Այստեղ վերնագրից վեր մատիտով գրել է: «Ակիզըր» «Կաքավի-գովքը»:

Առաջին անգամ տպագրվել է Հակ, 1910, № 12, էջ 141—142, «Ժողովրդականից» ենթավերնագրով, այնուհետև, առանց ենթավերնագրի՝ թղ, 141—144, «Ժողովրդական երգեր» բաժնում, ապա՝ օժ I, 166—167:

Արտատպվում է թղ-ից:

1911

ՄԱԽՈՒԿՆ ՈՒ ԶՈՒՐԸ  
(«Ամպոտ սարեն ուրախ ձենով...»)  
(էջ 257)

Ակունքը միջնադարյան ժողովրդական երգ է: Հրատարակվել է մի շարք ժողովածուներում՝ Գամառ Քարիպա «Ազգային երգարան» (Թիֆ-

լիս, 1856), Մ. Միանսարյանց, «Քնար Հայկական», Կ. Կոստանյանց, «Նոր ժողովածու» (Բ պրակ, Թիֆլիս, 1892) և այլն։ Հավանորեն Թումանյանն օգտագործել է «Նոր ժողովածու» տարրերակը։ Սրա 32 տողից ընտրել է առաջին 15-ը, ժողովրդական երգի միջին հայերենը վերածել գրական լեզվի, փոխել մեկ տող և մի քանի բառ, դուրս թողել հաճախի կրկնվող «Հայ» աւանարկությունը, միջնադարյան երգում երիտասարդ իմաստով օգտագործված «մանուկ» բառին տվել ժամանակակից իմաստը, դրանով հիմնովին փոխել բանաստեղծության բնույթը։

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է Հակ, 1911, № 1, էջ 20, այնուհետև՝ Եթ 1, 164։

Արտատպվում է Հակ-ից։

Այս ժողովրդական երգը մշակել է նաև XVII դարի բանաստեղծ Երեմյա Զելեպի Քյոմուրճանը։

## ԳԱՐԱԱՆ ՀՐԱՎԵՐ

(«Բացվում են գարնան...»)  
(էջ 258)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է Հակ, 1911, № 3, էջ 66—67, այնուհետև՝ Եթ 1, 163։

Արտատպվում է Հակ-ից։

1912

## ԵՐԿՈՒ ՀՈԳԻ

(«Մարդիկ կյամքում իրար համար...»)  
(էջ 259)

Գրված է 1912 թ., մինչև մարտի 20-ը, երբ Պետերբուրգում ավարտվել է, այսպես կոչված, «Դաշնակցության գործի» դատավարությունը, և Թումանյանն անպարտ է ճանաչվել։

ԳԱԲ թֆ № 262 պահպամ է մեկ ինքնագիր, իսկ ԹԸԱ՝ մեկ մեքենագիր օրինակ, որը փոքրինչ տարրերվում է ինքնագրից։ Այստեղ չկա ենթավերնագիրը և տողատակ ունի ծանոթագրություն։ «Պաշտպան և պր-

կորոր շպետք է նեղ մտքով հասկանալ», իսկ վերջում. «Պատասխան Գրուգիներգին, թի Դուք շատ եք ուրախ, շատ եք հանգիստ նայում Ձեր գործին»։

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1940, 30 հունվարի, № 18. այնուհետև՝ ՍԳ, 1943, № 3, էջ 89, ապա ՈհՀ 2, 244։

Տպագրվում է ինքնագրից։

Նվիրված է Օսկար Օսիպովիչ Գրուգենրեգին, որը նղել է բանաստեղծի գատապահտպանը, երբ 1911 թ. Թումանյանը կրկին ձերբակալվել է հականապարական գործունեության մեղադրանքով։ Գրուգիներգը (ծն. 1861 թ.) ժամանակի առաջադեմ գործիչներից մեկն է եղել, բավական մտերիմ Մ. Գորկու հետ։ Պահպանվել են 1906—1925 թթ. Մ. Գորկու՝ Գրուգիներգին գրած նամակները։ Այս մասին տես «Լիտերատուրայի գազետ», 1967, 19 ապրիլի, № 16, ի. Զիլբերցտեյնի «Рукописи Горького» հոդվածում։ Այստեղ, ի միջի ալլոց, մեջ է բերվում նաև Ե. Գ. Ստասովայի վկայությունն այն մասին, որ 1903 թ. Գրուգենրեգի բնակարանում տեղի է ունեցել երեկով, որտեղ Գորկին կարդացել է իր «Մարդը» արձակ պոեմը։

Բանաստեղծի դուստր Աշխենի վկայությամբ՝ Գրուգենրեգը Թումանյանի դեմ հարուցված մեղադրանքները համարել է բավականաշատ ծանր և ենթադրել է, թի նրան կարող են դատապարտել երկարաժամկետ բանտարկության։ Մինչդեռ բանաստեղծն իրեն անմեղ զգալով հանգիստ է սպասել դատավճռին (տե՛ս ԹԺՀ, էջ 639)։

1913

ԽՈՐՀՈՂԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎՐԱ  
(«Հողմերի առջն ցըրված, հալածված...»)  
(էջ 261)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը չի պահպանվել։

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1913, 6 հունվարի, № 4, այնուհետև, զգալի կրծատումներով և առանց վերնադի՛ Եթ 1, 168։

Արտատպվում է Հր-ից։

«ՏԱՂՈՎ ԵԿԱՎ»  
(էջ 263)

Գրված է 1913 թ. ապրիլի 5-ին։ Նույն օրը Թումանյան այս տոանավոր կարդացել է Հայ գրողների կովկասյան ընկերության նախաձեռնությամբ Սայաթ-Նովայի հրշատակին նվիրված երեկոյին։

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1913, 7 ապրիլի, № 77: Նույն ժամանակ փորագրվել է Սայաթ-Նովայի գերեզմանագարի վրա, որը դրված է Թիֆլիսի և Գորգ եկեղեցու բակում, պատի մոտ: Այնուհետև՝ Եթ 1, 169: Արտատպահում է Հր-ից:

«ԹԵՊԵՏԵՎ ԲԱԽՏԸ ՄԵԶ ՇԱՏ ՀԱՐՎԱԾԵՑ...»  
(էջ 264)

Հավանաբար, գրված է 1913 թ. հոկտեմբերի 18-ին, քանի որ նույն օրը Հայ գրողների ընկերության անունից հանդիս գալով հայ տառերի գյուտի 1500-ամյա և տպագրության 400-ամյա հորելիանի առթիվ ներսիսյան դպրոցում կազմակերպված երեկոյթին, Թումանյանը կարդացել է այս բանաստեղծությունը:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1913, 17 հոկտեմբերի, № 233, այնուհետև՝ Եթ 1, 170—171:

Արտատպահում է Հր-ից:

1914

ՔԱԶ ԿԻՎԻՎԸ

(«Ճախիններում, գետին մոտիկ...»)  
(էջ 266, 482)

Ալիունքը ժողովրդական է: «Հանդես թոշնոց» վերնագրով տպագրվել է Գ. Սրբանձոյանի «Համով-Հոտով» գրքում: Ժողովրդական երգն ունի 28 տոտն, որոնցից Թումանյանն ընտրել է 4-ը (1, 3, 11, 23), բարբառը վերածել գրական-ժողովրդական լեզվի, սկզբից ավելացրել երկու նոր տոտն, փոխել տողեր ու բառեր, վերնագրել «Քաշ Կիվիվ»՝ կերտելով միանգամայն նոր բանաստեղծություն:

Դրության թվականն ստույգ հայտնի չէ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հակ, 1914, № 2, էջ 37—38, «Ժողովրդականից» ենթավերնագրով, այնուհետև, առանց ենթավերնագրի՝ և 7, 1914, էջ 191—193, ապա՝ Եթ 1, 242—243:

Արտատպահում է և Վ-ից:

628

ՎԵՐՋԻՆ ՏԱԳՆԱՊՈ  
(էջ 268)

Գրված է 1914 թ. նոյեմբերի 3-ին, Բաքվում, ինչպես թվագրված են հրատարակությունները:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Արև, Բաքու, 1914, 5 նոյեմբերի, № 175, այնուհետև՝ Հր, 1914, № 250, ապանց 3-րդ և 5-րդ քառատողերի՝ Եթ 1, 175:

Արտատպահում է Հր-ից:

Մեկն է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ արևմտահայության օրստօրե վատթարացող վիճակի մասին թումանյանի գրած ոսանավորներից, որտեղ բանաստեղծը հայության փրկությունը տևանում է ազատագրական պայքարի մեջ, հյուսիսի մեծ հարևանի՝ ուսւածողությունը:

1915

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

(«Վաղոց թեն իմ հայացքը Անհայտին է ու հեռվում...»)  
(էջ 269, 482)

Գրված է 1915 թ. հունվարին:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հր հավելված, 1915, 8 փետրվարի, № 12, այնուհետև՝ ՆՀ, 1915, № 1, (լուս է տեսել օգոստոսին), էջ 3, 22, էջ 5—6, թի, էջ 35—36, ապա՝ Եթ 1, 179—180:

Արտատպահում է ԲԹ-ից:

«ԶԵՐԱՅ»

(«Արգո պարունակեր, հայրեր սրբազն...»)  
(էջ 271, 483)

Գրված է 1915 թ. մարտին, Թիֆլիսում, մի խնջույքի ժամանակ:

ԳԱԹ ԹՓ № 7 (լրացուցիչ) պահպան է մեկ ինքնագիր, թվագրված՝ 1915, III: ԹՀԱ պահպան է մեկ ինքնագիր ևս: Դրանցից բացի ԳԱԹ № 62 և № 72 պահպան են ուրիշի ձեռքով արտագրված երկու օրինակ:

629

Առաջին անգամ, ԳԱԹ № 62-ում պահվող ուրիշի ձեռքով արտադրված օրինակից, տպագրվել է ԽՀ, 1935, 23 մարտի, № 68, այնուհետև՝ Եթ I, 525:

Տպագրվում է Բ ինքնագրից:

### ՎԵՐՋԻՆ ՕՐԸ

(«Ծիրատի ափին դեմուդեմ եկած...»)  
(Է 272)

Գրված է 1915 թ., հավանաբար ապրիլի 24-ին տեղի ունեցած Դիլմանի ճակատամարտի ազդեցության տակ:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1915, 2 մայիսի, № 94: Նույն ժամանակ՝ «Արարատ» ամսագրի ապրիլ-մայիս միացյալ համարում: Այնուհետև՝ ՀՀ, էջ 50—53, որտեղից և արտատպվում է:

### «ՇՈՒՐՈՒ Է ԳԱՅԻՆ ԾԱՆՈ ՔԱՐԸ...»

(Է 275, 483)

Գրված է 1915 թ. հունիսի 14-ին, Վանում:

ԳԱԹ ԹՖ № 257 պահվում է մեկ ինքնագիր: Նույն տեղում, № 71՝ ուրիշի ձեռքով արտադրված մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է «Աշխատանք» (շաբաթաթերթ, Վան), 1915, 24 հունիսի, № 27, այնուհետև՝ Եթ I, 176:

Արտատպվում է «Աշխատանքից»:

Նկարագրելով Թումանյանի այցը Վան, Սողոմեն ջրաշջանը հիշում է տեղի երիտասարդ մատվորականների հետ բանաստեղծի հանդիպումը Սահմանադրության մասին հայտնում: «Այդ գիշեր, լսածի ու տեսածի ազդեցության տակ, նա գտավ ընդմիջման մի քանի րոպեներ, առանձնացավ ու գրեց երեք տնից բարկացած մի ոտանավոր, կարդաց նույն երեկոյին: Հիշում եմ այդ ոտանավորի մի տունը, որն այսպես էր:

Հե՞ր, զա՞ն տղերք, ուս տվեք ո՞ւա.

Միահամուռ, միաբան,

Հե՞ր, զա՞ն տղերք, ուժ տվեք, ո՞ւժ,

Քարը մոտ է զլորման» (տե՛ս ԹԺՀ, Է 679):

Քանի որ հավաքույթը տեղի է ունեցել հունիսի 18-ին, պետք է ենթադրել, որ Թումանյանն առանձնացել է ու թե ոտանավորը գրելու, այլ չորս որ առաջ գրածը նորից աշքի անցկացնելու համար:

### ԱՂԹԱՄԱՐԻ ԿՂԶՈՒՄ

(«Ըսրտիս խորքերեն...»)  
(Է 277)

Գրված է 1915 թ. հունիսի 16-ին, Աղթամար կղզում:

ԳԱԹ ԹՖ № 71 պահվում է ուրիշի ձեռքով արտադրված մի օրինակ, որի 23-րդ տողն ուղղել է Թումանյանը: Եղել է «Սերը որ մեռավ», դարձրել է՝ «Սիրալ որ մեռավ»:

Առաջին անգամ տպագրվել է «Աշխատանք» (շաբաթաթերթ, Վան), 1915, 24 հունիսի, № 27, այնուհետև՝ Եթ I, 177—178:

Արտատպվում է «Աշխատանքից»:

### ՀՊԳԵՀԱԽԳԻՍ

(«Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը Բին...»)  
(Է 279, 483)

Գրված է 1915 թ.:

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1915, 15 նոյեմբերի, № 258, այնուհետև՝ ՀՀ, էջ 48—49, ԲՊ, էջ 37—38, ապա՝ Եթ I, 185—186:

Արտատպվում է ԲՊ-ից:

### ԲԱՐՁՐԻՑ

(«Եմ բարի սրբութիւն մեծ խորինից...»)  
(Է 281)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: —

Ինքնագիրը չի պահպանվել:

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1915, 20 դեկտեմբերի, № 1, էջ 25—26, այնուհետև՝ Եթ I, 181—182:

Արտատպվում է Հր-ից:

## &lt;ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԻՆ&gt;

(«Մեզ մոտ եք եկալ ձյունի աշխարհից...»)  
(էջ 283)

Հավանաբար գրված է 1916 թ. հունվարի 12-ից 24-ը, երբ Վ. Թրյուսովը ժամանել է Թիֆլիս, ապա այցելել Երևան և դասախոսություններ կարդացել հայ բանաստեղծության մասին։ Թրյուսովի այցի ու դասախոսությունների կապակցությամբ Թումանյանը մամուլում մի քանի երեսին է ունեցել (տե՛ս Եֆ. IV, 330—336) և գրել ուստի բանաստեղծին նվիրված այս բանաստեղծությունը։

ԳԱԲ Թֆ № 74 պահպում է մեկ ինքնագիր։

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1940, № 18, այնուհետև՝ Եֆ. I, 526։

Տպագրվում է ինքնագրից։

## ԴԺՈՒՆՔԻ ՀԱՅՐԵՊ

(«Հո՞ւշ հասավ օրը՝ վերջին, ահավո՞ր...»)  
(էջ 284, 484)

Գրված է 1916 թ. փետրվարին, հայկական կոտորածների ծանր ազդեցության տակ։

ԹԲԱ պահպում է մեկ ինքնագիր-պատառիկ՝ «Արզումի անկումից հետո» վերնագրով։ Նույն տեղում, № 1266 պահպում է նաև Հր-ի Կտրոնը, որտեղ Թումանյանը փոխել է 12-րդ տողը։

Առաջին անգամ տպագրվել է Հր, 1916, 28 փետրվարի, № 46, այնուհետև, մասնակի կրճատումներով՝ Եֆ. I, 148։

Արտատպվում է Հր-ից, հեղինակի կատարած փոփոխությամբ։

Ինքնագիր-պատառիկի հաջորդ երեսին կա հեղինակի հետևյալ ծանոթյունը։ «Տղամարդկանց կոտորել են, զահել կանանց տարել—մնում են պառակ մայերը, որ հակում են դաշտում թափված իրենց որդիների գիտեաներին։ Մի-մի ճյուղ առած հեռու են քշում գիշերը գիշատիւ գաղաներին ու ցերեկը թոշուներին, որ չծվատեն, չուտեն նրանց մարմինները։»

Հր, 1916, № 47 այս բանաստեղծության մասին տպագրված է հետևյալ ծանոթությունը։ «Հորիզոնի անցյալ համարում (№ 46) Հ. Թում-ի բանաստեղծության տակ քաց է թղոնված դրվելիք ծանոթագրությունը, որ բանաստեղծության մեջ ակնարկված երեխայի արյունը մորը խմեցնելու գեպքը վերցին օրերի իրականությունից է առած։»

632

Ժամանակակիցներից մեկն իր հուշերում գրում է այս ոտանագորի ստեղծման շարժառիթների մասին. «Լավ հիշում եմ հետևյալ գեպքը... Երբ Մարտիրոս վարժապետը սկսեց պատմել, թե ինչպես մեկ հայ ստիպել էին խմել սեփական զավակի արյունը սուլթանի կենացը, Թումանյանը ելավ տեղից և դողդոց քայլերով մեկնեց նիստից։ Մի ամբողջ շարաթ նա հիվանդ էր։ Այս գեպքի աղեցության տակ է գրված նրա մի ոտանագորը, որից հիշողությանս մեջ մնացել են միայն վերջին երկու տողերը։

Եվ մարդն ամաշի շնից ու գելից,

Որ մարդ է ծնած իրեն նմանից...» (Վեմ, 1933, Ա, էջ 21)։

Հենվելով արխիվային փաստաթղթերի և հայ ու օտար պատմական աղբյուրների վրա, էրզրումում 1915 թ. հունիսից մինչև 1916 թ. փետրվար տեղի ունեցած աղետալի գեպքերի մասին բազմաթիվ փաստեր է բերում Զ. Կիրակոսյանը «Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը» (Երևան, 1965) աշխատության մեջ, որտեղ, ի միջի այլոց, նաև կարդում ենք. «Բուն էրզրումի 18—20 հազար հայ բնակչությունից... 1916 թվականի փետրվարին էրզրումը գրաված ուսուական զորամասերը բաղարում գտան թուրքական լաթաղանից փրկված 130—150 կանաց և երեխաների ու 5—6 տղամարդու» (էջ 296)։

## ԳԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(«Բարեկանի գետեզերին նըստել էին նրանք գերի...»)  
(էջ 285, 484)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

ԳԱԲ Թֆ № 75 պահպում է մեկ սեւագիր-ինքնագիր։

Առաջին անգամ, «Նմանություն» ենթավերնագրով, տպագրվել է Հմբ, 1916, 10 ապրիլի, № 16, էջ 507, այնուհետև՝ Եֆ. I, 183։

Արտատպվում է Հմբ-ից։

Նմանություն է Բայրոնի անվերնագիր (հայերեն թարգմանությամբ՝ «Գերության մեջ» վերնագրով) մի բանաստեղծության՝ «Հրեական մեղեդիներ» շարքից։ Ինչպես նկատել է բանասեր Մ. Նարյանը (տե՛ս ԳԹ, 1967, 20 հունվարի, № 4) երկու բանաստեղծներն էլ մշակել են աստվածաշնչային թեման՝ հիմք ունենալով Դավիթ Տեղ սաղմոսը։ Ահա այն.

«Ի գեսա բարելացոց անդ նստեաք և ի մէջ ուսեաց նոցա կախեցաք կտակարանս մեր։ Անդ հարցանէին գերիշք մեր զբանս օրհնութեան գերեվարի մեր, ստիպէին մեզ և ասէին. օրհնեցք մեզ յօրհնութիւնէ Սրօնի։ Խսկ զիա՞րդ օրհնեցուք զօրհնութիւնս Տեառն՝ յերկիր օտար եթե մոռա-

633

ցոյց զքեզ Երուսաղէմ, մոռասցի զիս աշ իմ: Կցնացի լեզու իմ ի քիմո  
իմ. թէ ոչ յիշեսցիք զքեզ, թէ ոչ նախ նուազեցից զքեզ Երուսաղէմ  
սկիզբն ուրախութեան իմու: Յիշեա Տէր զորդիսն եղօմայ՝ յատրու Երու-  
սաղէմի: Ոյք ասէին քակեցէք, քակեցէք մինչև ի հիմն հասուցէք: Դուստր  
բարիլացւոց թշուառական, երանի որ հատոյց ըգհատուցումն քո, զոր դու  
մեզ հատուցիր Երանի, որ կալաւ զմանկումն քո և էհար զքարի» (Գիրք  
Սալմոսաց, ձլջ):

Բայրոնն ավելի հարազատ է մնացել սկզբնաղբյուրին: Նրա բա-  
նաստեղծության մեջ զերի հրեաները շեն առնում տավիդներն ու շեն եր-  
գում, այլ պարզապես ցափով ու կարոտով հիշում են իրենց հայրենիքն ու  
լախի՝ երանի տալով այն օրվան, երբ աստված կպատժի բարելացիներին  
և իրենց կազատի անարդ գերությունից:

Թումանյանը, որ աստվածաշնչային թիման մշակել է՝ աշքի առաջ  
ունենալով հարազատ ժողովրդի վիճակը, այն էլ կոտորածներից հետո,  
այնուամենայնիվ, չի կորցրել հավատը հայության ապագայի նկատմամբ:  
Նրա բանաստեղծության մեջ զերիները երգում են: Նրանց երգը հայրե-  
նիքին հավատարիմ մնալու երգում է և վրեժի հրավեր: Այս երգից հետո  
զերեվարողները զարմանքով ու վախով նկատում են, որ անկարող են եղել  
սպանել զերյաների ողին:

Այս սաղմուը, որն իր հայրենիքից կտարված հրեա ժողովրդի դառն  
ճակատագրի արտահայտությունն է, համանչուն լինելով հայ ժողովրդի  
ազատագրական տենչերին, ստեղծագործական լիցը է տվել նաև Ռաֆֆուն  
և Ավ. Խսահակյանին: Ռաֆֆին 1856 թ. գրել է «Խսահակյելը Բարելոնում»  
բանաստեղծությունը (տե՛ս Ռաֆֆի, Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 44—  
45) և սաղմոսի խոսքերը դրել «Սամվել» վեպի հերոսներից մեկի՝ Հրեա  
երեց Զգիլայի բերանը: Խսահակյանը 1893 թ. Տպ. № 25 տպագրել է «Խս-  
րայելացիք Բարելոնում» բանաստեղծությունը, որը հետագայում զետեղել  
է «Բանաստեղծություններ», Բաքու, 1903 թ. ժողովածուի մեջ (էջ 133—  
134):

## ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

(«Եղիք խոսում են Վըրաստանի...»)  
(էջ 286)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ, «Հողվածի փոխարեն» ենթավերնագրով, տպագրվել է  
Հր., 1916, 18 սեպտեմբերի, № 208, այնուհետև՝ Եթ 1, 187—188:  
Արտատպում է Հր.-ից:

1917

«ԾՆՈՐՀԱՎՈՐ...»  
(էջ 288)

Դրված է 1917 թ. հունվարի 1-ին: Նվիրված է բանաստեղծի դուստր  
Թամար Թումանյանին:

ԹէԱ պահպում է Թամարի ալբոմը և դրա մեջ ինքնագիրը:  
Առաջին անգամ տպագրվել է ԲԵՀ, 1972, № 1, էջ 159—160, հրատա-  
րակել է Ա. Խնձիկյանը:

Տպագրվում է ինքնագրից:

## ԱՆՈՒԾԻ ԱԼԲՈՒՄԻՑ

(«Երազեցի շարունակ...»)  
(էջ 289, 485)

Դրված է 1917 թ. հունվարի 5-ին:

ԹէԱ պահպում է բանաստեղծի դուստր Անուշի ալբոմը և դրա մեջ  
սկսագիր-ինքնագիրը, որը չի վերնագրված, նույն տեղում բանաստեղծի  
դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակի:

Առաջին անգամ, «Անուշի ալբոմից» վերնագրով, տպագրվել է ԳՂ.  
1921, № 7, էջ 66, այնուհետև՝ Եթ 1, 190:

Արտատպում է ԳՂ.-ից:

## ԳՐԱԴԱՐԱՆԸ

(«Բազմած են շուրջըս նըրանք ամեն օր...»)  
(էջ 290, 485)

Գրված է 1917 թ. հունվարի 20-ին, ինչպես թվագրված են ինք-  
նագրերը:

ԳԱԹ ԹՖ № 216 պահպում է մեկ սկսագիր-ինքնագիր, որի վրա Թու-  
մանյանն ուղղումներ է կատարել: Նույն տեղում, № 76 պահպում է երկ-  
րորդ ինքնագիրը, մաքուր գրված:

Առաջին անգամ տպագրվել է ՆՈՒ, 1929, № 1, էջ 8, այնուհետև՝  
Եթ 1, 530:

Տպագրվում է Բ ինքնագրից:

1916 թ. օգոստոսի 24-ին, Բորժոմից Յոլակ Խանգաղյանին հղած նամակում. Թումանյանը գրել է Հետեւալ տողերը, որոնք կարելի է դիտել որպես այս բանաստեղծության առաջին մտահղացում. «Գրադարանն շատ եմ կարոտել: Լավ բան է: Թեև չեմ կարողանում կարդամ, ՝բայց շարունակ էնակն է թվում, թե էն բոլոր լավ-լավ գրքերը մեծ մարդիկ են, հենց իրենք հեղինակներն են չորս կողմուն շարված ու անվերջ զրույց ենք անում» (տե՛ս եժ V, 418):

### ԱՐՓԵՆԻԿԻՆ

(«Հիշում ես Բորժոմն, այժմնե՞ր, ժայռն՞...»)  
(էջ 291)

Գրված է 1917 թ. Հունվարի 31-ին: Նվիրված է բանաստեղծի դուստր Արփենիկին:

ԹՀԱ պահվում է մեկ ինքնագրից:  
Առաջին անգամ տպագրվել է նոհ, 1929, № 1, էջ 8, այնուհետև՝ եժ I,  
532:

Տպագրվում է ինքնագրից:

### ԱՐՓԵՆԻԿԻՆ ԱԼԲՈՒՄԻՑ

(«Դու շնօդիտե՞ս...»)  
(էջ 292, 486)

Գրված է 1917 թ. Գետրվարի 5-ին:

ԹՀԱ պահվում է բանաստեղծի դուստր Արփենիկի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագրուս, վերնագրված՝ «Դու շնօդիտե՞ս»:  
Առաջին անգամ, «Արփենիկի ալբոմից» վերնագրով, տպագրվել է ԳՂ.  
1921, № 7, էջ 66, այնուհետև, «Դու շնօդիտե՞ս» վերնագրով՝ եժ I, 191.  
Արտատպվում է ԳՂ-ից:

«ՄԱՅՐԸ ԵՆ ՕՐՆ ԱՍՈՒՄ ԵՐ ԻՆՉ...»  
(էջ 293)

Գրված է 1917 թ. Հունիսի 17-ին:

ԹՀԱ պահվում է բանաստեղծի դուստր Աշխենի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագրուս, նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ:

Առաջին անգամ տպագրվել է ՍԳ, 1943, № 3, էջ 89, այնուհետև՝ եժ 533:

Տպագրվում է ինքնագրից:

### ՆՎԱՐԴԻՆ ԱԼԲՈՒՄԻՑ

(«Էլուսապլասկի...»)  
(էջ 294, 486)

Գրված է 1917 թ. Հոկտեմբերի 27-ին:

ԹՀԱ պահվում է բանաստեղծի դուստր Նվարդի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագրուս, վերնագրված՝ «Իմ Արուսյակին», Հետեւալ ծանոթագրությամբ. ուստի աղջիկներից ամեն մեկը մի աստղ ընտրեց կամ համաստեղություն. Նվարդն էլ ընտրեց Վեներան, Լուսատղը, Արուսյակը»: Նույն տեղում բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ:

Առաջին անգամ, «Նվարդի ալբոմից» վերնագրով, տպագրվել է ԳՂ. 1921, № 7, էջ 66, այնուհետև՝ եժ I, 189:

Արտատպվում է ԳՂ-ից:

### «ԿԱՆՑՈՒԵՆ ՕՐԵՐՆ, ԱՆՈՒԾ ԶԱՆ...»

(էջ 295)

Գրված է 1917 թ. Նոյեմբերի 7-ին: Նվիրված է բանաստեղծի դուստր Անուշին:

ԹՀԱ պահվում է բանաստեղծի դուստր Անուշի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագրուս, նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է «Հոկտեմբեր—Նոյեմբեր» տարեգիրք, 1932, էջ 133, այնուհետև՝ եժ I, 534:

Տպագրվում է ինքնագրից:

### «ՔՈԾԱՔԱՐՈՒՄ ԵՍ ՎԱԶԵԼ ԵՄ...»

(էջ 296, 486)

Գրված է 1917 թ. Նոյեմբերի 20-ին:

ԹՀԱ պահվում է բանաստեղծի դուստր Անուշի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագրուս, նույն տեղում՝ բանաստեղծի դուստր Աշխենի արտագրած մեկ օրինակ:

Առաջին անգամ տպագրվել է ՆՈՒ, 1929, № 1, էջ 7, այնուհետև՝ օժ  
536:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ ՄԱՆ ԵԿԱ...»  
(էջ 297)

Գրված է 1917 թ. դեկտեմբերի 20-ին:  
ԹՀԱ պահպամ է բանաստեղծի դուստր Արքենիկի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագիրը:  
Առաջին անգամ տպագրվել է «Հոկտեմբեր—Նոյեմբեր» տարեգիրք, էջ  
133, այնուհետև՝ օժ 1, 537:  
Տպագրվում է ինքնագրից:

1918

ԻՄ ԵՐԳԸ

(«Գանձեր ունեմ անտաշ, անձեր...»)  
(էջ 298, 487)

Գրված է 1918 թ. հունվարի 5-ին:  
Ինքնագիրը չի պահպանվել:  
Առաջին անգամ տպագրվել է ԺԶ, 1918, 6 հոկտեմբերի, № 28, այ-  
նուհետև՝ թՊ, էջ 39-40, ապա՝ օժ 1, 192:  
Արտուր Շոլոմ է թՊ-ից:

ՏԻԿԻՆ ՆԻՄՅԱՆ ԳՈՐՈՂԵՑԿՈՒՆ

(«Հյուսիսի կողմից...»)  
(էջ 299, 487)

Գրված է 1918 թ. հունվարի 29-ին, «Փարվանա» պոեմի ռուսերեն  
հրատարակության շապիկի վրա: Նմիրված է ուստի բանաստեղծ Սերգեյ  
Գորոդեցկու կնոջը:

ԳԱԲ թվ № 80 պահպամ է մեջ ինքնագրի:  
Առաջին անգամ տպագրվել է օժ 1, 539-540:  
Տպագրվում է ինքնագրից:

638

ՊԱՏՐԱՆՔ

(«Վեր է կացել Էն սարում...»)  
(էջ 301)

Գրված է 1918 թ. սեպտեմբերի 9-ին:  
ԳԱԲ թվ № 78 պահպամ է մեջ ինքնագրի, թվագրված՝ «1918.  
սեպտ. 9»:

Առաջին անգամ տպագրվել է Տպ, 1919, № 5, էջ 38, նույն թվականի  
դեկտեմբերի 21-ին՝ «Բանակի օրը» միօրյա թերթում, այնուհետև՝ թՊ, էջ  
419, ապա՝ օժ 1, 193:

Արտատպվում է թՊ-ից:

Ս. ՆՈՒԽԵԴԻ ՊԱՏԿԵՐԻ ԱՐԱՋ

(«Խունկի բուրյան մըշուշներում...»)  
(էջ 302, 487)

Գրված է 1918 թ.:

ԹՀԱ պահպամ է մեջ սևագիր-ինքնագրի, որը, հավանաբար, առաջին  
գրառումն է, վերնագրված է՝ «Վրաստանի ոգին», նույն տեղում (№ 82)  
կան ևս երկու սևագիր-ինքնագրեր, որոնցից երկրորդը համեմատաբար  
ավելի է մոտ տպագրվածին: Թվագրված է՝ «1918», վերնագրված՝ «Ս. Նու-  
նեի պատկերի առաջ»:

Առաջին անգամ, «Ս. Նունեի պատկերի առաջ» վերնագրով, տպագրվել  
է «Նոր աշխատավոր» (թԵրթ), 1920, № 27, այնուհետև՝ օժ 1, 194-195:  
Այստեղ վերնագրված է՝ «Վրաստանի ոգին»:

Արտատպվում է «Նոր աշխատավորից»:

Խոսկով 1918 թ. դեպքերի մասին, Ս. Գորոգեցկին հիշում է. «Ալդ  
թվականին Հովհաննես Թումանյանը գրեց այնպիսի մի սբանչելի բանա-  
տեղծություն, ինչպիսին է «Վրաստանի ոգին»: Ապա մեջ է բերում բա-  
նաստեղծության առաջին վեց տողերը (տե՛ս թԺՀ, էջ 889):

1919

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԲԱՆԱՏԵՂԾՆԵՐԻՆ

(«Չէ՛, չի լըոել մեծ Շոթարի...»)  
(էջ 304)

Բայտ մեջ հասած միակ ինքնագրի, որը պահպամ է Վրաստանի գրա-  
կանության թանգարանում, գրված է 1919 թ. ապրիլի 16-ին: Սակայն Տի-

639

ցիան Տարիձեն իր հուշերում այս ոտանակորի գրության ժամանակը եւս է տառում 14 օրով: «Հիշում եմ,—գրում է նա,—իմ երեկոյին՝ 1919 թ. ապրիլի 2-ին, նա մի պոեմ կարդաց, որն ամրողովին նվիրված էր Վրաստանին և վրաց բանաստեղծներին» (ԹԺՀ, էջ 729): Անշուշտ, Տարիձեն խոսքը հենց այս բանաստեղծության մասին է: Մյուս կողմից, գծար թե վրաց բանաստեղծը շփոթեր իր մեծարման երեկոյի օրը: Այստեղից կարելի է ենթադրել, որ ոտանակորի առաջին գրառումը եղել է դեռևս ապրիլի 2-ին, իսկ մեզ հասած ինքնագիրը, որն, ի դեպ, մաքուր արտագրված է, պահպանել է վերջնական մշակման թվագրությունը:

ԳԱԹ ԹՖ № 83 պահպան է ինքնագիրի լուսապատճենը:

Առաջին անգամ տպագրվել է ոռուերեն, Ս. Գորոդեցիու թարգմանությամբ՝ «Դյեյրան» ժողովածուի մեջ, 1919, էջ 3—6:

Հայերեն առաջին անգամ տպագրվել է Պր, 1929, № 134, վրաց բանաստեղծ ի. Գրիշաշվիլու հետեւյալ ծանոթությամբ. «Հովհաննեսի վեհականի բանաստեղծներին» այս բանաստեղծությունը թարգմանվել է վրացերեն և տպվել ի շարս թումանյանի ուրիշ գործերի («Անուշ», «Մի կաթիլ մեղրը», «Գիբոր» և այլն) 1924 թվին: Հայերեն դեռ լույս մտեսել... Տեսնելով մեծ պոետի իդեաների կենսագործումը, անդրկողկայան ժողովուրդների կուլտուրական կապի ստեղծումը, անհրաժեշտ եմ համարում տպագրության տալ այս բանաստեղծությունը»:

Այսուհետև տպագրվել է Եթ I, 196—197:

Տպագրվում է ինքնագիրի լուսապատճենից:

## 1920

«ԶԼՎԱՐԹ ԵՐԱՄՈՎ ԴՈՒՔ ԵԿԱՔ ԻՆՉ ՄՈՏ...»  
(էջ 306, 489)

Գրված է 1920 թ.:

ԹՀԱ պահպան է հեղինակի դուստր Թամարի ալբոմը և դրա մեջ՝ ինքնագիրը: ԳԱԹ ԹՖ № 86 պահպան է մեկ այլ սկագիր-ինքնագիր:

Առաջին անգամ տպագրվել է «Նորք», 1924, № 4, էջ 63, այսուհետև՝ Եթ I, 548:

Տպագրվում է Ա ինքնագրից:

## ՏԻԵԶԵՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

(«Որ հայացք ես ինձ տղվել վերամբարձ...»)  
(էջ 307, 490)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Ձեռագրից կարելի է ենթադրել, որ գրված է 1919—1920 թթ.:

ԹՀԱ պահպան է մեկ ինքնագրի, հեղինակի ուղղամաքուլ, վերնագրված՝ «Մեծ ընթերցումը», ապա՝ «Տիեզերքի ընթերցումը»:  
Առաջին անգամ տպագրվել է ԳԵ, էջ 129, այսուհետև՝ Եթ I, 547: Տպագրվում է ինքնագրից:

## 1922

### ՍԻՐԻՈՒՍԻ ՀՐԱԺԵՑՏԸ

(«Սիրիոն, երկնից անեղ անցվոր...»)  
(էջ 308, 490)

Գրված է 1922 թ. հունիսին: Գրելու ազգակը եղել է 14-ամյա Վիկտոր Համբարձումյանի այցը բանաստեղծին 1922 թ. ամռանը: Զրույցի ժամանակ ապագա խոշորագույն գիտնականը Թումանյանին տեղեկություն: Ներ է համարդել Սիրիուսի մասին (տիւ Վ. Համբարձումյանի վկայությանը՝ «Սովետական Հայաստան», 1988, 18 սեպտեմբերի, № 227):

ԳԱԹ ԹՖ № 89 պահպան է մեկ ինքնագրի, որը գրված է առաջին հրատարակությունից հետո և ունի հեղինակային մշակման հետքեր: Մեկ այլ ինքնագրի պահպան է ԳԱԹ ԹՖ № 13 (լրացուցիչ), հանված է Ս. Գեղորգյանի ֆոնդից և ունի հետեւյալ հեղինակային ծանոթությունը: «Սիրիուսի նախավերջին տան տողն էսպես է՝ «Հըրածեշտի շողդ հավետ»: Զգիւմ ենթակա իմ արտագրել թե չէ, կասկածում եմ»:

ԹՀԱ պահպան է բանաստեղծի դուստր Սեղայի ալբոմը և դրա մեջ մի տարբերակ, վերնագրված՝ «Սեղային», թվագրված՝ «14 հունիսի, 1922»:

Առաջին անգամ տպագրվել է «Նորք», 1922, գիրք I, էջ 93—94, հեղինակի հետեւյալ ծանոթությամբ: «Սիրիուսը մեզանից հեռանում է անդադար օրական 2625000 վերսա արագությամբ: Նա արելից ավելի մեծ է ծավալով 144 անգամ և ավելի պայծառ 88 անգամ»: Այսուհետև տպագրվել է՝ Եթ I, 198—199:

Տպագրվում է Ա ինքնագրից:

### ՍԵՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՏՎԱԾՆԵՐ

## 1882

ՕՐՈՌՔ  
(էջ 313, 493)

Գրված է 1882 թ.:

ԳԱԹ ԹՖ № 11 պահպան է մեկ սկագիր-ինքնագրի, թվագրված՝ «1882 ամի» (13. տարեկան):

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ 1, 428—429: Այսուղի թույլ են տըր-ված վրիպակներ՝ 35-րդ տողն ունի «Թափառում են սար ու ձոր», իսկ 39-րդ տողը՝ «Որ քո գժբախտ հայ ազգիդ տեսքը»:

Տպագրվում է ինքնագրից:

## 1883

### ՀԱՅ ՎԱԾԱՌԱԿԱՆ

(«Հայ վաճառական, հայ վաճառական...»)  
(Էջ 315, 493)

Գրված է 1883 թ.:

ԳԱՅԹ ԹՖ Խ 11 պահվում է մեկ սևագիր-ինքնագիր, թվագրված՝ «1883 ամի, Տփխիս»: Թվագրության կողեին, սակայն, թումանյանը գրել է. «Դեռ Քիֆիս չէի եկած, որ Զալալօղլի այս ոտք <անազորը> կարդացի»:

Առաջին անգամ տպագրվել է ԵԺ 1, 430—431:

Տպագրվում է ինքնագրից:

«ԵՐԻ ՈՐ ԿԱՆՑԱՒԻ ԶՄԵՐԻՆ ՍԱՍՏԻԿ...»  
(Էջ 317)

Գրված է 1883 թ.:

ԳԱՅԹ ԹՖ Խ 2 պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «83 թ.»: Առաջին անգամ, ոչ լրիվ (1—12 տողերը) տպագրվել է ԵԺ 1, 432:

Տպագրվում է ինքնագրից:

Բանաստեղծությունը գրելիս պատահի Թումանյանը եղել է Ն. Ռուսին-յանի «Կիլիկիա» տարածված երգի ազդեցության տակ: Եգոր Անդրեասյանը, որը Զալալօղլու գպրոցում եղել է Թումանյանի գառընկերը, վկայում է. «Թումանյանի սիրած երգերից մեկն էլ Ռուսինյանի «Կիլիկիան» էր» (տե՛ս ԹԺՀ, էջ 218):

## 1884

«ԻՆՉՈՐԻ ԵՍ ՏԽՈՒՐ...»  
(Էջ 318)

Գրված է 1884 թ.:

ԳԱՅԹ ԹՖ Խ 12 պահվում է մեկ ինքնագիր, որի տակ Թումանյանը գրել է «Դաստանն»:

642

Առաջին անգամ մի հատված տպադրվել է ԳԹ, 1948, № 11: Հրատա-րակել է Ա. Խնձրիկյանը: Ամբողջական բնագիրը տպագրվել է ԵԺ 1, 432: Տպագրվում է, ինքնագրից:

## 1885

### «ԹՈՂ ՓԶԵ ՔԱՄԻՒ» ԵՐԿԻ ԵՂԱՆԱԿԱՎ

(«Լուսնկա գիշեր...»)  
(Էջ 320, 494)

Գրված է 1885 թ. հոկտեմբերի 14-ին: Նվիրված է Հայ աղաստագրական շարժման առաջին գործիչներից մեկին՝ Վարդան (Ալեքսանդր) Գրիգորի Գոլովանին (1867—1889):

ԳԱՅԹ ԹՖ Խ 13 պահվում է մեկ ինքնագիր, թվագրված՝ «1885 10/14», որի տակ թումանյանը գրել է՝ «Դուռևս սևագրություն», Խնձրագիր վրա ուրիշի ձեռքով գրված է՝ «Հով. Թումանյանի բանաստ.՝ նվիրված Վարդա-նին»: Նույն ձեռքորով կան նաև երեք քառասորդ, որոնցից երկուսն օգտագործված են առաջին հրատարակության և ԵԺ VI-ի մեջ:

Ահա այդ քառասորզերը.

Լինեմ ամեն ժամ  
Հրամայում է նա  
Կատարել երդում  
Թևկուու ամեն րան (ԵԺ VI, տող 73—76):

Արև տեսնելիս  
Առավոտյան ժամին  
Թիզ կյանք է խնդրում,  
Թիզ միտն է բերում (ԵԺ VI, տող 117—120):

Ասում է՝ այն աստղը  
է իմ որդունը,  
Այնպես փայլում է,  
Որպես նրա աշեր (ԵԺ VI-ում չկա):

Այս հավելումների մասին ԵԺ VI, էջ 439 կարդում ենք. ովարդան Գոլովյանի ըրոշ՝ Դարիա Թաղնոսյանի բանագոր վկայությամբ, հիշողությամբ, ավելացրել է իր Հայրը՝ Գրիգոր Գոլովյանը»:

Առաջին անգամ տպագրվել է 1924 թ., «Նորք» հանդես, № 4, էջ 359—361, ավելուետն՝ ԵԺ VI, 11—18:

Տպագրվում է ինքնագրից:  
«Թող փշե քամին» երգի խոսքերը ըստ Ռ. Պատկանյանի («Հայոց բանաստեղծության»), երաժշտությունը՝ ժողովրդական է:

1886

### ՆԱՀԱՊԵՏԻ ՈՂԲԸ

(«Այս ի՞նչ ձայն է գալիս բարձրից, այս ի՞նչ կոռոց է տխուր...»)  
(էջ 325, 494)

Գրված է 1886 թ.

ԳԱԹ ԹՖ № 14 պահվում է մեկ ինքնագիր, որի վրա Թումանյանը՝ կատարել է մեկ ուղղում և թվագրել՝ «86»։ Սակայն նույն տեղում գրել է նաև՝ «1887 թ.»։

Առաջին անգամ տպագրվել է օժ 1, 434—435։

Տպագրվում է ինքնագրից։

Ոտանակորն արձագանքում է հայ ժողովրդի արևմտյան հատվածի ծանր վիճակին։ Գրված է Զ. Ալիշանի (Նահապետի) հայրենասիրական երգերի խոր ազդեցությամբ։ Այդ երգերից Թումանյանը նաև փոխ է առել սուանձին բանաստեղծական ոճեր ու բառեր։

1887

### «...ԵՍ ՈՒԶՈՒՄ ԵՄ ՍԵՐ ԵՐԳԵԼ»

(էջ 328)

Գրված է 1887 թ. վերջերին։

ԹՀԱ պահվում է 1890 թ. սեպտեմբերի 23-ից 25-ը բանաստեղծի նկատմամբ նկատմակը, որտեղ կա այս երեք քառատողի ինքնագիրը հետեւյալ ծանոթագրությամբ։ «...Առավոտյան թղթերին մեջ պատահմամբ գտա 87 թվականի վերջերին գրած մի բանաստեղծություն, որը գրել եմ քեզ վերա... Այնքան ինձ դյուր եկավ, որ հետս տարա կոնստոր, շգիտեմ այնտեղ մնաց, թե հետս բերեցի, վերջապես կորցրել եմ, վազը կորոնեմ կոնստորում, բայց ահա նրա վերջին տները»։

Նույնը, Գամանման ծանոթագրությամբ, կա նաև 1890 թ. սեպտեմբերի 28-ին Ան. Արովյանին հղած նամակում (տե՛ս օժ Վ, 25—26)։

644

Առաջին անգամ տպագրվել է օժ Վ, 26։  
Տպագրվում է ինքնագրից։

1890

### «ՓԱՅՑՈՒՆ ԱՍՏՂԻԿ ԵՐԿՆԱԳԻՏԱԿ...» (էջ 329)

Գրված է 1890 թ. մայիսի 8-ին։

ԳԱԹ ԹՖ № 266 պահվում է 1890 թ. մայիսի 8-ին Թումանյանի։  
Ան. Արովյանին հղած նամակը և դրա մեջ ինքնագիրը։  
Առաջին անգամ տպագրվել է օժ Վ, 13։  
Տպագրվում է ինքնագրից։

### «ՈՇ, ԹՈՂ, ՍԵՐ ԻՄ, ՀՐԱՓԵՏՈՒՐ...» (էջ 330)

Գրված է 1890 թ. հունիսի 6-ին։

ԳԱԹ ԹՖ № 268 պահվում է բանաստեղծի՝ 1890 թ. հունիսի 6-ին  
Ան. Արովյանին հղած նամակը և դրա մեջ ինքնագիրը։  
Առաջին անգամ տպագրվել է օժ Վ, 18։  
Տպագրվում է ինքնագրից։

### «ԱՅՍՏԵՂ ԱՀԱ ԻՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ...» (էջ 331, 494)

Գրված է 1890 թ. հունիսին։

ԳԱԹ ԹՖ № 270 պահվում է մեկ սեագիր-ինքնագիր։  
Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ 1, էջ 291—297։ Հրատարակել է Պ. Սիմոնյանը հետեւյալ ծանոթագրությամբ։ «Այս գրվածքը բովանդակում է Թիֆլիսի Կոնստորություն Թումանյանի պաշտոնավարության հետ կապված սհամ ու անհրապույտ պարտականությունների նկարագրությունները։ Հոգեկան ապրումների անմիջական արտահայտությունը։ Ուտանավորնամակը հիշեցնում է «Պուտու ու Մուսան» պուեմը։ Շատ հավանական է, որ սա հենց այդ պուեմի սկզբնական շրջանի սեագիր մտորումներն են, սեագիր հատակածներ, որ հետագայում հեղինակը մշակել է»։ Նույն տեղում

645

ոտանավորի կրության ժամանակի մասին ասվում է: «Ոտանավոր-նամակը գրված է, Թումանյանի թիֆլիսի հոգնոր Կոնսիստորիայում գրազրի պաշտոն վարելու շրջանում, այսինքն՝ 1890 թվականի հունիսին, ինչպես երևում է Ա. Արովյանին 1890 թվականի օգոստոսի 27-ին գրած նամակից, որտեղ ասված է: «Քեզ վրա անցյալ ամսին մի ոտանավոր-նամակ էի գրել, բայց ասված է: «Քեզ վրա անցյալ ամսին մի ոտանավոր-նամակ էի գրել, բայց ասված է, որ գրես դուք, պատովել է, կարտազիմ կուղարկեմ» (տե՛ս Հուն 1, 396: Թումանյանի նամակը տե՛ս ծի 20-23):

Տպագրվում է ինքնագրից:

### «ՍԱ ՄԻ ՏԿԵՏ, ԱՂՔԱՏ ՄԱՐԴ ԷՌ...» (էջ 337, 496)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ: Գատելով ձեռագրից ու բովանդակությունից, պետք է գրված լինի «Այստեղ ահա ինչ են ասում» ոտանավորի հետ, 1890 թ. հունիսին:

Թղթ պահպան է մեկ ինքնագրի: Ինքնագրի թերթիկի հակառակ էջում՝ մոտագրապիս նույն թեմայով կես արձակ, կես չսփածո գրեթե անընթեռնելի մի շարադրանք:

Առաջին անգամ տպագրվել է «Լրաբնը հասարակական գիտությունների», 1979, № 1, էջ 30-31:

Տպագրվում է ինքնագրից:

### «Օ, ՑԱՌ ԽՈՍՔԵՐՈՎ ԱՆԴՈՒՌՈՆ ԲԵՐԱՆԻ...» (էջ 338, 496)

Գրված է, 1890 թ. նոյեմբերի 1-ին:

ԳԱԹ ԹՖ № 272 պահպան է 1890 թ. նոյեմբերի 1-ին Թումանյանի՝ Ան. Արովյանին գրած նամակը և դրա մեջ՝ ինքնագրիը:

Առաջին անգամ տպագրվել է ծի V, 31:

Տպագրվում է ինքնագրից:

### «ԸՆԴՈՒՆԻՐ, ԻՄ ՔՈՒՑՈՒ...» (էջ 339)

Գրված է 1890 թ. դեկտեմբերի 6-ին:

Թղթ պահպան է ԲՄ 1-ի Թումանյանի՝ Դարյա Գուշյանին նվիրած օրինակը, անվանաթերթի վրա «Յուր քույր Քալինկա (Պարյա) Գուշյանին Հովհաննես Թումանյանից» ընծայականով և հաշորդ էջի վրա այս վեց տողով:

646

Առաջին անգամ հրատարակել է Ա. Խնճիկյանը (տե՛ս Ա. Խնճիկյան, Հովհաննես Թումանյան, էջ 201-202):  
Տպագրվում է ինքնագրից:

1891

### «ԾՆՈՐՀԱՎՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ...» (էջ 340)

Գրված է 1891 թ. հունվարի 1-ին:

ԳԱԹ ԹՖ № 274 պահպան է 1891 թ. հունվարի 1-ին Թումանյանի՝

Ան. Արովյանին հղած նամակը, որն ակազմ է այս ոտանավորով:

Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1938, № 13, այսուհետեւ ծի 7,

39 և ծի I, 442:

Տպագրվում է ինքնագրից:

ՄԱՐԾ

### («ԱԵՋՈՒ «ԱՄՉԱԿ» և ԺՈՂՈՎՈՒԹԻ...») (էջ 341)

Գրված է 1892 թ. մարտի 14-ին:

ԳԱԹ ԹՖ № 26 պահպան է մեկ ինքնագրի, որտեղ վերնագրից հետո կան հետեւյալ տողերը. «Մարտի 8-ին Թիֆլիսի թեմական պատգամավորի ընտրությունն, «Խոսք Խ-ի, երաժշտությունը Զովաշշանին: Ինքնագրի տակ Տ. Փիրումյանը գրել է՝ «Միանգամայն համակարծիք եմ՝ Տ. Փիրումյան»: Դրանից հետո Թումանյանի ձեռագրով կա նաև հետեւյալը՝ «Կորչի» Մ. [Կորչի]—Հիմար [Ընկերներով] ընտրյաներով»:

Առաջին անգամ տպագրվել է ծի VI, 21:

Տպագրվում է ինքնագրից:

Ոտանավորը գրելու առիթը կաթողիկոսական ընտրությանը մասնակցելու համար Թիֆլիսի թեմի պատգամավորի ընտրությունն է՝ 1892 թ. մարտի 8-ին: Գ. Արծրունին իր կողմնակիցներով բոյկոտի է ենթարկել ծոլով և հեռացել: Նրա հեռանալուց հետո Վրաստանի և Եմերերի թեմի առաջնորդ Մամբրե եղ. Սահամարյանը շարունակել է ժողովը: Պատգամավորի է ընտրվել «Արձագանքի» խմբագիր Արգար Հովհաննիսյանը: Ոտանավորի մեջ ակնարկվում է այս գեպքը: Հետաքայում Սինոդն ընտրությունը

647

շեղյալ է հայտարարել և նոր ընտրությունն նշանակել ապրիլի 22-ին։ Այս  
անգամ պատգամավոր է ընտրվել Գ. Արծրումն։

13-րդ տողում Գիշատակվում է քվեարկության կարգը, ըստ որի՝ հո-  
գուստ պատգամավորի տրվում էր սպիտակ, դեմ՝ սև քվե։

### «[ՄԻԱՄԻՏ] ԸՆԿԵՐ, ԴՈՒ ՄԻ ԶԱՐՄԱՆԱՐ...» (էջ 342, 496)

Գրված է 1892 թ., ինչպես թվագրված է ինքնագիրը։  
ԹՀԱ պահպում է մեկ ինքնագիր։

Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ 1, էջ 304։ Ա. Ինճիկյանի հետեւյալ  
ժանոթագրությամբ։ «Գրել է 1892 թ. «Դեպի Հայրենիք» անավարտ վեպի  
սկզբածքը պարունակող մատյանում, վեպի ֆրագմենտներին հաջորդող  
ազատ էջի վրա։ Սեպագրություն է» (ՈՒՀ 1, 397)։

Տպագրվում է ինքնագրից։

### «ԳԻՇԵՐԸ ԲԱՁՄԵՑ ԼԵՌՆԵՐԻ ՎՐԱ...» (էջ 343)

Հստ երեսվթին, սկիզբն է մեզ հասած կամ գուցեն չգրված ստանա-  
վորի։ Որոշ նմանություն ունի ռնկարիչ Գ. Բաշինչաղյանի «Զորագետը  
գիշերով» նկարի աղջկա բանաստեղծության հետ։

Ինքնագիրը պահպում է ԹՀԱ № 10 ծոցատետրում, որի մեջ եղած  
նյութերը վերաբերում են 1891—1892 թթ.։ Այստեղից կարելի է ենթադրել,  
որ սա ևս գրված է նույն ժամանակ։

Առաջին անգամ տպագրվել է կրաքեր, 1979, № 1, էջ 35։

Տպագրվում է ինքնագրից։

Ինքնագրում Թումանյանը «Թանձր մոայլը» բառերի տակ գրել է  
«Նրա ստորոտում»։

### «ԵԹԵ ԳԻՏԵՆԱԱՆ ԻՄ ՑԱՎԸ, ՀՈԳԻՆՍ...» (էջ 344, 497)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Մեզ հասած երկու ինքնագրերը պահպում են ԹՀԱ № 11 ծոցատետ-  
րում, որի նյութերը վերաբերում են 1891—1892 թթ.։ Այստեղից կարելի է  
ենթադրել, որ այս քառասուղը ևս գրված է նույն ժամանակ։

Առաջին անգամ տպագրվել է կրաքեր, 1979, № 1, էջ 34։

Տպագրվում է թ ինքնագրից։

### «ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԱԼՈՒՑ ՀԱՆԳՉՈՒՄ ԵՆ...» (էջ 345, 497)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Մեզ հասած ինքնագրերից մեկը պահպում է ԹՀԱ № 10 ծոցատետրում,  
որի մեջ եղած նյութերը վերաբերում են 1891—1892 թթ.։ Այստեղից կա-  
րելի է ենթադրել, «որ այս բանաստեղծությունը ևս պետք է գրված լինի  
նույն ժամանակ»։

ԳԱԹ ԹՖ № 100 ա պահպում է ևս մեկ ինքնագրի, որն, ըստ երեսու-  
թին, արտագրված է առաջինից։

Առաջին անգամ տպագրվել է կրաքեր, 1979, № 1, էջ 36։  
Տպագրվում է Ա ինքնագրից։

### «ՔԵԶ, ԳՈՎԱԾ ՄՈՒՍՍ, ԵՍ ՉԵՄ ԺԱՆԱՉՈՒՄ...» (էջ 346, 498)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։

Ինքնագիրը պահպում է ԹՀԱ № 10 ծոցատետրում, որի մեջ եղած  
նյութերը վերաբերում են 1891—1892 թթ.։ Այստեղից կարելի է ենթադրել,  
որ այս բանաստեղծությունը ևս գրված է նույն ժամանակ։

Առաջին անգամ տպագրվել է ԲԵՀ, 1972, № 1, էջ 154։ Այստեղ հրա-  
տարակող Ա. Ինճիկյանը գրության հավանական թվականը համարում է  
1895-ը։

Տպագրվում է ինքնագրից։

1893

ՕՐ. Ն. Ս.-ԻՆ

«Ալրումիդ մեջ մի քանի տող...»

(էջ 347)

Գրված է 1893 թ. Հունվարի 14-ին։

ԳԱԹ ԹՖ № 636 (լրացուցիչ) պահպում է նույն Սողալյանի ալբոմը և  
դրա մեջ՝ ինքնագիրը, թվագրված՝ «93 1/14»։

Առաջին անգամ տպագրվել է ԲԵՀ, 1972, № 1, էջ 152։ Հրատարակել  
է Ա. Ինճիկյանը հետեւյալ ծանոթագրությամբ։ Ճն. Սողալյանը 90-ական  
թվականներին թիֆլոսում աշքի ընկնող հայ մտավորական կանացից է  
եղել, մանկավարժ, հարել է Հնակայան կուսակցությանը, բարեկամական  
կապեր և ունեցել ժամանակի հայ գրողների, մասնավորապես Ղազարոս  
Աղայանի և Թումանյանի հետո։

Տպագրվում է ինքնագրից։

«ԵՍ ՎԻԾՏ ՈՒՆԵՄ ԲԵՐԱԾ ԵՐԿՐԻՑ ՀԱՅՐԵՆԻ...»  
(էջ 348, 499)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ:  
ԳԱԹ ԹՖ № 32 պահպում է մեկ սևագիր-ինքնազիր՝ գրված նույն թղթի  
վրա, ինչ «Հոսուիր արտասուբս անկեղծ տիրության» բանաստեղծությունը,  
գրված է «21 հունիսի 93»։ Այստեղից կարելի է ենթադրել, թե  
որը թվագրված է «21 հունիսի 93»։ Այստեղից կարելի է ենթադրել, թե  
գրված է նույն ժամանակ։

Առաջին անգամ տպագրվել է ՍԴ, 1941, № 3, էջ 3, այնուհետև՝ եթ 1,  
454։

Տպագրվում է ինքնազրից։  
Ինքնազրում 3—4-րդ և 7—12-րդ տողերը չնշված են։

«ՀԱՅԿԱՐԾԱԿԻ ՍԻՐՏՍ ՏԽՄԵՑ...»  
(էջ 349, 499)

Գրված է 1893 թ., նամակախաղի ժամանակ։  
ԳԱԹ Պերճ Պոռշյանի ֆոնդ № 140/54 պահպում է մատիտով գրված  
մեկ ինքնազիր, թվագրված՝ «1893»։ Բնագրի տակ Պերճանուշ Պոռշյանը  
գրել է. «Հոգհաննես թումանյանից ինձ»։  
Առաջին անգամ տպագրվել է հԳ, 1935, № 4, էջ 77—78, այնուհետև՝  
եթ 1, 453։

Տպագրվում է ինքնազրից։  
Ինքնազրի 7-րդ տողում՝ «Դատարկ ձայներ զիսից վերից», որ, ան-  
շուշտ, կրիստակ է։

«ԱՅԴՊԻՍԻ ԱՀՔԵՐ ԵՍ ԴԵՌ ԶԵՄ ՏԵՍԵԼ...»  
(էջ 350, 499)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։ Ա. Ինճիկյանը ենթադրում է,  
թե պիտի գրված լինի 1893 թ.։  
ԹՀԱ № 10 ծոցատետրում պահպում է մեկ սևագիր-ինքնազիր։  
Առաջին անգամ տպագրվել է ԲԵՀ, 1972, № 1, 153։ Հրատարակել է  
Ա. Ինճիկյանը։  
Տպագրվում է ինքնազրից։

1894

«ՀԱՅՈՑ ՎԱՐԺՈՒՀԻ, ՈՂՋ 10-Ը ՏԱՐԻ...»  
(էջ 351)

Գրված է 1894 թ. հունվարի 14-ին։  
ԳԱԹ ԹՖ № 636 (լրացուցիչ) պահպում է Ն. Սողալյանի ալբոմը և  
դրա մեջ ինքնազիր՝ հետևյալ ընծայականով։ ԱՕՐ. Նույն Սողալյանին՝  
վարժուավոյան տասնամյակին, 1894 թ. 14 հունվ.։  
Առաջին անգամ տպագրվել է ԲԵՀ, 1972, № 1, էջ 155։ Հրատարակել է  
Ա. Ինճիկյանը։  
Տպագրվում է ինքնազրից։

«ԱՅՍ ՏՈՂԵՐԸ ԳՈՒՑԵ ԶՆՅԱՎԵՆ...»  
(էջ 353)

Գրված է 1894 թ. հունիսի 2-ին։  
Հնարավոր շեղավ պարզել, թե ում է ուղղված։  
ԹՀԱ № 4 ծոցատետրում պահպում է ինքնազիրը։  
Առաջին անգամ տպագրվել է Լրաբեր, 1979, № 1, էջ 29։  
Տպագրվում է ինքնազրից։

Ո՞՛, ԵԼ ԵՒԳԵԼ ԶԵՄ ԿԱՐՈՂ ԵՍ  
(«ԱՆՄԻՄՆԵՐԸ մտած պարտեզ...»)  
(էջ 354, 500)

Գրության թվականն ստույգ հայտնի չէ։  
Ինքնազիրը պահպում է ԹՀԱ № 12 ծոցատետրում, որի մեջ եղած նյու-  
թիրը վերաբերում են 1893—1894 թթ.։ Այստեղից կարելի է ենթադրել,  
որ այս ոտանակորը ևս գրված է նույն ժամանակ։  
Առաջին անգամ տպագրվել է Լրաբեր, 1979, № 1, էջ 35։  
Տպագրվում է ինքնազրից։

1896

ՀՈՒՅԱ  
(«ՄԹԸՆԵց... ԻՆՉՈ՞Ւ ԷԱ ՄԵՆՈՒ, ԴԱ ԸԾԿԵՐ...»)  
(էջ 355, 501)

Գրված է 1896 թ. հունվարի 14-ին։  
ԹՀԱ պահպում է մեկ ինքնազիր։

651

Առաջին անգամ տպագրվել է ԲԵՀ, 1972, № 1, էջ 156: Հրատարակել է Ա. Խնձիկյանը՝ այս և «Թեզ», գոված մուսա, ևս չեմ ճանաչում» ստանագործների մասին տալով հետեւյալ ժանոթագրությունը. «Արտահայտում են ազգային մեծ բանաստեղծի միասնությունը հայրենիքի քաղաքական ճակատագրի հետ, նրա հոգու անվեհերությունը և աննկուն հավատը տառապող ժողովրդի գույնոց օրերին»—լուսավոր ապագայի նկատմամիշ (նույն տեղում, էջ 151):

Տպագրվում է ինքնագրից:

### «ԵՐԵ ԹՈՒՅԼ ԵՔ ՏԱԼԻՍ, ՈՐ ԶԵՐ ԱՎԲՈՄՈՒՄ...» (էջ 356)

Գրված է 1896 թ. մարտի 24-ին:  
Նվիրված է Մարիամ Վարդաղարյանին:  
ԳԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Մ. Վարդաղարյանի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագրից՝ թվագրված «96 111/24, գատիկ»:  
Առաջին անգամ տպագրվել է եթ 1. 464:  
Տպագրվում է ինքնագրից:

### «ԿԱՅՈՇԵՍ ԹԵ ՔԻՉ ԷՐ, ԻՆՉ ՈՐ ԱՐԵՑԻՆ...» (էջ 357)

Գրված է 1896 թ.  
ԳԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Մ. Վարդաղարյանի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագրից:  
Առաջին անգամ տպագրվել է Լրաբեր, 1979, № 1, էջ 27:  
Տպագրվում է ինքնագրից:  
1896 թ. մարտի 24-ին Մ. Վարդաղարյանի ալբոմում թումանյանի  
դրած «Երբ թույլ եր տալիս, որ Զեր ալբոմում...» ոտանավորը (տե՛ս  
նախորդ ծանոթագրությունը) փոքր-ինչ վկանվել է նրա երկու մտերիմ-  
ներին՝ Փ. Վարդաղարյանին և Միւ. Տեր-Անդրեասյանին: Ալբոմի երկու  
լիի վրա նրանք առանձին-առանձին պատասխանել են բանաստեղծին: Միւ.  
Տեր-Անդրեասյանը գրել է. «Միայն բանաստեղծներն են, որ պատասխա-  
նատու չեն իրանց գրածների համարս: Իսկ Փ. Վարդաղարյանը. «Արձակ  
գրազները ներբուս համոզված են լինում և երբեմն իսկ ստիպված են  
լինում օրը ցերեկով խոստավանելու, որ իրանք իրանց բանաստեղծներ  
համարզների ահազին մեծամասնությունը լոկ նախալներ ենս: Ի պատաս-  
խան թումանյանը գրել է. այս ուղանավորությունը»:

Երկրորդ առողի կետերի վրա բանաստեղծն աստղանիշ է դրել, ապա  
առաջաւահ դրել՝ «Մանոթ!», բայց այդպիս էլ չի ծանոթագրել:

652

### «ՀԵՇ. ԱՓՍՈՍ ԷԶԵՐ...» (էջ 358)

Գրված է 1896 թ.:

Վերաբերում է այն բվեճին, որ Մ. Վարդաղարյանի ալբոմում սկսել է  
թումանյանը՝ ալբոմային նյութերը արձակ թե շահած գրելու մասին  
(տե՛ս «Երբ թույլ եր տալիս, որ Զեր ալբոմում» ոտանավորի ծանոթագրու-  
թյունը):

ԳԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Մ. Վարդաղարյանի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագրից:

Առաջին անգամ տպագրվել է Լրաբեր, 1979, № 1, էջ 28:  
Տպագրվում է ինքնագրից:

6—8-րդ տողերում ակնարկում է «ՀԵՇ. ԱՓՍՈՍ ԷԶԵՐ» գրական հանդեսի հրա-  
տարակությունը: 1893 թ. Հոկտեմբերին Հովհ. Թումանյանը, Փ. Վարդա-  
ղարյանը և Ա. Բարխուտարյանը հիմնադրել են մի հրատարակչական ըն-  
կրություն, որը պետք է կոչվեր «Երեկիթներ» և միայն իրենիթներ» կամ  
«Ժողովուրդ»: Հոկտեմբերի 26-ին, Փ. Վարդաղարյանի տանը տեղի է  
ունեցել ընկերության անդրանիկ խմբագրական ժողովը, որը 1894 թ. լույս  
է ընծայել հանդեսի առաջին և միակ համարը: Նկատի ունի այս ժիշտ-  
րագրական ժողովը, և ոտանավորն էլ ստորագրել է «Ժողովի անդամներից  
մեկը»:

### «ԱՅ ԾԻԾԱՌԱՅԱԿ...» (էջ 359, 501)

Գրված է 1896 թ., ինչպես թվագրված է ինքնագրից:  
ԹՀԱ պահպում է մեկ սկագիր-ինքնագրի:  
Առաջին անգամ տպագրվել է ՈՒՀ 2, 239—240:  
Տպագրվում է ինքնագրից:

1897

### ԷՔՍՊՐՈՒՏԸ

(«Երբեմն իմ մուսան՝ յուր խելքը կորցրած...»)  
(էջ 361)

Գրված է 1897 թ. Հունվարի 4-ին:  
ԹՀԱ պահպում է 0. Գիրգիդյանի ալբոմը և դրա մեջ ինքնագրից,  
վերնագրված՝ «ԷԿՍՊՐ.», թվագրված՝ «97 1/4»:

653

Առաջին անգամ, «էքսպրում» վերնագրով, տպագրվել է Եթ 1, 465,  
Տպագրվում է ինքնագրից:

## ՄՐՏԻՍ ԽՈՍՏՈՒՄԸ

(«Դաշնակահար պուտօն նրբոր...»)  
(Էջ 362)

Գրված է 1897 թ.  
ԳԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Մ. Վարդապարյանի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագրից:  
Առաջին անգամ տպագրվել է Եթ 1, 466:  
Տպագրվում է ինքնագրից:

1898

## 1 ՀՈՒՆԱԿԱՐԻ

(«Շնորհավոր նոր տարի...»)  
(Էջ 363)

Գրված է 1898 թ. հունվարի 1-ին:  
ԳԱԹ ՓՎՖ № 413 պահպում է Մ. Վարդապարյանի ալբոմը և դրա մեջ՝  
ինքնագրից, թվագրված՝ «98»:  
Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1938, № 13, այնուհետև՝ Եթ 1,  
469:  
Տպագրվում է ինքնագրից:

## ՊԼԵՇՈՏՆՈՒ ՏՐՏՈՒՆՁԸ

(«Առաջ մեր գյուղում պաշտոնի մարդը...»)  
(Էջ 364, 502)

Գրված է 1898 թ. օգոստոսին, Շուշավերում, ինչպես պարզվում է հետինակի՝ Փիլիպոս Վայդապարյանին և Արիստակես Զարգարյանին գրած  
նամակներից (տե՛ս Եթ V, 141—143):

ԳԱԹ ԹՓ № 40 պահպում է մեկ սեագիր-ինքնագրի:  
Առաջին անգամ տպագրվել է Եթ 1, 471—473:  
Տպագրվում է ինքնագրից:

Ոտանավորի ստեղծման շարժառիթների մասին Թումանյանը գրում է.  
«Ներկայացման համար—կարդալու ինձանից անտիպ ոտանավոր խնդրեցին,  
ես էլ այսօր մի ոտանավոր գրեցի (երգիծական) հատկապես շուշավեր-  
ցիների այդ ներկայացման համար—«Պաշտոնու տրտունշը» (Եթ V, 141),  
Ոտանավորը, սակայն, ներկայացման ժամանակ չի կարդացվել: Այդ մասին  
կա Թումանյանի հետեւյալ վկայությունը. «Այնպիսի մի աղմուկ, մի խոռ-  
վություն ընկապ, որ ներկայացման երեկոյան եթե նայեիր փողոցները,  
կկարծեիր, թե մի կարևոր բունթ կա գյուղում: Միծաղելին այն էր, որ  
ամբոխը, պաշտոնիների ոտանավակած ամբոխն ավելի խիստ էր հուզվել:  
Սպառնալիքն այնպես մեծ եղավ, որ երիտասարդները պատրաստած ոտա-  
նավորը հանեցին ցուցակից, վախենալով, որ ինձ հետ անխորժություն  
պատահի, ինչպես նամակներով ու պատգամավորների բերանով սպառ-  
նում էին» (նույն տեղում, Էջ 142—143):

«ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱԼԱՆ-ԱՊԵՇՈ...»  
(Էջ 367)

Գրված է 1898 թ. դեկտեմբերի 27-ին մի բացիկի վրա, որը Թիֆլիսից  
Թումանյանն ուղարկել է նոր նախիչևան՝ Ղ. Աղայանին:  
Ոտանավորում խոսր Ղ. Աղայանի էջմիածնից ստանալիք նպաստի  
մասին է:  
Վերջին երկու տողերը գրված են որպես ծանոթություն:  
ԳԱԹ Ղ. Աղայանի ֆոնդ, № 333 պահպում է մեկ ինքնագրի:  
Առաջին անգամ տպագրվել է ԳԹ, 1932, № 27, այնուհետև՝ Եթ V,  
